

ՆՈՐ ԵՐԶԱՆ

II ՏԱՐԻ

ՄՈՒՐՃ

ԳՐԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՄՍԱԳԻՐ

№ 8

ՕԳՈՍՏՈՍ

1902

ԹԻՖԼԻՍ

Типография Груз. Издат. Т—ва. | Տպարան Գրայն-Իրատ, Եփեթուժեան.

1902

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

№ 8

	Երես
1. ՓԱԽԻ ՏԱՐԻՆ, պատմուածք Ա. Ահարոնեանի	5
2. ՀԱՅՐԵՆԻ ՀՈՂԸ, զէպ Հանրի Բորգոի, Թարգման. Հ. Առաքելեանի	31
3. ՍՈՒՏՆ ՈՒ ՔԱՄԻՆ, բանաստ. Ֆրուգի, Թարգման. Յ. Յակոբեանի	72
4. ԶՀՈՒԴ-ԲՈՒՇԱՆ, զէպ Շահրխարի	76
5. ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԵԱՆՔԻՅ, յօդ. Եր. Ֆրանգեանի	108
6. ԱՆՊՈԶ ՀՈՐԹԸ, պատմուածք Ս. Ինգմամի, Թարգմ. Յով. Սահփանեանի	118
7. ԷՍ ԶԻՆՉ ԱՂԲՈՒՐՆ Է, բանաստեղծութիւն Աւ. Իսա- հակեանի	121
8. ՇՎԼՅՅԱՐԱԿԱՆ ԳԻԻՂԸ, Կուրբաթ-Հարունի	131
9. ԻՄԱՍՏՈՒՆԸ, պատմուածք Ստ. Տեր-Աւետիսեանի	132
10. ՄՈՐԳԱՆԻ ԵՒ ՇԷՅԼԻ ՀՆԱԳ. ԳԻԻՏԵՐԸ, յօդ. Լ. Բաբայեանի	149
11. ՅՆՈՐՔՆԵՐ ԵՒ ԵՐԱԶՆԵՐ, պատմուածք Օ. Շրէյների, Թարգմ. Յ. Տ.-Դ.	160
12. ՀԷՆՐԻԿ ԻՔՍԷՆ, յօդ. Վ. Նալբանդեանի	162
13. ԵԱՆԹԷԻՆ, լորդ Բայրօնի, փոխադ. Յով.-Խան Մա- սեհեանի	178
14. ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ. — 27) A. Tchobanian, Poèmes arméniens, Ա. Ա.—28) Միք. Փաշա Փօրթուզալ, «Նդիշէի քննադատութիւնը», Լ.	181
15. ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—Հայ գաղթականների վերադար- ձը, Ա. Ա.—Հայ ժողովուրդը, իր հոգեւոր պետերը և թիւրքաց կառավարութիւնը.—Ձինուած տաղաներ և անգէն աշխատատեղեր.—Ձէնք կրկու իրաւունքի վե- րացումը.—Հայ աղնուականներ.—Մանուկ ըէշ.—Այա- կերտների ֆիզիկական զարգացման մասին հոգատա- րութիւն.—† Ռեկեատօլ, † Սեմիրազակիշ, Լ. Ա.	192
Գաղթականները Վարսում	202
16. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—Ղերական դպրոցների վաղումը Ֆրանսիայում.—Ղերականների գլխաւոր զաշնակիցը ժողովրդի սոցիալութիւնն է.—Ղերական ոգու թուլա-	

Նոր շրջան II տարի

Հրատ. XIV տարի

ՄՈՒՐՃ

ԳՐԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՄՍԱԳԻՐ

№ 8

Օ Գ Ո Ս Տ Ո Ս

1902



Թ Ի Ֆ Լ Ի Ս

Типография Груз. Издат. Т—ва. | Տպարան Վրաց Հրատ. Ընկերութեան.
1902

Дозволено цензурою, Тифлисъ, 30 августа 1902 года.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

№ 8

	Երես
1. ՓԱԽԻ ՏԱՐԻՆ, պատմուածք Ա. Ահարոնեանի . . .	5
2. ՀԱՅՐԵՆԻ ՀՈՂԸ, վէպ Հանրի Բորդօի, թարգման. Հ. Առաքելեանի	31
3. ՍՈՒՏՆ ՈՒ ՔԱՄԻՆ, բանաստ. Ֆրուզի, թարգման. Յ. Յակոբեանի	72
4. ԶՀՈՒԴ-ԲՈՒՇԱՆ, վէպ Շահրիարի	76
5. ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԵԱՆՔԻՑ, յօդ. Եր. Ֆրանգեանի	108
6. ԱՆՊՈԶ ՀՈՐԹԸ, պատմուածք Ս. Ինգամաի, թարգմ. Յով. Սահափանեանի	118
7. ԷՍ ԶԻՆՁ ԱՂԲՈՒՐՆ Է, բանաստեղծութիւն Աւ. Իսա- հակեանի	121
8. ՇՎԷՅՑԱՐԱԿԱՆ ԳԻՒԴԸ, Կուրբաթ-Հարունի	131
9. ԻՄԱՍՏՈՒՆԸ, պատմուածք Սե. Տեր-Աւեսիֆեանի	132
10. ՄՈՐԴԱՆԻ ԵՒ ՇԷՅԼԻ ՀՆԱԳ. ԳԻՒՏԵՐԸ, յօդ. Լ. Բաբայեանի	149
11. ՅՆՈՐՔՆԵՐ ԵՒ ԵՐԱԶՆԵՐ, պատմուածք Օ. Շեյնեի, թարգմ. Յ. Տ.-Դ.	160
12. ՀԼՆՐԻԿ ԻԲՍԷՆ, յօդ. Վ. Նալբանդեանի	162
13. ԵԱՆԹԷՆ, լորդ Բայրօնի, փոխադ. Յով.-Խսն Մա- սէհեանի	178
14. ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ. — 27) A. Tchobanian, Poèmes arméniens, Ա. Ա.—28) Միք. փաշա Փօթթուզաւ, «Եղիշէի քննադատութիւնը», Լ.	181
15. ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—Հայ զաղթականների վերադար- ձը, Ա. Ա.—Հայ ժողովուրդը, իր հոգեւոր պետերը և թիւրքաց կառավարութիւնը.—Ձինուած աւազակներ և անգլէն աշխատատեղներ.—Ձէնք կրելու իրաւունքի վե- րացումը.—Հայ ազնուականներ.—Մանուկ բէշ.—Աշա- կերտների ֆիզիկական զարգացման մասին հոգաուա- րութիւն.—† Բեկետով, † Սեմիրազակիւ, Լ. Ա.	192
Գաղթականները Կարսում	202
16. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—Պղերական զպրոցների փակումը Ֆրանսիայում.—Պղերականների զլիտուր զաշակիցը ժողովրդի աշխատութիւնն է.—Պղերական ողու թույա-	

ցումը Զրանսիայում.—Սուբբերիի հրաժարականը և անգլիական նոր պրեմիեր Ռալֆուրը.—Քօէր դեներալ- ները Անգլիայում.—Հանգանակութիւն բօէրների օգ- տին.—Վիլհէլմ կայսրը Պօլնանում.—Մակեդոնական համաժողով, Լ. Ս.	204
Պ օ լ ս ի թ ե ռ թ ե ռ թ ց. Ինչպէ՞ս կ'ընտրուի Վիէննայի միութարեանց աբբահայրը.—Ժէզուիթները Մարզուանի մէջ.—Ամուսնալուծում.—Նիլիկիայի կաթողիկոսական ընտրութեան հարցը.	211
17. † ՌՈՒԴՕԼՖ ՎԻՐԽՕՎ.	219
18. ՆԱՄԱԿ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻՅ, Գերմանիայի հասարակա- կան-քաղաքական կեանքից, Quidam	220
19. ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ	229
20. ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ	334
21. ԹԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ	235
22. ԹԱԻԵԼՈՒԱԾ «ՕՐԱՄՈՒՏԻՆ», Վէպ Ի. Ս. Տուրգենևիի. 113—128	

Փ Ա Խ Ի Տ Ա Ր Ի Ն

Ա

Ռ Է Ս Ը

I

Գարուն էր. Բ... գիւղում էլ գարուն եկաւ: Այդ բանը՝ ինչպէս միշտ, գիւղացիք իմացան երկու նշանից — նախ՝ տարափոխիկ թռչունները մէկը միւսի յետեւից յայտնուեցին, և երկրորդ՝ որ աւելի կարեւոր և աւելի վճռական հանգամանք էր, Էրկէն Սէփօն՝ գիւղի նախրպանը, իր ահագին մահակը ձեռք առաւ և դուրս եկաւ գիւղամէջ: Դա նշանակում էր, թէ անասունները դաշտ քշելու ժամանակը հասել է: Սէփօն իր բանը լաւ գիտէր, քանի՜ տարիների փորձառութիւն ունէր մարդը: Եկեղեցու բակի հինաւուրց կաղամախի վրայ մի զոյգ արագիլներ յայտնուեցին. նրանք ամենայն տարի ասես գիւղի նախրպանի համար էին գալիս այնտեղ բազմում: Այս տարի էլ առաջինը նա տեսաւ: Եւ նոյն օրը Սէփօն հացի պարկը մէջքին, փափախը մինչեւ աչքերը քաշած, կաշուէ զանդապանները մինչեւ ծնկները լաւ պնդացրած, նոր, փափուկ տրեխները կաշուէ թելերով պինդ ձգած, իր երկայն հասակով յայտնուեց եկեղեցու առաջ ձգուած հրապարակում: Լաւ նշան էր. գիւղացիք տեսան նրան, համարձակօրէն

բայ արին գոմերի դռները և դուրս քշեցին անասունները: Իսկ նրանց՝ որոնք փոխանակ անասունները դուրս քշելու մօտեցան Սէփօին հարցրին, թէ վաղ չէ արգեօք, բարձրահասակ նախրպանը առանց իր դիրքը փոխելու, առանց մի բառ արտասանելու, մահակով ցոյց տուեց կաղամախների վրայ նստած ղոյգ արագիւններին: Թռչունները կարծես իրանց հին բարեկամի ձեռքի այդ շարժումին էին սպասում երկար կտուցներով կտկտացնելու համար: Ամեն ինչ կատարեալ էր: Գարուն էր և լաւ, յուսալից գարուն:

Գարնան հետ միասին Բ... գիւղում սկսուեց բացօդեայ կեանքը: Զմերային անշարժութեան դատապարտուած կենդանական օրգանիզմը առաջին տաք շոգերի հետ ցնցուեց և դուրս ընկաւ խեղդող յարկերի տակից: Փողոցները կենդանացան և երեկոներն օր աւուր աւելի գրաւիչ դարձան: Առաջին մսախուղից յետոյ, երբ աստղերը մէկիկ մէկիկ բացում էին իրանց պլպլան աչիկները, երբ լուսինը պաղ պաղ շիթեր էր սփռում ցածրիկ տներից վախլուկ սառներներ շինելով, գիւղացիք դուրս էին թափւում տներից, մեծ ու փոքր շարւում էին պատերի տակ, նստոտում էին նոր կըտրած աթարի կոշտերի վրայ և խօսում էին հաղար ու մի բաներ:

Գիւղում բնութիւնն ընդհանուր սեղան է, որ ամենքն առանց խտրութեան պիտի վայելեն. ջահիլ աղջիկները՝ հարուստ թէ աղքատ իրար խառնուած, սիրուն պարեր էին կազմում, օրօրւում աջ ու ձախ և իրանց ուրախութեան ու վայելքի այդ ժամերում օդը թնդացնում էին ողբաձայն, լալկան երգերով: Մանր տղաներն էլ կամ խմբեր կազմած վազվզում էին, կամ յոգնած գալիս թաւալւում էին գետնին, մեծերի ոտների մօտ և լսում նրանց ասած խօսածը, նրանց հետ ծիծաղում, նրանց հետ ուրախանում:

Նւ մինչև ուշ գիշեր փողոցներն աղմկւում էին, մինչև ուշ գիշեր երգ, ծիծաղ, ուրախութիւն հնչւում

էին ամեն կողմերից: Գրաւիչ երեկոները յաջորդում էին իրար, գիւղը երջանիկ էր: Այն գարնանը՝ ամեն բան լաւ էր Բ... գիւղում, և՛ ժամանակին վրայ հասած տաք օրերը, և՛ կաղամախի զոյգ արագիլները և՛ նախապան Սէփօն իր նախրով կանաչաւէտ դաշտերում և մանաւանդ խաղաղ երեկոներն իրանց անվերջ երգերով, ծիծաղով ու զրոյցով: Ամառը մօտ էր արդէն և դեռ ոչ չինչ չէր եկել խռովելու այդ խաղաղութիւնը, մթնացընելու պայծառ հորիզոնը, կարկուտ չը կար, մորեխ չը կար, ցաւ չը կար: Ամեն բան լաւ էր, այնքան լաւ, որ ծերունի Օհանը, գիւղի առաջին մարդը, մի օր պէտք համարեց նկատել, թէ այդքան ուրախութիւնն Աստուծուն էլ դուր չի գալ, այդքան ծիծաղը կը վերջանայ մի վատ, շատ վատ բանով: Եւ այնուհետեւ ամեն անգամ, երբ երեխաների քրքիջը շատ էր բարձրանում, չորս կողմից նրանց սաստում էին: Երկիրնքն իրաւունք չի տուել գիւղին շատ ուրախանալ, շատ երջանիկ լինել: Նա չը պէտք է մոռանայ, որ սե օրը ամեն վայրէկեան կարող է վրայ հասնել: Այսպէս էին մտածում փորձուած գլուխները:

Եւ այդ սե օրը եկաւ:

Մի երեկոյ լուսինը դարձեալ պայծառ էր, աստղերը պլպլան, օդը մեղմ ու դուրեկան, փողոցները դարձեալ լիքն էին բաղմութեամբ, բայց աղջիկներն էլ չէին երգում, ծիծաղը լռել էր, սրախօսութիւնները դադարել էին: Աղմուկ չը կար, մարդիկ խօսում էին փսփսուկով, ասես վախենում էին սեփական ձայներից: Ամենքի ճակատներին սե ամպ էր իջել, ամենքին ասես ճնշում էր մի անորոշ սարսափ: Այդ բանն ամենից շուտ նկատեցին մանուկները, նրանց կոյս հոգիները շատ շուտ վարակուեցին ճնշող տրամադրութեամբ: Նրանք այն երեկոյ խաղեր չը սկսեցին, զուարճանալ չէր լինում: Օդի մէջ մի բան կար, որ ճնշում, կարկամում էր լեզուները, խեղդում էր ամենքին և ուրախութիւնն անհընարին դարձնում: Ինչո՞ւ էր այդպէս. երեխաներն

այդ ասել չէին կարող. նրանցից մի բանիսը՝ նոյն իսկ փորձեցին այդ սպանիչ մեռելութիւնը խանգարել, ճշացին, ցատկեցին, իրար հրեցին-հրշտկեցին, փախան զանազան կողմեր, բայց շուտով կոտորուած ու յուսահատ յետ եկան, որովհետեւ նրանց ոչ ոք չը հետեւեց, խաղալ, զուարճանալ չէր լինում: Ճարները կտրուած՝ նըրանք մէկիկ մէկիկ եկան շարուեցին մեծերի առաջ և լռեցին, աշխատելով խօսողների շրթունքներից խլել մի հետաքրքիր բառ և այս ընդհանուր մոռլլի պատճառն իմանալ: Բայց ամենքն էլ այդ երեկոյ խօսում էին այնպիսի բաներից, այնքան տարօրինակ լեզուով և ցածր, փափուկով, որ ոչինչ հասկանալ չէր լինում: Ո՞վ էր կապել-կարկամել լեզուները, ինչո՞ւ էին փափսում: Շատ բան էր ասում, բայց ոչ այն, ինչ հարկաւոր էր մանուկներին: Երեւի որոշել էին փոքրերից ծածուկ պահել լուռ սարսափի պատճառը: Այդ որոշումը սակայն չը կատարուեց. մէկը, դուցէ անզգուշութեամբ, արտասանեց մի բառ, մի սարսափելի բառ, մեղմիւ, համարեա փափուկով ասաց, բայց սրուած ականջները օդի մէջ որսացին այդ մի-վանկանի բառը՝ «փ ա խ».... օճ, ցուրտ էր փչում դրանից:

Երեխաները իրար մօտ եկան, փափսացին՝ «փ ա խ», ապա ոտքի կանգնեցին և մէկը միւսի յետեւից ցրիւ եկան, շտապով ծածկուեցին տներում, անկողին մօտն, երկար ժամանակ անքուն մտածելով փախի սարսափների մասին:

Հիշտ բան է, փ ա խ. որքան սև բաներ էին պատմել մայրերն իրանց փոքրիկ զաւակներին փախի մասին: Նրանց օրօրոցների շուրջը փախը վիշապի պէս սողացել, գալարուել էր, փշշացրել խաւարի մէջ, հազար ու մի ձեւեր էր ընդունել և սարսափով պատել նրանց մանուկ երեւակայութիւնը: Այն գիշեր մանուկները իրանց հետ տուն տարան փախը և պառկեցին այդ ճիւղի գրկի մէջ նրա ճիւղաններում փաթաթուած: Քնել չէր լինում:

Միայն մանուկները չէին, որ դողում էին փախից, ամբողջ Բ... գիւղի համար դա սարսափի, արեան և աւերի ժամանակ էր, դա պատերազմն էր, որ վաղուց, շատ վաղուց իր իսկական անունը կորցրել էր և դարձրել էր միմիայն փախ:

Եւ դա առանց պատճառի չէր: Բ... գիւղը գիտէր, որ փախի ժամանակ Բարդղեան լեռնաշղթան հարաւից և Մասիսը հարաւ արեւելքից յանկարծ ծածկւում են թշնամիներով և այն անպատճառ օսմանցիներով, քրդերով ու սրանց նման այլ սարսափելի գազաններով: Այս կողմից էլ նրանց վրայ են գնում ռուսները. թնդանօթ, հրացան, սուր ու նիզակներ հրապարակ են գալիս. մարդիկ զարկւում են իրար, որստ, շաչիւն, ճիչ, ոռնոց, կոտորած. արիւնը հոսում է գետի պէս: Վերջ ի վերջոյ ո՞վ կը ջարդուի, ո՞վ կը փախչի յաղթուած, դէ ի հարկէ օսմանցիներն ու քրդերը. բայց վերջին հանգամանքը քիչ էր հետաքրքրում գիւղացիներին, նրանք իրանց առանձին բանն ունին, դա շուտափոյթ փախչելն է. փախչել առանց յետ նայելու, որովհետեւ ո՞վ գիտէ, թէ ինչ կը պատահի խառն արիւնոտ ժամանակ:

Գիւղացիք գիտէին, որ աշխարհում երկու տէրութիւն կայ, գոնէ իրանք երկուսն են ճանաչում՝ ռուս և օսմանցի, որ միշտ պէտք է իրար զարկուին: Եւ երբ նրանք դիպան իրար, հարկաւոր է ժամ առաջ փախչել ոտքի տակ չը տրորուելու համար: Նրանք գիտէին օրինակ «Բեհբութովի փախ», գիտէին «Մովսէս կնեազի փախ» և ուրիշ շատ փախեր: Եւ գիւղական կեանքի բոլոր հասարակական ու ընտանեկան խոշոր երևոյթները կապուած էին այս ու այն փախի հետ, նոյն ժամանակ կատարուած, նրանից քիչ առաջ, կամ նրանից քիչ յետոյ: Այնքան երեխաներ կային, որոնց ծննդեան թուականը «առաջին փախն էր», այնքան ամուսիններ կային, որոնք եկեղեցի էին մտել պսակուելու «երկրորդ փախից» տան տարի առաջ, կամ որոնց զաւակը մեռել

էր «առաջին փախից» հինգ տարի յետոյ։ Դժուար էր ասել, թէ ո՞ր ժամանակից պատերազմը գիւղի համար դարձել էր «փախ», բայց յայտնի էր, որ շատ վաղուց առաջին բառն այլ ևս ոչ ոք չէր գործածում, որովհետեւ նա ամբողջապէս չէր պատկերացնում պատերազմի մասին նրանց հասկացողութիւնը, նա պէտք եղած խորհուրդը, նշանակութիւնը չունէր. այսպիսով մնացել էր միմիայն փախը, որ այնքան արտայայտիչ, այնպէս սարսափելի էր։

Դարձեալ «փախ» է, այսպէս են ասում չորս կողմում, ահա թէ ինչու Բ... գիւղում երեկոն իր խառարի հետ այնպիսի ծանր բան է բերել և գլորել բոլոր կրծքերի վրայ։ Մանուկների հեռանալուց յետոյ՝ գիւղացիք դեռ երկար խօսում էին, ծերերը պատմում էին իրանց յիշողութիւնները անցած փախերի մասին, հին, տխուր պատկերները վերակենդանանում էին մօտիկ ապագան պարզելու համար։

— Վէրան երկիր, մեմուաց Օհանը, եօթանասուն տարեկան մի ծերունի, որ ծալապատիկ նստած էր խմբի կենտրոնում և որի կրծքից բաշ ընկած պղնձեայ դեղին նշանը վկայում էր, թէ նա է ուէսը, վէրան երկիր, շարունակեց ծերունի յաղթանդամ ուէսը, իր ալեզարդ գլուխն օրօրելով, էլի փախ, փախ, այս էլ քանի՜ անգամ։ Թռչունները մեզանից աւելի քիչ են կարկատում իրանց բները։ Սև օրով հազիւ գալիս տեղաւորւում ենք և յանկարծ էլի փախ։ Շահ-Աբբասը մեր պապերի միսը բերանը տալով բշեց տարաւ Սպահանի խորքերը։ — Դեռ Շահ-Աբբասից առաջ էլ ո՞վ գիտէ հայ-քրիտոնեան ինչեր է տեսել — Մովսէս Լինեազի հետ արիւն-արցունք լալով զզլբաշի զուլումից փախանք, յետ եկանք, Բեհբութովի փախին մօրէ մերկ մնացինք, հազիւ բնաւորուած էլի փախ։ Ահ, հայ-քրիստոնեան աշխարհում երբ և իցէ հանգիստ եղել է, կայ մի անկիւն, ուր հայրերի ոսկորների մօտ որդիներն էլ կարողանան

խաղաղ պառկել: Մեռանք փախչելով, գլուխ դնելու տեղ չունենք:

— Հայի ճակատագիրը միշտ այսպէս եղել, երեւի Աստուծոյ կամքն է, ասաց մէկը բաղմութիւնից:

Լուռ էին ամենքը. ջահիլ կանայք մշմշում էին, պառաւները լալիս:

— Օհմն ամի, շատ ես ապրել, շատ չար ու բարի ես տեսել, հոգուդ արքայութիւն, աստ մեզ, Դղբաչից փախաք այստեղ եկաք, հիմայ այստեղից փախչենք ուր դնանք:

— Արազի էն կողմը որդիք, Արազի էն կողմը, օսմանցին Արազից չի անցնի, բայց այս մեր փոսն անիծուած է, փախի ժամանակ քրդի, շէլօի, թուրքի ստիտակ կ'երթայ: Չորս կողմներէս անօրէնները աչքերը տնկած՝ խառնակ ժամանակ են փնտրում. դէլ-գազան դարձած մեզ կ'ուտեն:

Գիւղը լուռ էր, սգում էր.

Փախ էր, փախ...

II

Բ... գիւղը գտնուում է հէնց մի փախի երկրում. Այնտեղ՝ ուր բարձրանում է հսկայ Մասիսը որպէս մի ծեր վիթխարի, որ ալեգարդ ու մուսլ գլուխը բաշ է ձգել¹ և մոմտում է իր յաւիտենական խոհերը, ուր հինաւուրց Արաքսը մղում է իր յորձանքները, որպէս ալեուր, յոգնած ժամանակը դարերի միակերպ ու տխուր շարքը, ահա այնտեղ տարածւում է մի ընդարձակ, անհամբոյր հարթութիւն: Տարօրինակ երկիր է այն. ձմեռն այնտեղ իր խիստ սառնամանիքները, իր բուք բորանն ունի, ամառը իր կիզիչ շոգը և խեղտող տօթն ունի: Անտառներից ու կանաչապատ լեռ ու ձորից զուրկ այդ երկիրը աղքատ մուրացիկի մերկ մարմին է կարծես, ցրտերից կապտած և արեւի տակ խանձուած սեւացած: Բնութիւնն այնտեղ ժպիտ չունի, կեանքը

փայլ չունի, մարդը՝ յարատե տանջուած, յարատե կարօտ, իր սե երկնքի տակ բազդ չունի.

Հարթ, հաւասար տարածութիւն է այն, դաշտերի հեռաւորութեան վրայ ձու դնես կ'երեւայ: Բարդողեան շեռնաշղթայի ոտքից մինչեւ Արաքս ոչինչ չի փակում առաջդ, վազիր, որքան կ'ուզես, ոչ լեռ, ոչ բլուր, ոչ ձոր և ոչ իսկ թումբ, բնութիւնն ինքն է պատրաստել փախստի ճանապարհ: Այս տխուր հարթութեան վրայ մեծամեծ առուները տիղմերի միջից հոսում են դանդաղ, ինչպէս միակերպ կեանքի ձանձրոյթը: Նրանք բոլորն էլ Արաքսից են գալիս, մէջքը կոտրած օձերի պէս մի պահ գալալում են դաշտավայրի մէջ և կարծես դժգոհ իրանց տեսածից ու հիասթափուած այդ փախի երկրից, օրօրուելով դնում են վերստին մայր գետի ծոցը մանում և նրա ականջին հազար ու մի տխուր բաներ փափսում: Քամիներն էլ իրանց խելագար ընթացքի մէջ այնտեղ ազատ են. նրանք խաղում են սուրալով, չեն ունում, չեն մռնչում, ինչպէս լեռնոտ երկրներում: Հարթութեան երեսը լիզելով՝ նրանք անցնում են սուրալով, ինչպէս զգոյշ դաւադիրներ, և միայն Մասիսի անյատակ այրերում իրանց խօլ երգերը վերսկսում: Օգն այնտեղ լի է ամեն տեսակ մթերներով և գետինը պատած է գարշահոտ, ախտաբեր ճահիճներով, որոնց վրայ դանդաղութեամբ սաւառնում է արագիլը՝ ճախճախուտների սպիտակափառ թագաւորը:

Այս գունատ, միակերպ բնութեան մէջ, այս անշուշտ ձանձրալի առուների ավերին ապրում է բազմատարազ, բազմալեզու մի ամբօխ, զանազան ցեղերից կազմուած մի խայտաբղէտ ժողովուրդ, որ կարծես մի բիրդ ձեռքով շարտուէ: Ե այնտեղ և դատապարտուել է կենակցել անհաճոյ հարեւանների հետ: Գուցէ մի օր, մի մոռացուած ժամանակ, այստեղ ապրել է միայն մի ցեղ, մի լեզու, որ ունեցել է մի իդէալ, մի յոյզ, բայց այժմ պատկերն այլ է. Արաքսն իր ընթաց-

ընամ լսում է այնքան բարբառներ: Իրար վրայ կուտա-
կուած այդ ցեղերը տառապում են մի ամուլ պայքարի
մէջ, կրծոտում են իրար, եռում են տեղն ու տեղը, մամը-
ռում, գանգատում ճակատագրից, տանջում փորի հոգ-
սից և չը գիտեն զրտեղից է գալիս չարիքը: Այդ պայքարի
մէջ սակայն ամենից ողորմելին հայն է, ամենից ան-
փառունակը նրա գոյութիւնն է: Անյիշելի ժամանակ-
ներից հարթութիւնն ու օտարի բռունցքները մշակել
են տափակ բնաւորութիւններ, առնացի կռիւը մոռա-
ցուել է և նրա տեղ սրտերում բուն է դրել վախի,
անծայր երկիւղի, մշտական անորոշ անհանգստութեան
ամօթալի զգացմունքը: Փախի երկրում, դա փախի
ժողովուրդ է, որ դողում է քրդի հրացանից և նենգա-
ւոր, խաւարի մէջ փայլփլող թուրքի խէնջարից: Ուրիշ
զէնքից սարսափում է, իր ձեռքին եղած զէնքն իր
համար ոճիր է:

Ահա այստեղ է նաև Բ... գիւղը, փախերի մշտա-
կան զոհը: Եթէ կռուի ժամանակ ամբողջ գաւառը
հանգարտ էլ նստի, եթէ Դ...եցիք եկեղեցու կտուրը
բարձրանան հրացան ձեռք առնեն. Խ...եցիք գիւղից
չը շարժուեն այդ միւսնոյն է, Բ... գիւղացիք թնդա-
նօթի առաջին որոտի հետ տունն ու տեղ թողած կը
վազեն դէպի Արաքս և միայն գետն անցնելուց յետոյ
մի անգամ յետ կը նայեն:

III

Անցան օրեր և շաբաթներ: Փախի սարսափը՝ որ-
պէս գիշատիչ թռչունը դիակի վրայ, շարունակում էր
սաւառնել գիւղի վրայ անբուն պահելով այնքան աչ-
քեր, դող լցնելով այնքան սրտեր: Բարդոզեան լեռ-
ներն ու Մասիսը դիտում էին իրանց ոտների տակ փը-
ռուած հարթութիւնն ու Բ... գիւղը և օր աւուր դառ-
նում էին աւելի անախորժ, աւելի սպառնալի: Գիւղա-
ցիք երկիւղով էին նայում դէպի այդ կողմերը, ուր

կարծես արիւնարբու ջէլօններն արդէն բուն էին գրել, մարաղ մտել և սպասում էին հրացանի առաջին պայթիւնին, որ վրայ տան: Այլ ևս ոչ ոք անտարբեր ու հանգիստ չէր, ոչ ոք խաղաղութեամբ չէր մտածում մօտիկ ապագայի մասին:

Ամառը վաղուց էր սկսուել. յուլիսի սկիզբն էր, բայց գործն ու աշխատանքը ոչ որի չէր գլուխում, գիւղացիք առանձին գովամակութեամբ էին դաշտ զննում. չրջակայքի արտերից, այգիներից, մարգագետիններից անտէրութեան հոտ էր վիչում: Էրկէն Սէփօն՝ ըստ երեւոյթին անտարբեր դէպի չարագուշակ լուրերը, առաջուայ պէս ամեն առաւօտ ահագին մահալն ուսին դրած՝ մի քանի հաց մէջքին յայտնւում էր գիւղի հրապարակում, առաջ էր անում նախիրը դաշտ գնում և երեկոյեան նոյն կարգով վերադառնում: Գիւղացիք զարմացած էին, կարծես նրա համար փախ չը կար, բայց իրօք նա էլ էր վախենում, իր նախիրը այլ ևս երբէք Մասիսի ոտքերին չէր հասնում. այդ դեռ քիչ է, վերջին օրերը նա յաճախակի էր նըստում իր միակ հարստութիւնը կազմող էջը, բշտում էր այս ու այն կողմ նրա ոտների արագութիւնը փորձելու համար: Սէփօն իր քանը միշտ լաւ գիտէր:

Երեկոները գիւղացիք դարձեալ շարւում էին փողոցում, անվերջ խօսում էին փախից, փսփոսելով ծրագիրներ էին կազմում: Օհանը երկու տակ կռացած, նստած, չիբուխը փստացնելով՝ պատմում էր հին օրերի սարսափները, նոր սերունդը լսում էր երկիւղածութեամբ և երկիւղով, իսկ հասնող լուրերը կամաց կամաց աւելի սպառնալի և ահաւոր, փախն էլ աւելի ակներև դառնում:

— Այ հարեւաններ, ասաց մի երեկոյ դալլաք Գէփօն, նստել ենք մեր դռների առաջ, գրից, կաղէթից անտեղեակ, հէնց մի դուլիս ասում ենք «փախ, փախ»: Ո՞վ գիտէ, գուցէ ամենեւին փախ էլ չը կայ: Ո՞վ կարող է հաստատ հաւատացնել. «ասում են, ասում են»,

Ո՞վ է ասողը, ո՞վ գնաց թագաւորի մօտ եկաւ, չէ՞ որ փախը թագաւորի բան է, խօսմ' իմ' ու բո խօսքով չի լինի:

Մի թարիչ ձայն էր. շատերի դուրն եկաւ.

—Արդար է ասում, վրայ բերին մի քանիսը, գուցէ ամենեւին փախ չը կայ:

—Բարի երեկոյ.

—Աստուծոյ բարին:

Եկողը բրուտ թորոսն էր. գալիս էր քաղաքից:

—Լաւ հասար, դարձաւ նրան Պէվօն, ես ասում եմ, թէ գուցէ փախ չը կայ, մենք զուր օրաներս ահ ենք ձգում. քաղաքից ես գալիս, մի լուր տուր, մի բան ասա, ինչ էին ասում քաղաքում: Ամենքը դէպի նորեկը դարձան:

—Ջօրքն եկաւ, կարճ կերպով պատասխանեց թորոսը բայց մի այնպիսի վճռական, անսիրտ լրջութեամբ, որ նրա այդ երկու բառերը կայծակի պէս ճայթեցին լսողների գլխին:

—Ի՞նչ ասիր, լսուեցին մի քանի շփոթուած ձայներ:

—Ասում եմ՝ զօրքն եկաւ, կրկնեց թորոսը նոյն անողորմ շեշտով: Բաղմութիւնը քոր կտրած և ապշած նայում էր այս անսիրտ գուժկանին. կարծես այդ զօրքը եկել էր աւերելու գիւղերը, գերի տանելու բնակիչներին: Իսկ թորոսը՝ հպարտ, որ ինքն առաջինն է բերել սարսափելի լուրը, կանգնած էր խրոխտ դիրքով և նայում էր իր տաների տակ ոչնչացած բաղմութեանը. նա չէր փոխում իր օգրերգակի դիրքը և կարծես ճաշակում էր հարեւանների զգացած սարսափի գաղաւնի հաճոյքը:

Ճնշող լուութիւնը շարունակւում էր.

—Ի՞նչ զօրք, բո տունն աւերուի, ասացին յանկարծ մի քանի ձայներ մի բան ասած լինելու և խեղտող լուութիւնը խանգարելու համար:

—Զօրքն էլի, զօրքն ինչպէս կը լինի, փախ է, փախ, պատասխանեց Թորոսը նոյն ձեւով:

—Փախը դու տեսնո՞ւ, հարցրեց Գէվօն շփոթուած:

—Փախը յետոյ կը տեսնենք, լեզուդ ինչո՞ւ բըռնուեց. սանահէր Գէվօ, ես զօրքը տեսայ, զօրքը:

—Աչքո՞վդ տեսար:

—Աչքովս:

—Շատ էր:

—Անթիւ:

—Յետո՞յ:

—Յետոյ, ինչ յետոյ, դէ տեսայ էլի, թօփեր տեսայ, թօփեր եմ ասում է՛, ամեն մէկը ուէս Օհաննիս ջրաղացի նաւերից հասաւ Փողերը փչում էին, բարաբանները զարկում գոգուալէն և արիւնը փէշերն ածած գալիս էին հա գալիս: Վերջ չը կար, այնքան շատ էր. զարզանդ էր բռնում մարդու:

—Է՛, փախն երբ է, զօրքն ինչ ասաց,

—«Զօրքն ինչ ասաց», կ'ասես թէ ես զօրքի հետ կը խօսէի, կարող էի խօսել. ես ինչ գիտեմ ինչ ասաց: Իմացայ, որ գալիս են մեր կողմերը, օսմանցին խօմ էս սարերի յետեւումն է, զօրքը մեր գիւղերում պիտի ապրի մինչեւ զարկուին իրար:

—Ի՞նչպէս թէ մեր գիւղերում:

—Դէ մեր տներում էլի:

Կրկին լռութիւն տիրեց: Վերջին լուրը պակաս անախորժ չէր:

—Էգուց ես գաղթում եմ, ասաց մէկը. նոյնը կրկնեցին մի քանի ձայներ:

—Տնաշէններ, էլ գաղթելս ո՞րն է, վրայ բերեց Թորոսը, դէ զօրքը որ մեր գիւղերում, մեր տներում լինի, խօ մենք ապահով կը լինենք մինչեւ տեսնենք ինչ է գալիս գլուխներս:

—Լաւ ապահով կը լինենք, վրդովուած պատասխանեցին նոյն անձինք. ողջ գիւղում մի հատ ուռսերէն

խմացող չը կայ, տանուտէր Օհանն էլ մեզանից անճար։
Հարսն աղջկայ տէր ենք։

—Հարեւաններ, արդարն ասեմ, թէ մի նոր ուէս
ընտրէք, որ կարողանայ ուսանելի հետ գլուխ լծափել,
շատ լաւ կը լինի, ես էլ, դէ տեսնում էք, շատ եմ
ծեր, էլ իմ բանը չի այս բեռը տանելը։

—Բայց ճրտեղից ենք բերում՝ քեզանից յարմարը,
նվ գիտէ ուսներէն։

Լուսթիւն տիրեց։

—Պաղատգին, ձայն տուեց մէկը։

—Վահ, բերանդ տաճար է, վրայ բերին չորս կող-
մից, Պաղատգին, Պաղատգին, ինչպէս մոռացել էինք,
թէ զօրքը դիւղերը թափուի, Պաղատգին մեր ուսն է։

Հետաքրքիր դէմք էր այդ Պաղատգին։ Նրա իս-
կական անունն էր Նաւօ, բայց այն օրից, երբ նա իր
այդ մի հատիկ ուսներէն խօսքով, այդ զարմանալի պա-
ղատգինով դիւղի դաշտերից փախցրեց մի խումբ կօ-
զակ, այն օրուանից նրա անունը մնացել էր Պաղատ-
գին։ Այդ մի հատիկ բառը գիտէր նա արդեօք, թէ էլի
պաշար ունէր, երբ և ուր էր սովորել նա իր ուսնե-
րէնը, այդ ոչ ոք դիւղում ասել չէր կարող, բայց ա-
մենքը համոզուած էին, որ եթէ Նաւօն կամենայ կը
լռեցնի ոչ միայն կօզակներին, այլ և մայօրին։ Ինքը՝
Նաւօն լռակեաց, ամօթով մարդ էր, յայտնի դէպքից
յետոյ նրան անուանեցին Պաղատգին, ընդունեց։ Իսկ
այդ դէպքը, օճ, դա մի զարմանալի դէպք էր, այդ-
պիսի բաներ քիչ են պատահում դիւղերում։

Բեհբուլթովի փախի տարին էր, կօզակները՝ պա-
շարի սակաւութիւնից ստիպուած էին իրանց ձիերն ա-
րածացնել դիւղի առւոյտներում։ Ձիերի մի ամբողջ ե-
րամակ կանաչից կանաչ անցնելով՝ ոչնչացնում էր այն-
քան յոյսեր։ Երբ շատերից յետոյ հերթը հասել էր
Նաւօի կանաչին, նա առաջ էր գնացել և հրամայողա-
բար կանչել։

—Պաղատգին!

Ասում էին, որ կողակները ռուսերէն խօսք լսելով՝ թողել էին հեռացել ոչ միայն Նաւօի կանաչից, այլ և գիւղի դաշտերից: Դէպքը յայտնի էր, եղել գիւղում: Եետոյ ամբողջ գաւառում և այնուհետեւ Նաւօի անունը մնացել էր Պաղատգի:

Այն ժամանակից քանի՜ տարի էր անցել, դէպքը համարեա մոռացուել էր, բայց անունը մնացել: Նոր սերունդից շատերը նոյն իսկ հաւատացած էին, որ Պաղատգին նրա իսկական անունն է, և դա զարմանալի էլ չէր լինի, քանի որ գիւղում Պօլկօմլիկ, Բեհ-բուլթօվ և ուրիշ նման անուններ կային:

Փախի սարսափի տակ այսօր, գիւղացիք վերստին յիշեցին այդ խեղճ, համեստ մարդուն, և իւրաքանչիւրն սկսեց իր գիտցածը, իր սեփական տպաւորութիւնները պատմել այդ զարմանալի, դէպքի մասին: Հին օրերը վերականգնանում էին իրանց բոլոր ցաւերով, և Նաւօն ներկայանում էր ամենքին իր բոլոր անցեալ փառքով:

— Ո՞ւր է, ո՞ւր է Նաւօն: Այդ ժամին ամենքը պահանջ էին զգում նրան նայել, բայց նա չը կար, ոմանք պնդում էին, թէ նրան տեսել են սկզբում, իսկ երբ էր հեռացել, գնացել, այդ չը գիտէր ոչ ոք:

— Օհան ամի, այ Օհան ամի, հօրդ ողորմի, ձայն տուին մի քանի կողմից, ասում են, դու այնտեղ ես եղել, թէ Աստուած սիրես, պատմիր, տեսներք բանն ինչպէս եղաւ: Զջմարիւ է, որ երբ Նաւօն մատը թափ տուեց, մի կօզակ շշկեց և ձեռքը ճակատին տարաւ, վախից պատիւ տուեց:

— Հո՞ւ արդար է, ես այնտեղ էի, յիշում եմ, ինչպէս այսօր, գնացել էի մի ճար անեմ՝ մեր առւոյտին, մի աման էլ մածուն էի տարել, ասի թող ուտեն սիրտները քաղցրանայ, խնայեն: Անաստուածները ծիծաղեցին, մածունը կերան և ձիերը միւս կողմից ներս արին, իմ առւոյտը կերցրին: Դէ իմ խելքն ասա, ախր ես խեղճ ու կրակ անլեզու, նրանք էլ կազեօնի մարդիկ,

Իմ ինչ բանն էր նրանց առաջը ելնել: Ինչքան նայեցի, մատով երկինքը ցոյց տուի, բան չը դուրս եկաւ: Մերից յետոյ հերթը հասաւ Նաւօի առնոյալին, ինքն այնտեղ չէր և հէնց այդ ժամին վրայ հասաւ վազէվազ, մօտեցաւ ձիերի և ռուսների դէմ կանգնեց: Նաւօ մի ասա, մի ասլան ասա: Ես տեղումն չորացայ, ախր տէրութեան ձիու դէմ ինչպէս կտրես, կազեօննի անասուններ են, պոչերը թափ տան, մարդու Սիբիր կը չպրտեն: Մտքումս ասացի, տունդ բանդուի Նաւօ, դու էլ կորար, ողջ գիւղն էլ քեզ հետ կորցրիր: Նաւօի պէտքը չէր, նա ձեռները բացեց, կուրծքը դէմ տուեց և բոլոր ուժով ճչաց.

— Պաղաժդի, կազակ, պաղաժդի!

Հէնց որ լսեցի, սուրս ձեռք առայ, որ մէկ մինչեւ գիւղը փախչեմ. բայց մէկ էլ ինչ տեսնեմ, կ'ասես երկրնրից հրաման իջնէր, ռուսները սասանուեցին, շշկեցին, ձիերը քշեցին և դուրս գնացին:

Գիւղացիք զարմանքով, բերանաբաց լսեցին հնգար անգամ կրկնուած պատմութիւնը և էլի մի անգամ գովեցին, փառաբանեցին Նաւօի անունը: Կէս դիչեր էր արդէն, երկնքին նայեցին և վեր կացան ջրիւ եկան, որոշելով Նաւօին անպատճառ ոէս ընտրել Օհանի տեղ, հէնց որ առաջին ղինուորի գլուխն երեւայ:

IV

Մի խումբ ղինուորներով շրջապատուած՝ Բ... գիւղի փողոցներով անցնում է մի փոքրահասակ մարդ: Մեծ բրդէ փափախի տակից հազիւ են երևում նրա փոքրիկ, պլստան աչքերը, խնամքով ածիլած երեսը և հաստ բեխերը, որոնք ամբողջապէս ծածկում են բերանը: Նրա քայլուածքը մանր է, բայց զուրկ չէ հանդիսաւորութիւնից, ձեռքին էլ երկար ու դալար ճիպոտ ունի, որ բռնել էր ոչ առանց հպարտութեան: Նաեօն է, հռչա-

կաւոր Պաղատգին, որ մի շարաթ է՝ ինչ ընտրուած է ուէս:

Այդ բանը յանկարծ կատարուեց: Զինուորները եկան, գիւղը լցուեցին. ամեն մի տուն մի երկու սալ-դաթ կամ կաղակ բուն դրեց և առաջին օրն սկսուեց Բաբելոնի խառնակութիւն. զինուորները ճշում էին, պահանջում, նեղանում, իսկ գիւղը համր կտրած, ոչինչ չէր հասկանում: Ոմանք տներից դուրս չէին գալիս, ուրիշները փողոցներից մի կողմ էին փախչում և չը կար մէկը, որ խօսք հասկացնէր, ուէս Օհանը խղճալի էր: Նոյն օրը դրուեց Նաւօի ընտրութեան հարցը: Ոչ ոք չուզեց նոյն իսկ իմանալ, թէ այդ մարդը իր պաղատ-դիից բացի ուրիշ բառեր էլ գիտէ, թէ ոչ: Մէկը նոյն իսկ նկատեց, թէ ինքը կարծում է, որ Նաւօն էլ իրանց օրին է, մի խօսքից աւել բան չը գիտէ: Բայց գիւղը համոզուած էր, թէ Նաւօն շատ գիտէ, ուզում էր, որ նա շատ իմանայ, մարդը մի օր գիւղն էր փրկել: Եւ առանց նրա համաձայնութիւնն առնելու, ընտրեցին:

Նաւօն իր արտում թումբեր էր բաշում, երբ իր ընտրութեան լուրը բերին: Անսպասելի էր, խեղճ ու կրակ Նաւօն երբ էր մտածել ուէսութեան մասին, նրա հայրն էլ, նրա պապն էլ այդ պատիւը երազած չեն եղել: Նաւօն լուռ լսեց, մի փոքր մնաց մտախոհ՝ անորոշ հայեացքը դարձրած դէպի հեռուն, դէպի Մասիսը, որ դաշտերի հորիզոնի վրայ ցցել էր իր զանգուածային հսկայ կատարը և իր մեծութեամբ այնպէս անողորմ կերպով ջնջում էր իրանից ներքեւ ամեն մի մեծութիւն: Խեղճ Նաւօ. նա այնքան պատիկ էր, այնպէս ոչինչ այդ վիթխարիի հանդէպ, և գիւղը նրան ասում էր թէ արի սարի պէս մեր մէջքին կանգնի, տէր եղիր:

Լերան տեպըլը նրան աւելի մտածկոտ դարձրեց. փախի սարսափելի օրերում, անլեզու անհասկացող սալ-դաթների հետ գլուխ թափելը հեշտ բան չէ, բայց

գիւղն ասում է, թէ կարող ես, մի՞թէ ճշմարիտ է այդ: Մի սև ամպ եկաւ կամոցուկ և թառեց Մասիսի սպիտակ կառարին, ծանր բեռան պէս նստեց վրան, հորիզոնը մռայլուեց, ճնշող տեսք ստացաւ. բայց դա տեւեց միայն մի քանի վայրկեան, Մասիսը՝ կարծես դժգոհ իր գլխին ծանրացող այդ աւելորդ կոյտից, կրկին բացեց իր ճակատը և պայծառ կատարը պսպղաց արեւի շողերի առջև: Ինչ լաւ է, որքան սիրուն է ցաւից, հոգսից ազատ գլուխը, մտածեց Նաւոն. բայց ասում են, թէ դու ոչնչ ես, գիւղն է ասում, երեւի մի քան կայ: Աղա յիշեց, որ իրան անուանում են «Պագ ա ժ գ ի», որ ինքը համարւում է ուսներէն իմացող, նա ժպտաց. իր գիտցած ուսներէն՝ վրայ, թէ գոհու թեան մի փայլ էր անցաւ նրա փոքրիկ դէմքով, երբ յիշեց այն հին դէպքը. այդ ինքն էլ պարզ չը գիտէր, բայց ժպտում էր և մի քանի անգամ էլ կամաց մոմրուաց՝ «պագաժգի! պագաժգի!»

— Սարը մէջքիս դրին, հորեւան, ասաց նա լրաբերին. ապա տրեխների թելերը բաշքշեց, գործիքն ուսին դրեց և տուն հասաւ: Կինը զարմացած հարցրեց, թէ ինչո՞ւ շուտ տուն եկաւ:

— Ատտուած խէրն անի, կնիկ, ասում են ինձ ոչնչ են ընտրել:

Կինն ուրախացաւ.

— Խէր բան է այ մարդ, գրանից էլ խէր բան: Եւ երջանիկ ունակինը ուրախ ուրախ վերկացաւ, ամուսնու գլխի քրտինքոտ թաշկինակը յետ արեց, բերեց ահագին մորթէ գլխարկը և խնամքով տեղաւորեց գլխին, յետոյ ծալքատակից դուրս բաշեց շայէ մաշուած, ծալծրլուած չուխան, կիւրակէ օրերի այդ միակ զգեստը և փողին թափ տալով հագցրեց. ոտներին էլ մի զոյգ սեւ սօլեր յայանուեցին բրդէ գուլպաների հետ: Այսպէս նա լաւ էր, համարեա մի գիւղական իշխան. դուրս եկաւ և պատշաճաւոր լրջութեամբ դիմեց դէ-

պի գիւղամէջ, ուր սպասուում էին նրա գալստեան։
Առաջինը խօսեց ուէս Օհանը։

— Ճար, փրկութիւն դո՛ւ ես մնացել, քաւոր Նաւօ,
Բեհբութովի փախի տարուան բանը միտդ բեր, դէ
բերանումդ լեզու ունիս, այս անլեզու ռուսների հետ
թէ դու գլուխ թափես։

— Այ հարեւաններ, այ ժողովուրդ, վղիս կապած
ցաւը ինձ համար Մասիսից էլ ծանր է. սարն իր կա-
տարին ամպ էլ չի ուզում, դուք ինձ պէս խեղճ մար-
դու մէջքին սարից ծանր բեռ դրիք, Աստուած տայ
տակից պարզերես դուրս գամ, բայց գիտեմ, որ ան-
լեզու սաղաթին խօսք հասկացնելը հեշտ բան չի։

— Աստուած խէրն անի, մումուաց բաղմութիւնը.

Եւ Նաւօն եղաւ ուէս. այժմ ման էր գալիս զի-
նուորների հետ, նրանց տեղաւորելու, նրանց հազար
ու մի կարիքները հոգալու համար։ Երբ նա անցնում
էր այսպէս շրջապատուած՝ գիւղացիք սիրով էին նա-
յում այդ փոքրիկ մարդուն, որի մերթ փափախն էր
երեւում, մերթ ամբողջ կարճիկ հասակը, մերթ մի
ձեռքը՝ ճիպոտն օդի մէջ ճօճելիս, ապա մի վայրկեան
ծածկւում էր ամբողջապէս, և կրկին յայտնւում, բայց
միշտ միակերպ մանր, արագ բայլուածքով, միշտ խրոխտ։
Վատ չէր նաեւ ուէսութեան պղնձեայ նշանը կրծքին
կախած, որ ամեն բայլի հետ ճօճւում էր այս ու այն
կողմ։ Այսպէս «Պաղատիին» իրօք գեղեցիկ էր և գիւ-
ղը հպարտ էր նրանով, տէր ու տիրական ունէր նեղ
օրերին։

Ինքը՝ Նաւօն, շատ էլ չէր բաժանում գիւղի այդ-
ընդհանուր տրամադրութիւնը, մէջքին դրած բեռը յի-
րաւի շատ էր ծանր. մութ գիշերներին, այս ու այն
առթիւ, այս ու այն անկիւնում՝ նրա և զինուորների
մէջ բաներ էին անցնում, որոնց մասին գիւղը ոչինչ չը
գիտէր և Նաւօն տանում էր լուռ հպարտութեամբ.
միայն կինն էր կարողանում նկատել նրա գէմքի վրայ,
մարմնի այս կամ այն մասում մի փոքրիկ ուռոյցք, մի

կապոյտ նշան, նա էլ էր հասկանում և նոյնպէս լռում ամօթից։

Չորս կողմից հնչուող ռուսերէն բառերից և հրամաններից Նաւօն սովորաբար շատ քիչ բան էր հասկանում։ Նա միայն այսքանը հաստատ գիտէր, որ իր գիմաղիները սալդաթներ են, որոնց պէտք է տեղաւորել, պակաս—պռտտը հոգալ, որովհետեւ նախ՝ կաղեօնների մարդիկ են, երկրորդ՝ «հայ—քրիստոնեաներ են» և երրորդ՝ գնում են արիւն թափելու սարերի միւս կողմը և՛ ո՞վ գիտէ, գուցէ օսմանցին էլ փախչի և գիւղն այս անգամ փախից ազատուի։ Նա գիտէր նաև, որ ինքը ստարչինա է, և որ «պաղաժդին» ռուսերէն մի զօրեղ խօսք է, թէ սրտով ասես, սալդաթը կը հնազանդուի։ Մնացածը կատարում էր ձեռք ու ոտքի նշաններով և տանջւում էր, տառապում։ Այնուամենայնիւ բոլոր եռանդով աշխատում էր օգտակար լինել «հայ—քրիստոնեայ» ռուսներին, ջանք էր անում նրանց հասկանալ, կարգալ նրանց շրթունքների շարժումները, բայց շատ անգամ անօգուտ։ Այդպիսի ծանր րօպէներում նա մի յուսահատ շարժումով փափախը յետ էր տանում ճակատի վրայից, ասես մտքերը թարմացնելու համար, ապա կրկին թափով յետ էր բերում՝ ճակատը մի լաւ շփելուց յետոյ և հանդիսաւոր, հրամայողական շեշտով գիմում էր մերթ մէկ, մերթ միւս զինուորին, որ սկսում էր անտանելի դառնալ իր պահանջներով։

—Սալդաթ, պաղաժդի! փրկարար բառ, զինուորները մի առ ժամանակ լռում, սպասում էին քիչ յետոյ նոյն պահանջը վերսկսելու համար։

Գիւղացիք անծանօթ նրա հոգուն, նրա ներքին ցաւերին, ուրախ էին և՛ նրա համար, և՛ իրանց համար։ Օհանն էլ ամեն անգամ՝ ուէօին գիւղամիջում տեսնելիս՝ կանչում էր յետեւից։

—Քսէնոր Նաւօ, բանդ ի՞նչպէս է, անլեզունների

հետ ինչպէս ես գլուխ թափում. ձայնդ լաւ է դալիս, մի վախեցիր, Աստուած կ'օգնի:

— Եօլայ եմ տանում Օհան տմի, լաւ է, միայն թէ չը հարբեն, որ հարբեն, Աստուած աղատի:

— Աստուած խէր է, բաւոր Նաւօ. Աստուած ողորմած է, հարբեն էլ, դու հախներից կը գաս, բերանումդ լեզու կայ, լեզու:

Նաւօն ժպտում էր ցաւով և աւամայ միտն էին գալիս իր գիշերային արկածները, իր մէջքի ուռոյցներն ու կապոյտները, հարբած, կարմրած դէմքերը, ահագին բռունցքները և այդ բոլորի դէմ իբրեւ դէնք՝ իր ողորմելի « պ ա դ ա ժ դ ի ն »: Եւ էլի օրեր անցան. ուէսն ըստ երեւոյթին լաւ էր, իշխում էր, իսկ Օհանը չէր դադարում նրան գիւղամիջում գովելուց: Ամառն անցաւ, վրայ հասաւ աշունը, եկեղեցու կաղամախի արագիւնները թռան գնացին. էրկէն Սէփօն էլ հրապարակ չէր դուրս գալիս իր մահաւով և նախիրն էլ դաշտ չէր գնում: Յուրտ էր: Զինուորները շարունակում էին ապրել գիւղերում, դեռ փախի վճռական ձայն չը կար:

Ուշ աշուն էր, մի ցուրտ երեկոյ, խըլվըլիկ երեկոն, երբ հայ գիւղերը կատարում են հին-հայկական տարեգարձը զանազան տեսակ չոր մրգերով, երբ երեխաները թօնրի շուրջը բոլորած՝ երկիւղով և հետաքրքրութեամբ, և երբեմն էլ ուրախութեամբ նայում են հերդիկին, որտեղից պիտի կախուի և ցած իջնի ախքան սպասուած խլվիկը: Օհանն էլ իր ընտանիքով խըլվըլիկը տօնեց, երեխաները չոր մրգերով զուարճացան, մեծերն էլ մի մի բաժակ գինի խմեցին և տմենքն էլ պատրաստում էին վերկենալ անկողին մշտնել: Թր'իկ. թր'իկ. բոլորի հայեացքը դէպի դուռը դարձաւ և նոյն վայրկեանին՝ իրար բռնած, քաշքշելով, բռնելով, երգելով ներս ընկան երկու հարբած զինուորներ: Թօնրի շուրջը դատարկուեց. աղջիկներն ու հարսները փախան, տան հեռաւոր անկիւնում, խաւարի մէջ,

կուչ եկան, մանրերը մեծերի փէշերին կսլան: Օհանի երկու որդիները առաջացան դէպի զինուորները, փորձեցին ինչ որ բաներ ասել, խեղճ խեղճ թոթովեցին անորոշ հնչիւններ, բայց զինուորները նրանց հրեցին այս ու այն կողմ, մօտեցան թանրին, ուր նստած մնացել էր Օհանը և երկիւղով ու անհանգստութեամբ նայում էր անսպասելի տեսարանին: Ձինուորները օրօրուելով նստեցին նրա կողքին:

—Գինի, ծերունի, գինի տուր մեզ, այսօր տօն է:

Օհանը չը հասկացաւ, զինուորները ձեռքի նշաններով հասկացրին:

—Տղէրք, մի կաւ գինի բերէք, սրանք «հայ-բրիտանեաներ են», տնից տեղից կարուած մարդիկ, թող թաթախուեն, մարդ են, ո՞վ գիտէ, խմելուց յետոյ իրանց չարք կ'առնեն, կը դնան:

Գինին յայտնուեց: Ձինուորներն ագահաբար խմել սկսեցին, փոխառփօխ առաջարկելով նաև ծերունուն: Օհանն առաւ, բարեմաղթեց, զինուորները հռհռացին և երգեցին: Կաւը դատարկուեց:

—Գինի, ծերունի, գինի տուր մեզ:

Բանը լաւ չէր, զինուորներն արդէն շատ էին հարբած, եթէ էլի խմէին, դուրս գնալ չէին կարող:

—Չը կայ, բրտներ, չը կայ: Ձինուորները չը հասկացան:

—Գինի, ծերունի, գինի տուր մեզ:

Լաւ չէր, հայրն ու որդիները իրար նայեցին, ճար, եւր էր հարկաւոր ազոտուելու համար: Կամաց կամաց հարբածները կատաղում էին և դառնում սպառնալի:

—Գինի, ճշում էին նրանք այս անգամ բռունցքները սզմած և տանտիրոջ օձիքը բաշքշելով: Երեխաներն սկսեցին ճչալ, պատուը մշմշաց, աղջիկներն ու երկու հարսներն էլ աւելի կուչ եկան: Որդիները լուռ էին:

—Այ տղէրք, ինչ անենք:

Լուսթիւն տիրեց, որդիները պատասխան չունէին:

Ծեր գլուխն աւելի փորձուած էր. Օհանն իբրեւ վերջին միջոց վերկացաւ, շտապ շտապ շորերը հանեց, անկողին մտաւ և իսկոյն աչքերը փակեց, բնած ձեւացաւ, յուսալով՝ թէ զինուորները կը թողնեն կը հեռանան, Անօգուտ յոյս. զինուորները նստեցին անկողնի կողքին և կամացուկ յետ քաշեցին վերմակը:

— Նստիր, ծերունի, գինի: Օհանն շտապեց նստել, աղերսական հայեացք ձգեց իր չարչարողների վրայ, ճերմակ միրուքը բռնեց, ցոյց տուեց, փորձեց հասկացընել, թէ ինքը ծեր է, ուզում է բնել, իրաւունք ունի քնելու: Իզոյր, զինուորները մի բան հասկանալու վիճակում չէին: Նրանք շարունակեցին իրանց անողորմ խաղը: Օհանը օգտուելով որ և է վայրկեանից, երբ զինուորների հայեացքն այլ կողմ էր դարձած, շտապով սողում էր անկողնի մէջ, վերմակը գլխին քաշում և քնած ձեւանում. նոյն վայրկեանին զինուորները բաց էին անում նրա երեսը, դէն ձգում վերմակը և ձեռքից բռնած նստեցնում:

— Գինի, ծերունի, գինի:

Տեսարանը երկար շարունակուեց. ամբողջ ընտանիքը և երկու սարի պէս սղամարդիկ դողում էին երկու հարբած զինուորներից: Օհանը վազուց էր մտածում ուղարկել ուէսին կանչել, բայց վախենում էր բանը մեծանայ. այժմ անսուտ, որ էլ ուրիշ հնար չունի: Նրա հրամանով օրդիներից մէկը դուրս գնաց: Քիչ յետոյ դուռը ճոնչաց և տան կիսախաւարի մէջ, մուտքի կողմում յայտնուեց ուէսի փոքրիկ պատկերը. Օհանն այս անգամ համարձակ կերպով նստեց:

— Քնուոր Նաւօ. հրեշտակ էիր հասար, էս անլեզուները երեխաներին դիւահար արին, մի ճար արա, սրանց դուրս տար:

Ռէսը մօտեցաւ, այս անգամ նա աւելի խորխտ էր քան երբէք: Ճրագի լոյսի առաջ փայլիլում էր պղնձեայ նշանը, ահագին փափախը իր ստուերով համարեա ամբողջապէս ծածկել էր նրա դէմքը, բայց այս-

պիտով նա աւելի իշխանական խորհրդաւորութիւն էր ստացել: Խաւարի միջից պլստացող նրա աչքերը այս անգամ նոյն իսկ սպառնալի էին. ճիպտի փոխարէն նա ձեռքին ունէր մի հաստ գաւազան, որ միայն գիշերներն էր ձեռք առնում: Ռէսը հանգիստաւոր քայլուածքով անաջացաւ, հասաւ նստած զինուորներին և առանց մի բառ ասելու հրամայող թափով բռնեց առաջինի ձեռքը և փայտով դէպի դուռը ցոյց տուեց: Զինուորն իր կարմրած աչքերով նայեց ապուշ ապուշ, ապա յանկարծ դուրս քաշեց իր ձեռքը և մի սպառնական «նո՛ւ» արեց: Ռէսը ի պատասխան այս առաջին յանդգնութեան, յօնքերը կիտեց, աչքերը խոփուեց, գաւազանը ճօճեց օդի մէջ և ճշաց որոտագին.

— Պ ա դ ա ժ դ ի՛ս ապա կրկին բռնեց նոյն զինուորի ձեռքը և քաշեց այս անգամ աւելի թափով, աւելի համարձակ:

— Նո՛ւ, Նո՛ւ, մռմռացին երկու զինուորները միաժամանակ, բռնեցքները սղմեցին և Օհանին թողնելով իր տեղում, ստքի ցատկեցին, նրանցից մէկը իր ձեռքը դէպի ուսի օձիքը մեկնեց:

— Պադաժդի, սալդաթ, պադաժդի՛ս ճշաց ուսը ապա դարձաւ Օհանի որդիներին, որոնք կանգնել էին անշարժ ու լուռ:

— Ծրագն այստեղ բերէր:

Ծրագը մօտեցրին. և մինչդեռ զինուորները զարմացած սպասում էին թէ ի՞նչ է լինելու, ուսը կուրծքը դուրս ձգեց ճրագի լոյսի առաջ, ի ցոյց դրեց իր նշանը, քաշեց առաջին զինուորի ձեռքը և դրեց իր իշխանութեան այդ առարկայական պատկերի վրայ, ապա ոտքը դետին զարկելով՝ գոռաց բոլոր ուժով.

— Հը՛, դէ պ ա դ ա ժ դ ի՛ս ասում եմ:

Այդ վայրկեանին ուէս Նաւօն սքանչելի էր. նա մի ոտքն առաջ էր դրել, կուրծքը շարունակելով դուրս ցցուած պահել, մի ձեռքով գաւազանը բարձրացրած և միւսը նշանի վրայ. նրա փոքրիկ աչքերը վառուել էին

և լայնացել, փափախը յետ էր գնացել բաց թողնելով ճակատը, որի վրայ երկու սպառնալի աղեղներ էին կազմել վեր բարձրացած յօնքերը: Նրա փոքրիկ կուրծքը անդադար բարձր ու ցածր էր լինում, ունի յուզուած էր, զայրացած և վշտացած:

— Հ'ը, ձայնիդ մեռնում, պղտիկ մարդ, ձայն տուեց Օհանը ծնկների վրայ բանձրանալով անկողնի մէջ և իր թատաղը դիտին յարմարեցնելով, դէ մի նեղի էէ, նշանը մէկ էլ ցոյց տուր, մէկ էլ, ասա «ստարշինա» եմ, թագաւորի ծառայող:

Բայց զինուորներն էլ չը սպասեցին, որ նա մէկ էլ ցոյց տայ նշանը, նրանցից մէկը սաքի մի հարուածով դէն չպրտեց ձէթի ճրագը. ունի գաւազանը բարձրացըրեց, բայց հարուածը կորաւ խաւարի մէջ, խրճիթը մթնեց, ճիչն ու աղմուկը, լացն ու շիւանը հնչուեց չորս կողմից, և մի և նոյն ժամանակ ինչ որ ստուերներ իրար խառնուեցին: Խաւարի մէջ լսւում էր սաների տրոփիւն, բռնեցքների թրփոց, ապտակների շրխկոց: Ո՞վ էր ծեծողը, ո՞վ էր ծեծուողը, այդ դժուար էր խմանալ, միայն մութի մէջ մի բանի բերաններ մռմռում էին, կրճքերը հեռւմ և հարուածները տեղում անընդհատ: Ստուերները շարժուեցին դէպի դուռը:

— Դուռը բացէք, յանկարծ լսուեց ունի ձայնը: Մէկը շտապով բացեց դուռը և երեք հոգի իրար բաշքը շէլով, հարուածելով, չանդուելով դուրս ընկան. ունի ու զինուորներն էին, փոքրիկ մարդն իր պարտքը կատարեց:

— Տղէրք, դուք դուրս մի եկէք, շուտ դուռը փակեցէք, ճրագն էլ մի վառէք, հրամայեց Օհանը, դուռը վայրկենապէս փակուեց. ներսից Օհանի ամբողջ ընտանիքը խաւարի մէջ խարխափելով, սողալով, իրար վրայ ընկնելով, պատերից բռնելով խմբուեց դրան առաջ:

— Դէհ, կպէք դրանը. օրդիք, ամենդդ այստեղ էք,

հա, այսպէս. խօսմ սալդաթների բանին չը խառնուեցիր, բան չունէք, լաւ չէ: Պառաւ, դո՛ւ էլ այստեղ ես, դու էլ արի, կպիր դրանը:

— Ընկայ, այ մարդ, բան չեմ տեսնում, ընկայ թոնրի ալը. լսուեց մի խեղճ ձայն:

— Արի, կնիկ, սողալով արի, մօտ ես, հա այստեղ, եկա՛ր, ձեռքդ տո՛ւր, այսպէս, դէ դրանը կպիր: Սուս, մի հեւացէք, կը լսեն:

Ներսում այսպէս հրամաններ էր արձակում Օհանը, իսկ դրսում խաւարի մէջ անընդհատ լսում էին հարուածների ձայները և ուէսը՝ սկզբում խրոխտ, բայց կամաց կամաց սուելի մեղմ, շարունակում էր կրկնել.

— Պաղաժդի, սալդաթ, պաղաժդի! Բայց հարբած ու զայրացած ղինուորներն այդ փրկարար խօսքն էլ չէին հասկանում և ամեն մի պաղաժդիին հետեւում էին նորանոր հարուածների ձայներ, հայհոյանքներ:

— Հո՛ւպ առէք դուռը, պի՛նդ, պի՛նդ, հրամայում էր Օհանը ներսում:

Դրսում յանկարծ ձայները բազմացան, առաջինների աղմուկի վրայ նոր հարբածներ էլ վրայ հասան և ամեն մի հասնողը ընկածին հարուածեց: Մի ժամանակ էլ պաղաժդին չէր լսում ամբողջ, այլ մաս մաս «պաղաժ սալդաթ», կամ «դաժդի սալդաթ», այն էլ ինչպէս ցաւոտ միմունջներ:

— Երեխէք, մէջքերդ լաւ կպցրէք դրանը, էլի նորերն եկան, Աստուած աղառի, թէ մեզ վրայ տոն, շարունակում էր յորդորել Օհանը, և ամենքը մեծ ու փոքր, մէջքով, գլխով, ուսով, թեւով դրանը յենուած, հուպ էին տալիս բոլոր ուժով, ճռճռացնում էին տախտակները:

— Սօնն, Շո՛ւշան, դուք ո՛ւր էք, դուք էլ եկէք, կանչում էր Օհանը, իր 10—12 տարեկան փոքրիկ թոռներին, կպէք, զաւակներս, պի՛նդ, պի՛նդ: Փոքրիկները վազուց այնտեղ էին. բայց իրանց մայրերի փէշե-

րից բռնած, կծկուել էին լուռ: Միւսները սղմում էին բոլոր ուժով և սպասում սրտատրոփ թէ ի՞նչ է լինելու: Դրսից շարունակում էին լսուել ուէսի հառաչանքները, տնքոցը, անորոշ, խղճուկ պաղաժդին և հարուածների ձայները:

—Սպանում են ախր, սպանում են ուէսին, պնայիկ, ասաց լալով փոքրիկ Սօնան, ես վախենում եմ:

—Սուս, սուս, չեն սպանում, դու դուռը սղմի, կազեօննի մարդ են, հարբած են, որ հարբեն, այնպէս կը լինի. ճրագ չը վտռէք, ամենքդ այստեղ էք, հարսներ, դուք լաւ չէք սղմում, աղկերք զօր տուէք:

—Օճֆ, ճիս, լսում էր դրսից:

—Սպանեցին, նորից մրմնջաց Սօնան, և բարձրաձայն հեկեկաց:

—Սոս, սուս, հարս նրա ձայնը կտրի, դուռը չը թողնէք, էլի, էլի:

Անցան դարձեալ բոպէներ, ծանր ու սպանիչ, դրսից էլ պաղաժդի չէր լսում: այլ ինչ որ ծանր ու երկար տնքոց, ինչ որ լալկան մրմնջ, աղերս, որ հազիւ հնչում էր տասն հարուածից յետոյ մի անգամ, ապա այն էլ լռեց, մնացին միայն հարբածի հայհոյանքներ և հարուածների ձայներ: Մի վայրկեան ամեն ինչ լռեց, և յանկարծ մի ճնշուած, տանջուած կրծքից դուրս թռաւ մի սարսափելի, յուսահատ ճիչ.

—Օ գն ու թի՛ւն. դա ուէսի վերջին փորձն էր, յուսահատ անճարի փորձը: Այդ ձայնը սարսափի ոլորներով բարձրացաւ, տարածուեց գիւղի վրայ, թակեց բոլոր դռները, հնչուեց բոլոր հերդիկներում: Օհանի տան ներսում բոլոր կծկուած մարմինները փշաքաղուեցին, մազերը դիզացան խաւարի մէջ, ամենքն իրար կպան, աւելի ուժով սղմեցին դուռը, որ ճռնչաց ընդհանուր զօրի տակ, գիւղի միւս դռներն էլ աւելի ամուր փակուեցին և ամեն ինչ լռեց:

Ա. Ա. ՀԱՐՈՆԵԱՆ

ՀԱՅՐԵՆԻ ՀՈՂԸ*

ՎԵՊ

ՀԱՆՐԻ ԲՕՐԴՕԻ

VI

Ժակ Արլարը թերթեց իր յուշատետրը, նշանակեց կապոյտ մատիտով մի քանի կարեւոր տեղեր, ապա սկսեց մեծ մեծ քայլերով ճեմել իր աշխատութեան կարիքէտուով, ձեռքով շարժումներ անելով և թուղցիկ խօսքեր արտասանելով:

—Շատ լաւ, ասում էր ինքն իրան, գործերս լաւ են գնում: Կարծեմ այս օրը ինձ համար նոր հորիզոններ կը բացանայ:

Նա առաջուց սեմնում էր մինիստրութիւնը տապալուած և խորհրդի նոր նախագահը իրան առաջարկելիս մի կարեւոր մինիստրական պաշտօն: Նրա ինքնավստահութիւնը աւելի հեռու հորիզոններ էր երեւակայում իր առաջ:

—Եթէ ինձ առաջարկեն մինիստրի օգնականի պաշտօն, ես կը մերժեմ: Ինձ պէտք է զոնէ հասարակական աշխատութիւնների կամ վաճառականութեան մինիստրութիւնը տան: Ներքին գործերի մինիստրութիւնը աւելի լաւ կը լինէր, ի նկատի ունենալով՝ որ կարող էի փոփոխութեան ենթարկել իմ նահանգի վարչական կազմը, համաձայն իմ նոր կարծիքների, բայց այդ մինիստրութիւնը չեն տալիս սկսնակներին:

Կէս ամիս կտր, որ նա վերաբնակում էր իր նախկին բնակարանում՝ սեպտեմբերի վերջը և հոկտեմբերի սկիզբին անցնելով որպէս թէ որսորդութեամբ մի նախկին արմատական մինիստրի մօտ, որ պաշտպան և սիրող էր համարում ժողովրդի, որին նա արհամարհում էր իր ահագին հպարտութեան բարձ-

*) Տե՛ս «Մուրճ» № 7.

բուլթիւնից: Իսկապէս Ալվարը նախապատրաստել էր իր մուտքը՝ քաղաքական ասպարիզում և իր քաղաքական փոփոխութիւնը:

Նա հասկացել էր, որ Մէրանները թշնամարար և Աննին սառն էին վերաբերում իրան, առանց իսկական պատճառը գուշակելու, բայց նա մտածում էր թէ ժամանակը ամեն բան կը գրասէ և թէ աւելի լաւ էր սուժամանակ հետանալ և համբերութեամբ սպասել անխուսափելի հաշտութեան: Չիմանալով իր կնոջ ծանր հիւանդութիւնը, չը նայելով պ. Մէրանի մի քանի անհանգստացուցիչ նամակներին, որոնց նա կարեւորութիւն չէր տալիս, որովհետեւ չափազանց խանդարում էին իր ծրագիրները, նա իր վերջին նամակում պահանջում էր որ կինը շուտով դայ Պարիզ իր մօտ: Նա պէտք ունէր կնոջը ընդունելութիւններ անելու համար, որովհետեւ նա սիրում էր համախմբել իր շուրջը այն նշանաւոր սննծանց, որոնց ծառայեցնում էր իր շահերին:

Հոկտեմբերի վերջին էր: Պարլամենտական նիստերը վերաբացուել էին: Այդ օր ժակը պէտք է հարցադնումն անէր կառավարութեան ներքին քաղաքականութեան մասին: Այդ ընդհանուր հարցադնման շարժառիթներն այն խիստ ճնշումն էր, որ գործ էին գրել հարաւում պայթեալ գործադուլները զսպելու համար և սօցիալիստների գործողութիւններին նպաստաւոր մի նահանգապետի կողմից ձեռով կատարուած պաշտօնանկութիւնը: Եթէ ի նկատի ունենայինք պարլամենտի դաւաժներում տիրող ժխտը, լրացրական յօդուածները, պէտք էր կարծել, որ պարլամենտը անվստահ ընդունելութիւն պէտք է անէ չափաւոր միւնիստրութեան, որ պահպանել էր երկրի վստահութիւնը մի տարուց աւելի, իսկ այդ շատ երկար էր արդէն մեր անհամբեր ժամանակի համար: Կանխօրէն քննադատում էին ժակ Ալվարի անձնատրութիւնը, որ յայտնի էր դարձել իր սրտատանած երկու կամ երեք ճառերով. «տալինը» Խալիսայի հետ ունեցած մեր ասեւորական յարաբերութիւնների, իսկ մնացածը՝ ելուստացոյցի մասին և միմեանց հարցնում էին, թէ որքան լեզի աղբեղութիւն կամ ճարտիկութիւն պէտք է պարունակէր այդ սրտատանան նորընծայի ճասը, որին պարլամենտ էին ուղարկել չափաւոր ընտրողները:

Ժակը, պատրաստուելով արդէն, չէր մտածում ամենեւին այն սկզբունքների մասին, որ պէտք է պաշտպանէր: Անշուշտ, նա գեղեցիկ և սրտատալից քարոզներ կ'արտասանէր այն ժողովրդի մասին, որի համար այնքան հոգս էր քաշում, ինչպէս ինքն էր ասում, որքան ձուլը ինձորի համար: Իսկապէս, նա հոգս էր քաշում միայն իր ասպագայի հա-

մար: Կշռելով զանազան կուսակցութիւնների ունեցած շանսերը՝ իշխանութեան համեկու, նա եկել էր այն եղբակացութեան, որ առաջագէժ ձախ կողմը ապագայում յաջողութիւն պէտք է ունենայ: Մի միտք միայն նրան անհանգրստացնում էր, այն է. «Եթէ սխալուած լինեմ, եթէ բուտինապաշտ երկիրը չը կամենայ առաջ գնալ, եթէ պատգամաւորները, տնկելով անդադար իրանց աչքերը իրանց շրջանների վրայ, չը վստահեն առաջ ընթանալ...»

—Շատ ուշ է, եղբայրակեց նա: Ես ընտրել եմ Պէտք է յաղթել: Ես իմ այս ճառով մինիստրութեան գլխին բաւական հարուածներ կիջեցնեմ: Իմ հարուածներից կը դատեն ոյժս:

Նա մօտեցաւ Սենի վրայ նայող լուսամտին: Նա տեսաւ միայն գետափի ծառերը, սեւ ու մերկ և նրանց արանքով՝ դանդաղահոս գետը: Մշուշը ծածկում էր հորիզոնը: Այդ երկրի վիստ բանաստեղծութիւնը նրան չը գրաւեց ամենեւին:

—Ես ատում եմ Պարիզի այս անկիւնը, մտածեց նա: Նա ստեղծուած է երազողների, բանաստեղծների համար (և որպիսի արհամարհանքով նա արտասանում էր այս խօսքերը): Հէնց որ վարձի ժամանակը լրացաւ, ես կը գնամ մի աւելի աշխոյժ, աւելի լուրջ թաղ, գործունեայ մի թաղ...:

Նա հագաւ վերարկուն և իջաւ: Անցնելով զոնապանի խուցի առջեւից, նա բացեց կիսովի դուռը:

—Դէ, տիկին Պատու, ահա այսօր մենք կը տապալինք մինիստրութիւնը:

Եւ ձեռքով խփեց իր հաստ թղթապանակին:

—Ուղարկեցէք է ձեր մարդին ինձ մի կառք բերելու: Դռնապանը և զոնապանուհին հիացմունքով վերաբերում էին իրանց տնկէջին: Ժակը հմտութեամբ զրոյց էր անում ստորինների հետ և նոյն իսկ շողոքորթուած էր տեսնում իրան այդ զրոյցների մէջ, զգալով իր գերիշխանութիւնը: Տան սպասուորները տհաճելի չէին նրա մտքին որ թէ փայլուն ճկունութիւն ունէր, բայց գոհիկ էր մնացել:

Տիկին Պատուն դուրս հրեց իր ամուսնուն:

—Գնա, գնա, շուտով կառք բեր!

Դա մի տձեւ հաստ կին էր, որի ճարպոտ ղէմքը փայլում էր: Նա թագաւորում էր տան բարձրից մինչեւ ներքեւ, ուստի և կառավարութեան խնդիրներում իրան ցոյց էր տալիս որոշ ձեռնհասութիւն ունեցող:

—Յաջողութիւն, պարոն Ալվար: Այս երեկոյ, մենք կը գնենք «La Patrie» լրագիրը:

Ժակը ասաց կառապանին:

—Դիւրոն սրճարանը:

Նա նախընթաց օրը իմաց էր տուել, տիկին Ֆերրէզիին, որ մի փոքր ժամանակ սուգից և խղճահարութիւնից յետոյ դարձեալ եկել էր Պարիզ և միայն Նրա հետ:

—Մենք կը նախաճաշենք միասին նիստից առաջ: Ես կը բերեմ քեզ համար մուսքի տոմսակ:

Նա ամենեւին չէր վախենում յաճախուած տեղերից: Աշխատելով ամեն տեղ իր տաղանդը ի յոյց դնել, նա յինկաբար և մնապարծութեամբ հրապարակ էր հանում իր բարի բախտը և նոյնը ստիպում էր անելու իր սիրուհուն:

Նա ուշացել էր: Իտալուհին ձանձրանում էր նրան սպասելուց: Թէեւ նրա մոյգ արդուգործը աչքի ընկնող չէր, բայց նրա հիանալի սեւ մազերը և ծիրանի վարդի նման նրա ալ բերանը իր վրայ էին դարձնում բոլոր նայուածքները: Նա հասկացաւ թէ ինչ տեսակ կնոջ տեղ էին ընդունում իրան, հասկացաւ որ ժակը մատնում էր իրան ծառաների արհամարհանքին այդպէս թողնելով իրան: Բայց ժակը թէ խօսքով և թէ իր դործողութիւններով միշտ խոնարհեցնում էր իրան ամեն բան, ուստի և երբ կոմսուհին տեսաւ նրան կառքից իջնելիս, նա, խոնարհուած, մոռացաւ զանգատուել:

Ժակը ներողութիւն անգամ չը ինչրեց, ընտրեց մի սեղան և վերջրեց կարտը, որին չը նայեց նոյն իսկ, այլ անմիջապէս պատուիրեց:

—Ոստրէներ, առանց լիմոնի, տաճնեւութ հատ. թերխաշ հաւկիթներ, բիֆշտեկս, լաւ եփած. կէս շիշ սօսէրն և սէն-էմիլիօն գինի: Գնացէք, շտապեցէք և յայտնեցէք տնտեսին:

Ապա աւելացրեց ինքն իր համար:

—Բօրտօն ոյժ է տալիս և չէ տաքայնում. նա հռետորներ զինին է:

Միայն դրանից յետոյ մտածեց իր սեղանակցուհուն հարցընել:

—Պատուիրածս նախաճաշը յարմար է ձեզ:

Կոմսուհին հաւանութիւն տուեց, բայց մի փոքր յետոյ, երբ նա ոստրէներին ձեռք չը տուեց, ժակը ասաց.

—Ջարմանալի է. այս բոպէիս դուք սիրում էիք նրանց:

Նա խօսեց նիստի մասին, նշանակեց այն քաղաքական մարդկանց, որոնք պէտք է մասնակցէին վիճարանութիւններին և նկարագրեց ամենքին խիստ դառն հեգնութեամբ: Նա ամենեւին չէր քաշոււմ իր սիրուհուց. ոչ մի տաղանդ, չնորհ չէր գտնում նրա առաջ: Նա յատկապէս հարուածում էր պարկեշտ և յարգելի համբաւները:

Ազանդերին՝ նա կանչել տուեց մի կոմմիսիօնէր և տալով նրան իր բնակարանի հասցէն, ուղարկեց նրան բերելու իր պօստը՝ նա սպասում էր ստանալու իր հարցապնդման օգտակար մի տեղեկութիւն:

Կոմմիսիօնէրը բերեց միայն մի հեռագիր: Ժակը բացեց, կարդաց և նորից ծալեց առանց մի բան ասելու: Խտալուհին հասկացաւ նրա դէմքից որ աւելի մի խոչընդոտ է պատահել քան տխրութիւն: Ժակը մի քանի րոպէ խորասուզուած մնաց մտածմունքի մէջ, ապա իր սովորական կոպտութեամբ ասաց.

—Վերջացրի՞ր. թող ինձ ուրեմն... Ինձ հարկաւոր է մի քանի յիշողութիւններ դասաւորել պարլամենտը գնալուց առաջ:

Խտալուհին ցոյց տուեց հեռագիրը:

—Ոչինչ չը կայ ուրեմն:

Նա նշան արեց թէ ոչ:

—Քեզ կը տեսնեմ նիստից յետոյ:

—Ոչ, վաղը: Վիլիէ փողոցը. քեզ կ'իմացնեմ:

—Ուրեմն, մնաս բարեւ: Քո գեղեցիկ խօսքերդ ես կը կլանեմ շուտով, պարլամենտում:

Նա հագաւ ձեռնոցները և դուրս եկաւ: Ժակի հոգն չէր անգամ թէ դրսում, այդ անձրևով և մշուշով ինչ պէտք է անի այդ կիներ մինչև պարլամենտի ժամանակը հասնելը:

Ժակը պահանջեց մի ուղեցոյց և որոնեց Աննէսի գնացքի ժամերը: Ժամը երկու և կէսին մի ճեպընթաց կար, որ հասնում էր Աննէսի առաւօտեան ժամը մէկին, իսկ մի ուրիշը գնում էր երեկոյեան ժամը եօթին և քսանհինգ րոպէին և տանում էր տասներկու ժամ աւելի ուշ:

Նա նայեց ժամացոյցը: Ժամը մի և երեսուն րոպէ էր. նա ժամանակ ունէր ընտրութիւն անելու:

—Ես կառք չեմ գտնի զիչերուայ մէջ Մէնթօն գնալու համար, ասաց նա ինքն իրան: Բացի դրանից...

Նա նորից կարդաց հեռագիրը, որ պարունակում էր այս մի քանի խօսքերը. «Աննիս Եւս վաճ Է. եկե՛ք իսկոյն. Մեքան»: Նա մտածեց.

—Հայրը պաշտում է նրան և երես է տալիս: Նա չափազանցնում է նրա բոլոր յոգնութիւնները: Ես ապահով եմ, որ տիկին Մէքանը ինձ այսպիսի հրաժայողական կերպով չէր հեռագրի. եկե՛ք իսկոյն: Ուրեմն իմ պատուական աներս մոռանում է, որ ես այսօր հարցապնդումն եմ անելու: Լրագիրները այդ մասին բաւականին խօսեցին: Փաւառական այդ ծակերում, ոչ մի բան չը գիտեն: Երբ մարդ այնպիսի փեսայ ունի, որի քաղաքական ապագան փառաւոր է երեւում, պէտք է հետաքրքր-

րուել, թէ նա ինչ է անում: Աննին վտանգաւոր հիւանդութիւն չունէր, երբ ես նրան թողեցի: Միայն մի քիչ սակաւարիւն էր: Արդ, սակաւարիւնութիւնից մարդ չէ մեռնում: Առողջութեամբ ամենաքնքոյշներն են թաղում ամենահոգեւորներին...

Նա չէր վարանել իր որոշման մէջ. բայց աշխատում էր պատճառաբանել այդ որոշումը և գունաւորել, չը նայելով որ ինքն իր հետ անկեղծ էր: Նա չէր ուզում իջնել մինչև իր և սասիրութեան խորքը, որովհետև մահուան յայտնութիւնը տալիս է մեր գործողութիւններին մի այնպիսի խորհրդաւոր կարեւորութիւն, որ հարուածում է նոյն իսկ ամենաանզգայուններին:

—Ես կը մեկնեմ երեկոյեան ճեպընթացով: Աւելի նուազ անձնական պատճառներ են պէտք հարցապնդումն յետաձգել տալու համար: Ժամը հօթին նիստը վերջացած կը լինի և գուցէ մինիստրութիւնը՝ տապալուած. ես հէնց ճիշտ ժամին կը հասնեմ:

Հանդարտուած՝ նա շնորհաւորեց իրան.

—Մի և նոյնն է, սակայն անհաճոյ է. շատ ուրիշները ինձ տեղ կը կորցնէին իրանց:

Նա բաւականութիւն էր գգում իրան տրամադիր և պատրաստ մտնելով կռուի, չը նայելով վատ լուրին:

Իսկ այնտեղ, գիւղում, իրանից շատ հեռու, Աննին աւարտում էր իր մատաղ կեանքը հանդարտաբար: Քառնեւէորս տարեկանում արդէն այլ եւս ոչ մի բան չէր հրապուրում նրան երկրի վրայ: Նա չէր սպասում ոչ մի երջանկութիւն և նոյն անմեղ հողին ճանաչում էր բոլոր այն դարչութիւնները, որոնք ապաստանում են սիրոյ անուան ներքոյ: Ժակը սպանել էր նրա մէջ ապրելու ցանկութիւնը: Եւ սակայն, իմանալով նրա մօտալուտ վախճանը, նա չէր մտածում ոչ իր արհամարհանքներին ոչ եւս իր անհաւատարմութիւններին:

Աւելի գործնական, նա ինքն իրան ասում էր.

—Ես ճարպիկ չը վարուեցի բոլոր այդ Մէրանների հետ. ես հեռացրի նրանց ինձանից յիմարաւար. պէտք է վարմունքս փոխեմ:

Եւ նա մինչեւ անգամ չամաչեց այսպէս մտածելու.

—Եթէ անախորժ դէպքը պատահի՝ ես կենթադրուեմ շատ անհաճոյ պահանջումների. բացի դրանից ես ունեմ միայն իմ ռոճիկը և իմ ծաղրալի եկամուտները: Ահ, ամենին ոչ, չը պէտք է այդ լինի:

Իր առաջիկայ ճառը ծանր մտախոհութիւններով չը խանդարելու համար, նա վանեց այդ տխուր առարկան:

—Անճին ուշքից գնացած կը լինի, իսկ նրա չըջապատողները սարսափած կը լինեն, ուրիշ բան չը կայ: Խեղճ փոքրիկ! Նա շատ գողար է, ևս նրան կ'ուղարկեմ ձմեռն անցկացնի հաբաում:

Այգպէս լաւ խօսքերով հանդարտացնելով իրան, նա վեր կացաւ և պահանջեց հաշիւը՝ վճարելու համար:

—Այստեղ մի սխալ կայ, նկատեց նա սպասաւորին. գուք նշանակել էք մի աման պտուղ, որն ևս չեմ սպասուիրել:

Նա վճարեց ուղղութեամբ հաշիւը և միաբը հանդարտ՝ դուրս եկաւ պարլամենտը գնալու համար: Մազըլէն եկեղեցու սուղիի ժամացոյցը ցոյց էր տալիս ժամը երկու: Ժամը երկուսից մինչեւ եօթը և քսան հինգ բոպէն նա ժամանակ ունէր կազմակերպել իր քաղաքական յաղթութիւնը:

.. Երեկոն վրայ էր հասել և մշուշի մէջ, Բուրբոնեան պալատի առաջ անց ու դարձ էին անուամ խմբեր, անցնելով նիստի լուբերն ստանալու, չը նայելով վատ եղանակին: Անձրեւակալների տակ աշխոյժով վիճարանում էին: Մեծ դէպքերի կարապետ ջղային անհնանդատութիւնը յուզում էր այդ հետաքրքիրներին: Գաղի կտուցների բոյը հազիւ ստուեր էր ձգում: Գետի վրայ, չըջմուխի լուբի նման, արագ վազում էին անց ու դարձ անող նաւակների կարմիր և կանաչ ճրագները:

Ժակ Ալվարը, շառագունած, առանց ուշադրութիւն դարձնելու թափուող անձրեւին, երեւաց այն փոքր ծառուղիի վրայ, որ միանում է Օրօթի գետափին: Երկու արմատական պարագլուխները, Ֆելաման և Հիտորֆօր, առաջնորդում էին նրան:

—Սպասեցէք հինգ բոպէ, ասում էր վերջինս, մենք կ'ունենանք քուէարկութեան հետեւանքը: Մեծամասնութիւնը մեր կողմն է: Հինգ բոպէից յետոյ այլ ևս մի նիստութիւն չի լինի:

Ժակը նայեց ժամացոյցին գաղի կտուցի տակ:

—Ժամը վեց և երեք քառորդ, ևս հազիւ չորերս փոխելու և ձեռքնթացին հասնելու ժամանակ ունեմ:

—Գնացէք, գնացէք դուք Ֆելամանը շարժելով իր մեծ բաղուկները: Տիկին Ալվարը ձեզ սպասում է: Խեղճ բարեկամ, որքան քաջութիւն հարկաւոր էք ձեզ, որքան քաջութիւն:

Այս Ֆելամանը այն բարի յեղափոխականներից միին էր, որոնք իրանց ընտանիքում նմանում են հեզ ոչխարների:

Ժակը սեղմեց նրանց ձեռքը:

—Դուք ջիւղ և բռունցք ունէք, ասաց պարձեալ Հիտորֆօրը: Եւ երիտասարդ պատգամաւորը գիտէր այդ չոր և մա-
օգոստոս, 1902.

չուած մարդի կօմպլեմենտի արժէքը: Նա ասաց նրանց մեկնելիս.

— Հեռագրեցէք ինձ հետեւանքը այս հասցեով. Մէնթօն, Սէն-Բէրնար, ցառահանջ:

Եւ երբ բանում էր կառքի դռնակը մտնելու համար, նա կիսովի յետ նայեց և աւերացրեց.

— Ուղարկեցէք ինձ լրագրների մի կապույ, նոյն հասցէն:

Նա կուչ եկաւ կառքի անկիւնում. կառքը շուտով անհետացաւ մռայլ մշուշի մէջ:

Յետ դառնալով Ֆելտանի հետ, Հիտտըֆօրը սկսեց այսպանել.

— Ի՞նչ հրաշալի միտք յղացար խօսելով նրան իր կնոջ մասին: Ես փոքր ինչ առաջ նրան տեսայ Դիւրոնի մօտ նախաճաշելիս իր սիրուհու հետ:

— Դուք ապահով էք, հարցրեց միւսը, որ խստաբարոյ էր և յաջողութիւն չունենալով կանանց մօտ, ատում էր յատկապէս վաւաչոտութիւնը:

— Բայց այդ սիրուհին շատ գեղեցիկ է, պնդեց Հիտտըֆօր:

Եւ լեզուն չրկացրեց ատամներին:

— Ուրեմն ինչ էր այն սրտառուչ ֆրազը մեր տմենասիրելի էակներին սպառնացող մահուան մասին, որի պատկերը նա հեռացնում էր իրանից, որպէս զի կարողանայ մտածել միայն այն պարտաւորութիւնների մասին, որ դրել է նրա վրայ հայրենիքի և իր ներքին խաղաղութեան սէրը: Նրա այդ ֆրազը ցնցեց ամբողջովին ինձ:

— Իմ խեղճ Ֆելտան, ուրեմն դուք միշտ պէտք է հոնտօրութեան խաբուածը լինէք: Յիշում էք, ինչ որ ձեզ ասացի Ալվարի առաջին ճառից յետոյ. «ահա մեր ամենքի տէրը»: Նրա ուղեղը նոյնչափ սառն է, որքան նրա խօսքը տաք է: Միայն նա իր ոյժի վրայ մեծ համարումն ունի:

Նա քաշեց տարաւ իր պաշտօնակիցին պարլամենտի գաւիթները:

— Պէտք է քուէարկութիւնը վերջացած լինի Ո՞վ պէտք է նոր մինիստրութեան գլուխ կանգնի: Ալվարը, որ տապալել է հինը...

— Դուք կարծում էք, որ մինիստրութիւնը տապալուել է:

— Անշուշտ... նա շատ երիտասարդ է. նրան կը տան օգնականի պաշտօն:

Եւ նրանք մտան նիստի սրահը...

Մի քառորդից յետոյ, ժակը՝ որ պատուիրել էր կառապա-

նին Սէն-Ժերմէնի բուլվարով անցնել Լիօնի կայարանը գնալու համար, նորից անցնում էր պարլամենտի առջևից: Արդէն լրացրած ամիսը տղաները աղաղակում էին:

—Պահանջեցէք... մինիստրութեան անկումը...:

Եւ Օրսէյի գետափի վրայ կանգնած խմբերը հետզհետէ շատանալով զրելթէ մի ամբոխ էին կազմում:

Նա մտածեց.

—Լրագիրները գեռ չեն կարող յայտնել անկում, բայց տղաները արդէն գիտեն: Ուրեմն ճիշտ է:

Նա նայեց ժամացույցին և զլուխը դուրս հանեց պոռալով.

—Շտապեցէք, եթէ ոչ գնացքին չեմ հասնի:

Նրա հրամայողական ձայնը թօթափեց կառապանին, որ մտրակեց ձին:

Կայարանի առաջ նրան սպասում էր տիկին Ֆերրէզին: Ժակի ճառի մէջ արած ակնարկից նա հասկացել էր այն հեռադրի իմաստը, որ իր ներկայութեամբ բացել էր:

—Աննին մեռել է, մտածում էր նա:

Եւ որովհետեւ նա գիտէր երեկոյեան ձեպընթացի ժամանակը, ուստի շտապել եկել էր մխիթարելու տարփածուին.

Ալվարը անցաւ նրա առջևից. «Դուք! Ես մեկնում եմ...» վազեց գնելու երեկոյեան լրագիրները մի կուպէ բռնեց առաջին կարգում: այդտեղ եկաւ նրան գտաւ իտալուհին մի դամբիւղ լի պաշարեղէնով, որ գնել էր մտածելով թէ նա ժամանակ չի ունենայ ճաշելու:

Նրկաթուղային պաշտօնականները պոռում էին արդէն. «Ի կառք» և շարժելով փակում էին դռները:

—Իմ խեղճ բարեկամ! ասաց իտալուհին: Որպիտի վիշտ! Մեռնել քսան տարեկանում!:

—Նա չէ մեռել, ուղղեց նրան Ժակը և առաւ ձեռքից կողովը. նա միայն ծանր հիւանդ է:

Տիկին Ֆերրէզին անկեղծօրէն դռնեց.

—Ո՛հ, տար Աստուած որ նա ապրի:

Սակայն կայարանը գալիս, նա չէր կարողացել արգելել իրան մտածել թէ այժմ այլ ևս ոչ մի բան չէ բաժանում իրան Ժակից և կարող է ամուսնանալ:

Իսկ Ժակը ասում էր ինքն իրան.

—Այս կինը սկսել է չափից դուրս գալ. պէտքէ ղսպել:

Նա հարցրեց իտալուհուն.

—Մնացիր մինչև նիստի վերջը, մինիստրութիւնը տապալուեց, թէ ոչ:

—Ոչ, ոչ! հէնց որ դու մեկնեցիր, ևս վազեցի այստեղ

քեզ մի անգամ եւս տեսնելու: Խեղճ բարեկամ! ես սպասում եմ քեզ կէս ժամից 'ի վեր:

—Շատ յիմարութիւն է. պէտք էր մնալ!

Եւ այդ կծու խօսքն ասելով, նա սեղմեց իր սիրունու ձեռքը, մինչ սա կամենում էր համբուրել նրան և մտաւ վազօն: Գնացքը սուղեց. լուսամտից նա տեսաւ որ իտալուհին լացում է: Սա չէր քամել վիշտը մինչև մրուրը, թէև վաղուց գիտէր, որ սէրը մանաւանդ մի տանջանք է:

Լիօնի կայարանի լոյսերը կարծես ընթացող գնացքի հետ փախչում էին: Ժակը տեղ բռնեց, բացեց «Le Temps» լրագիրը և որոնեց պարլամենտի նիստի նկարագրութիւնը: Վիճաբանութեան հասնելուց առաջ, լրագրերը ստուերագծում էր գաւիթների ոգևորութեան մի թեթիւ պատկեր և առաջ էր բերում ճառախօսների ծանօթ անձնաւորութիւնների ցուցակը: Երիտասարդ երեսփոխանը այս մտածմունքն ունեցաւ.

—Օգտիոխութեան համար գնացածները ուշ են վերադառնում Պարիզ: Յունուար ամսին ես աւելի շատ ունկնդիր կ'ունենայի բարձր դատաւարգից:

Նա կարգաց իր ճտը: Դա՛ իրան նենգամտութեամբ կաղմուած մի ղեկուցագիր էր մինիստրութեան գործած սխալների մասին պարլամենտի փակուելուց 'ի վեր և մեր ներքին անկարգութեան մի դառն նկարագիր: Ընդդիմադրական ճառախօսները աւելի սաստկացնում են այդ կծու քննադատութիւնները: Ժակը չէր հանդիպել այն բուռն հակառակութեան, որ սպասում էր ազգային ժողովի մի կուսակցական հատուածից: Չափաւոր խումբը, որ պէտք է որոշէր իր նշանաբանը առաւօտեան մի ժողովում, չէր կարողացել համաձայնութիւն կայացնել իր բռնելի տակտիկայի մասին: Իր նախագահի բացակայութիւնը, որ հիւանդացել էր շատ անյարմար ժամանակ, նրան դուրս էր հանել չաւղից: Պալով աջակողմեան կուսակցութեան, նրա ներկայացուցիչները որսորդութիւն էին անում և նրա նստարանները դատարկ էին: Յոյս էին դրել հարցապնդողի անփորձութեան վրայ, բայց շատ սխալ ենթադրութիւն էր այդ: Լինելով մարտնչող բնաւորութեան տէր մարդ, Ժակ Ալվարը խրախուսում էր իրան կռուի: Չափաւորների ուժղնութիւնը չէր, որ կարող էր յետ պահել նրան պայքարից: Խիզախ՝ յարձակման մէջ, նա աւելի ահարկու հանդիսացաւ առարկութեան մէջ և ընդհատումների հեղինակները բաւական դժնդակ հարուածներ ստացան: Նա յարձակւում էր կազմալուծ խմբերի վրայ և նրա կողմնակիցները նիստի սրահի մէջ կռպիտ ոստիկանների պաշտօն էին կատարում...

Նա ուրախ ուրախ ժպտում էր կարգալուծ իր ասածները և կրկնե-

լով՝ որպէս զի աւելի լաւ հիանայ իրանով: Ապա նա անցողակի կարգաց ներքին գործերի մինիստրի պատասխանը, որին կատաղեցրել էին նրա քառթիւները և տեղեկութիւններին ստուգութիւնը: Անձնապատասխան և մաղձատ, այս մինիստրը այնպիսի ճառեր էր արտասանում, որոնք նմանում էին յարձակումների: Ընդհանրապէս, նրա այդ յարձակումները յաջողում էին, բայց այս անգամ նա ամեն չափ անցաւ և իբրև մի վերաւոր վարագ՝ նա վրայ էր տուել առանց աջ ու ձախ նայելու:

Օրագրի պատմութեամբ վերջանում էր այդտեղ, երեկոյեան ժամը հնգին: Ժակը սահնայրեց ձեռքից թերթը և յիշողութեամբ շարունակեց նիստը: Նա վերսկսել էր իր ճառը, այս անգամ ստիպուած լինելով պաշտպանելու իր անձը, ըստ որում մինիստրը յանդիմանել էր նրան փոփոխամտութեան մէջ: Այդ հակապատասխանի մէջ, զանց առնելով իրողութիւնները և բաւականանալով ճարտարախօսութեամբ, նա բացատրել էր որ ստիպուած էր փոխել իր կարծիքները ժողովրդի սիրոյ, ճշմարտութեան յանկութեան և կառավարչական կեղծաւորութեան ծանձրոյթի պատճառով: Նա մի հիանալի ընդարձակութիւն տուեց իր ճառին և իր նախկին բարեկամների աքսոյձ կուսակցութիւնը դատաւիտեց: Այդ ժամանակ էր, որ իր անկեղծութեան իբրև տոհմատէնայ, նա արտասանեց իր հռչակաւոր ֆրազը իր օջախին սպառնացող սուղի մասին և իր ներկայութեան մասին սմբիոնի վրայ, չը նայելով վշտին և անհանգստութեան: Այդպիսով հակաճառութիւնները մեծացել էին յանկարծ և խորհրդի նախագահն ինքը ստիպուած էր ձեռք առնել իր վտանգուած կարինետի և քաղաքականութեան պաշտպանութիւնն ու դնել վտանգութեան հարց:

Ի՞նչ էր արտադրել քուէարկութիւնը: Անշուշտ այդ ժամին, արմատական կուսակցութիւնը արձանագրում էր իր յաղթութիւնը և արդէն շարժւում էր ստանալու համար հանդուցեալ մինիստրութեան ժառանգութիւնը:

— Պարիզից հեռու, ինձ զանցառութեան կը տան, մտածում էր Ժակը: Հիտալֆօրը, որ նախանձոտ է, ինձ որ և է մի անկարեւոր պաշտօն առաջարկել կը տայ, ես նրանց խորհուրդ չեմ տալիս ինձ մոռանալ: Նրանք այժմ ըմբռնեցին իմ ոյժը...:

Գրողուած, արբած պաշտարի այդ օրով, նա գնաց ծխելու նրբանցքում: Նա կարեկցաբար նայեց երկու կամ երեք ճանապարհորդի, որ ոչ մի ուշադրութիւն չէին դարձնում իր վրայ և արհամարհեց նրանց, որովհետև անգիտանում էին իր պարլամենտական դերը: Ապա նրա խիստ լարուած և յոգնած միտքը բաց

Թողեց փառասիրական նպատակները: Քիչ քիչ նրա եռուն արիւնը ստիպեց նրան ափսոսալ իր սիրուհուն: Թէև նա որոշում էր արդէն խզել կապը իրաւունհու հետ, բայց հաճութեամբ նրա միտքը կանգ էր առնում այդ կապի քաղցր զուարճութիւնների վրայ:

Երբեմն երբեմն, քաղաքական անուրջների և կամ սիրահարական յիշողութիւնների այդ արչաւանքի ընթացքում, նրա միտքը պաշարւում էր յանկարծ այս ծայրայեղ հարցմունքով.

—Բայց եթէ նա մեռել է:

Սակայն նա լաւ ախորժակով կերաւ իր հեռատես հարճի պաշարեղէնը:

Աննին մեռել էր օրամուտին, առանց հոգեվարքի և մի այնպիսի կրիզիսի ժամանակ, որ ամենին վտանգաւոր չէր երևում, ճիշտ այն ժամին, երբ ժակը այդ մատուց մահից օգուտ էր քաղում ամբիսնից չլացնելու իր սենկնդիրներին:

Երկրորդ օրը, Լիւսիէն Հալանդը, որ եկել էր տեղեկանալու հիւանդի առողջութեան մասին, իմացաւ այս տխուր գէպը: Մի սրտաւ սպասուհի նրան ասաց զոանը.

—Մեր խեղճ օրիկները աւանդեց հոգին երէկ իրիկուն:

—Ահ, կարողացաւ միայն ասել նա:

Դժբախտութեան ծանուցումը մեր մտքի սովորական վիճակից վեր է անցնում: Երբ մենք ամենին պատրաստուած չենք այդ լուրին, մեզ մի քիչ ժամանակ է պէտք ճշմարտութիւնը իմանալու համար: Մեր հոգին մի հատիկ ճախրով չէ հասնում մեծ ուրախութիւններին կամ մեծ վշտերին:

Լիւսիէնը ոչինչ չէր գտնում ասելու:

Երբ դուռը պէտք է փակուէր իր առաջ, նա հարցրեց.

—Կարելի է տեսնել նրան:

Նրան մոցրին սղաղկեաց սենեակը, որ վերածուել էր մատուռի: Աննին հանգստանում էր անկողնու վրայ, որ ծածկուած էր վարդերով և յամիկներով: Մոմերի լոյսը սգեւորում էր նրա թափանցիկ դէմքը նոյն իսկ կեանքի նմանութեամբ և նրա երկար արտեւանունքը՝ խոնարհուած աչքերի վրայ, որոնք արդէն կորցրել էին իրանց զեղեցկութիւնը, աւելի եւ մեղմացնում էին նրա հրեշտակային գիմազների մաքրութիւնը:

Երիտասարդը ճաշակեց այդ սրտաճմլիկ տեսարանի դառնութիւնը:

—Երբ ես եկայ փոքր ինչ առաջ, մտածում էր նա, ես ման էի գալիս ոսկեզօծ տերեւների վրայ, որ քամին շաղահարել էր: Որովհետեւ ես գիտէի, որ Աննին երկար չի ապրի, ծա-

ների այդ զարդարանքը ինձ սիրելի էր: Իր դիւրաբեկ հրապոյրի՝ աստուածային այն շնորքի համար, որով տպաւորուած էր նրա ժպիտը և զարդարուած էին նրա խօսքերը, նրանից այնպէս բնականաբար բղխող առաքինութեան համար, ես սիրում էի նրան, որ այժմ մեկնուած է այնտեղ: Ես գիտէի, որ նա մեռնելու է և նրա մահը սպէսեցնում է ինձ: Ես չեմ տանջւում, բայց ցանկանում եմ տանջուել: Ինձ թւում է, որ այդ ընտիր հոգու էութիւնը դեռ երկար կ'ապրի ինձ համար, նման մի փոքրիկ խորհրդաւոր լապտերի, լուսաւորելով իմ առջ կեանքը և ցոյց տալով ինձ նրա բարութիւնը: Եւ սակայն ես այլ եւս չեմ տեսնի նրա նայուածքը, ոչ ժպիտը: Ես չը կարողացայ տեսնել նրանց վերջին անգամ, տպաւորել իմ մէջ ընդ միշտ: Կարողանալու եմ երկար պահպանել յիշողութեանս մէջ: Խեղճ երեխան՝ որ ամբողջովին սէր էր և ուրիշ մաքրեց իր սնդուկ կրակով սիրելու տանջանքը, որտեղ է հանգստանում այժմ: Արգեօք նա չսփռացաւ իբրի այս թառամած վարդերի լոյսը, կամ գնաց վերաբնակելու մի այլ երջանիկ բնակավայրում: Ես չը գիտեմ, մենք ոչինչ չը գիտենք: Տխրութիւնս ինձ լայայնել չէ տալիս, բայց ես չեմ զգում սիրտս...

Նա լսեց մի հեծկտանք և գլուխը բարձրացրեց: Անկողնու միւս կողմին նա տեսաւ Ժաննիին՝ ծնկաչոք, աղօթելիս: Եւ այդ րոպէին իսկ նա զմայլուեց այդ արապստաթոր դէմքով և նախանձեց այդ վշտի պարզութեան:

Սենեակի խորքում, տիկին Մէրանը նստած, հազիւ համարձակում էր շարժուել: Նա բոլորովին չփոթուել էր իր վըշտից: Երբ նրան պատմեցին Աննիի վերջին վայրկեանները—մեղմ և հանգաբա ինչպէս ամբողջ այդ քնքոյշ կեանքը—լիւս սիէնը հեռացաւ: Եւ ճանապարհին, սիրտը խոցուած, նա զորմացաւ իր սիրոյ անգործութեան վրայ, որ տանում էր այդ մահը առանց բուռն դանդատի և նոյն իսկ գտնում էր այդ խորտակուած պատկերի մէջ մի անկեղծելի առաքինութիւն:

Երբ անցնում էր Մէնթօն-Սէն-Բէրնարդով, նա տեսաւ պօսաատնից դուրս գալիս Ժակ Ալվարին, որի գէմքը յողնած լինելով վազօնում անցրած մի գիշերից, վշտին յարմար հետքեր էր ցոյց տալիս:

—Դու գիտես դժբախտութիւնս, ասաց Ալվարը նրան առաջը բռնելով: Այդ խեղճ Աննին!... Այն րոպէին՝ երբ ես մի-նիստը պէտք է դառնամ... որքան հպարտ կը լինէր նա...!:

VII

Գարնան արեւը լիազեղուն մանում էր փոքր սրահը, ուր աշխատում էր Լիւսիէն Հալանդը: Դա նրա մօր նախկին առանձնասրահն էր, ուր բնակւում էր նախամեծարապէս: Նա կարգում էր ժամանակակից ռեթիւ-ի աֆն էջերը, ուր Տէնը հաստատում է, որ մեր գաւառական և տեղական հասարակութիւնները չեն կարող այլ ևս լինել իրանց բնակիչների համար փոքր հայրենիքներ, հպարտութեան, սիրոյ և անձնուիրութեան օրինական առարկաներ, որովհետև նրանք մանրացրուած են իրանց վարչական կազմակերպութեամբ, իսկ այդ դնում է նրանց պետութեան ձեռքում և նրանց ներկայացուցիչները կորցրել են իրանց նշանակութիւնը ընդհանուր քուէարկութեան ցաւալի հետեւանքների պատճառով, որը հրատարակել է իրաւունքների հաւասարութիւն, բայց պահպանել է պարտաւորութիւնների անհաւասարութիւնը:

—Այո, մտածում էր նա, վերկենալով և թողնելով գիրքը, պէտք է տալ նրանց անձնական կեանք: Մի պետութեան ոյժը կազմողն այդ փոքր հասարակութիւնների աշխոյժն է: Այս բլուզաւոր ժողովուրդը, որ առում է ֆրակը, պէտք է նուաճել նրան, պէտք է ստացուցանել նրան աշխատութեամբ և անձնուիրութեամբ որ իր բնական ներկայացուցիչները բոլոր նրանք են, որոնք ապրելով իր մօտ, այնուամենայնիւ աւելի ազատութիւն և կրթութիւն ունեն և չահափրուած են հէնց իրանց կալուածների պատճառով, լաւացնել հասարակական վիճակը. զալով ինձ, ես կատարում եմ ինչ որ կարող եմ, իմ համայնքի մէջ, ընդհանուր խորհրդում:

Երկու բաց լուսամուտներով արեւը բերում էր գարնանային քաղցր ջերմութիւնը, խառն օդի աֆն կենսասուղիւթութեան հետ, որ մայիս ամսի հրապոյրն է կազմում: Փնդկերի միջը բացւում էր մեծ ծառերի վրայ, որոնց զալար՝ տերևները զեռ բաց չէին թողնում լոյսը: Լիւսիէնը մօտեցաւ միւս փեղկին, որ աւելի լայն տեսարան էր ցոյց տալիս: Նա զմայլուեց լճի կապուտակ ջրով, որ ծփում էր առաւօտեան թեթի հովից և, աւելի մօտ, մարդապիտիւնների քնքոյշ խոտով, որ արդէն բարձրացրել թանձրացրել էր: Տան ներքի, վարդենիները սկսել էին ծաղկել: Երիտասարդը ժպտաց այդ բերկրալի բնութեամբ.

—Ինչպէս լաւ է ապրելը! այսպէս աշխարհը վերստանում է իր երիտասարդութիւնը. ես զգում եմ իմ, որ ուռեցում է

կուրծքս անուրջներով, նանկութիւններով և ոյժով, ինչպէս առաջ, տառը տարի սրանից առաջ:

Նա վերջրեց բուխարու վրայից Աննիի լուսանկարը մանկութեան ժամանակ, որ միշտ մնացել էր այդտեղ: Նա ծածկուած էր մի քիչ փոշիով. փաղուց նրան չէր նայել:

— Կեց ամիս է անցել նրա մահուանից և ես յիշում եմ այդ մահը իբրև մի շատ հին բան: Նրա մասին մտածելը ինձ դժնդակ չէ թւում: Ես գիտարութեամբ կարողանում եմ մաքրութեամբ վերաբաղակցել յիշողութեանս մէջ նրա դիմագծերը, բայց ինձ համար գիտարութիւն չէ նրա յիշատակով ներհնել իմ կեանքի լաւագոյն գործողութիւնները: Հէնց այդ յիշատակը ջահելացնում է ինձ ինչպէս մի խորհրդաւոր գարուն և փշում է իմ մէջ մարդկանց աւելի մատչելի մի հոգի:

Արեգակը հրապուրում էր զրօսներու: Լիւսիէնը, թողնելով իր գրքերը, իջաւ զառիմայր մարգագետինները: Երբ հասաւ սիրահարների հովանոցին, նա տեսաւ որ վարդեր են քաղել և ցանկապատի երկաթեայ թելերը փշրուած են: Բայց նա չը նեղացաւ:

— Ժաննի Մէրանը հիացած կը մնար. ահա այժմ սիրահարները կարողացել են մտնել ինձ մօտ, ինչպէս հօրս ժամանակ: Մայիս ամսուայ աղղկութիւնն է:

Օգուտ քաղելով այդ ճեղքուածքից, նա դուրս եկաւ մեծ ճոնապարհի վրայ: Վօժընիէ սօցիալիստը բաժրածայն ճաւ էր խօսում մի յոռի դէմքով ստահակի, որ նստել էր մի քարի կոյտի վրայ: Նա պոռում էր.

— Դուք արժանի չէք աղքատ լինելու!

Երբ նա նկատեց Լիւսիէն Հալանդին, նա նրան վկայ բռնեց.

— Պարոն, տեսնո՞ւմ էք այս մարդին, որ այստեղ նըստած է: Ես կամեցայ տալ նրան գլխարկս, որովհետեւ գլխարկ չունի, բայց նա՝ մերժեց հայհոյանքներով: Ծիշտ է, իմ թաղեայ գլխարկս ծախվուած է. բայց ծակերը փոքր են: Այս պարոնին պէտք են ոսկեայ և մետաքսեայ զգեստներ: Ես նրան առաջարկեցի մի պատու հաց և նա դէն ձգեց: Նա դէն ձգեց նուիրական հացը, որ կերակրում է մարդկանց և նա խնդրեց ինձանից մի հատ դրամ: Աղքատները այլ ես չեմ սիրում իրանց աղքատութիւնը: Նրանք գողանում են մեզանից, որ ապրում ենք մեր աշխատանքով և զբայիւրանում ենք նրանց գժրախտութեան, էժան կերպով, մեր միջոցների համաձայն, զթափրութիւն ցոյց տալու երջանկութիւնը:

Նա մի մեծահոգի զայրոյթով բռնկուել էր: Ստահակը նը-

բան նայում էր մուայ նայուածքով, ուր կարգացում էր արհամարհանք, մինչ նա իր ձեռքը պարզել էր Լիւսիէնին ասելով.

— Ողորմութիւն արէք հաշմանդամիս:

Իր նայուածքով նա կամենում էր հասկացնել Վօժընիէին թէ չէր յարգում նրա ընկերութիւնը, այլ աւելի լաւ էր համարում լաւ հագնուած մարդկանց շահաւէտ յաճախորդութիւնը:

Լիւսիէն Հալանդը, տալով նրան մի քանի դահեկան, հարցրեց նրան.

— Ո՞րտեղացի ես:

— Լօզաննից, Շվեյցարիայից:

— Պէտք է վերադառնալ սյգսեղ, բարեկամս: Մարդ իր երկրում աւելի հեշտութեամբ օգնութիւն կը գտնէ: Մենք այստեղ օգնում ենք համայնքի տնտեսներին. մենք չենք կարող օտարի տնտեսներին եւս կերակրել: Համայնքը, մի մեծ ընտանիք է, որ պէտք է պահէ իր միջոցները իւրայինների համար:

Նա այս վերջին խօսքերն ասել էր իր համար և որովհետեւ մտածում էր Տէնի գրուածի մասին գաւառական կեանքի վերաբերմամբ:

Նրան բարեւեցին անցնող գիւղացիները, որ տանում էին ջահիլ հորթերին դէպի սպանդանոց.

— Բարի լոյս մեր տանուտէր:

Այդ ողջոյնները ցոյց էին տալիս մի համակրական յարգանք որ Լիւսիէնը այժմ ստանում էր ամբողջ նահանգում և որը վերաբերում էր աւելի օգտակար և բարեխորհուրդ տանուտէրին, քան նոր մեքենաներով հողը շահագործող կալուածատէրին, որ կամենում էր սաստկացնել հողի բարգաւաճութիւնը մի նոր, մինչև այդ օրը անծանօթ, եղանակով:

Երիտասարդը մի քանի քայլ արեց դէպի Վօժընիէն, որ գնում էր Տալուար:

— Այս առաւօտ, ասում էր սա իր սովորական չաղակրատութեամբ և յուզուելու հիանալի հեշտութեամբ, այս առաւօտ, հազիւ լոյսը ծագեց, ես իջայ Թօնից: Զանապարհի վրայ վայրի վարդեր կային և օդը թեթիւ էր, երիտասարդութեանս ժամանակի պէս: Ձեր չափանակները, պարոն Հալանդ, տարածում են իրանց ճիւղերը օրհնութեան ձեռքի նման: Եւ ես տեսնում էի լիճը որ փայլում էր արեգակի ճառագայթներից: Այդ ժամանակ ես հանեցի գլխարկս և աղօթեցի բարձր ձայնով: Սիրտս նման էր շատ լցուած կուժի, որ պէտք էր մի քիչ թափել: Ես չնորհակալութիւն յայտնեցի Հօրը, որ այնտեղ վերև է, նրա համար, որ սիրում է բոլոր այս լաւ օդը երկրի և իմ

վրայ. և ես ասում էի. «Հայր, այդ շատ է! երկիրը երջանիկ է. ես երջանիկ եմ և ես տալիս եմ ձեզ սիրտս»: Նա չի մերժի ընծաս, ինչպէս այս աղքատը իր ծակծկուած գլխարկը:

Լիւսիէնը ճաշակում էր այդ տարօրինակ առաքելալի ոգևորուած ճառը, որ ինքն իր մէջ գտնում էր առատ ուրախութիւնների աղբիւր: Նա թողնում էր նրան խօսել և նա ամսասլով, կանգ առաւ Մէնթօնի տանուտէրութեան առաջ, ուր ժամագրութիւն ունէր մի ամուսնութեան համար: Վօժընիէն սեղմեց նրա ձեռքը.

—Պարոն Հալանդ, ես ձեզ ողջունում եմ, շարունակում եմ ճանապարհս դէպի Տալուար:

—Դուք մեզ թողնում էք վերջնականապէս:

—Ախ, գնում եմ չաչխատելու Ալբերավիլի երկաթուղու վրայ. բոլոր արհեստները լաւ են ինձ համար. անթիւ են այն երկիրները, որոնք տեսել են պտոյտս:

—Մնացէք մեզ հետ: Այստեղ, իմ համայնքի մէջ, ամեն մարդ ձեզ ճանաչում է և ձեզ սիրում է: Ահա գրեթէ մի տարի կայ, որ թէ իբրեւ անցորդ, իբրեւ վերաբնակ, զուք ձեր զեղեցիկ պատմութիւններով հիացնում էք երեկոյեան ժողովները: Դուք այլ ես օտարական չէք մեր մէջ:

—Ոչ, ոչ, ճանապարհորդները ինձ կանչում են: Ես քարշ եմ տալիս հայրենիքս իմ կրօնիկների վրայ: Եւ մարդիկ ամեն տեղ եղբայրներս են:

Եւ նորից նա բռնեց երիտասարդի ձեռքը.

—Մնաք բարեւ, պարոն Հալանդ: Ես ձեզ կը տեսնեմ՝ կամ չեմ տեսնի. բայց ես կը յիշեմ: Ես լսել եմ ձեր զովասանքը այնպիսի բերաններից, որոնք չը ծաւաւ կուլ են տալիս, որովհետեւ սոված են լինում՝ ուտելիս: Դուք սիրում էք փոքրիկներին՝ Վիկտոր, Հիւգօյի պէս: Երկրի այս անկիւնում առանց ձեզ եօլա չեն կարող գնալ: Դուք երջանիկ կը լինէք, ես եմ ասում ձեզ այդ...:

Եւ հետանալով, նա նետեց այս միտքը ձեռքի լայն շարժումով.

—Բոլոր մարդիկ բարի են: Երջանկութիւն՝ տալն է և երբ մարդ սչինչ չունի, սչինչ չէ տալիս կամ տալիս է ինքն իրան:

Լիւսիէնը տեսաւ նրա անհետանալը ճանապարհի դարձուածքում և նրա ձայնը կորաւ իր ուրուագծի հետ, որովհետեւ նա շարունակում էր միայնակ խօսել:

Տանուտէրութեան շէնքին՝ մի քանի զեղջիկուհի արդէն թառամած, որ բռնել էր երկու երեխաների ձեռքից և յղի էր,

սպասում էր այն մարդկանց անմուռնչ համբերութեամբ, որոնք երբեք ժամացոյց չեն ունեցել:

—Պարոն տանուաէր, ասաց նա վեհերոտութեամբ, միայն դուք էիք պակաս: Մարդս այնտեղ է իր վկաների հետ:

Դա ամուսինն էր, որի ամուսնութիւնը պէտք է կատարէր: Նա զգուեց փոքրիկներին:

—Դէ լաւ, իմ արիասիրտ Պէրօննա, այս անգամ ամեն բան կարգին է. ձեր մարդը այլ ևս չի թողնի ձեզ:

—Ձեզ եմ պարտական այդ, պարոն տանուաէր:

Մանկիւս նա լսեց որ իրան կանչում են և յետ նայելով, տեսաւ ժակ Ալվարին, որ կանգնեցրեց իր յիկտորիան և ցատկեց ատանց դիպչելու կառքի սանդուխին:

—Գնում էի քեզ մօտ, ասաց սա առաջ գալով, միշտ չիտակ և կոյտաւ: Ձը լինի պատահաբար քո տանուաէրութեան դսրծերը արգելում են քեզ տուն գալ. սիրող տանուաէր!

—Այո, արգելում են ինձ, պատասխանեց իրւսիէնը առանց ժպտալու: Այս վայրկեանին ևս ամուսնացնում եմ. իսկոյն քո սպասին պատրաստ կը լինեմ:

Ալվարը ցոյց տուեց զեղջկուհուն չարախնդաց լսրչու-թեամբ:

—Սն է հարմնացուն! Թիւ, դու պէտք չես ունենալու պաղարերութիւն քարոզելու: Քո զիւղացիները աճում են, այդ զգուելի է:

Իրւսիէնի դէմքը խստացաւ:

—Հանդիսս թող նրան: Ես շատ նեղութիւն քաջեցի մինչև կարողացայ պաշտպանել այս կինը:

Եւ տեսնելով որ վերջինս, բարձրանալով սանդուխներով, արդէն շատ հեռու էր և չէր կարող լսել, նա շարունակեց.

—Մարդը չէր ուզում նրան: Նա վախենում էր որ իրան կը ծաղրեն: Օտարոտի ինքնասիրութիւն! Իսկ կինը սպասում էր նրան, խոնարհ: Նա մաշում, հիւժւում էր իր փոքրիկներին կերակրելու համար:

Ժակի հոգսը չէր ամենեւին այս փոքրիկ դրաման: Նա սկսեց ծիծաղել:

—Այդ փոքրիկներից անշուշտ շատ ունէր: Աղքատ կանայք մի տեսակ կատաղութիւն ունեն երեխաներ բերելու:

—Նրանք միայնակ չեն անում այդ:

—Հօ երկար չի տուի, հարցրեց Ալվարը: Ես քեզ սպասում եմ. ես ցանկանում եմ քեզ հետ խօսել:

Մի քառորդ ժամից յետոյ երկու երիտասարդները նստած վիկտորիայում, դուրսում էին Մէնիօնի ճանապարհի վրայ, դէ-

պի Ավիւլիի գղեակը: Ժակը զգում էր սիրտը թափ տալու այն պէտքը, որ սովորական է կեանքի մէջ միշտ յաջողութիւն ու նեցող մարդկանց, բայց իրանց յաջողութիւնը միայն այն ժամանակ են կատարեալ համարում, երբ հանրածանօթ են դառնում և նախանձի առարկայ:

— Ես հասայ Աննէսի անցեալ օրը, ասայ նա: Ես ստիպուած էի, սկզբի համար, պաշտօնական ընդունելութեան ենթարկուել: Երէկ կարողացայ խոյս տալ. ես այսօր աւարտեցի մի գործ Տալուարում:

— Ինչ կասկածելի գործ է գնացել աւարտելու, հարցրեց ինքը իրան Լիւսիէն: Տիկին Ֆերրէզին վերադարձել է: Նա դուրէ իսկ է կապը նրա հետ, այժմ, երբ երկուսն էլ ազատ են ամուսնանալու: Տիկինը այնքան էլ հարուստ չէ, ահա ինչ է նա անուանում գործ:

Նա նայեց իր ուղեկցին: Սա յոգնած գէմը ունէր և երջանիկ կերպարանք, որ ունենում են երիտասարդները զուարճութեան մի գիշերից յետոյ:

— Կամ դուրէ նա վերանորոգել է կապը: Գուրէ երկուսն էլ: Բայց նա ինձ կ'ասի: Նա ինձ խոստովանում է բոլոր իր անպիտանութիւնները և նոյն իսկ ես ստորացած եմ զգում ինձ նրա խոստովանութիւններով...:

Ժակը շարունակեց.

— Ահա վեց ամիս կայ, որ ես Սալօյա չէի եկել: Այդ խեղճ Աննիի մահուանից ի վեր...:

Որպիսի սառն անտարբերութեամբ նա արտասանում էր, այդ խեղճ Աճճիճ!

— Վեց ամիս միջխտրութիւն, այդ արդէն երկար է այս անհանգիստ և յեղեղուկ ժամանակի համար:

Լիւսիէնը զգում էր, որ իր մէջ բարձրանում է մի անբացատրելի սաստկութեամբ, զայրոյթի մի արհամարանք իր մանկութեան ընկերի դէմ, որ զօռով կամենում էր իր բարեկամութիւնը նրա շինքին փաթաթել: Նա ինքն զեռ չը դիտէր, թէ ինչպէս հայրենի հողը նուաճել էր իրան և վերածել էր նրա մտքի հետաքրքրութիւնը՝ գործունէութեան, իսկ գիլէտանախդմը՝ ուժգնութեան (էներգիա):

— Բայց ինչու է եկել ինձ տեսնելու, մտածում էր նա: Այլ եւս ոչ մի միտայնող կապ չը կայ այս փառասիրի և իմ մէջ: Եւ նա ասաց այն խաղաղ և քաղաքավարի ձևով, որ պահպանել էր իր նախկին սովորութիւններից և որ կարող էր վարագուրել իր ներքին յուզմունքները.

— Վեց ամիս միջխտրութիւն, որի ընթացքում դուք մի-

ջոյ գտաք աւելացնել հարկերն ու պաշտօնեաները և հարուած հասցնել ամենամուխրական ազատութիւններին: Բանուորներին օգնելու նպատակով, դուք ստաջարկում էք մի անգործադրելի օրէնք աշխատութեան արկածների մասին, որ կը ծառայէ ի վնաս նրանց, որոնց համար կազմուած է, ընտանիքի հարցերի գէտ ի նպաստ ամուրիների և օտարականների, որոնց արկածները աւելի քիչ թանգ կ'արժենան տէրերին: Յիրաւի, դուք մի շատ գեղեցիկ գործ էք կատարում:

Ժակը դիտեց նրան ապշած.

—Ձը լինի՞ դու քաղաքական հոետոր դարձար այն օրից ի վեր, երբ ընդհանուր խորհրդական ընտրուեցիր:

—Ոհ. ես հոետոր չեմ և ես ասում եմ բոլոր հոետորներին: Զգարտութիւնը պէտք չունի ճարտարախօսութեան և մարդ միշտ լաւ է խօսում, երբ մի բան է ասում...

Եւ գրգռուած իր խօսակցի ապշութեամբ, նա շարունակեց.

—Դու չէիր սպասում, կարծում եմ, իմ հաւանութեան: Պաշտօնը ինձ չէ չլայնում. ես ի նկատի ունեմ միայն պաշտօնակատարի գործողութիւնները: Մինիստրը թող լսի ճշմարտութիւնը, որ ես պարտաւոր եմ ասել իմ դպրոցի ընկերին: Երկու տարի առաջ ես սուի իմ անունը, ծնողներիս անունը, քո ազատամտական ծրագրին, քո թեկնածութեան ժամանակ: Դու մեզ խոստանում էիր այն ժամանակ կարգի և անտեսութեան բէժիմ և պ. Մէրանի պահանջի համաձայն, որ քիչ գրաւող էր և անպայման ապակենդրոնացուցիչ, մի աւելի ամուր գլուխ և աւելի սակաւ կապկպած անդամներ: Դու հրատարակում էիր արդիւնադործ համայնքներում մի օրէնք ընկերութիւնների մասին, որ պէտք է հակակրչուէր փողի ոյժը և հարստութեան կուտակումն: Բայց այժմ դու դարձել ես անողորմելի մինիստր մի աղանդաւոր կառավարութեան, որ մի խաբուսիկ հաւասարութեան անունով, ջրնջում է աշխատութեան և ուսման ազատութիւնը, մինչև որ կարողանայ ձեռք տալ նաև բոլոր անձնական և հողային ազատութիւններին:

Ժակը, ապշած, կամեցաւ ծիծաղով ընդունել կծու քննադատութիւնը:

—Խտրութիւն անենք, խտրութիւն: Կանգիդատը՝ պատգամաւոր չէ. պատգամաւորը մինիստր չէ: Կանգիդատը ստրուկ է. պատգամաւորը սպասաւոր է և մինիստրը տէր է: Մարդ փոխում է որչափ աւելի է բարձրանում սանդուխով:

—Այո, ասաց Լիւսիէն կտրուկ կերպով, կապիկը որքան աւելի վեր է ելնում, այնքան աւելի է ցոյց տալիս իր յետոյքը:

Ալվարը արժանի համարեց ժպտալ. նա եկել էր խնդրելու իր բարեկամին մի ծառայութիւն մատուցանելու իրան, ուստի հաշուում էր, որ այդ ծառայութեան համար կարելի է տանել մի քանի խայթոց: Լիւսիէնը, որ հասկացել էր այդ, ի չարն էր գործ դնում:

—Ոհ, ես մտածում եմ երկու տարուց ի վեր, ասաց նա: Ամեն բան նորից պէտք է շինել մեր դեմօկրատիայի մէջ, վերելից ներքեւ: Համայնական ազատութիւնը, օրինակ, որպիսի չար կատակ է: Մենք ունենք մի տանուտէրութիւն Մէնթոնում, որ պահանջում է մի կարեւոր նորոգութիւն, առանց որի կարող է քանդուել: Չարիքը դեռ ուղղելի է, վաղն այլ եւս չի լինի: Քուէարկել տուի մի փոքր գումար իմ տանուտէրութեան խորհրդի համար, բայց նահանգապետութեան մէջ ջնջեցին ելեմտացոյցից: Աննէսիի այդ պարոնները, որ չեկան տեսնելու իրանց աչքով, այդ ծախքը աւելորդ են դասել: Եկող տարի, մենք պէտք է փոխառութիւն անենք ամբողջ շինութիւնը նորից կառուցանելու համար: Նահանգապետն է, նոյն իսկ ոչ նահանգապետը, այլ որ և է մի բաժնի պետ կամ պետի օգնական, որ կառավարում է, նոյնպէս վատ, նահանգի երեք հարիւր համայնքներ:

—Այդ շատ ցաւալի է, հաւանութիւն տուեց ժակը:

—Առաջները, Սալօյում կար համայնքների համար մի խորհրդական, Դա մի փաստաբան էր կամ մի նոտար որ հինգ կամ վեց համայնքի հաւասարմատարն էր: Բայց պետութիւնը այսօր գրաւել է ամեն բան, բռնել է բոլոր իշխանութիւնները, նա ջնջել է առաջուայ զօրաւոր մարմինները, ընկերակցութիւնները, պարլամենտները, գաւառները: Կուսակալութիւնը, նահանգը, միայն արուեստական կեանք ունեն: Դրանք դիակներ են, որ կառավարութիւնը գալուանայնում է չարժման առերեւոյթականութիւն տալու համար: Աւելի բնական կերպով կադմակերպուած համայնքը նոյնպէս սեպհական գոյութիւն չունի, նա ոչ իր ֆինանսների, ոչ իր զաստիարակների ընտրութեան տէրը չէ: Պետութիւնը դարձրել է անհատին լոկ մի կրաւորական հարկատու: Մենք պէտք է վճարենք միայն առաջարկած հաշիւը, որ շատ թանկ է...:

Կառքը կանգ առաւ դղեակի առաջ: Կէս օր էր գրեթէ: Սանդուխի վրայ, Լիւսիէն Հալանդը խօսում էր միշտ մղելով իր առաջ կառավարութեան ներկայացուցչին:

—Եւ ընդհանուր քուէարկութիւնը՝ ոհ, գեղեցիկ մեքենայ, որ շինուած է վառնողութիւն, ակտիւմէտութիւն և սնկարդութիւն տարածելու: Հարիւր տարի պէտք է նրա կրթութեան

ձեռնարկելու համար և հէնց առաջին անգամից արեւոյնում են նրանով ժողովրդին իբրեւ մի թունդ գինիով: Այդ ժողովուրդը ունի, պէտք է ունենայ բնական ներկայացուցիչներ, նրանք որ ամենից չափ են վճարում, նրանք որ ժամանակ, կրթութիւն, իմացականութիւն և շիտակութիւն ունեն: Չը կայ կենսունակ դէմօկրատիա առանց մի ղեկավարող զասակարգի և ճանաչուած իբրեւ ղեկավարող:

Նա փակեց օստտիկ տաք արեւի դէմ առանձնատնեակի փեղկերը, ուր մտել էին. տալա վերցրեց սեղանի վրայից Տէնի հատորը և կարդաց.

— Ժողովրդական քուէարկութիւնը, որ Վի տղէտ, անուշադիր և անտեղեակ միջնորդ է, մի կանխակալ և կրքոտ դատաւոր, մի բարոյագէտ լայն խղճմտա՛քով, փոխանակ պահանջելու անարատ պատուաւորութիւն և ապացուցուած ձեռնհասութիւն, պահանջում է մրցակիցներից միայն հետադարձական շաղակրատութիւն, իրան առաջ մղելու և հասարակութեան ցոյց տալու ճարպիկութիւն, կոպիտ շողոքորթութիւն, եռանդի ցոյց մարդկան և խոստումն՝ գործ դնել ժողովրդի իրան յանձնած իշխանութիւնը իր հակակրութիւնների և նախապաշարութեաների օգտին:

— Ի՞նչ է նպատակը, հարցնում էր ինքն իրան Ալվարը, որ համարում էր ընդհանուր իդէաները լոկ իբրեւ մի հոգմահար, որի ետեւ կարելի է ծածկել դէմքը, նպատակը կամ ցանկութիւնը:

Նա ասաց ժպտալով.

— Ինչպէս դու սիրահարուել ես այնպիսի բաների, որոնք որ և է չա՛հ չեն ներկայացնում քեզ համար: Ընդհանուր քուէարկութիւնը, ամեն բան նրան ծառայեցնել խմանալն է: Նա այնքան ամուլ չէ. նրանից կարելի է մինիստրութիւն հանել, երբ մարդ ճարպիկ է:

Լիւսիէնը նայեց նրան.

— Ո՞վ է քեզ հետ խօսում անձնական չա՛հի մասին: Խօսքը այն ամենի մասին է, որ սպանում է Ֆրանսիան, և դու ցոյց ես տալիս ինձ քո անձդ: Ո՛հ, դու չարժու՛մ, յուղու՛մ ես քեզ համար. դուք ամենքդ այդպէս էք, դուք, այսօրուայ քաղաքական գործիչներդ: Դուք ձեր օգուտը համարում էք երկրի օգուտը և քաղաքակրթութիւնը միայն այն ժամանակ է պտղարեր, երբ դուք հնձում էք: Տէնի մի խօսքն ես կայ ձեզ համար. տհա՛. «Որչափ մի մարդ միայն իրանով, իր բախտով, իր առաջգնացութեամբ, իր անձնական ու սեպական յաջողութեամբ է հետաքրքրւում, նա չափ քիչ բանով է հետաքրքրւում. այդ բոլորը

չատ սակաւ և կարճատեւ կարեւորութիւն ունի, ինչպէս ինքը մարդը»:

Յարձակումն խիստ էր: Ժակը վճռեց դէմ դնել:

— Դու ղեղեցիկ թէօրիսներ ևս կառուցանում, բայց դու գործում ևս տմեն մարդի ևզանակով: Ինչպէս մենք ամենքս, դու ևս շողքորթում ևս ընտրողին խոստումներով՝ տանուաէր, ընդհանուր խորհրդական և ով գիտէ էլ ինչ դառնալու, գուցէ պատգամաւոր, եթէ ևս սոսաջարկեմ ինձ Պարիզի ներկայացուցիչ:

— Ե՞ս:

— Այո, դու:

Սպասաւորը ծանուցել էր Լիւսիէնին որ նախաճաշն պատրաստ է, բայց երիտասարդը կանգնեցրեց ժակին, որ իր սովորութեամբ, առանց քաշուելու, ուղղւում էր դէպի սեղանատունը:

— Ես այդ պաշտօնները ընդունել ևմ հարկադրուած և ստիպանօք և որովհետեւ ալ. Մէրանը հասկացրեց ինձ թէ ես պարտաւոր էի կատարել այդ պաշտօնները, քանի որ չը կան ուրիշ աւելի հմուտ և աւելի անչափաւոր մարդիկ: Եւ ևս չեմ թոյլ տայ ոչ ոքի սասել, որ ես իմ ընտրութիւնը ձեռք եմ բերել խոստումներով և շողքորթութիւններով: Ձեր հին օյիւնները ինձ չափազանց զգուշանում են: Ես փորձում ևմ մի նոր մէթօք, որ է տալ ժողովրդին ճշմարտութիւն՝ ստութեան տեղ, յոյս տալ նրան իր թուլութիւնները, իր մոլորութիւնները, ղեկավարուելու կարիքը. բացատրել նրան ազգի կեանքը բաղգատելով իր սեպխական կեանքի հետ, ամենօրեայ օրինակներով: Որովհետեւ ընդհանուր քուէարկութիւնը մի կատարուած չարիք է, պէտք է դեռ աշխատել բարւոքել նրան: Ես ջանքեր եմ գործ դնում կըրթել և այս երկրի զիւղացիներին. ես խօսում ևմ նրանց հետ ընսանեւար. ամեն անգամ մի փոքրաթիւ խմբի. Քիչ քիչ նըրանք վստահութիւն են տածում...:

Այլմարը չէր ճանաչում այլ ևս իր բարեկամին, որին համարում էր անդառնալի կերպով անհոգ և սկեսպտիկ: Եւ այդ ոչ թէ այն պատճառով որ նա մազաչափ գնահատում էր այդ քաղաքական վիճաբանութիւնը, ոչ. նա բանի տեղ չէր դնում իղէաները, այլ այն պատճառով, որ նա տեսնում էր իր դիմաց մի նոր, անակնկալ և հակառակորդ ոյժ: Նա վտանգուած էր տեսնում իր տիրապիտական ձգտումները: Նա դարձեալ կատակի ձգեց և սոսայ ծիծաղելով.

—Հաւատա լիկայ, դու կարծեմ պատրաստ ես և ինձ հետ մրցելու առաջիկայ ընտրութիւններին:

—Անտարակոյս:

—Ոհ, ասաց ժակը, այս անգամ աւելի շահագրգռուած, որովհետեւ խնդիրը իր մասին էր:

Եւ նա աւելացրեց, պահելով իր ժպիտը.

—Ես քեզ այդ նեղութիւնը չեմ պատճառի: Մինիստր լինեմ թէ նախկին մինիստր, չեն համարձակի ինձ դէմ կանգնողատներ հանել: Ամենակատաղի ազատամիտներին, քո բարեկամներին, ևս չքանչանով կը վարձատրեմ և նրանք իմ ծառայներս կը դառնան:

—Ոչ, հաստատեց լիւսիէնը ուժգնութեամբ, դու անցել ես մի բանակից միւսը, դու դաւաճանել ես քո ընտրողներին, դու այլ ես չես կարող նրանց ներկայացուցիչը լինել պարլամենտում: Եթէ ուրիշներ չը լինեն, դու քո դէմ մի մրցակից կը գտնես:

—Եւ ով կը լինի նա:

—Ես:

—Զգուշացրուած մարդը երկու մարդ արժէ:

—Ոհ, ես ամեն բան օր ցերեկով եմ կատարում: Ես ամենեւին չեմ ցանկանում պատգամաւոր լինել: Այդ մի այնպիսի արհեստ է, որին այսօր պարկեշտ մարդիկ շատ քիչ են հետամուտ, Բայց ես յիշում եմ, որ իմայի՛նները զեկավարել են այս երկիրը, առաջներում, բարեխղճաբար: Իմ ընտանիքով, նոյն իսկ իմ շահերով ես մինն եմ իմ այն բնական ներկայացուցիչների, որոնց մասին խօսում էի այս րոպէիս: Ես չեմ կարող այդ մոռանալ...

—Բայց դու այս չէիր յիշում Պարիզում:

—Սխալում էի, ես փոխուել եմ: Դու չես կարող հասկանալ հայրենի հողի ոգին: Դու եկել ես այստեղ պատահմամբ: Երբ ես վերադարձայ, դու ինձ անուանեցիր օտարական. վերադարձնում եմ քեզ խօսքդ, քեզ, որին ոչ մի կապ չէ կապում այս երկրի հետ և որը չը կարողացաւ առաջնորդել նրա ղեկավարաւատ և խաղաղասէր հողին: Ես գտնում եմ որ քո գործունէութիւնը չարաբաստիկ է. ես պարտաւոր եմ կոռուել նրա դէմ:

Եւ աւելի սիրալիր դառնալով այդ յայտարարութիւնից յետոյ, ցանկանալով ցրել իր հիւրի ստացած ծանր տպաւորութիւնը, նա մտքից ժակին սեղանատուն և, չը նայելով այդ բոլորին, սկսեց հեաքբեքուել նրա մինիստրական գործունէութեամբ: Քաղաքավարութիւնը մի այնպիսի տարօրինակ իշխա-

Նութիւն ունի, որ ստիպում է մեզ ճաշի հրաւիրել նրանց, որոնց հեռանալը սաստիկ ցանկանում ենք: Ճիշտն ասած՝ Ալվարը ինքն իրան էր հրաւիրել. նա հաւատացած էր, որ իրան հաճութեամբ կ'ընդունեն: Մի բոպէ մտախոհ, նա շուտով վերստացաւ իր ուրախ տրամադրութիւնը: Մի ուրիշը, նոյն իսկ աւելի սակաւ իմացական և սակաւ դործունեայ կեանքի ընթացքում, բայց աւելի սակաւ անձնասէր հասկացած կը լինէր այն աշխատութիւնը, որ կատարուել էր Լիւսիէնի մտքի մէջ. բայց նա, միայն մի բոպէ անհանգստութիւն զգաց. նա վստահ էր իր ճանաչած Լիւսիէնի վրայ, որ խաղում էր իգէաներով առանց դործողութեամբ արտայայտելու նրանց, լոկ մշակուած մտքի զուարճութեամբ. այդպիսին երբէք չէր կարող նրա կարծիքով ոտիս լինել: Այդպէս նա ընթանում էր զէպ իր կորուստը, մեծապէս վստահ իր ոյժի վրայ, և հէնց այդ վստահութեամբ պէտք է ոչնչանար այդ ոյժը:

Նա ուտում և խմում էր մեծ ակորժակով: Լիւսիէնը նախում էր նրան հետաքրքրութեամբ, որպէս թէ դեռ ուսումնասիրում էր նրան և լցնում էր նրա բաժակը բոմանական ընտիր գինով: Աղանդներին՝ ժակը, որ իր կառքն յետ էր ուղարկել, հարցրեց նաւերի ժամացոյցը:

—Աննէսի թէ՞ Տալուարի համար:

—Օհ, Աննէսիի համար. Տալուարը, վերջացաւ:

Եւ նա մի խորհրդաւոր ժպիտ ունեցաւ: Ապա նա յանկարծ դիմեց այն տեսակ մի խոստովանութեան, որ իր ցինիզմով դիպչում էր Լիւսիէնի փափկանկատութեան:

—Տիկին ֆերրէզին անասնելի է դառնում: Ես նրան ուղարկեցի Պարիզից, խոստանալով միանալ նրան Տալուարում իր փոքրիկ ճգնարանում: Եւ իրօք զնացի այդտեղ: Այժմ նա ազատ է: Խեղճ կ'ին: Աստուած իմ, սրբան դժուար է շատ սիրուած լինել և ինչպիսի ձանձրոյթ կարող են տարածել դիւրազգայուն անձինք: Երեակայիր, որ նա մտքումն զրել էր ամուսնանալ ինձ հետ:

—Այդ շատ բնական է:

—Դու գտնում ես: Ի՞նչ կարող էր նա բերել ինձ համար, ասա, խնդրում եմ: Անշուշտ, ոչ նորութիւն, թէ՛ նա հաճելի է սիրահարական տափանքի մէջ...

Եւ նա նորից ժպտաց, մտածելով նախընթաց գիշերուան, որովհետեւ նա ունեցել էր այդ զգացած և նուրբ անզթութիւնը յայտնելու իր սիրուհուն միայն առաւօտեան իր արձակուրդը և սեղմելու իր բազուկներին մէջ նրան, որին արդէն արտաքսման էր դատաւարտել:

Նա շարունակեց:

—Գալով հարստութեան, նրա անպիտան մարդը գարշելի կերպով զրկել է նրան ժողովրդութիւնից:

—Ուրեմն դու չես կարող թողնել նրան:

—Ոհ, նա ապրելու միջոց ունի: Շատ ճիշտ է: Պէտք է ամուսնանալ հարուստ կանանց հետ: Հարուստ չեղողները, ութ օրից յետոյ, նոյնչափ պահանջող են դառնում որչափ հարուստները: Ես չեմ կամենում լինել այն պատգամաւորներից, որոնք կերակրվում են պարլամենտի բուֆէտում և ունենում են նրա լուացարանից երեսօրբիչներ իրանց ճերմակեղէնը լրացնելու համար: Ես մի օր կը թողնեմ միւնիստրութիւնը, բայց ես չեմ թողնի միւնիստրովայել ապրուստի եղանակը:

Այդ եռանդուն, հուժկու և գործունեայ երիտասարդից Պարիզը չի՛նել էր հեշտութեամբ մի փափկասուն վայելչատէր: Նա հետամուտ էր և փառասիրութեան, և զուարճութեան: Եւ, իրողապէս, նա կարծէք ձեռնած տաշուած էր թէ կանանց և թէ տղամաբդկանց տիրապետութեան համար:

Առանց խօսքը փոխելու, նա շարունակեց.

—Պէտք է որ դու օգնես ինձ մօտենալ Մէրաններին:

Լիւսիէնը ականջը տնկեց.

—Ահա, մտածեց նա: Նրա այցելութիւնները միշտ մի նպատակ ունեն. նա ընդունայն չէ եկել ինձ տեսնելու: Ի՞նչ տեսակ խաւարին գործի համար պէտք ունի Մէրանների աջակցութեան: Այս բոլորիս նա խօսում էր ամուսնութեան մասին և չէր յիշում նոյն իսկ որ ամուսնացած էր Աննիի հետ:

Նա պառասխանեց, ոչ առանց մի փոքր հեգնութեան.

—Ես կարծում էի որ քո յարաբերութիւնները նրանց հետ ընտիր էին մնացել:

—Ոչ, ասաց ժակը, սլաղութիւնը կայ մեր մէջ: Քեզ հետ ես անկեղծ եմ. դու քսան տարուայ բարեկամ ես: Տիկին Մէրանը ինձ դիտում է միշտ բարեհաճ և արտասուլթոր աչքով. ունենալ միւնիստր փեսայ. նա շոյեկան է համարում: Եթէ միայն նա լինէր, ամեն բան լաւ կը գնար: Բայց նրա ամուսինը ինձ նայում է անվստահութեամբ և շատ սակաւ անգամ մի քանի պաղ խօսքերի է արժանացնում ինձ: Նա փոխուել է, Մէրանը. նա նիհարացել է և ճերմակել: Նա այժմ մի ծերունի է: Երէկ ես նրանց այցելեցի: Ես ծաղիկներ տարայ Աննիի գերեզմանի վրա դնելու:

—Տալուար գնալիս:

—Տալուար գնալիս:

Եւ երիտասարդը չը հասկացաւ որ այդ հարցմունքը չեշտում էր բարեպաշտ ուխտագնացութեան և սիրահարական ժամագրութեան խառնուրդի անպատեհութիւնը:

— Ամեն ամիս ես ծաղիկներ էի ուղարկում: Ես չիտակ եմ եղել...

Նա խօսում էր չիտակութեան մասին այն հեղ, փոքրիկ Աննիի վերաբերմամբ, որ մեռել էր սիրոյ պակասութիւնից:

Ապա, վերադառնալով իր առարկային.

— Այո, պ. Մէրանը ինձ ցոյց է տալիս մի հակակրօթիւն, որի մասին չեմ կարող սխալուել: Նա մեծ յարգանքով է վերաբերում քեզ: Խօսիր նրան իմ մասին: Մենք չենք պատկանում մի և նոյն քաղաքական կուսակցութեան, բայց մենք հին ընկերներ ենք, հին բարեկամներ:

— Պ. Մէրանը ինքն է կազմում իր կարծիքները. նա ուրիշներինը վեր չէ առնում, ինչպէս անձնաւորութիւնների, այնպէս և թէօրիմների մասին:

— Այնուամենայնիւ, պէտք է նրա հետ խօսել: Մարդ կարող է յարգել և նրանց, որոնք իր հետ համախոհ չեն: Ես երեսուն և չորս տարեկան եմ և արդէն մինիստր եմ, այդ հազուագիւտ է:

— Բայց վերջապէս, ինչի համար ես ցանկանում որ քո ներքողը անեմ:

— Ահա, իսկոյն կասեմ:

Առանց երկար կեղծելու, նա աւելացրեց.

— Գիտես որ Ժաննի Մէրանը շատ սիրունացել է:

Այդ անունը լսեց թէ չէ, արեւնը ցայտեց Լիւսիէնի երեսին: Ալվարը, որ բացատրում էր իր յատակագիծը, չը նկատեց այդ Լիւսիէնին թուաց որ յանկարծ մի մեծ վտանգ սպառնում է իրան: Սակայն Ալվարը շարունակում էր վստահաբար.

— Հիանալի է, այդ փոքրիկ Ժաննին. նա համարձակ է. նա շատ լաւ կընդունէ հիւրերին: Ո՞վ գիտէ, ապագայում, երբ ժամանակը իր գործը կատարած կը լինի... Ես պէտք ունեմ մի օջախի: Երբ մի մարդ իր առաջին կինը կորցնելու դժբախտութիւն է ունեցել, այնպէս է թւում որ անհաւատարմութիւն չէ ամուսնանալ նրա քրոջ հետ:

Լիւսիէն Հալանդի թշնամական վերաբերմունքը կամ գոնէ նրա անտարբերութիւնը, որ ժակը զգացել էր անորոշաբար նրա առաջին պատասխաններից, դարձնում էր վերջինիս անխոհեմ: Նա չաղախում էր իր սովորական ցինիզմը այնպիսի գոհակութիւններով որ ատում էր և որոնց գործած տխուր ազդեցությունը նկատում էր հետզհետէ պատմելիս:

Իսկ Լիւսիէնը կամենում էր արտասանել այս ճշմարիտ խօսքը՝ իր հիւրի շաղակրատութիւնը կարճ կտրելու համար.

—Այո, այդ փոքրիկը երկու անգամ կունենայ իր քրոջ հարստութիւնը:

Բայց խօսքերը չէին հասնում նրա շրթունքներին: Ժակի նպատակը նրան պարզ էր երեւում ցերեկի պէս, այն է՝ իր բարեկամի միջոցով յաղթել պ. Մէրանի ղեկավարութիւնը—և սա, հիւանդ իր անդրանիկ գտեր մահուանից ի վեր, զուցէ երկրորդին երկար ժամանակ պաշտպանելու ոյժ չունենար.— թող... փչելու տիկին Մէրանի աչքին, դիւրահաւատ և չլացած՝ պետական մարդի փայլով. Ժաննիի աչքին, որին զուցէ նոյն պէս հեշտ լինի միւս եղնի, ինչպէս այն խեղճ Աննին, որ շատ վատ պաշտպանուած էր իր չափազանց զգայուն սրտի պատճառով: Ժաննին միակ ժառանգուհին Սալօյի ամենագեղեցիկ հողային հարստութիւններից մէկի, նախանձկի հարսնայու էր նոյն իսկ մի մինիստրի համար, մանաւանդ մի այնպիսի մինիստրի, որ կոչուած էր շուտով թողնելու իր պաշտօնը:

—Այդ մտածում էր երիտասարդը, երբէք թոյլ չեմ տայ. դա զարշուծիւն կըլինի:

Նա իրան հարց չէր տալիս թէ ինչ իրաւունքով պէտք է միջամտէ. նա գործում էր մի ինքնաբերական գայրոյթի ազդեցութեամբ, որի պատճառն որոնելու ժամանակ չունէր: Նրա քունքերը խփում էին և նա սրտում մի յանկարծական ջերմ էր զգում: Սակայն նա լուռ էր, մինչ Ժակը պնդում էր որ իր աջակցութիւնը տայ պ. Մէրանին համոզելու համար:

—Ոհ, ստիպողական չէ: Դեռ ժամանակ շատ կայ այդ ծրագիրը իրագործելու: Դու հասկանում ես, որ ես չեմ կարող մտածել վերամուսնանալ, մինչև որ սուգի տարին չանցնի: Բայց վերջապէս, պէտք է պատրաստել ճանապարհները: Այդ նորատի աղջկան շատերը հետամուտ կը լինեն իր հարստութեան պատճառով: Հարստութիւնը այնքան մեծ դեր է խաղում այսօրուայ հարսանիքների մէջ...:

Նա մի գլուխ խօսում էր և խօսում, ասելով այնպիսի կլորիկ ֆրազներ, ուր կրկնւում էին իր «նախկին վիշտը» և իր «նոր յոյսը» խօսքերը:

Յանկարծ, Լիւսիէնը վեր կացաւ և ընդհատեց նրան.

—Լսիր, սիրելիս, ինչ որ պէտք է քեզ ասեմ կարճ է և վճռական: Ոչ միայն ես գործ չեմ դնի իմ վարկս պ. Մէրանի մօտ որ դու նրա առաջ չնորհ գտնես, այլև երբեք եմ որ եթէ դու երբէք յանդգնութիւն ունենաս ինչորեւ օրիորդ Ժաննի Մէրանի ձեռքը և եթէ նրա հայրը քեզ այդ ձեռքը տալու

յանցաւոր թուլութիւնն ունենայ— և այդ անապասելի է— ես կը հաղորդեմ օրիորդին տեղեկութիւններ քո անձի և կեանքի մասին:

Ժակը լարշօրէն դրեց միակնոցը նրան նայելու.

— Դու գիտում ես!

— Ոհ, ոչ: Դու ինձ խառնեցիր առաջներում քո ինտրիգներին և ես չէի կարող չը գիտենալ տիկին Ալվարի ասանջանքները: Այս անգամ, ես քո մեղսակիցը չեմ դառնայ: Եւ յետոյ, դադարենք միմեանց հետ «դու»-ով խօսել, որ ծաղրելի է անպիսի մարդկանց մէջ, որոնք չունեն ոչ մի հաս ընդհանուր մտածումներ և զգացում:

Ժակը նոյնպէս վեր կացաւ տեղիւ: Երկու տղամարդիկ իրար դէմ յանդիման կանգնեցին: Ալվարը այսպէս խոսեց.

— Սխ, դու այդ ջանքիլ ազջկայ շուրջն ես պտտում: Պէտք է յայտնէիր ինձ. դու հոտոտում ես օժիտը: Ձեռքիցդ բաց թողնելով առաջինը, դու երկրորդի ետեւից ես քայլել:

Լիւսիէնը զանգը տուեց ծառային կանչելու համար և ասաց պարզաբար.

— Նաւակի ժամն է:

Ժակը շարունակում էր, զսնելով իր ինքնավստահութիւնը:

— Դու կամենում ես կրտսերի միջոցով հասնել վրէժդ անդրանիկի դուրս տուած արհամարհանքների մասին: Կը տեսնեմ, բարեկամս: Յայտնել ես նրան, այդ քո փոքրիկին, այն պչրանքը, որ անում էիր կնոջս: Դու կարծում էիր, որ ես ոչինչ չէի տեսնում: Մենք ծաղրում էինք քեզ միասին...

Ծառան երեւացել էր: Լիւսիէնը նշան արեց.

— Առաջնորդեցէք պարոնին:

Եւ երկու նոր թշնամիները ուղղեցին միմեանց մի վերջին ողջոյն:

Միայնակ, Լիւսիէն Հալանդը երկար ժամանակ ման եկաւ սրահում: Նրան անհանգստացնողը ժակի վերջին խօսքերը չէին, Աննիին վերաբերեալ, այդ խօսքերը այնքան կոպտաբար սուտ էին, որ նա ոչ մի հաւատ չէր ընծայում նրանց: Բայց նա ինքըն իրան հարցնելով թէ ինչ պատճառով այդպէս վճռողաբար արտաբնեց իր նախկին բարեկամին, սկսում էր պարզ տեսնել իր սեպհական սրտի մէջ: Այն սիակ միտքը թէ ժակ Ալվարը կարող է մի օր կնութեան առնել ժամնի Մէրսին, տակն ու վրայ էր անում նրան: Այսպէս, յաճախ անակնկալ պարագաներ պարզում են մեր զգացումները. միայնակ մեզ հետ, մենք նրանց կը պահէինք սուսնց ճանաչելու նրանց, ինչպէս թան-

կազին ոգիներ (essence), որոնց անուշաբուրումն մեզ անծանոթ մնացած ինչէր:

—Արդեօք սիրում եմ նրան, ասում էր ինքն իրան: Սիրում եմ նրան այն աստիճան, որ չեմ կարող տանել նրա ուրիշի հետ ամուսնութեան հեռանկարը: Այդ միտքը որ պէտք է ինձ ուրախ դարձնէր իբրեւ իմ երիտասարդութեանս վերադարձը, խառնում է նրա քաղցրութեան՝ մոխրի մի օտարոտի համ: Նա նման է այն ծաղիկներին որ բուսնում են գերեզմանների վրայ: Նրանց ծննդեան տխրութիւնը իրանց մէջ է դառնում: Միայն վեց ամիս է անցել Աննիի մահից և նրա յիշատակը չէ տալիս ինձ այն դաժնութիւնը, որ դրուած է սիրոյ ամսոսանքներին...

Նա յիշեց այն վերջին պոռոյտը լճի վրայ, երբ ջահիլ կինը հեռացրել էր իրանից նրա գորովանքը մատուցանելու համար նրան, որին դուրսէ այսօր սիրում էր: Եւ նա մտածեց:

—Չէ որ նա, Աննին, ուզեց այդ:

Միտքը յուզուած, նա իջաւ ծառաստանը: Երեկոն մօտենում էր դանդաղաբար: Գրեթէ կանոնաւոր ընդմիջումներով հով զեփիւռը փչում էր դաշտի վրայ:

Նա անցաւ դաշտերով և այգիներով: Յորևնի կանաչ հասկերը, իւղոտ խոտը, ծաղկած պտղաբեր ծառերը հաստատում էին հողի բեղմնաւորութիւնը: Նա կանգ առաւ մի բույս ուրախանալով սպագայ հունձների յոյսով: Ապա նա գնաց սարի կողմը, անտառի եզրը: Այդտեղ, երկու պատկառելի կաղնի զիք բարձրացել էին գէպի երկինք իրանց կնճռոտ կոճղերով և հուժկու ճիւղերով: Նրանց տերեւները խառնում էին զարնանային կանաչին՝ պղնձի և ժանգի դոյներ, մատաղ տերեւները ծլում էին երբ դեռ նախորդ եղանակի տերեւները չէին թափուել և լիւսսիւնը մտածեց.

—Այսպէս մեր նոր զգացումները չեն սպասում հսերի մահուան՝ մեր մէջ ծաղկելու համար:

Նա մտածում էր Ժաննի Մէրանին:

Նրա չուրջը, ամբողջ բնութիւնը դարուն էր ներշնչում: Կեանքը երգում էր խոտի ծիւերի և շագանակի մեծ ծառերի մէջ: Նա հասաւ մարմարեայ կոթողին, որ կիսովի ծածկում էր նոճիների շարքը. այդտեղ, նա կամեցաւ մտքերը հաւաքել, բայց մշակուող հողի անդադրում ժխորը հասնում էր մինչև դամբարանը և իր սրտում նա լսում էր կեանքի այդ մի և նոյն երգը, որ բարձրանում էր երկրից, միայն այդ երգը խառն էր ցանկութեան խանդալից տխրութեամբ:

—Այո, ասում էր ինքն իրան, այս երկիրը վերանորոգեց

երիտասարդութեանս հետ գոյութեանս իմաստը: Եւ ես տանջուում եմ իմ ամուլ առանձնութիւնից: Ես չեմ կարող այլ ես ապրել առանց սիրոյ: Բոլոր ոյժերս, ամբողջ էութիւնս, աղաղակում են դէպի այն տեւական և բեղմնաւոր սէրը, որ կը հաստատի ուրախալի խաղաղութիւն իմ օջախում և կը յաւերժայնի իմ ցեղը: Ես պէտք է ապրեմ հողի այս անկիւնում, կենդանութիւն տամ այս կալուածին, սովորեցնեմ իմ շուրջս այս հեղ գիւղացիներին: Ապագայում, ես կը սովորեցնեմ իմ երեխաներին հայրենի հողի առաքինութիւնը: Եւ իմ կեանքը այսպէս գեղեցիկ կը լինի...

Նա սկսեց ժպտալ: Ժաննիի պատկերը իր սրտումն էր: Նա գիտէր որ Ժաննին սիրում էր իրան: Չէ որ Աննին իմաց էր տուել և չէ որ ուրիշ մանր ու նպաստաւոր նշաններ էլ հաստատում էին հանգուցեալի այդ վերջին խօսքերը: Այդ լռակեաց սէրն է—սէրը, որով ոչ մի սիրուած եակ ազատ չէ սիրուելուց—որ, քիչ քիչ, նուաճել էր նրան: Մի նոր թարմութիւն զարգարում էր նրա զգացումները: Անցեալի ոչ մի դառնութիւն չէր մնում նրա մէջ, ինչպէս այդ պատահում է այն մարդկանց, որոնք շատ են զուարճացել և ապա չնչում են ընտանեկան գորովանքի մէջ թառամած երկրի կծու բոյրը: Աննիի յիշատակն անգամ քաղցր էր իրան: Մի խորհրդաւոր օրէնքով, որ ցոյց է տալիս մարմնաւոր կապերի տեւական կարեւորութիւնը, մենք մոռանում ենք աւելի շուտ այն կանանց, որոնց սիրել ենք առանց ունենալու: Նրանք մշուշապատ են դառնում, ապա ջնջւում մեր յիշողութիւնից, որ այլ ես վշտալի չեն դարձնում: Չիրականացած սէրը չէ պեղում խոր գծեր, ինչպէս այն թեթի երկաթէ խողիւրը, որոնց ձեւիչը քիչ հող է բարձրացնում:

Երբ արեւը սկսեց անցնել սարի ետեւը, Լիւսիէնը վերադարձաւ զղևակը: Նա գնում էր կայտառ մարդերի եզրով: Բնութեան գեղեցկութիւնը սփռւում էր երեկոյի մէջ: Աչքերով, նա կլանում էր ամեն ինչ: Եւ նա ըմպում էր զով դեփիւրը, որ հոսում էր դաշտի վրայ: Նա դրեց ձեռքը կրծքին, որը կարծես ուռչում էր դարունքից: Եւ նոյն իսկ այդ ուռած սիրտը նրան թուած նեղ և անկարող բովանդակելու իր ակընկալած համակ երջանկութիւնը:

VIII

Լիւսիէն Հալանդ, մտնելով պ. Մէրանի կաբինետը, մրմռնջաց, նկատելով վերջինիս տխուր դէմքը:

— Ես տեսնում եմ, որ օրիորդը մերժել է:

Նախընթաց օրը, նա խնդրել էր Ժաննիի ձեռքը, Ժակ Ալվարի հետ ունեցած կռուից ի վեր մի ամսից աւելի էր անցել: Պ. Մէրանը ընդունել էր նրան գորովալիք ուրախութեամբ և այս խօսքերով:

— Ես ձեզ սպասում էի վաղուց. այլ ևս յոյս չունէի: Հէնց որ գուշ վերագարձաք այս երկիրը, պարոն Լիւսիէն, ես ընդունեցի ձեզ, իբրև մի որդու: Դուք գիտէք իմ համակրութիւնս. ես գիտեմ, որ աղջիկս երջանիկ կը լինի, ես նրանից բացի այլ ևս ոչ ոք չունեմ: Պէտք է նրան տալ երջանկութիւն և երկուսի համար, իմ խեղճ Աննիի համար... վերագարձէք վաղը. ես կը տեղեկացնեմ տիկին Մէրանին և կը խօսեմ Ժաննիի հետ:

Լիւսիէն յիշում էր որ Ժաննին երբեմն նշանախօս նախաձեռններ և վարմունք ունէր. նա յիշում էր Ալիւլիի վարդերը, որ նա տարել էր հեաը. նա յոյս էր կապել և սպասում էր խաղաղութեամբ: Երբ նա տեսաւ պ. Մէրանի վշտաղին դէմքը, նա հասկացաւ և մեծ դաւ զգաց:

Պ. Մէրանը բռնել էր նրա ձեռքը և ասում էր.

— Ես չեմ հասկանում: Երէկ երեկոյեան ես նրան իմացրի բարի լուրը: Ես ակնկալում էի ստաջուց նրա զարմացքը և հաճութիւնը: Իմ տանս այլ ևս բնաւ ուրախութիւն չը կայ. ես մտածում էի, որ երէկ աղջիկս կը ծաղկէր, բայց նա գունատուեց, ինչպէս այժմ գուշ, նա ինձ պատասխանեց մեղմիկ, այնքան ցածր, որ մայրը չը կարողացաւ լսել. «Ոչ, ոչ, անկարելի է. ես կամենում եմ ձեզ հետ մնալ, ինձ համար այստեղ լաւ է...»: Ես պնդեցի. ես ասացի թէ որքան յարգում եմ ձեզ և ծերութիւնս ապահովեալ կը լինի: Ես նրան նայում էի. նա խոշոր արտասուք ունէր աչքերում: Ասա նա խոյս տուեց պարտէզը, ես հետեւեցի նրան. նա լացում էր և չէր ուզում մխիթարուած լինել...

— Ոհ, ասաց միայն Լիւսիէնը:

Նրա սիրտը աղէկատուր էր լինում և նա խօսք չէր գտնում: Բայ պատուհանից նա նայում էր տիկին Մէրանի սիրեցեալ ծաղկեալ վարդենիներին առանց նրանց տեսնելու: Նա մտածում էր որ ջահիլ աղջիկների սրտերը տարօրինակ են. նա հարցրեց վեհերոտութեամբ.

— Արդե՞ք նա ինձ չահասիրուած չէ համարում: Ձեր հարստութիւնը հէնց յետաձգել էր մինչև այժմ խնդիրքս, հաւատալից եմ ձեզ:

— Նա մինչև անգամ այդ մասին չէ մտածել. ոչ ևս ես. ուրիշ բան կայ, որ մենք չը գիտենք:

Լիւսիէնը խորհում էր: Այդ ծանրակշիւ ժամին, երբ նա վստահ էր պ. Մէրանի դաշնակցութեան վրայ, նա որոնում էր իր անցեալում այդ անակնկալ վշտի պատճառները:

— Յիշում եմ, տապի նա, այն երեկոն, երբ ես ընկերացել էի տիկին Ալվարին լճի վրայ պտոյտ անելու: Օրիորդ ժաննին մեզ յանկարծ թողեց: Նրա մեռնող քոյրը, այնքան ընտիր և առաքինի, մեծ կարեկցութիւն էր ներշնչում ինձ: Իր ամուսնութիւնից առաջ, ես արդէն նախատեսում էի նրա մեկամաղձական ճակատագիրը: Կարեկցութիւնից՝ գորովանք, ճանապարհը կարճ է: Այժմ այլ եւս ոչինչ չը գիտեմ: Ձեր գուցարը՝ Աննին, ինքն այդ երեկոյ ցոյց տուեց ինձ կրճանկութիւն, խօսելով ժաննիի մասին: Ասացէք նրան այդ: Եթէ նա գիտե՞նար որքան եմ սիրում իրան: Թող նա նախանձոտ չը լինի՝ կարեկցութեան մի զգացումի վերաբերմամբ, թէն նոյն իսկ կըքոտ զգացումի: Բայց գուցէ, այդ չէ՞ պատճառը: Գուցէ սխալում եմ...

Նրա մտքով անցաւ ժակ Ալվարը. գուցէ սա, առաջ տունելով իր ծրագիրը, պատրաստել էր նրա յաջողութիւնը զրպարտելով իր հին բարեկամին:

Պ. Մէրանը ձեռքով յողնած շարժումն արեց:

— Այո, գուցէ այդ է. այն երեկոն, որի մասին խօսում էք, ժաննին վերադարձաւ արտասուելից: Եթէ նա սիրում է, նա կը համաձայնի մոռանալ:

Եւ իր ձանձրացած ժպտով, նա աւելացրեց.

— Զահիլ ազգկերքը տալիս են իրանց սիրտը ընդ միշտ: Մենք, աղամարդիկս, այդ մասին շատ չենք մտածում: Նրանք իրաւունք ունեն պահանջկոտ լինելու: Բայց ժաննին արի և բարի է: Եթէ միայն այդ է, նա կը համաձայնի, կարծում եմ: Եւ սակայն այդ է: Նա զգայուն է, բայց ոչ քնաւ զգոյստէր: Նա Աննիից աւելի լաւ է հասկանում կեանքը և մարդկային զգացումները: Չը գիտեմ, պէտք է նրա հետ խօսել:

— Այո, համաձայնեց Լիւսիէն, ես կամենում եմ պաշտպանել երջանկութիւնս: Այնքան մոռացուած կապեր ինձ պահել են հայրենի հողում և այժմ ինձ թւում է, որ միայն ժաննին ինձ կապում է այս տեղերին: Կամենում էք որ ես խօսեմ նրա հետ:

— Դուք նրան կը գտնէք գերեզմանատան: Նա ծաղկի փունջներ է դնում իր քրոջ գերեզմանի վրայ: Պ. Ալվարը մեզ ուղարկել է հազուադէպ ծաղիկներ Աննիի համար: Մի ամսից ի վեր, նրա տաքումները շատանում են. նա գրում է կնոջս, ժաննիին գրելով սրտայոյզ նամակներ: Այլ ես նախկին Ալվարը չէ:

Լիւսիէն Հալանդը անազնութիւն կը համարէր յայտնել պ. Մէրանին, որ ինքն գիտէր Ալվարի այդ նոր վարմունքի պատճառները: Բայց նա սրտի սեղմումն ունեցաւ մտածելով ժակի խաւարին ճարպիկութիւնների մասին:

— Գնացէք, ասաց պ. Մէրանը վեր կենալով:

Եւ մի ծանրաբարոյութեամբ, որ նա չէր տալիս իր խօսքերին Աննիի մահից առաջ.

— Թող Աստուած օգնէ ձեզ! տայ Աստուած, որ դուք վերադառնաք աղջկանս հետ, իբրեւ երկու նշանածներ...

Ժաննի Մէրանը միայնակ էր Մէնթօնի գերեզմանատանը: Խոնարհուած Աննիի գերեզմանի վրայ, մարմարեայ հրեշտակի մահարձանով, նա խառնում էր շուշանները յասմիկներին: Խորասուզուած իր տխուր մտախոհութիւնների մէջ, նա ոչինչ չէր տեսնում իր շուրջը, ոչ առաւօտեան լոյսի շողերով փայլող սարերը, ոչ զառիթափի դալար մարգերը, որտեղից նայուածքը տարածւում էր անշարժ և լոյսի բաժակի նման լճի վրայ: Նա չը լսեց ծառուղու աւազի ճոճոցը Լիւսիէն Հալանդի ոտքերի տակ: Նա սարսռեց, երբ կանչուեց իր անունով.

— Օրիորդ Ժաննի...

— Դուք, ասաց նա:

Նա մտածում էր Լիւսիէնի մասին և սա այդտեղ էր: Երէկուանից ի վեր նա շարունակ մտածում էր այս մասին: Սփռելով ծաղիկները, նա դարձեալ մտածում էր նրա մասին, մոռանալով հանդուցեալին:

Որովհետեւ երկուսն եւ չփոթուած էին, չը նկատեցին իրանց փոխադարձ յուզմունքը: Լիւսիէնը ասաց.

— Ես կամենում էի ձեզ հետ խօսել: Ես տեսայ ձեր հօրը. նա ինձ ուղարկեց ձեզ մօտ:

Ժաննին թողեց որ ձեռքից ընկնեն շուշանները և յասմիկները, ինչպէս մի ժամանակ Աննին թողել էր վարդերը լսելով գրեթէ համանման խօսքեր, որ ժակ Ալվարը արտասանել էր: Սակայն, չուտով արիացած, նա պատասխանեց հաստատ, գրեթէ վայրագ ձայնով.

— Ոհ, ոչ, այդ աւելորդ է: Ես գիտեմ ինչու էք գալիս: Ես տուել եմ պատասխանս հօրս: Ես չեմ կամենում ամուսնանալ... ոչ ոքի հետ:

Եւ նրա ձայնը յանկարծ մեղմացաւ աւելացնելու համար.

— Ես չնորհակալ եմ ձեզանից, որ ինձ էք ընտրել, պ. Լիւսիէնը: Ափսոսում եմ:

Լիւսիէնը տանջանք զգաց և այդ վիշտը անդամալուծում

էր նրան: Նա միշտ յարգել էր ուրիշների մտածմունքը, ուստի և հարցնում էր իրան, արդեօք անփափկանկատութիւն չի լինի պնդելը: Ժաննին իրան չէ սիրում. ուրեմն էլ ինչի համար յիորձել համոզել նրան: Լիւսիէնը ցանկութիւն զգաց փախչել, գնալ շատ հեռու, հեռու նրանից և հեռու այս երկրից, ուր անտարակոյս, նա չէր կարող երջանիկ լինել: Մի մութ նախազգացումն յետ պահեց նրան. «Նա մի դադանիք ունի. կամենում եմ այն իմանալ, եթէ ինձ համար նոյն իսկ անգութ լինի: Առաջներում, նա ինձանից խոյս չէր տալիս»:

Նա ջանք արեց խօսքը վերսկսելու.

— Լսեցէք, Ժաննի, այս րօպէին դուք իմ երջանկութիւնն էք փշրում և գուցէ նաև ձերը: Ոհ, անշուշտ, դուք կը հանդիպէք ուրիշ երիտասարդների, որոնք ինձանից լաւ կարող են ձեզ դուր գալ: Ես սնապարծութիւն չունեմ այլ ևս: Միայն ես ձեզ սիրում եմ:

Նա խոհարհել էր գլուխը և ոչինչ չէր ասում: Նրա մազերի մութ, չէկ գոյնը փայլում էր արևի մի շողով: Թւում էր թէ նա նայում է գետին ընկած ծաղիկներին, Լիւսիէնը շարունակեց.

— Ես չէի կարծում երջանիկ լինել, Ժաննի: Երկար ժամանակ ես վատ հասկացայ կեանքը և՛ երիտասարդութիւնը և՛ սէրը: Վերագոռնալով իմալինների այս հին հողի վրայ, ես կարծեցի թէ նորից ոյժ և ուրախութիւն եմ գտել: Զևզանով ես յոյս ունեմ նորից գտնել սիրտս: Պէտք չէ որ դուք կասկածէք այս սիրտը և ինչ որ մտել է նրա մէջ ձեզանից առաջ: Ես այլ եւս չեմ յիշում այդ, և սակայն վատ գլացումներ չէին. դրանք անցողական և թոյլ մտածմունքներ էին, որոնք չքացել են: Այժմ, նրա մէջ միայն դուք կաք: Եւ ընդ միշտ: Եթէ դուք կամենաք, կեանքս կը կերպարանափոխուի և ես կը ջանամ որ ձեր կեանքն եւս լինի կատարելապէս վճիռ և հաճելի: Ես ջանիլայել եմ այն օրից որ սիրում եմ ձեզ, այնքան ջանիլայել, որ ինձ այլ եւս չեմ ճանաչում: Ես այնքան յոյսեր ունեմ: Եթէ սակայն դուք կամենում էք...! Եթէ չէք կամենում, ես կը գնամ: Ես ձեզ վերստին տեսնելու քաջութիւնը չեմ ունենայ: Ասացէք մի խօսք: Ես կանեմ ինչ որ դուք կորոչէք. միայն ես ձեզ սիրում եմ:

Գրեթէ անխելի ձայնով, միշտ վայրագ, ջահիլ աղջիկը մրմնջաց.

— Ոհ, դուք ինձ չէք սիրում: Դուք այդ լաւ գիտէք: Դուք չը պէտք է այդ խօսքերը այստեղ ասէիք, այդ վատ է:

Այդ ժամանակ Լիւսիէնը նկատեց որ Աննիի գերեզմանն այդտեղ էր, իր ոտքերին: Եկած լինելով իր սիրոյ համար, նա

Նա միայն ժամանիկն էր տեսել: Եւ ճշմարիտ, նա մի օտարոտի տեղ էր ընտրել իր խոստովանութիւնների համար: Ութ ամիս հազիւ անցել էր այն օրից՝ որ թաղել էին խեղճ մեռեալին, և նոր ծաղիկների նման նոր զգացումներ ծլում էին արդէն նրանց սրտերում, որոնք սիրել էին նրան: Ժամանին յանդիմանում էր նրան իր մոռացկոտութիւնը, արգիւնք ինքն եւս իր հերթին չի մոռացուի: Միթէ ամիսներով է չափւում այն յաւիտենականութեան տարածութիւնը, որ մենք տալիս ենք խօսքերով մեր սէրին: Եւ նա մտածում էր. «որեքն ողորմելի և փոփոխական սիրտ ունեմ: Եւ սակայն այս երեխան որ հանգստանում է աստուածային խաղաղութեան մէջ, ինձ ոչ մի բան չէ յանդիմանում, ապահով եմ: Նա հեռացնում էր ինձ իր վշտալի շաւղից: Սէրը չէ տեսւում առանց սէրի: Մի բարեպաշտ յիշողութիւն է մնում ինձ նրանից և ոչ այն կլանող դառնութիւնը, որ ծնւում է կորած գգուանքներից: Ես, աւելի լաւ, կը կանչեմ նրան իբրեւ մի սրբի և կը հայցեմ նրա բարեխօսութիւնը, որի իշխանութիւնը կը նպաստէ իմ այսօրուայ երազին»:

Նա լսել էր այս բաները մտածելիս: Եւ, գիւղական այս խաղաղ գերեզմանատնում, լոյսի մէջ լսւում էր միջատների բզդոցը, ջերմ օրերի այդ կենդանի անսրոյ ժխորը:

Նա խզեց վերջապէս այդ լռութիւնը, որ երկարանում էր և նեղացնում երկուսին էլ.

— Ժամանի, նա որ այդտեղ է, այդ օրհնեալ հողի տակ, եթէ կարողանար վեր կենալ գերեզմանից, քեզ կաղաչէր ինձ հետ: Ես նրան տեսայ վերջին անգամ, լճի վրայ, յիշում էք, Ժամանի. դուք չը կամեցաք գալ: Նա խօսեց ինձ ձեր մասին. նա հակեցնում էր իմ սիրտը գէպի ձեզ: Նրա իզձերը կատարուեցին, բայց ինձ միայն վիշտ պատճառելու համար: Այդ բոլորէն, ճիշտ է, ևս դեռ չէի մտածում ձեզ սիրահարական մրտքերով: Դուք կարող էք նայել սրտիս մէջ. չառ թշուառութիւններ կան, բայց սուտ չը կայ: Ես գուշակել էի նրա տանջալի կեանքը, նրա հիասթափութիւնները: Այդ վիշտը՝ որ ես զգում էի, ինձ սաստիկ կարեկցութիւն էր ներշնչում: Առաջներում, մայրս երեւակայել էր, որ Աննին իմ կինը կը լինի: Երեխայութեան քաղցր յիշողութիւնները ճնշում էին ինձ: Ժամանի, ես չեմ կարծում որ այդ սէր լինէր. Ես բնաւ չեմ կարծել այդ: Ես չը գիտեմ այդ լաւ բացատրել: Սիրել, նշանակում է ցանկանալ, կամենալ առնել և տալ, առնել մի կեանք և տալ քոնը: Ես ոչինչ չէի ցանկանում Աննիի մօտ, եթէ ոչ մի փոքր երջանկութիւն իր աչքերում և առողջութիւն՝ իր գունատ թշերի վրայ: Բայց ինձ համար, ես ոչինչ չէի ցանկանում...:

Եւ տեսնելով որ ժամներն չէ պատասխանում, նա աւելացրեց.

—Եթէ դուք կամենում էք ինձ սիրել, ես ձեզ կը խնդրէի նախանձոտ չը լինել: Ես անցրել եմ երեսու՜րը արդէն երկու տարի կայ: Ես գիտեմ մարդկային զգացմունքների արժէքը: Դուք կարող էք ինձ հաւատալ երբ ես ձեզ ասում եմ որ սիրտս երիտասարդ է, որ երբէք այնպէս չէ բարախել ինչպէս այժմ: Ձեր առաջ իմ անցեալը ջնջւում է: Եւ ձեր քոյր Աննին, եթէ մեզ տեսնէր, կուրախանար: Ես ամեն կերպ հոգ կը տանեմ, որ դուք միշտ երջանիկ լինէք: Ես այնքան ապահով կը լինեմ մեր երջանկութեան համար: Ձեք կամենում... ժամներ: Ձեք կամենում...:

Նա խօսել էր խիստ քաղցր և ջերմ ձայնով, փոքրիկ բնականօրէն քարոզչերով, աչքերը գետնին յառած և ոչ բարձրացրած ջահիլ աղջկայ վրայ: Որովհետեւ վերջինս ոչինչ չէր ասում, չարժմունք չէր անում, նա որոշեց գնալ: Վերջացել էր: Այլ ես ոչ մի խօսք չէր դալիս նրա շրթունքներին: Նա մի ծունկը դրեց մարմարէ շիրիմի վրայ և բռնեց ժամների ձեռքը խորին յուզմունքով:

—Որովհետեւ դուք չէք կամենում, մնաք բարեւ, ժամներ: Ես գնում եմ:

Եւ նա վեր կացաւ գնալու: Նա նրան նայեց մի վերջին անգամ: Նա նրան տեսաւ արտուսաթոր, նա ձգել էր նրա վրայ, որ մեկնում էր, այնպիսի մի գորովալիք նայուածք, այնպիսի մի սրտածմելի նայուածք, որ նա նորից բռնեց նրա ձեռքը:

—Դուք ինձ սիրում էք, ժամներ, և դուք թողնում էք որ ես գնամ:

Ժամներն հեծկլաւում էր նրա թիկերում և չէր կարողանում խօսել, իսկ նա կրկնում էր քաղցր յուսոյ մէջ.

—Ես ձեզ սիրում եմ. ես միայն ձեզ եմ սիրում: Ժամներն կարողացաւ միայն մրմնջալ.

—Ես չեմ կարող, ես չեմ կարող: Եթէ դուք իմանայիք...

Բայց նա, լրջաբար, աջակցեց նրան.

—Ժամներ, պէտք է ինձ ասել: Գաղտնիք մի պահէք և մի սպանէք մեր երջանկութիւնը:

—Ոչ, ոչ, ես չեմ կամենում ասել:

—Կամենում էք որ ես ձեզ հարցաքննեմ: Պատասխանեցէք ինձ: Հաւատում եք որ ձեզ սիրում եմ:

Նա հակեց գլուխը:

—Եւ դուք, ժամներ, սիրում եք ինձ:

Նա ժպտաց իր արտասուքի մէջ և այդ ժպիտը դոյ՛ն էր տալիս թէ ինչպէս նա սիրում էր նրան վաղուց։

—Արդեօք Աննիի պատճառով է որ դուք չէք ուզում։

Նա արտասանեց արագարար։

—Այո, բայց այն չէ, ինչ որ դուք էք կարծում։

Լիւսիէնը զարմացաւ։

—Դուք երկմիտ չէք իմ բարեկամութեան մասին դէպի Աննին. այնպէս չէ։ Ուրեմն ի՞նչ է և նա չեմ կարողանում գուշակել։

Ժաննիի արտասուքը չէին հոսում այլ ևս Նա մտմտում էր.

—Ես չեմ համարձակում, ասաց նա վերջապէս։

—Ես յանդուր եմ եղել Աննիի դէմ. ես արժանի չեմ երջանկութեան. այդ պատճառով չեմ էլ ուզում։

Նա աշխատում էր հասկանալ և միշտ բռնած ունէր մատաղահաս աղջկայ ձեռները.

—Ժաննի, ես բոլորովին ապահով եմ ձեր վրայ։ Դուք ձեզ երևակայական յանդիմանութիւններ էք ուղղում։ Մտածեցէք մեր երջանկութեան մասին, որին յոռի տեսիլներ չեն կարող խոչընդոտ լինել։

Ժանին յետ քաշեց ձեռներից մինը և յենեց մարմարեայ մահարձանին։

—Լաւ, ես ամեն բան կը յայտնեմ ձեզ։ Դուք ինձ կը ներէք։ Ես այլ ևս դժբախտ լինելու քաջութիւնը չունեմ։

—Ոհ, ես ներում եմ ձեզ առաջուց։

Երկուսն էլ ժպտացին, որպէս թէ արդէն սկսում են նկատել ուրախութեան ապագան։ Սակայն Ժաննին զեռ վարանում էր։

—Հեշտ չէ պատմելը, ասաց նա այն ծիծաղուն արտայայտութեամբ, որ սովորաբար տալիս էր նրա դէմքին արթուն ցնծութեան հրապոյր։

Կարմրատակելով, նա շարունակեց.

—Դուք յիշում էք տիկին Ֆերրէզիին։ Գրոջա ամուսնութիւնից առաջ, ես կարծեմ նկատել էի մի քիչ... ծուռ յարաբերութիւն այդ կնոջ և ժակ Ալվարի մէջ։ Իմ առաջ շատ էլ չէին քաշում. ես դեռ երեխայ էի։ Սակայն ես զիտէի արդէն սիրել։ Դուք գտնում էք ես խելօք չէի։ Աննին ոչինչ չէր նկատում. նա ապրում էր երազի մէջ։ Ես կամեցայ իմացնել նրան. ես վախում էի որ չը վշտացնեմ նրան։ Մի երեկոյ, ընտրութիւնների երեկոն, ես սկսել էի, բայց ճիշդ այդ րոպէին դուք հասաք։ Յետոյ ես լաւ տեսայ, որ պարտաւոր էի ասել նրան այդ բաները։ Այդ կիւնը այնքան տանջել տուեց նրան... Ոհ, այդ

Ժակը, ես արդէն ատում էի նրան, գրեթէ նոյն չափ, ինչքան այժմ:

Լիւսիէնը ցոյց տուեց գետնի վրայ փռուած ծաղիկները.

—Այս ծաղիկները նա է ուղարկել:

—Ոչ, նրա ծաղիկները ես դէն եմ ձգում. ես այդ չեմ ասում ոչ ոքի: Նրա կեղծաւոր նամակները նոյնպէս դէն եմ ձգում...: Բայց ես դեռ չեմ հասել ամենազգուարին տեղը...:

Նա հառաչեց, և արիաբար աւարտեց.

—Եթէ ես զգուշացրած լինէի Աննիին, անշուշտ, նա չէր կամենայ ամուսնանալ Ժակի հետ: Այն ժամանակ նրան դուք կը սիրէիք. ինձ դուք մինչև անգամ չէիք էլ նայում այդ ժամանակ: Այդ ինձ շատ մեծ վիշտ պատճառած կը լինէր: Եթէ ես լռեցի, գուցէ որովհետեւ մտածում էի ձեր մասին: Այժմ հասկանում եք: Երկիւղ եմ կրում, ո՛հ, երկիւղ եմ կրում: Աննիի երջանկութիւնն էք դուք ինձ առաջարկում: Դուք լաւ տեսնում եք այժմ որ չեմ կարող...:

Նորից նա լացեց հեծկտանքով: Լիւսիէնը առաւ նրան իր թեւերի մէջ, և նրանից աւելի մեծ լինելով, նա յենեց իր կրծքին այդ թանկագին գլուխը.

—Ժաննի, մի վախճէ: Աննին սիրում էր ընդ միշտ և դուք գիտէք որ ինձ չէր սիրում: Ես ձեզ սիրում եմ, ձեր խղճահար հոգու համար ես աւելի եմ սիրում ձեզ:

Ժաննին թեքուել էր Լիւսիէնի վրայ և սա զգում էր նրա ճկուն իրանը ու գմայլում էր նրա մուգ պղնձագոյն ցոլք ու նեցող վարսերով, շողշողուն ծոծրակով: Նա ցանկութիւն զգաց կռնալ և համբուրել նրան, բայց չը կամեցաւ խռովել մի գրգռանքով իր երկշոտ նշանածին: Նա տեսնում էր իրանց ոտքին մարմարեայ շիրիմը և իրանց վերեւ, սիւնի վրայ, յարու-թիւն աւետող հրեշտակը: Մինչ Ժաննին, դեռ սգազգեստ, լա-ցում էր ամբողջովին սիրահար՝ իր թեւերի մէջ, նա մտածում էր, որ արեւով հեղեղուած՝ մեռեալների այդ դաշտի մէջ, իրանց զոյգը հանդիսանում էր իրրեւ նշանաբան կեանքի, տեւակա-նութիւն ցանկութեան, այն անսահման տեւականութեան ցան-կութեան, որ յայտնում էր հրեշտակը: Նա զգում էր իր երի-տասարդութիւնը, որ լցնում էր նրան անհուն յոյսով. նա կ'եր-կարածգի իր ցեղը, նա իր հերթին մարդիկ կը ստեղծի: Մի և նոյն ժամանակ նա զգում էր մի խորին դորովանք դէպի այդ հեզ և արի երեխան, որ անձնատուր էր լինում իրան:

—Ժաննի, մի լացէք:

Սա բարձրացրեց գլուխը: Այլ ևս նա չէր լացում, բայց իր

պայծառ աչքերը, դեռ թաց, փայլում էին ցողերով չաղախուած այն վարդերի նման, որ շողշողում են արշալոյսին, իբրեւ մարգագետինների թանկագին քարեր: Նա նայեց Լիւսիէնին ժպտուն՝ և որովհետեւ մի վերջին արտօսք հոսում էր այտի վրայ.

—Այդ ուրախութիւնից է այժմ, առաջ:

Ծառուղիի ծայրին, պ. և տիկին Մէրանները նկատեցին նրանց միասին վերադառնալիս:

—Լաւ է, շատ լաւ է, հաւանում էր բարի տիկինը:

Արիւնը խիւել էր նրա երեսին, որովհետեւ ամբողջ առաւօտը գործ էր դրել բարձրացնելու իր սիրելի ծաղիկների տակ և տնկելու նորերը աշնանային ծաղկման համար: Նա հանգստանում էր՝ կտրելով վարդեր սրահի ծաղկամանների համար:

Նրա ամուսինը, որ աւելի զգայուն էր դարձել Աննիի մահուանից ի վեր, խանգաղատում էր.

—Նայիր նրանց, փեսան աւելի մեծ, աւելի թուի է, իսկ հարսնայուն չէլ է: Լաւ զոյգ են կազմում:

—Այո, ճշմարիտ է, հաստատեց կինը առանց աչքերը բարձրացնելու:

Եւ մի հարուածով նա կտրեց մի ձիւղ:

Սակայն Լիւսիէնը Մէրանների գեղեցիկ կալուածի պատճառով, որից անցնում էին, ասում էր իր ջահիլ նշանածին.

—Դուք գիտէք ժամնի, իմ բոլոր ունեցածս Ավիլլինէ:

Նա կտրեց նրա խօսքը.

—Երբէք այդ տեսակ բաների մասին չը խօսենք: Աննին ասում էր թէ հարստութիւնը մի առիթ է աւելի բարիք գործելու համար:

Երբ բոլորովին մօտեցան, տիկին Մէրանը առաջացաւ դէպի երիտասարդը, առանց զարմացքի, իր կտրիչը ձեռքին.

—Ո՛հ, պարոն Հալանդ, ես միշտ մտածել էի, որ դուք կամուսնանաք աղջիկներիս մէկի հետ:

Պ. Մէրանը սեղմեց նրա ձեռքը և նրա աչքերը արտայայտում էին նրա համակրութիւնը:

—Այժմ, ես այլ ես չեմ վախում տարիներից: Ես կը յենուեմ ձեր երիտասարդութեան վրայ:

—Այո, առաջ Լիւսիէնը: Ծշմարիտ է, ես երիտասարդ եմ: Երջանկութիւնն է այդ:

Ծերունին աւելացրեց ծանրախոհ.

—Հայրենի հողն է: Յիշում էք հսկայ Անտէյի, Երկնքի և Երկրի որդու լիւզենդի մասին: Նա կուռւմ էր Հերկուլի դէմ:

Ամեն անգամ որ ոտքը դիպչում էր Հողին, իր մօրը, նա իր մէջ մի նոր ոյժ էր զգում: Մարդիկ այդպէս էին: Վերադառնալով հայրենի հողի վրայ, նրանք ստանում են անցեալ գանձերը և հաւատ՝ ապագայի մէջ, որովհետեւ նրանք այդտեղ գտնում են նախնիքների ոգին և նրանք հասկանում են, որ ամեն մի տեւական գործ անցնում է մի մարդի կեանքից...

Թարգմ. Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՍՈՒՏՆ ՈՒ ՔԱՄԻՆ

(Շրուգից)

Երբ Արարիչը կամեցաւ ջնջել
Մեղսոտ աշխարհը ջրի հեղեղով,
Եւ արքաներին խեղդամահ անել
Իրանց հպատակ ժողովուրդներով,
Որ ապագայում կեանքը հանրային
Վերանորոգուի թարմ սերունդներով—
Նա հըրամայեց ալեւոր Նոյին
Ողջ էակներից զոյգեր ընտրելու,
Եւ իր փրկարար կենաց տապանում
Բոլոր զոյգերին պատսպարելու:

Եւ ահա բոլոր երկրի ծայրերից
Գալիս են, թռչում, սողում դէպ տապան—
Արուն էգի հետ, ջուկ ջուկի յետքից
Կենաց յարկի տակ փնտռում ապաստան:

Երկնից հրամանին հլու, խոնարհած՝
Ե՛ւ եթերային եկան ոգիներ,
Մարդկային ոգու ոյժերից ծնուած՝
Աննիւթ, վերացիկ շատ գաղափարներ.—
Եւ հեղաբարոյ մտաւ Զղջումն՝
Ապաշխարութեան ձեռքիցը բռնած,
Ապա զոյգերով Անկարութիւնն՝
Ապիկարութեան ուսերին յենուած,

Մտերմութիւնը գրկուած Սիրոյ հետ
 Եկաւ ու մտաւ ուրախ ու վէտ-վէտ,
 Ահա նենգաբար յուշիկ սողալով,
 Ոխը հետեւեց Վրէժխնդրութեան,
 Երկիւղն անվստահ, անվերջ դողալով,
 Սահեց ու փարուեց մեղկ Վախկոսութեան.
 Սրանց յետեւից տապանը մտան
 Մտրութիւնը՝ Շողոփոթութեան,
 Անդորութիւնը՝ Խաղաղութեան հետ,
 Իսկ Տրտմութիւնը մռայլ, յուսահատ
 Հետեւեց Վշտին լալով անընդհատ.
 Վերջապէս մտաւ տապան փրկաւէտ
 Ե՛ւ Երբմ Հաւաստ գրկուած Յոյսի հետ:

—«Այս հւմ եմ տեսնում, սիրելի ընկեր,
 Եւ այդպէս տխուր... ի՞նչ է պատահել,
 Ձէ մի ժամանակ զերթ ազատ թռչնիկ,
 Եւ խայտաճամուկ որպէս թիթեռնիկ,
 Դու թռչում էիր ինձնից էլ արագ.
 «Ասէ-կօսէի» խմբակների մէջ, —
 Սիրած քոյրերիդ շրջանում անվերջ,
 Թափառում էիր ազատ, համարձակ,
 Առասպելական շորերդ հագնում,
 Թեթեռն ու ճկուն նրանց մէջ թափնում»:

—«Ա՛խ, իմ սրտակից, սիրելի ընկեր,
 Դժբախտութեան եմ այսօր հանդիպել.
 Նոյի մօտ էի,
 Եւ գիտես էլի

Ասում է, — հարկաւ, սրտանց եմ ուրախ
 Ընդունել և՛ քեզ իմ համեստ փարախ,
 Սակայն ո՛չ մենակ... մտիր անարգել,
 Երբ կը ճարես քեզ արժանի ընկեր. —
 Ի՛մ հոգու հատոր, ազնիւ բարեկամ,
 Գնանք միասին, օգնիր այս անգամ»:

Քամին տալիս է Ստին պատասխան՝
 —«Ասա, բարեկամ, չը գիտես միթէ
 Որ իմ երկրային թռիչքը թեթեռն
 Ազատ, անարգել չունի մի սահման.
 Նոյի տապանը չէ՞ որ ինձ համար
 Նեղ է, անազատ, անպէտք, անյարմար,
 Բայց դէ ի՞նչ արած, քանի խնդրում ես
 Տեղափոխուելու քեզ հետ միասին —
 Օգնել ընկերոջ պատրաստ եմ և՛ ես.
 Միայն տապանում երբ տեղ ստանաս
 Ի՞նչ վարձատրութիւն դու ինձ պիտի տաս»:

—«Օ՛, ամենայն բան, ինչ էլ կամենաս,
 (Քո հաւատարիմ ստրուկն եմ, գիտնաս),

Եւ այն ամենը, ինչ ձեռք կը բերեմ՝
 Ես զիւրահաւատ մարդկանց չըջանում,
 Իմ ճարպիկութեամբ ինչ էլ ժողովեմ,
 Պարգեւել միայն քեզ եւս խոստանում:

Այն օրից, ինչ որ Սուտն է ժողովում,
 Ազատ, համարձակ Քամին է տանում:

Լինում են օրեր, այլ և տարիներ,
 Երբ առատօրէն նա հունձ է անում,
 Կառուցանում է քարեայ կամարներ,
 Նրանց դռներին փականքներ դնում:
 Եւ խորհրդաւոր մութ նշաններով,
 Եւ ահեղագոյ բիւր նղովքներով,
 Փակում, կնքում է անխորտակելի
 Ամուր նիգերը հսկայ շէնքերի:
 Բայց բամին խիզախ—ոգին ճշտութեան,
 Աւետաբերը վէհ ազատութեան՝
 Թռչում է իսկոյն և անմատչելի
 Զարդում, փշրում է դռներն ու շղթան
 Գոռ ու անառիկ ամբողջիւնների.
 Եւ բեկորները հսկայ շէնքերի
 Մի հզօր թափով ցրիւ է տալիս—
 Որպէս մութ երազ խօլ դառանցանքի,
 Կամ որպէս փոշի լայն անապատում,
 Որպէս թանձր ծուխ վառուած խարոյկի
 Անսահման դաշտում:

Թարգ. ՅԱԿՈԲ ՅԱԿՈԲԵԱՆ

Ջ Հ Ո Ւ Դ - Ք Ո Ւ Շ Ա Ն ^{*)}

(Հրէասպանութիւն)

Վ Է Պ

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ԿԵԱՆՔԻԾ

XIII

Արեգակը արդէն միջօրէի բարձրութեան վրայ էր և նրա կիզիչ ճառագայթները վանել էին փողոցներից բոլոր բանաւոր տրարածներին ու միայն անբան արարածները, գլխաւորապէս շները, լեզուները կախ, հեւալով չանգռում էին հողը, որ և է մի խոնաւ փոս գտնելու համար։ Տների աղիւսները, իբրեւ հնոցի մէջ, կարծես նորից թրձւում էին արեւի կիզիչ շողերի տակ։ ամեն բան՝ շարժումն, կեանք դադարել էր փողոցներում, բաղարներում, թիմչաներում։ Մարդիկ, թմրած կամ կիսաբուռ, թափուած էին խանութի, բաղարչաների, մզկիթների խտրների վրայ յարգեայ հովհարներով քշում էին ճանճերը կամ հով էին բերում։ Երբեմն երբեմն փողոցի ծայրում, խանութների կամ մզկիթների առաջ լսում էր արդուղ¹⁾ և կամ իսքանջիբի²⁾ ծախողների զիլ ձայնը և պապակուած լեզուները ամեն կողմից կանչում էին. այ դուղի, այ դուղի³⁾։ Կէս կամ մի շահով սառն դուղը մի քիչ զովացնում էր պապակուածներին, նորից գլուխները ընկ-

*) Յե՛ս «Մուրճ» № 7.

1) Թան։ 2) Քաղցրախառն մեղրաջուր։ 3) Ո՛վ թան ծախող։

նում էին խտրների վրայ և ամեն տեղ դարձեալ տիրում էր մեռելային անշարժութիւն: Փռչին, կեղտոտութիւնները, գարշահոտութիւնները պատերի տակ, տարածում էին մի այնպիսի հեղձուցիչ մթնոլորտ, որ անցնողը քիչ էր մնում չնչասպառ լինէր:

Սնտանելի է թէհրանը ամառուայ ժամանակ, ով կարողութիւն ունի, փախչում է ամարանոց, Շեմրանի հովասուն բարձունքը, Դէմավէնդի ստորոտները: Հարուստների տներում, ապարանքներում առանձին սարգափխաններ ¹⁾ կան շինուած, ուր պատսպարում են սօթի ժամանակ, բայց միջակ և չքաւոր դասակարգի վիճակը ամառը սարսափելի է, մանաւանդ եթէ ջրի պակասութիւն է լինում, ինչպէս յաճախ պատահում է: Զանազան վարակիչ հիւանդութիւններ, որոնք առաջ են գալիս կեղտոտութիւնից, անմաքրութիւնից, խակ պըտուղներ ուտելուց, հոտած, պչնած ջուր խմելուց, առատ հունձ են կատարում:

Մեր պատմութեան տարին, այդ սովորական աղէտների թուին աւելացել էր և մի այլ նոր աղէտ, ամենասարսափելին՝ աղքատ դասակարգի համար. հացի, հասարակ սննկեազ ²⁾ հացի պակասութիւն էր և թանգութիւն, այն միակ սննդի, որով այդ դասակարգը մի կերպ քաշ է տալիս իր ողորմելի, թշուառ գոյութիւնը: Սնկեադի բաթմանը ³⁾, որ հազար գինար ⁴⁾ էր լինում ամենաթանգ ժամանակ, իսկ սովորաբար եօթնհարիւր գինար կամ 14 շահի, այժմ ծախւում էր երկու դրան, որը շատ դժուար էր ձեռք բերելը, այն էլ ինչ հաց — խառն աւազի, հողի և թեփի հետ: Հացի թանգութեան և պակասութեան պատճառը ոչ թէ այն էր, որ ցորենի, ալիւրի պակասութիւն կար, ոչ, այլ այն, որ մի քանի հարուստ կալուածատէր խաներ, ամբարելով

¹⁾ Նկուղ, որի մէջ տեղ ջրի աւազան կա և որ միշտ զով է լինում, կամ որի ներքե սառցարան է շինուած: ²⁾ Պարսկաստանի սովորական հացը, երկար, լաւաշի նման, բայց հաստ և խմորալի: ³⁾ Լիտր—7 ֆունտ: ⁴⁾ Հազար գինարը հաւասար է քսան շահու կամ մի դրանի, իսկ դրանը = 30 կ.:

ցորենը շտեմարանների մէջ, չէին ծախում, այլ պինդ պահում էին աւելի թանգ ծախելու համար: Նրանք կաշառել էին բաղաբապետին, որի պարտաւորութիւնն էր հսկել բազարների վրայ և այդպէս արուեստական թանգութիւն ու գրեթէ սով էին առաջ բերել: Հացագործների մեծ մասը փակել էին խանութները. մնացել էին մի քանիսը, որոնք ցորենավաճառ կալուածատէրերի գործակալներն էին կամ ձեռք ձեռքի տուած էին գործում: Դրանց խանութների կամ փոսերի առաջ ամեն օր առաւօտ և երեկոյ հաւաքւում էր ժողովրդի ահագին բազմութիւն, մանաւանդ կանանց խումբն բազմութիւն. ամենքը հաց, հաց էին պոռում, բայց ստանում էին միայն նրանք, որոնք կարողանում էին մի լիտր աւազի, թեփի, կիրի, գարու շաղախի փոխարէն երկու ղռան վճարել: Հայհոյանք, անէծք, լաց, աղաղակ բարձրանում էին ամեն կողմից. կանայք կատաղած, բարձրացնելով և ցոյց տալով մերկ, նիհար, կըմախք դարձած մանկիկներին, սպառնում էին հացագործին Ալլահի, մարգարէի, իմամների անէծքը թափել տալ նրա գլխին, եթէ անմիջապէս հաց չը տայ. հացագործը, իր անկարեկից, անտարբեր դէմքով կամ դըլուխն էր շարժում, կամ ինքն ևս հայհոյում և երբ տեսնում էր, որ հայհոյանքը, անէծքը բարկոծութեան փոխուելու վրայ էր, խոհեմաբար ներս էր մտնում և փակում հացարանի դուռը: Ամբոխը կատարեալ ոռնոց էր բարձրացնում, հայհոյանք և լուտանք թափելով կամաց կամաց ցրւում էր: Հետզհետէ ցերեկուայ տօթը բշտում էր ամենքին, այնպէս որ կէսօրուայ մօտ և մինչև տօթը անցնելը, փողոցներում տիրում էր մեռելութիւն և միայն սոված շներն էին հեւալով, լեզուները կախ կամ թաւալւում առունների թաց փոսերի մէջ, կամ փնդփնդալով, այստեղ այնտեղ թափառում: Երեկոյեան դէմ փոսերի առաջ կրկնւում էր նոյն տեսարանը:

Անկարգութիւնները, ժողովրդի տրտունջները հետըզհետէ սաստկանում էին: Բռնութեան, փայտի, խա-

րազանի տակ դարերով մեծացած, ճնշուած, հարստահարուած ժողովուրդը, որքան որ ստրկական յատկութիւններ ունենայ, որքան էլ վեհերօտ, թոյլ լինի, բայց երբ նա զրկուում է և այն միակ միջոցից, որով պահպանում է իր եղկելի գոյութիւնը—հացի կտորից, նա այլ ևս մոռանում է ամեն բան և քաղցած գազանի նման յարձակում է, ջարդ ու փշուր անելով իր առաջ ամեն բան, կործանելով, տապալելով, վրէժխնդիր լինելով իր կրած բազմամեայ տառապանքների, անարգանքների համար։ Սակայն բռնկուելով հրաբուխի պէս, կատարելով իր աւերմունքները, ամբօխը, հէնց որ մի քիչ յագուրդ է տալիս իր գազանային հակումներին, նոյնպիսի արագութեամբ պաղում է, յետ է ընկնում և նրա վրայ տիրում է ահ ու սարսափ. ստրկական յատկութիւնը նորից երեւան է դալիս և նա ստրկի հլու, անմուռնչ խոնարհութեամբ տանում է սոսկալի պատիժները։ Քանի քանի անգամ Թէհրանում կատարուել էին այդպիսի դէպքեր. ինչպիսի զարհուրելի պատիժներով ամբօխը քաւել էր իր ընդհանրական բռնկման յանցանքը, և, սակայն, այդ սոսկալի պատիժները երբէք նրան յետ չէին կասեցրել նորից բռնկուելու ամեն անգամ, երբ անխիղճ հարստահարողները հացի արուեստական թանգութիւն սարքելով, քաղցածութեան էին ենթարկում նրան։ Այդ հանգամանքը քաջ գիտէին Թէհրանի իշխանութիւնները, ուստի և ղգալով, որ հըրաբուխը կարող է յանկարծ ժայթքել, սկսեցին մտածել ձեռք առնելի միջոցների մասին։

Շահը բազաբում չէր. բամազանը վերջացաւ թէ չէ, երբ նա քիչ քիչ անդորրութիւն ստացաւ և միամտուեց, որ Բէհման-Միրզայի փախուստը վտանգ չէ սպառնում իր գահին և երիտասարդ շահադէն տարուեց Կովկաս ու փակուեց Շուշի բաղաբում, այլ եւս Պարսկաստան չը վերադառնալու պայմանով, Մահմէդ Շահը շունչ առաւ և ցանկութիւն յայտնեց ամառը անցկացնել Լառի գաշտերի վրայ։ Պալատը և հա-

րէմիսանէն քօչեցին: Շահի հետ քօչեցին և աւագանին, վեզիրները, մեծամեծները: Քաղաքում մնաց սակայն մեծ վեզիր Հաջի-Միրզա-Աղասին, որ շարունակ ախ ու վախ էր քաշում Բէհման-Միրզայի գոհարեղէնը ձեռքից թռցնելուն համար. քաղաքում մնաց Բէգլար-Բէգին, ըստ պաշտաման, քաղաքապետը, որ խիստ չաղ թիքաներ և առատ ընծաներ էր ստանում ամբարդարներից, ¹⁾ ցորենի և գարու մազանդան ²⁾ չիջացնելու համար: Ի հարկէ, քաղաքապետը, փորձառութեամբ, չէր մոռնում այս և այն կերպով քաղցրացնել Բէգլար-Բէգու բիւրը, և նրա միջոցով նաև մեծ վեզիրի բիւրը, այլապէս վաղուց նա փորձած կը լինէր իր գարշապարների վրայ Փալախկայի հարուածները, բայց երբ ժողովրդական զայրոյթի արտայայտութիւնները սկսեցին սպառնալից կերպարանք ստանալ, Բէգլար-Բէգին շտապեց ղեկուցանել ծերունի եպարքոսին իրերի վիճակը:

Հաջի-Միրզա-Աղասին, նստելով իր սիրելի ջորու վրայ, մի քանի ֆէրրաշների, ղուլամների և մունղինների ³⁾ ընկերակցութեամբ գնաց Լառ, Շահի մօտ, հրամայելով Բէգլար-Բէգուն սպասել իր հրամաններին:

Գիշերելով Շիրմանի գիւղերից մէկում, նա տեսաւ որ գիւղը գրեթէ ամայի է և իր բեռների համար ֆէրրաշները չեն կարողանում ոչ միայն գրաստ գտնել, այլ և յարդ, գարի ձիերի և ջորիների համար: Շրջակայ գիւղերն եւս գրեթէ ամայի էին. ոչ յարդ կար, ոչ գարի, ոչ ցորեն, չը նայելով որ շատ տեղ հունձն արդէն արուած էր: Ծերունի եպարքոսը չը զարմացաւ, նա գիտէր, որ այդ գիւղերը փոքր ինչ առաջ ենթարկուել էին սիւրսաթի ⁴⁾, իսկ սիւրսաթը Պարսկաստանի

¹⁾ Շտեմարանատէր, ամբարող: ²⁾ Սակագին: ³⁾ Դիւանատան պաշտօնեաներ, քարտուղարներ: ⁴⁾ Երբ պարսից Շահը ճանապարհ հորդում է, ճանապարհի վրայ ընկած երկու կողմերի գիւղերը պարտաւոր են հալթալթել պալատի, հարէմխանայի և ղօրքի համար հարկաւոր գրաստը և ուտելիքը թէ մարդկանց և թէ անասունների համար. այդ տուրքը կոչում է սիւրսաթ: Հազիւ բանակը իջնանում է մի գիւղի մօտ, որ զինուորները, ֆէրրաշները թափում են գիւղը և ում մօտ

գիւղական ազգաբնակութեան համար աւելի մեծ պատուհաս է, քան մորեխը, երաշտութիւնը, մուկը. նա խանձում, այրում է, ոչնչացնում է ամեն բան իր առաջ իբրեւ Սահարայ անապատից փչող տոթակէզ քամի:

Փէրրաշները գտել էին գիւղում մի պառաւ կին, որին բռնելով, բերին մեծ վեզիրի մօտ: Հաջի-Միրզա-Աղասին, ի բնէ՝ զուարճախօս լինելով, խօսակցութեան բռնուեց պառաւի հետ, որ դանդատւում էր, թէ Փէրրաշները զօռով իրան բռնել բերել են, երբ ինքն կամենում էր փախչել:

— Լաւ, նէն¹⁾, ասաց մեծ վեզիրը, ինչո՞ւ էիր փախչում:

— Քեզ զուրբան, պատասխանեց պառաւը, ախր չէ որ սիրսաք է:

— Էհ, քեզ ինչ, դու կին ես, քեզ հօ չէին բռնելու, որ Շահի բռնները տանես:

— Թոյլ կը տաս, զուրբան, մի առակ պատմեմ:

— Շատ լաւ, շատ լաւ, պատմիր, ասաց մեծ վեզիրը, եթէ լաւ առակ եղաւ, քեզ մի լաւ խալաթ կը տամ:

«Մի օր, սկսեց պառաւը, դաշտում մի աղուէս թունդ փախչում էր: Պատահեց նրան նապաստակը և հարցրեց. դրանցի, դրանցի, ի՞նչ կայ, ինչո՞ւ ես լեղապատառ փախչում:— Ձեռ լսել, ասաց աղուէսը, որ սիրսաք է, և հրամայուած է բռնել բոլոր ջորիներին:— Լաւ, քեզ ինչ, դու հօ ջորի չես, որ բռնեն քեզ:— Աղուէսը ժպտաց և ասաց. օրհնած, այս շուլուղի մէջ ո՞վ է նկատում որ ես ջորի չեմ, այլ աղուէս. ում վրայ են

ձի, էշ, ջորի են գտնում, բռնում բերում են բանակը, ում մօտ չարդ, զարի, խոտ են գտնում խլում են: Թէև օրէնքով սահմանուած է, որ սիւրսաթի փոխարէնը դուրս կան հարկերից, բայց այդ օրէնքը չէ դրժադրւում. այդ պատճառով, հէնց որ զիւղացիները լսում են որ Շահը և իր բանակը պէտք է անցնեն իրանց երկրով, նրանք շտապում են վերցնել իրանց զրառտները և փախչել հեռու տեղեր, որ ձեռք չընկնեն. զիւղերը ամայանում են բնակիչներից և մնում են միայն մի քանի ծերեր ու պառաւ կանայք: Երբ պատուհասը անցնում է, բանակը հեռանում է, նորից վերադառնում են:

¹⁾ Մայր:

հասնում, բռնում են. մինչեւ ես կ'ապացուցանեմ «որ ջորի չեմ, այլ ազուէս. ոտքերս նալած կը լինեն»:

Ծերունի եպարքոսը ըմբռնեց պառաւի առակի դառն ճշմարտութիւնը. նա չը բարկացաւ, այլ հաւատարիմ իր խոստման՝ հրամայեց իր տնտեսին մի լաւ խալաթ տալ պառաւին և բաց թողնել ու այլ եւս սիւրսաթի ետեւից չընկնել: Հասնելով Լառ, նա պատմեց Մահմէդ Շահին պառաւի առակը և Շահը քահ քահ խնդաց ու մեծարեց Հաջուն Սպահանից ընտիր սեխով, որին այնքան սիրահար էր:

Երկու օրից յետոյ Լառից մի զասիդ¹⁾ հասաւ Թէհրան, չորեք Բէգլար-բէգու դռան առաջ, նա յանձնեց նրան մեծ վեզիրի կնիքով դրոշմուած մի թումար²⁾ ու Շահի երկու ֆիրման:

Տօթը սկսում էր քիչ քիչ անցնել. փողոցները սկսում էին կենդանանալ. ջրկիրները կաշուէ տիկերի մէջ լցրած ջրով սրսկում և ոռոգում էին տների դաւիթները, փողոցները, կամ առաջարկում էին անցորդներին զովացնել իրանց պապակը սառցախառն ջրով: Թալիսման անող և ֆալ բացող մօլլաները պատերի խորշերի մէջ ծալապատիկ նստած, ազօթք մինջալով, սպասում էին չքերք կանանց, կամ դժբախտ սիրահարներին, որ նրանց դարդին դարման անեն: Պաղապաճառները, թաբաղները դլխին դրած, կշիռը ուսին ձգած, գովում էին իրանց պատուղները: Այդ միջոցին մի համալ, ձեռքին բռնած մի հատ սեանկադ հաց, որի գոյնը դժուար էր որոշել, ուրախ ուրախ անցնում էր այն փողոցով, որ տանում է դէպի Սէբը-Մէյդան: «Նզիբի, Շիմրի³⁾» ընկեր դառնան այդ հայագործները, ասում էր նա բարձրաձայն. հազիւ կարողացայ երկու

1) Հետիոտն սուրհանդակ, հին արեւելքի միակ նամակատար ու նամակարէր: 2) Տումար. գիր: 3) Նզիդն այն խալիֆն էր, որի ժամանակ Ալու որդիները՝ Հիւսէյն և Հասան նահատակուեցին, իսկ Շիմրը՝ նրանց զլխատող զահիճն էր: Այդ պատճառով, շիա մուսուլմանի համար Նզիդից և Շիմ. րից աւելի անիծեալ մարդ չը կայ աշխարհում:

ղռան տարով, երկու օրուայ աշխատանքս՝ ստանալ այս հացը, եւ ի՜նչ հաց, Ալլահ, կէսը հող, մոխիր ու կաւիճ. այս էլ տէրութիւն է, այս էլ մուսուլմանութիւն է. հաւատա՛ որ մօլթանին, էրմանին, ջհուզը¹⁾ աւելի խղճմտանք կունենան, քան այս անիծած ամբարդարները»։

Մշակին շրջապատեցին անցուորները և տեղեկութիւններ հարցրին թէ ո՞ր փուռն է բաց, ապա բազմութիւնը սկսեց շտապով դէպի ցոյց տուած կողմն գնալ, մինչեւ հասաւ այնտեղ։ Այն փողոցը, Սաբդի-Մէյդանին մօտ, Շահի պալատի ետեւը, ուր գտնուում էր փուռը և հացագործի խանութը, վիտուում էր արդէն խառնիճաղանճ ամբոխով, որի մեծամասնութիւնը կազմում էին կանայք, իսկ մնացածը համայններ, սէյիդներ, դերվիշներ, զինուորներ և առհասարակ բանուոր գասակարգի մարդիկ։ Խանութի թեք մակարդակի վրայ, ուր ցցուած էին մեխեր, հազիւ 5—6 հաց էր երեւում այդ մեխերից կախուած. գռան կողքին, կշեռի առաջ նստած՝ հացագործը, մօրուքը ու եղունգները խինայած մօտ 50 տարեկան մի մարդ, որի ճակատից ծորում էր քրտինքը, պարզում էր ձեռքը դէպի առաջ, ստանում էր փողը և ապա կշեռելով հացը, տալիս գնողին։ «Ինձ ևս տուր կէս լիտր հաց, պոռում էր ամբոխից մի երկրորդը. ինձ մի լիտր, ինձ մի քառորդ, առ փողն, աչքդ կօխիր, չէյթանի փայ լինի, գլխիդ հարամ լինի», գոռում էին զանազան կողմերից։ Հացավաճառը երգում, հաւատ էր անում, իմամներին վկայ կանչում, որ հաց չը կայ և առաջարկում էր ամբոխին գնալ ուրիշ հացագործների խանութից գնել հաց։ Երեխաները իրանց մօր դրկերում կամ շալակներին այնպէս աղէխարշ կերպով լացում էին «մայրիկ, հաց, հաց, սոված եմ» պոռալով, որ օդը լցուած էր սուգ ու շիւանով։ Ամբոխը սպառնալիքներ էր կարգում, յուսահատութեան և

¹⁾ Մուսուլմանի կարծիքով մօլթանին, հալը, հրէան խղճմտանք չունեն։

անհամբերութեան նշաններ էր ցոյց տալիս և ամեն անգամ, երբ յուսահատութեան մղուած կանանց մինը բացականչում էր «այ քանդուի այսպիսի տէրութիւնը, կործանուի Մահձեղ Շահի գահը», նա, ամբոխը «ամին» էր պոռում: Ամբոխը մոռացել էր որ Փէրրաշները կարող են լսել Աշխարհի Աղօթատան հասցէին ուղղուած այդ անէծքները և այն ժամանակ կը լինէր «լալ և կրճտել ատամանց», բայց յուսահատութիւնը, քաղցը մի այնպիսի սոսկալի հրէշ է, որ քանդում է պատնէշները, վտանգաւոր է ամբոխի այդպիսի տրամադրութեան ժամանակ նրա ակռաների տակ ընկել:

— Մայրիկ, հաց, հաց եմ ուզում, լսուեց դարձեալ մի երեխայի աղիողորմ ձայն, տես, նա ունի, ինչ սպիտակ, լաւ հաց է ուտում:

Բնագղձաբ ամենքի աչքերը ուղղուեցին դէպի երեխայի ցոյց տուած կողմը: Մի ջահիլ կին, գրկին ունէր 4 տարեկան մի աղջիկ, լացակուծած, որ այժմ ուրախ ուրախ և ագահաբար ուտում էր մի կտոր սպիտակ լաւաշ: Ջահիլ մայրը, գիմելով մի քիչ հեռու կանդնած երկու կանանց, որոնց մինը խափշիկունհի էր, ասաց միւսին. «թէեւ դու եահուդի¹⁾ ես, բայց Ալլահը և հազրաթ Մուսան²⁾ օրհնեն քեզ, որ խղճացիր իմ երեխային»:

— Ինձ էլ, ինձ էլ տուր մի թիքա, ճվվացին ամեն կողմից սովալլուկ երեխաներ, մեկնելով նիհար ձեռները դէպի բարեսիրտ հրէայ կիներ:

— Տո՛ւր, տո՛ւր, եահուդի աղջիկ, տո՛ւր մեզ հաց:

— Ի՞նչ, թնդաց յանկարծ մի խռպոտ ձայն, մուսուլմանը այստեղ դարու հաց անգամ չէ գտնում ու տելու, իսկ մուսաառ ջհուդը ցորենի պատուական լաւաշ է ուտում: Խլենք նրանից այդ հացը, ջհուդը կարող է առանց հացի էլ մնալ:

— Տո՛ւր, տո՛ւր, եահուդի, հացը, օռնաց ամբոխը, որ արդէն էլեկտրականացած, մի առիթ էր որոնում

1) Հրէայ: 2) Մովսէս մարգարէն:

ժայթքելու իր դայրոյթը և թափելու իր դառնացած հոգու մաղձը:

Եւ հարկւրաւոր բռունցքներ՝ սպառնալից ուղղուեցին դէպի հրէայ կիներ, որ, զարհուրած, սփրթնած, աւելի պինդ սեղմեց կռնատակի բօխչան, որից հանել էր մի երկու կտոր հաց և տուել երեխաներին:

—Այս հացը իմը չէ, ազադակեց նա, տանում եմ Իմամ-Ջումայի տունը տիրուհուս համար:

—Սուտ է խօսում անզգամը, ինչ էք նայում, խըլէք ձեռնից, ոռնաց դարձեալ դազանացած ամբօխը:

Եւ Ալլահը գիտէ ինչ պէտք է լինէր խեղճ հրէայ աղջկայ հալը, եթէ նրա ընկերուհի խափշիկուհին, որ մեզ ծանօթ Եասամանն էր, տեսնելով վերահաս վտանգը, չը խլէր աղջկայ կռնատակից բօխչան և չը նետէր ամբօխի մէջ, ասելով.

—Հա, առէք, առէք հացը, մէջը հալուայ եւս կայ, կերէք:

Կայծակի արագութեամբ ամբօխը վրայ տուեց և ինչպէս քաղցած շները թափւում են կրծած ոսկրի վրայ և միմեանց բզբտում, այնպէս էլ սովալլուկ բաղմութիւնը մէկ մէկու հրելով, ստնախփա անելով, քիթ ու պոռնիք ջարդելով, մի բռնում բզբտեց բօխչայի բովանդակութիւնը: Վայ ոտքս, վայ մէջքս, անիրաւներ ջարդեցիք ինձ, թեւս կտրեցիք—ահա ազադակներ, հայհոյախառն, որ լսում էին:

Եասամանը քաշ տալով իր յետեւից հրէայ աղջկան, մի կերպ հանեց նրան ամբօխի միջից և աղաւտեց իր այդ ճարպիկութեան շնորհիւ: Հրէայ աղջիկը, սարսափած, մի և նոյն ժամանակ չէր դադարում լացել, ասելով. հիմա ինչ պէտք է տանեմ տիրուհուս, ինչ պատասխան պէտք է տամ Սաւուղի մօրը:

—Փառք տուր Ալլահին, աղջիկ, որ կեանքդ ազատեցիր, չես տեսնում ամբօխը քաղցածութիւնից դազան է դարձել. բեղ բղիկ բղիկ կանէին, եթէ բօխչան

չը նետէի նրանց: Եւ ո՞ր շէյթանը դրդեց քեզ հաց տալ այն երեխային:

— Ինչ անեմ, սիրտս չը դիմացաւ, երբ լսեցի երեխայի աղիողորմ ձայնը:

Ամբոխը դեռ շարունակում էր մէկ մէկուց խլել ծեծով, հայհոյանքով հացի փշրանքները, հացագործը, տեսնելով նրա կատաղութիւնը, օգուտ քաղելով այն հանգամանքից, որ ամբոխը մի րոպէ մոռացաւ իրան, աննկատելի կերպով ծլկուել և փակել էր խանութի դուռը ներսից, թողնելով մեխերի վրայ մի քանի հաց: Հէնց որ ամբոխը այդ նկատեց, նորից յարձակուեց հացերի վրայ և կտոր կտոր անելով, սարսափելի ժխոր բարձրացրեց. նորից շատերը օտնակոխ եղան, երեխաներ ճմլւեցին մայրերի դրկում: Կանայք ուշաթափ եղան:

— Մուսուլմաններ, պոռաց յանկարծ մի ձայն, եկէք բռնենք ջհուդ աղջկան և թող նա տանի ցոյց մեզ, թէ որտեղ այդ մուռտառ ջհուդները թագցրած ունեն սպիտակ հաց:

— Բռնեցէք, բռնեցէք ջհուդ աղջկան, ոռնաց ամբոխը:

— Ահա, ահա փախչում են խափշկուհու հետ, լսելի եղաւ մի ձայն, նրանք մոտան փոքր փողոցը:

Եւ մի քանի հոգի վազեցին Նասամանի ու հրէայ աղջկայ յետեւից, բայց հազիւ մի քանի քայլ առաջ էին գնացել, որ մի նոր հարայ հուրոց բարձրացաւ և ճիպտի մի քանի հարուածներ ստիպեցին վազողներին կանգ առնել:

— Ի՞նչ խաբար է, փեղէր-սուխտաներ, հարամդադէներ, ինչ կուի է, յետ քաշուեցէք, լսուեց Բէգլարբէգու խրոխտ ձայնը և Ֆէրրաշների ճիպտների հարուածները սկսեցին դադել սրտ նրա մէջքը:

Ամբոխը, մի քանի րոպէ առաջ դադանացած, սպառնալից, սկսեց վախկոտութեամբ տեղի տալ, բայց կանայք վայնասուն բարձրացրին, «հաց, հաց ենք ու-

դուժ, Բէգլար-բէգի, դուժ՝ Աստուած չունէք, դուք մուսուլման չէք, մեզ կոտորելու էք սովից, դուք որ հրամայէք, հաց կը լինի»։

—Կը լինի, կը լինի, ասաց Բէգլար-բէգին. լսեցէք այժմ կը տեսնէք, ահա նառ¹⁾ են կանչում. էյ ճառչի²⁾, առաջ եկ։

Շաթիրի հագուստով մի մարդ, ձեռքին բռնած մի թումար, իջաւ էշից և կանգնելով ամբոխի մէջ, աղաղակեց.

«Հրաման է մեծ Շահնշահին, ալ-խագան, ալ-խագան Մէհմադ Շահին—[թող Ալլահը յաւերժացնէ նրա թագաւորութիւնը և տէրութիւնը։ Աշխարհի Ազօթարանը իմանալով, որ ժողովուրդը նեղութիւն է քաշում հացի պատճառով, որ քաղաքում ցորեն չէ ծախում, հրամայել է աղա Բէգլար-բէգուն պաշտօնանկ անել քաղաքապետին, ֆալախկայի երկու հարիւր հարուած տալ նրա ոտներին և նոր քաղաքապետ կարգել շահզադէ Աբգար-Միրզային։ Այսուհետեւ ով հացի հետ դարի, հող, թեփ խառնի, նրա ձեռքը կամ ականջը պէտք է կտրուի. հացի լիտը պէտք է հազար դինարով ծախուի, ով այդ մազանդայով չը ծախէ, նրա ականջը պէտք է մեխուի սիւնից։ Բոլոր ամբարդարները պէտք է ցորենը հանեն շտեմարաններից և ծախեն ղափանի³⁾ տակ առաջուայ գնով, եթէ ոչ նրանց ամբարած ցորենը պէտք է թառաշ⁴⁾ լինի։

«Հրաման է Շահնշահին, ալ-սուլթան, ալ-սուլթան Մէհմադ Շահին—[թող Ալլահը յաւերժացնէ նրա թագաւորութիւնը և տէրութիւնը.—վաղը, մեծ հրապարակի վրայ պէտք է պատժուեն Սպահանից բերուած խռովարարները, դողերը, զալքանները⁵⁾, լուծիները, ինչպէս և Շիրայի և Մազանդարանի կողմերում երեւացած հերետիկոսները, որոնք բաբի անունով ոտնա-

1) ճառ կանչել—ճառ խօսել, չաչտարարել հրապարակաբար 2) ճառչի—ճառ կանչող, մոնեհովի 3) Հտտարակական կշիռ 4) Առաւ առնել 5) Կեղծ դրամ կարող, կեղծող.

կոխ են անում շէրիաթի նուիրական օրէնքը, արհաւիրում են զուրանը և մեծ մարդարէի պատուիրանները»:

—Սալավաթ, սալավաթ, պոռաց ամբոխը. Ալլահը երկար կեանք տայ մեր Շահին:

Ամբոխը, բարի լուրի քաղցր տպաւորութեան առկա մոռանալով հացը, քաղցը, սկսեց գնալ մունետիկի յետեւից, որ հեծնելով էշը, շարունակեց իր ճառ. կանչելը ամեն մի հացագործարանի առաջ կանգ տունելով. այդպիսով ամբողջ քաղաքում նոյն երեկոյեան տարածուեց Շահից ստացուած ֆէրմանների բովանդակութիւնը և գրգռուած ամբոխը սկսեց քիչ քիչ հանդարտուել ու վաղուան տեսարանի հրճուանքի յոյսով օրօրել իրան: Մայրերը հանգստացնում ու բնացնում էին իրանց քաղցած մանուկներին այս խօսքերով. «տես էգուց որքան սեանկադ և լաւաշ կ'ունենանք»: Եւ լացից յոգնած երեխաները քնում էին:

Սակայն կային մարդիկ, ծերունիներ, որոնք գլուխները թափ էին տալիս, երեկոյեան, իրանց տների դռան սաքունների վրայ նստած ղէյլան ծխելիս. «մեզ իրաւում, բնացնում են. այս գիշեր ամբարդարները և հացագործները կը տեսնեն նոր քաղաքապետին ու դարձեալ ամեն բան իրանց քէֆով կը լինի, բաճախւորները ¹⁾ ում չեն կուրացնում»:

—Ո՛չ, Հաջի Աբբաս, պատասխանում էր հարեւանը. ասում են նոր քաղաքապետը շատ խիստ մարդ է և Շահը ևս շատ խիստ հրամաններ է արձակել:

Կը լուսանայ, կը տեսնենք. առանց Ալլահի կամքի մեր գլխից մի մազ անգամ չի ընկնի:

Մենք հետեւենք Եասամանին և հրէայ աղջկան:

XIV

Եասամանը, խորամանկ, ինչպէս լինում են առհասարակ խափշիկները, գործադրեց ամբոխի վերաբեր-

¹⁾ Ոսկիները:

մամբ այն, ինչ որ ճանապարհորդները գործադրում են շների վերաբերմամբ. երբ ճանապարհորդի վրայ յորձակում են կատաղի շներ և նա պաշտպանուելու հնարաւորութիւն չունի, նա հանում է պարկից իր պաշարը և ձգում նրանց առաջ. շները, թողնելով ճանապարհորդին հանդիստ, ուխում են իրար խեղդոտել, բղբաւել մի ոսկրի համար, իսկ ճանապարհորդը անցնում է անմիտաւ Եթէ Եասամանը չունենար գործելու այդ պաղարիւնութիւնը, հրէայ աղջկայ բուրդը ամբոխը վաղուց գլել էր: Նա քաշեց նրա թեւից և տարաւ նեղ փողոցը, ապա ստիպեց արաբացնել քայլերը: Մի փոքր տեղ գնալուց յետոյ, հրէայ աղջիկը, որ յուզմունքից և վախից դեռ վրայ չէր եկել, ծնկները կծկուած զգալով, պղղեց պատի տակ մի բիչ շունչ առնելու, բայց Եասամանը լսելով այդ լուսէին ամբոխի նոր ոռնացը և սպառնալիքները հրէաների վերաբերմամբ, յետնայեց և տեսաւ, որ վաղում են իրանց յետեւից: Նա կոպտութեամբ բարձրացրեց հրէայ աղջկան և առաջը ձգելով «փախիր, փախիր», պոռաց. ինքն եւս սկսեց վազել: Փախչելիս, նա նորից յետնայեց և տեսաւ, որ այլ եւս ոչ ոք հետամուտ չէ իրանց, բայց դալիս է Սէլիմ չաթիրը մի բարձրահասակ սէյիդի հետ: Նա մի բիչ միամտուեց, ձայն տուեց հրէայ աղջկան կանգնել, մինչեւ հասաւ Սէլիմը, պատմեց մոռնեալիկի հրատարակածը և բոլորովին միամտացրեց, որ այլ եւս ոչ մի վախ չը կայ:

Սէլիմը, աչքով նշան արեց Եասամանին դէպի սէյիդը, որ կանաչ չաւմայով և կանաչ դօտիով էր այս անգամ, ու մնայլ, ունքերը կիտած, քայլում էր նրա կողքին, խէթ խէթ նայելով հրէայ աղջկան: Վերջինս, նոր վախից բռնուած, կաշեց Եասամանին և պինդ բռնեց նրա թեւը, պաշտպանութիւն որոնելով: Նա ճանաչեց նրան. Եսթերին՝ իր ախրուհուն յաւիտակող սէյիդն էր:

Սէյիդի համբերութիւնը այլ եւս հատել էր. Ի.

Իմամ-Ջուլան ձգձգում էր գործը. նա պահանջել էր վկաներ, որոնց սէյիդը ներկայացրել էր. վկաները իր թաղի բնակիչները և հարեւաններ. ցոյց էին տուել, որ հրէայ աղջիկը իր յօժար կամքով էր մտել սէյիդի տունը, բայց Իմամ-Ջուլան յայտնել էր, որ պէտք է հրէաների ցոյց տուած վկաներին ևս հարցաքննէ. այդ վկաները, աւելի բազմաթիւ քան սէյիդինը, որոնց մէջ և երկու մուսուլման ցոյց էին տուել, որ սէյիդը զօռով յափշտակել է Եսթերին և քիաբինը մօլլան կատարել է առանց Եսթերի գիտութեան ու համաձայնութեան: Սէյիդը բնազդմամբ զգում էր, որ Իմամ-Ջուլան իր գլխին խաղ է խաղում, դիտմամբ ձգձգում է գործը: Միւս կողմից եւս Սէյիմի երկմտի քսու խօսքերը կասկած էին ձգել նրա սրտի մէջ Իմամ-Ջուլայի վերաբերմամբ և դրդուել նրա խանդոտութիւնը: Նա գլխի էր ընկել, որ իրան մի թակարդ են լարում, բայց այդ բոլոր արգելքները, մանաւանդ հրէայ աղջկայ աննման գեղեցկութիւնը աւելի եւս բորբոքել էին նրա մէջ Եսթերին տիրելու ցանկութիւնը և նա որոշել էր վերջնական բացատրութիւն պահանջել Իմամ-Ջուլայից, և եթէ Եսթերին իրան չը վերադարձնեն, նորից դրդուել ամբօխը ու ջհուդ-քուշան սարքել: Այդ մտքերով տոգորուած, նա գնում էր այժմ Իմամ-Ջուլայի տունը և այժմ իսկ հրէաների սիրտը վախ գցելու համար, հրէայ աղախնից լսուելու նպատակով, նա դիմեց Եսսամանին, ասելով. «աֆէրիմ, այդ էր պակաս հիմա էլ սկսել էք մուստառ ջհուդ կանանց հետ բարեկամութիւն անել, նրանց հետ նստել վեր կենալ: Ասա այդ շուն ջհուդ աղջկան, թող իմաց տայ միւս չներին, եթէ այսօր իմ կնոջս ինձ չը տան, էգուց ջհուդների թաղում քար քարի վրայ չի մնայ»:

Հրէայ աղախինը պինդ սեղմեց Եսսամանի թիւը և շշնջաց. «ի սէր Աստուծու, պաշապանիր ինձ, ես վախում եմ»:

—Ամօթ չէ, աղա, ուրբանդի տակից խօսեց Ես-

սամանը, որ այդպիսի խօսքեր էր ասում մեզ, մենք աղախիններ ենք, մեզ ինչ հրամայում են այն ենք անում. սա էլ Եսթերի հօր աղախինն է, նրա համար հաց էր տանում, սովածները խլեցին: Դուք եթէ խօսք ունէք, Իմամ-Ջումային դիմեցէք. ձեր գործը նրա հետ է և ոչ մեզ հետ:

— Ի՞նչ, իմ կինս, մուսուլմանի կինը, ջհուդի հաց է ուտում: Ալլահ, Ալլահ, հոգն իմ գլխին: Եւ Իմամ-Ջուման այդ թոյլ է տալիս,

Եւ նա արագացրեց քայլերը. Սէլիմը հետեւեց նրան, ժպտալով Եասամանին:

Երկու կանայք կամաց կամաց քայլեցին մինչեւ հասան Իմամ-Ջումայի տունը: Դռնապանը, ծերունի Հաջի-Բաբան, սաքուի վրայ չոքած զէյլան էր ծխում, տմբումբացնելով խինայած մօրուքը: Տեսնելով Եասամանին մի անծանօթ կնոջ հետ, նա հարցրեց.

— Ո՞վ է այս կինը:

— Ջհուդ. խանըմի աղախինը. մեր խանըմը ինձ ուղարկեց սրան բերելու. մեզ հետ վերցրել էինք ընտիր սպիտակ լաւաշ. ախ ինչ լաւն էր, ամու¹⁾, բայց ճանապարհին վրայ թափուեցին և խլեցին, բիչ էր մնում մեզ էլ բզիկ բզիկ անէին, մի կերպ ազատուեցինք եկանք,

— Ախր ինչ կը լինի, Եասաման, որ այդ ջհուդները թողնեն իրանց քեաֆիր դենը և ընդունեն մեր սուրբ, ճշմարիտ հաւատը և ուղղակի դրախտ գնան:

Եւ դառնալով հրէայ աղախնուն, ծերունին յարեց.

— Է՛յ աղջիկ, եկ ինձ փորձառու աղսախկալիս²⁾ լսիր. ես բո վատը չեմ սւգում. թող այդ մալոյ, ծուռ հաւատդ, ընդունիր մեր ճշմարիտ մուսուլման հաւատը. ես բեզ կ'առնեմ կին իմ աղիս համար, այն կեանքումն էլ հրեշտակների կին կը լինես:

Հրէայ աղջիկը նորից մօտեցաւ Եասամանին:

1) Հօրեղրայր 2) Ծերունի:

—Լաւ, լաւ, ասաց ծերունի դռնապանը, ներս մտէր: Քաշեց հարէմխանէն տանող դռան չուանը:

Եասամանը և հրէայ աղջիկը մտան կանանոցը, չարչաւները վեր առին, երեսի քօղերը յետ ձգեցին: Փոքր բակից, նրանք մտան մի բնդարձակ պարտէզ, որի մէջ տեղ մի մեծ աւաղան կար և շատրուանը կարկաշելով ջուր էր ցայտում: Ժառուղիները նոր ջրուած էին. աւաղանի չորս կողմը տարածուած էին ծաղկանոցներ, որոնք անուշահոտութիւն էին տարածում, իսկ սաղարթախիտ ծառերը, շարժուելով երեկոյեան հովից, դուրսէն էին տարածում: Մի քանի կանայք, բոլորովին մերկ լողանում էին աւաղանում, միմեանց երեսին ջուր խփում և ուրախ ուրախ քրքիչ արձակելով, սուզում ջրի տակը ու նորից երեսը դուրս գալիս: Աւաղանի գլխին մի մեծ նսճիի տակ փռուած էր մի երկար գորգ, մի քանի մութօքէներ դրած. այդտեղ դրուած էր մէջմասհիների մէջ դանազան պտուղներ — տանձ, ինձուր, սալոր, գեղձ. մի այլ մէջմահու մէջ դարսուած էին դանազան օշարակներով սրուակներ, մէջտեղը մի մեծ շաքսայ ¹⁾ շարքաթ ²⁾ սառուցի կտրներով և երկար եղեւնէ փայտէ նախշած գգալներով: Երկու աղախին ևս գուլարդանները ³⁾ ձեռքին բռնած կանգնած էին, երկու ուրիշ աղախին հոտաւետ ծաղիկների վնջեր բռնած նոյնպէս սպասում էին լողացող խանրմներին, իսկ գեղանի, տկուր խանրմները երբեմն երբեմն նայուածքները ուղղում էին գէտի դռնաւոր ապակեզարդ փոքր սենեակը, որ շինուած էր դիմացի թալարի գլխին և որտեղ կարող էր նստած լինել հարէմխանի տէրը — Իմամ-Ջուման, թէև անաեոսանելի դռնաւոր ապակիների միջից: Լողացող խանրմները դուրս էին գալիս աւաղանից և թափահարում: Ջրի կաթիլները, լուսաւորուելով վերջալոյսի շողերով, փայլում էին նրանց սպիտակ մարմնի վրայ ազամանդի նման: Աղախինը ածում էր

¹⁾ Սկաւառիկ: ²⁾ Շաքարաջուր, քողցր չուր: ³⁾ Վարդիճրի սրտակ:

խանրմի տփը վարդաշուր, որով նա սրսկում էր սև վարսերը, որոնք երկար թափուած էին սևերի վրայ. ապա վաթաթուեկով բարակ շղարշանման սփածանելիքի մէջ, խանրմը նստում էր, թիկն տալիս մութաբին և միւս աղախինը անմիջապէս դնում էր նրա առաջ մի փունջ ծաղիկ ու մատուցանում էր մի գաւաթ սառն օշարակ: Օշարակից յետոյ աղախինը տալիս էր մի Փինջան սուրճ և մի լաւ չաղ արած դէյլան: Երեք խանրմները—Իմամ-Ջումայի երեք բեաբինաւոր ամուսինները, թիկն տաւած մութաբէներին, սև սաթի նման վարսերը տարածած մերկ վզերի վրայ, ժպտալից, և լուսաւորուած մայր մանող արեւի շողով, արդարեւ, նմանում էին հուրի-փէրինների: Ծխելով դէյլանը, նրանք սկսեցին հագնուել, բայց ամենից առաջ սկսուեց սիւրմայի ¹⁾ գործողութիւնը. ոչխարի սաի կճպղղի մէջ ածած սիւրմայով յօնքերը խիտ քաշելուց յետոյ, նրանք վարդադոյն անդուրով վարդի գոյն տուին իրանց այտերին և նոնի: գոյն իրանց չրթուներներին:

Նկատելով ներս մտնող Նասամանին հրէայ աղախնու հետ, խանրմներից տարիքաւորը, Գիւլասանէմը, չանկ անելով, ասաց.

—Մօխիր գլխիդ, սեւուկ, էլի ճրտեղերանք ես թրեւ գալիս, էլի ի՞նչ օյիններ ես սարքում, ո՞վ է այդ աղջիկը:

Խափշիկուհին խորամանկաբար ժպտաց.

—Ձեմ ասի, Գիւլասանէմ խանրմ, մինչեւ չը հրամայես մեզ մի մի գաւաթ սառն օշարակ տան բերաններս զովացնելու:

Խանրմը նշան նրան արեց և աղախինը երկու մեծ գաւաթ սառն շարքաթ լցնելով տուեց մինը Նասամանին, մինը հրէայ աղջկան: Գաւաթը մի սևմարսկ գլխին քաշելուց յետոյ, Նասամանը ասաց.

—Ջհուդների թաղից եմ գալիս. այս աղջիկը,

1) Սիւրմէ՝ արկելըում գործածուող անդուր:

Ռեբեկան, իմ տիրուհուս Լէյլա խանըմի հիւր հրէայ օրիորդի, Եսթերի աղախինն է, որին Եսթերը կամենում է տեսնել և տիրուհիս թոյլ է տուել:

Խանըմները հետաքրքրութեամբ նայեցին հրէայ աղջկան և նրա հագուստներին. «մօտ ե՛կ, տեսնենք, ջհուգ աղջիկ, ցոյց տուր մեզ շրջազգեստդ, տեսնենք մերինի նման է կարուած, բայց մեզ չի դիպչես, կը մուռտառես»:

Օշարակ տուող աղախինը հէնց որ իմացաւ աղջիկը հրէայ է, բաժակը աւաղանում ջրի քաշեց և առանձին կողմն գրեց, որ յետոյ տաք ջրով եւս լուանայ, որովհետեւ դաւաթը պղծուել էր:

Հրէայ աղջկայ աչքերում արտասուք երեւացին:

—Գնանք, ասաց խափշիկուհին, նրա ձեռքից բռնելով:

—Լսիր, Եասաման, խանըմիդ ասա մեր երեքիս կողմից, թող գայ այստեղ մեզ հետ մի բաժակ օշարակ խմէ և բիշ դրոյց անենք. թող հրէայ աղջկան եւս հետը բերէ. ասա, թող շատ էլ նազ չանէ:

—Նազ էլ կանի սազ էլ, պատասխանեց խափշիկուհին. ումից է պակաս, որ նազ չանի:

Եւ բռնելով հրէայ աղջկայ ձեռքից, սկսեցին բարձրանալ սանդուխներով, որ տանում էր դէպի թալարը, որի վրայ բայելում էին մի քանի սենեակների դռներ, որոնց մէկը Լէյլա խանըմի, Իմամ-Ջումայի չորրորդ բիաբինաւոր և ամենասիրելի կնոջ սենեակն էր տանում:

Սենեակը, ուր մտան խափշիկուհին և Ռեբեկան, ամբողջովին կահաւորուած էր պարսկական ճաշակով, ուր եւրոպական ոչ մի ձեռակերտ չէր կարելի տեսնել: Իմամ-Ջումայի տունը չէր կարող մուտք գործել պիղծ որ և է առարկայ, շինուած քաֆիրի, անհաւատի ձեռքով:

Մի մեծ ֆարահանի ընտիր գորգ ծածկում էր

ամբողջովին յատակը, իսկ տեղ տեղ փէնջերէներէ¹⁾ առաջ, որոնք բացուում էին մի փոքրիկ պարտէզի վրայ, ձգուած էին Քիւրդստանի և Քիրմանի սաջա-դաներ²⁾։ Լուսամուտների վարագոյրները Բաշտի մե-տաքսեայ դործուածներէց էին. մեծ փէնջերէի առաջ, պատի երկու կողմերին դրուած էին երկու մինդարե-ներ և պատի տակով շարուած մութաքաներ Քիւշա-նի մախմարից։ Թախչաներում³⁾ ինչպէս և առաստաղի բահտիններում⁴⁾ շարուած էին պարսկական հին կաւ-եայ անօթներ, ափսէներ, ջրամաններ, շաքառաներ, խաթամի⁵⁾ հայելիներ, վարդամաններ, սրուակներ, ղէյլաններ, ֆինջաններ, մարգարտով ընդելուղուած, առղենկար փոքր ջաբբաներ⁶⁾։ Մի այլ պատի տակին դարսուած էին վերմակ, դեօշակ, բարձ և ծածկուած մետաքսէ շարշաւով։

Լէյլա խանըմը, Սէլիմ շաթիրի նախկին հարսնա-ցուն, յօնքերը սուրմայած, մատերը խինայած հարէ-մական հագստով, գլխին դրած մախմարէ մի թասադ, որի առջեւից կարուած էր խոշոր մարգարիտների մի շարք և նրանց տակից ֆաթալի շահի ոսկիների մի երկրորդ շարք, վարսերը փռած ուսի վրայ, թիկն տուած մութաքային ղէյլան էր ծխում։ Կլոր, լայն շրջագեցածը, կարմիր նուրբ զանաւուղից⁷⁾, փոխանի տեղ, սկսած փորից հասնում էր մինչեւ սրունքը, այն-պէս որ պորտը բաց էր մնում, իսկ նրա տակից, շրջա-գեցածի չորս կողմով շարուած էին խառն ոսկիներ և յուլունք, այնպէս որ ամեն անգամ որ և է շարժում անելիս այդ ոսկիները և յուլունքը փորի վրայ չըխ-չըխկում էին. շրջագեցածի վերեւ հագած ունէր, կա-պոյտ նուրբ զանաւուղէ շապիկ, զանջիրաներով⁸⁾ որ չէր ծածկում փորն և որի թեւքերը հասնում էին մին-

1) Լուսամուտ 2) Փոքր գորգեր 3) Պատի մէջ բաց դարաններ
4) Պատի և առաստաղի մէջ տեղ դուրս ցցուած հարթութիւն 5) Պարս-կական մօղալիկ 6) Երկղիկ 7) Մետաքսէ կերպաս, որ գործում են Պարս-կաստանում 8) Ոսկէ թել կրումօվա

չեւ արմունկները, դաստակներին ձգած ունէր, բալ-
պաների տեղ, ոսկէ ծանր ապարանջաններ: Հասակով
հազիւ 25 տարեկան լինէր. դէմքը վերին աստիճանի
բարի և ժպտուն արտայայտութիւն ունէր, միայն սուր-
ման տալիս էր աչքերին անբնական փայլ: Մենեակի
մէջ տեղ մէջմահիւնների մէջ դարսուած էին ծաղիկներ,
պտուղներ, օշարակներ:

Դէմ առ դէմ, միւս մինգարէի վրայ նստած էր
գեղանի Եսթերը, որի հագուստը Լէյլայի հարեմական
հագուստի հակադասուկերն էր կազմում: միայն երեսը
և ձեռները կարելի էր տեսնել: Կարելի էր նկատել,
որ հրէայ օրիորդը ամենեւին չէ հետաքրքրւում հարե-
մական այն փաթածութեամբ, որով շրջապատուած
էր. նրա դէմքը թախծալի էր, մի բիշ դունատուած և
արտօսրի կաթիլները, սահելով այտերի վրայ, ցոյց
էին տալիս, որ նա նոր լաց էր եղել:

— Ես բեզ ասում եմ, քոյրիկ, վեր կաց գնա, երե-
սըդ լուայ սառն ջրով, մի քիչ պտուղ կեր, մարդ
այդբան էլ կը խորուի ախրութեան մէջ, չէ որ Ալահը
գթած և ողորմած է, յուսադրում էր Լէյլա խանրմը:

— Ախ, քոյրիկ, ինձ համար մահից բացի փրկու-
թիւն չը կայ, աւելի լաւ է մեռնեմ, քան սէյիդի կինը
դառնամ և կամ...:

— Սուս, աղջիկ, սուս, դու կատարիր այն, ինչ որ
ես պատուիրեցի բեզ, դու առ երես հաճութիւն և հա-
ւանութիւն ցոյց տուր Իմամ-Ջումային, դրանով միայն
կարող ես փրկել քո ցեղակիցներին և բեզ, գրեթէ
անխելի ձայնով խօսեց Լէյլան, լսելով ստնաձայն թու-
լարում:

Եւ կռանալով դէպի Եսթերը կամացուկ աւելացրեց.

— Սէլիմը խելօք, խորագէտ, հնարագէտ է. ինչ որ
նա ասում է պէտք է անել, երեսի մի բան գիտէ: Ահա
և Եասամանը ու քո աղախինը, ասաց նա բարձրաձայն,
երբ վարագոյրը բարձրացաւ և խափշիկուհին ու Ռե-
բեկան ներս մտան:

—Ռերեկա!

—Եսթեր!

Եւ տիրուհի ու աղախին իրար փորելով, սկսեցին լացել:

Լացելով, Եսթերը չէր դադարում իրար ետեւից հարցմունքներ անել Ռերեկային. ինչպէս է հայրը, ողջ առողջ են ամենքը, ինչպէս են եղբայրները, քոյրերը, ո՞վ է հագցնում փոքրիկներին, լուանում, սանդղում նրանց մազերը. ի՞նչպէս է պառաւ տատը: Նրա սիրտը տրաքում էր. նա կամենում էր մի րոպէ առաջ իմանալ և լուր Սաւուղի մասին, բայց ամօթխածութիւնը թոյլ չէր տալիս որ առաջինը ինքն հարցնէ: Ռերեկան պատասխանում էր կցկտուր. նրան աւելի տանջում էր այն միտքը, որ Սաւուղի մօր եփած լաւաշները և հալուան չը կարողացաւ հասցնել իր տիրուհուն:

—Ախ, խանժմ, ասաց նա, դու պէտք է բարկանաս իմ վրայ, շատ բարկանաս:

Եւ նա պատմեց իր դլխի անցածը, յայտնեց ամբօթի արած սպառնալիքը՝ ջհուդ-բուշան սարքել:

Եսթերը ավրթնեց. արտասուքը հեղեղի նման թափուեցին նրա գեղեցիկ աչքերից. նա յանկարծ ցատկեց և պոռաց. «չուտ, շուտ, Ռերեկա, գնանք, մենք էլ մեռնենք մերոնց հետ»: Սակայն խափշիկուհին հանդարտեցրեց նրան, պատմելով ինչ որ տեղի էր ունեցել և պատմել էր իրան Սէլիմը. նա պատմեց նոյնպէս թէ ինչ մեծ թամաշայ է լինելու վաղը: Իր ասածները Եասամանը ամենամեծ երգումներով հաստատեց, մինչև կարողացաւ համոզել Եսթերին: Եւ երբ Ռերեկան, Սաւուղի մօր կողմից բարեւ հաղորդեց և օրհնութիւն, Եսթերը, շառագունելով, հարցրեց եբրայեցերէն.

—Իսկ Սաւուղը:

—Սաւուղը սաստիկ հիւանդ էր, ամբողջ ժամանակ զառանցում էր, քո անունն էր տալիս շարունակ, այժմ մի քանի օր է լաւացել է, քեզ շատ բարեւ է անում և ասում է, որ չը մոռանաս իրան. նա ասում է,

որ իրան կը սպանի, եթէ դու սէյիդի կինը դառնաս:

—Լսիր Ռեբեկա, ասա Սաւուղին, վկայ է Եհովան, որ ես երբէք մոռուումանի կին չեմ լինի. ես կամ Սաւուղի կինը կը լինեմ, կամ կը մեռնեմ: Երբ մեռնեմ, թող չը մոռանայ գերեզմանս զարդարել ծաղիկներով:

—Բայց ի՞նչպէս կ'անես, հարցրեց Ռեբեկան. եթէ սէյիդի կինը չը դառնաս մեզ բոլորիս կը կոտորեն:

—Մեծ է Եհովան, ես ինքս գեռ չը գիտեմ ինչպէս կ'անեմ, բայց ես կ'ազատեմ ձեզ ամենքիդ: Այժմ դնա, մութն ընկնում է, Եասամանը քեզ ճանապարհ կը դնի. հօրս ասա նրան լաւ վարձատրի: Բարեւիր և համբուրիր ամենքին իմ կողմից:

Եւ նրանք նորից իրար վարելով, լաց եղան:

—Դէ բաւական է, ինչ վայնասուն էք սարքել, մայրական քնքշութեամբ ասաց Լէյլան. գնա, քորյրիկս, լուացիր երեսդ, թող Ռեբեկան էլ գնայ, ուշ է: Շատ կարելի է աղան այժմ կանչէ քեզ, Եասամանը ասում է սէյիդը դարձեալ եկաւ:

—Սէյիդը, հարցրեց և ամբողջ մարմնով դողաց Եսթերը:

—Մի վախենար, ասում եմ քեզ, Եսթեր, մի յուսահատիր. դու արա ինչ քեզ խորհուրդ եմ տալիս և կ'ազատուես սէյիդից:

Եասամանը և Ռեբեկան դուրս գնացին. մի աղախին ներս բերեց արծաթէ շամդաներ, ճարպի մոմերով և մազալով. դնելով գետնին, նա գնաց բերեց երկու մեծ մաւրդեանկի¹⁾ և դրեց մոմակալների վրայ, որ բամին չը հանգցնէ ճրագները:

Եսթերը թիկն տալով մութաբէներին, խորասոյգ եղաւ մոռածմունքի մէջ: Սեւ և մռայլ էին այդ մոռածմունքները: Երիտասարդ աղջկայ առաջ մի սոսկալի դիւրամա էր գրուած. կամ ուրանալ հաւատը, ատելի մարդու կին դառնալ և հրաժարուել իր հոգու հատոր

1) Ապակեայ կամ շղարշից շինած մեծ խողովակ:

Սաւուղից, կամ թոյլ տալ, որ իր հայրը, իր նշանածը, իր դաւանակիցները մոտութեան ամբօխի կատաղութեան մատնուեն: Ի՞նչ անել, որ ճանապարհն ընտրել, որ ջուրն ընկնել: Լինելով հարուստ հրէայի դուստր, նա գրագէտ էր, նա գիտէր հրէական ազգի պատմութիւնը, մանաւանդ սքանչելի առասպելական աւանդութիւնները այն բոլոր հրաշքների մասին, որոնցով եհովան փրկել է միշտ իր ընտրեալ ազգին նեղութիւններից և փորձանքից: Նա գիտէր եսթերի պատմութիւնը և դեռ մանուկ ժամանակ, երբ իր հանդուցեալ մայրը զանազան պատմութիւններ էր անում, նրա սրտի մէջ ծագում էր փափագ մի մեծ բանով հռչակուելու, ամենքի գովասանութեան արժանանալու, եհովայի և հրեշտակների օրհնութեան տիրանալու: Նա այժմ հասած էր համարում այդ բոլորն, բայց, այստեղ Տէր, ի՞նչ դնով. պէտք է ջարդ ու փշուր լինէր այն երջանկութիւնը, որ նա գգւում, փայփայում էր իր սրտում: Դեռ երկու ամիս առաջ նա անբաւ երանաւէտ էր զգում իրան. ամուսնանալ Սաւուղի հետ, որին նա դեռ երեխայ, երբ միասին խաղում էին, բոլոր հոգով սիրում էր, Սաւուղի, որ թոյլ չէր տալիս ոչ ոքի նեղացնել իրան, վիրասրել, միշտ վարդի փունջեր էր տալիս իրան — կազմում էր նրա բոլոր անուրջների կատարումն: Ճիշտ է, երբ երկուսն ևս մեծացան, նրանց բաժանեցին, այլ ևս թոյլ չէին տալիս միասին խաղալ, բայց նա գիտէր, որ Սաւուղը դարձել է մի գեղեցիկ երիտասարդ, որ նա թողի բոլոր երիտասարդների մէջ ցոյց է տրուում ծերերի կողմից իբրեւ առաքինութեան, ժրջանութեան, աշխատասիրութեան օրինակ. նա գիտէր, որ բոլոր մայրերը փափագում էին այդպիսի փեսայ ունենալու. նա գիտէր, այսինքն նրա սիրտը զգում էր և այն, որ Սաւուղը սիրում է իրան, ինչպէս ինքն է սիրում նրան, որ նա ոչ մի աղջկայ վրայ աչք չէ տնկում բացի իրանից: Եւ ահա երբ նա կարծում էր ժամը հասած՝ սեղմելու Սաւուղին իր կրծքին, նա պէտք

է ոչ միայն գրկուի նրանից, ոչ միայն նրա երեսը չը տեսնէ այլ ևս, այլ և մի զգուելի, գարշելի մարդի համբոյրները, գգուանքը ընդունէ և իր հայրերի, իր մօր պաշտած կրօնը ուրանայ։ Ոչ, ոչ, հազար անգամ աւելի լաւ է մեռնել, գոնէ այնտեղ, արքայութեան մէջ—իսկ արքայութիւնը, Եսթերի հաւատով, միայն հրէաների համար է պահուած.—նա կը տեսնէ մօրը, նա կը սպասէ և կը միանայ Սաւուղի հետ։ Այժմ նա պարտաւոր է մի կողմ թողնել անձնական, երկրային երջանկութեան միտքը և զոհել իրան իր հօր, նշանածի և դաւանակիցների կեանքը վերկելու համար։ Բայց նա չէ կամենում զոհել իր անմեղութիւնը, իր կուսութիւնը, նա չէ կամենում դաւաճանել իր նախնիքների կրօնին, նահապետներին և մարգարէներին։ Եւ նա որոշեց ոչ թէ անձնատուր լինել, այլ իր մահով վերկել ամենքին։ Եթէ, մտածում էր նա, հայրս և բաբբիները կարողացան հաստատել, որ ինձ զօռով են տարել, շատ լաւ, այն ժամանակ բոլորս ազատուած ենք, եթէ ոչ, ես առերես ցոյց կը տամ, որ համաձայն եմ մուսուլման լինել, մուսուլմանի կին դառնալ, միայն որ իմ ազգակիցներին ձեռք չը տան ու յետոյ, երբ ազատութեան ֆետուան ստորագրուի, ինձ տան սէյիդին և նա ինձ տանի իր տունը, թոյն կ'ընդունեմ կամ դաշոյնը կը խրեմ սրտիս մէջ։ Եւ այդ նպատակով, դեռ սինագոգում դումարուած ժողովի օրը, երբ նա եկաւ այդ որոշման, նա թագցրեց իր շորերի մէջ թոյն և փօրը դաշոյն։ Բարեբախտաբար, Իմամ-Ջուման յանձնեց նրան Լէյլա խանըմի պաշտպանութեան և Եսթերը նրա մէջ գտաւ մի բարեսիրտ կարեկից մարդ։ Սկզբում, Լէյլա խանըմը, իբրեւ բարի մուսուլմանուհի, խորշում էր հրէայ ազգականից, երբ սա յայտնեց, որ ինքն ամենեւին մուսուլմանութիւն չէ ընդունել և մուսուլմանի կին չէ, և շփուին նրա հետ համարում էր պիղծ, մաքրել սրբել էր տալիս ջրով նրա դիպած անօթները, բայց Եսթերի չքնաղ գեղեցկութիւնը, համակրելի դէմ-

քը, խելօք խօսակցութիւնը, մանաւանդ անկեղծ և անհուն վիշտը շարժեցին ի բնէ գթած կնոջ սիրտը և նա, շուտով մօտեցաւ նրան, քրոջ համակրութիւն զգաց դէպի նրան և երկու կանանց մէջ հաստատուեց մտերմական յարաբերութիւն մինչև այն աստիճան, որ Եսթերը խոստովանեց նրան իր սէրը առ Սաւուղը և իր ծով վիշտը: Լէյլան, որ նոյնպէս համակուած էր նոյնպիսի վշտով, խոստովանեց նրան իր սէրն առ Սէլիմը, իր յոյսերը, որ կը յաջողուի իրան ազատուել ատելի Իմամ-Ջումայից ու միանալ իր սիրելի Սէլիմի հետ, նա յայտնեց, թէ որքան ատում է Իմամ-Ջումային և լաւ ճանաչելով վերջինիս վաւաչոտութիւնը, զգուշացրեց Եսթերին: Սակայն, մենք տեսանք որ Սէլիմը այլ հրահանգ տուաւ Լէյլային, ունենալով իր սեպհական ծրագիրը, որի իրագործումը պէտք է հասցնէր նրան իր նպատակին: Միւս կողմից Իմամ-Ջումայի վարմունքը ոչ միայն զարմացրեց Եսթերին, այլ և միանգամայն շփուեց նրան և Եսթերը տեսաւ, որ այժմ վտանգը թէ իր համար և թէ իր դաւանակիցների համար աւելի մեծ է: Յուսահատութիւնը պատեց խեղճ աղջկան, բայց Լէյլա խանձմը շարունակ համոզում էր նրան առերես հաճութիւն ցոյց տալ Իմամ-Ջումայի ասածներին, և այդ ձեւով, ստանալ նրանից ազատութեան ֆիթուա:

Սէլիմը չէր սխալուել իր կարծիքի մէջ. Իմամ-Ջուման, թէեւ ալեւոր, բայց ազահութիւնից բացի տոշորւում էր մի ուրիշ կրքով—վաւաչոտութեամբ: Նա նոյնչափ ժամանակ էր նուիրում հարէմական զուարճութիւններին, որչափ զուրանի այանքը կարգաւուն. նրա չորս քեաբինաւոր ամուսիններն էլ 20—25 տարեկան ջահիլ կանայք էին: Նա ստիպուած էր այդ պատճառով յաճախ գիմել մէջոնի¹⁾ օգնութեան: Եսթերի հիանալի

¹⁾ Մէջոն, մի դեղ է կամ հատիկներ, որ շահերը և ծերունիները ուտում են իրանց առնական կարողութիւնը վերականգնելու և սաստկա-

գեղեցկութիւնը, կուսական թարմութիւնը սաստիկ տուփանք գրգռեցին նրա մէջ և, որովհետեւ, իբրեւ փորձուած մարդ, նա շատ լաւ գիտէր, որ սէյիդի ասածներն բոլորը սուտ են և հնարուած ու սարքուած են պարզապէս այդպիսի համեղ պատառը կլանելու համար, ուստի եւ վճռեց այդ պատառն եթէ ոչ ինքը կլանէ, գոնէ առաջ ինքը ճաշակէ։ Այդ ուղղութեամբ և սկսեց գործել։ Առաջին հարցաքննութեան ժամանակ նա երկար յորդորեց Եսթերին թողնել մոլոսիսական կրօնը, ընդունել լոյս հաւատ Մահմէդի կրօնը, նկարագրելով նրան սպասող անբաւ երանութիւնները այս և հանդերձեալ աշխարհում։ Նա խոստացաւ մինչեւ անգամ լուծել սէյիդի բեաբինը և նրան ամուսնացնել մի խանզադէի, շահզադէի հետ, բայց Եսթերը չը յօժարեց և մերժեց և երբ, ահ ուղողով սպասում էր, որ Իմամ-Ջուման կը բարկանայ, իր մահուան դատավճիռն կարձակէ, նա շատ զարմացաւ տեսնելով, որ Իմամ-Ջուման մեղմացաւ և ասաց. «չատ լաւ, քանի որ չես կամենում, ես պէտք է վկաների միջոցով քննեմ գործը. այս էլ ասեմ, որ ամեն բան բեզանից կը լինի կախուած. եթէ կանես ինչ որ ես քեզ կասեմ, կազատուես և կազատես քո դաւանակիցներին»։ Չը հասկանալով այդ խօսքերի իսկական իմաստը, չլացած այդքան անակնկալ բարութիւնից, Եսթերը ընկաւ ծերունու ոտները և համբուրեց ձեռքը, խոստանալով ամեն բան անել, ինչ կը հրամայէ նա։ Քանի որ խնդիրը վկաների ցուցմունքից էր կախուած նա յոյս ունէր, որ իր հայրը և բարբիները կը կարողանան վկաներ գտնել և ճշմարտութիւնը յայտնել տալ։ Եւ նորից յոյսը մտաւ Եսթերի սիրտը. նորից վերակենդանացան նրա փայփայած, դգուած երազները ընտանեկան երջանկութեան մասին. նորից կեանքը ժպտաց նրան։ Նա ուշադրութիւն չը դարձրեց, թէ

ցնելու համար Ասում են, ամենազօրեղ մէջուն գոհարեղէնի փոշիից պատրաստածն է։

որքան կեղտոտ կիրք, պագշտութիւն կար այն համբոյրի մէջ, որ Իմամ-Ջուման գրողմեց նրա ճակատին, երբ ինքը համբուրեց նրա ձեռքը, չը խորշելով ամենեւին որ ինքը մուռտառ ջհուդ է։ Վերադառնալով Լէյլա խանըմի մօտ, որի բարեսրտութիւնը արդէն կարողացել էր գնահատել, և պահանջ զգալով մէկի առաջ թափ տալ իր սիրտը ուռչեցնող ուրախութիւնը, Եսթերը պատմեց նրան Իմամ-Ջումայի մօտ անցածը։ Երիտասարդ կինը, որ լաւ ճանաչում էր իր ամուսնու սեւ հոգին, խղճաց Եսթերին և նրա բարի սիրտը գրգեց նրան բանալ հրէայ աղջկայ աչքերը ու զգուշացնել նրան։ Եսթերը շուտով ինքն էլ համոզուեց, միւս հարցաքննութիւնների ժամանակ, Իմամ-Ջումայի երկմտի խօսքերը, անուղղակի առաջարկները և պագշոտ նայուածքները այլ եւս ոչ մի կասկած չէին թողնում նրա անարգ դիտաւորութիւնների մասին։ Յուսահատութիւնը նորից պատեց անթափանցելի խաւարով խեղճ Եսթերի սիրտը. նա տեսաւ որ իր վիճակը աւելի անելանելի է. դեռ առաջ յոյս ունէր, որ իր մահով կազատէր և իրայիններին և իր պատիւը և սէրը. այժմ՝ այդ յոյսն էլ չքանում է. նա կարող է իրայինների ազատութիւնը ձեռք բերել միայն իր անարգանքով, խայտառակութեամբ, իր անմեղութիւնը, կուսութիւնը և սէրը զոհելով։ Եթէ նա չը համաձայնէր կատարել Իմամ-Ջումայի պահանջները, այն է յագեցնել իր անմեղութեան գնով նրա անասնական կիրքը, նա կը մասնէր իրան և իր դաւանակիցներին կորստի. իսկ եթէ յօժար էր լինել Իմամ-Ջումայի սիրտին, ինչպէս սա ցանկանում էր, մի քանի ժամանակուայ համար, ճիշտ է, նա կազատէր հրէական թաղը, բայց նա դրանով կապանէր Սաւուղին, կարժանանար նրա ատելութեան և ինքն եւս բարոյապէս մեռած կը լինէր, իբրեւ մի անարգուած, լլկուած արտրած. դրանից յետոյ իր մահն ոչ մի նշանակութիւն չունէր. դրանից յետոյ ինչ երեսով նա կը համարձակէր բաղխել

դրախտի դուռը, տեսնել այնտեղ իր մօրը և սպասել Սաւուղին, որից նա արհամարհուած, ատուած պէտք է լինէր: Եսթերը տեսնում էր որ Տիրոջ աջը սաստիկ ծանրացել է իր վրայ. նա իրան արդէն կորսուած էր համարում: Դի պէտք է հասնէր իրա պէս մի խեղճ աղջկայ օգնութեան Իմամ-Ջումայի տանը և դի կը համարձակէր. դառը պահ էին տուել գայլին, որ արդէն սրել էր ժանիքները: Աղի արտասուք էր թափում գիշեր ցերեկ Եսթերը և մտածում էր նոյն իսկ այժմ վերջ դնել իր թշուառ մատաղ կեանքին և ազատուել անպատուութիւնից, գուցէ իր մահով եւս լուծուէր խնդիրն և հրէաները ազատուէին վտանգից. յամենայն դէպս Սաւուղի սէրը, յարգանքը պահպանուած կը լինէին և իր սիրեցեալը կը զարգարէր իր գերեզմանը սիրահարների ծաղիկներով: Սակայն Լէյլա խանըմի յուսադրութիւնները և տուած նոր խորհուրդը փրկեցին նրան վերջնական յուսահատութիւնից. «Դու առ երես հաւանութիւն ցոյց տուր Իմամ-Ջումայի ասածներին, համոզիր նրան, որ պատրաստ ես կատարել նրա ցանկութիւնը և աշխատիր ստանալ ֆիթուա, որով նա քեզ և բո ազգակիցներին անմեղ հրատարակէ. մնացածը թող տուր ինձ և Սէլիմին, մենք քեզ կ'ազատենք նրա ճիրաներից»: Եսթերը թէև չէր կարողանում հասկանալ, ինչպէս կ'ազատեն իրան, բայց որոշեց հետեւել Լէյլայի խորհրդին. եթէ չազատուէր, դարձեալ կարող էր թոյնով կամ դաշոյնով վերջ դնել իր կեանքին, բայց գոնէ ձեռք բերած կը լինէր իր ժողովրդի, իր սիրելիների փրկութեան վճիռը:

Այժմ ևս նա խորասուզուած էր այդ սրտամաշ մտածողութիւնների մէջ. նա գիտէր, որ շատ շուտով, վաղը կամ նոյն իսկ այսօր, իր ճակատագիրը պէտք է վճռուի. նա դողաց, լսելով որ սէյիդը եկել է Իմամ-Ջումայի մօտ. նա շուտ շուտ նայում էր թէ ահա կը բացուի վարագոյրը այն դռան, որ միացնում էր Լէյլա խանըմի սենեակը Իմամ-Ջումայի առանձնատեղեակի

հետ, և Իմամ-Ջուլման կը կանչէ իրան. մետաքսէ վաւադոյրի շխշխկոցը, որ առաջ էր բերում լուսամուտից փչող երեկոյեան հովը, դողահար էր անում նրան:

Էզանը վաղուց ասել պրծել էին և ընթրիքը արդէն պատրաստուած էր սենեակի մէջ տեղ ու մի բանի անգամ Լէյլա խանըմը, որ նոյնպէս ընկղմուած էր քաղցր անուրջների մէջ ու մտքով համբոյրներ էր ուղարկում իր սրտի հատոր Սէլիմին, հրաւիրել էր Եսթերին մօտենալ սուփրին ¹⁾, բայց Եսթերը ոչինչ չէր լսում: Նրա խռոված հոգին հեռու, շատ հեռու էր սաւառնում: Յանկարծ սենեակի աղօտ լուսաւորութեան մէջ, դիմացի պատի վրայ, նկատուեց Իմամ-Ջուլմայի ստուերը, որ թուաց Եսթերին սատանայի դէմը, այնքան անճոռնի էր. բայց նրա զգուելի ձայնը ուշքի բերեց հրէայ աղջկան. «Ո՞վ կայ այդտեղ, թող ասեն ջհուդաւորական գայ ինձ մօտ»: Եսթերը ծլուկ եղաւ, և զարմանալի է, որ վտանգի լուրջն մօտեցած լինելը նրան ոչ թէ սարսափեցրեց, այլ արիացրեց. վերջապէս թող կատարուի ինչ որ Եհովան անօրինել է ինձ և ճակատիս դրուած է, մտածեց նա: Նա տնտղեց իր շորերի ծալքերը, տեսնելու համար այնտեղ են թոյնը և դաշտնը և չարչաւը ձգելով գլխին, դիմեց դէպի դուռը, որտեղից լսուել էր ձայնը և բարձրացրեց վարադոյրը:

Սենեակը, ուր մտաւ Եսթերը, երկար էր և բացի գորգերից ու լուս-Փարչերից ²⁾ ուրիշ ոչինչ չը կար, և ոչ ոք էլ չը կար այդ սենեակում, որի մի դուռը բացուած էր արդէն այն նրբանցքի վրայ, որ բաժանում էր Իմամ-Ջուլմայի էնդէրունը ³⁾ բիրունից ⁴⁾: Մի հատ շամդան դրած թախչայում աղօտ լուսաւորում էր այդ սենեակը: Բայց Իմամ-Ջուլմայի ձայնը լսուեց սենեակի միւս ծայրին գտնուող մի դռնից, որ տանում էր մի ուրիշ փոքր սենեակ: Եսթերը մտաւ այդտեղ, բարձր մինդարէյի վրայ, թիկն տուած մութաբաներին, քղանց-

1) Սփռոց: 2) Գորգի երես: 3) Կանանոց: 4) Ցան դրսի տղամարդկանց մասը:

քաւոր պարեգօտի կապերը արձակած, գլխին թիրմա արախչին դրած, մէջքի շալ սպիտակ գօտին քակած, նստած էր Թէհրանի քահանայապետը և զայլան էր ծըխում ու ծուխը քուլա քուլա արձակում: Ոչ ոք չը կար սենեակում:

Եսթերը գլուխ տուեց ու կանգնեց դռան առաջ:

—Մօտ եկ, նստիր մօտս, ասաց Իմամ-Ջուման:

Եւ իր պագշոտ նայուածքը յառելով հրէայ աղջկայ վրայ, շարունակեց.

—Լսիր, ջնուգի աղջիկ. վերջին անգամ եմ յորդորում քեզ: Քիչ առաջ սէյիդը եկել էր, գանգատուում էր, որ վճիռ չեմ արձակում: Ես խոստացայ վճիռը վաղը տալ: Այդ վճռից կախուած կը լինի ազատութիւն կամ մահ քո և ջնուգների համար, իսկ թէ որ վճիռը լինի, այդ էլ բոլորովին քեզանից կը լինի կախուած: Վերջին անգամ եմ առաջարկում քեզ, կամենում ես կատարել ցանկութիւնս:

Եսթերի սիրտը այնպէս էր թռթռում, որ քիչ էր մնում կուրծքը պատուռի ու դուրս գայ: Նա կարողացաւ այնուամենայնիւ արտասանել.

—Եթէ կատարեմ աղայի հրամանքը, կը տաք ֆիթուա, որ սէյիդը ոչ մի իրաւունք չունի ինձ վրայ, որ յափշտակել են ինձ զօռով և հրէաները ոչ մի բանում մեղաւոր չեն:

—Կը տամ, կը տամ, հոգիս, կեանքս էլ կը տամ այդ նազանի սև աչքերիդ, սաթեայ վարսերիդ համար:

—Ինձ մի բանի ժամանակ սիգա պահելուց յետոյ կարձակէք և կը վերադարձնէք ծնողներիս:

—Երգւում եմ հազրաթ ֆաթմայով, որ այո! Համաձայն ես ուրեմն:

Տիրեց խորին լռութիւն. Իմամ-Ջումայի թշերը կարմրել էին, աչքերը փայլատակում էին գիշատիչ գաղանի աչքերի նման, նա մօտեցաւ Եսթերին և սա արդէն զգում էր իր երեսին նրա անատամ բերանի խռուչից փչող զաղրալի հոտը և տաք շունչը:

—Համաձայն եմ, շնչաց եսթերը:

—Ախ, հոգեակս, տուր մի համբուրեմ՝ այդ աննման աչքերդ, շոյեմ այդ գեղեցիկ վարսերդ:

Բայց նապաստակի արագութեամբ եսթերը ցայտեց և մի ոստիւնով դռան մօտ կանգնեց.

—Ոչ, աղա, ոչ. կատարիր առաջ խոստումդ. գրիր, կնքիր, տուր ինձ ֆիթուան և ապա պատրաստ եմ կատարել կամքդ: Ես հօ փախչել չեմ կարող քո ձեռքից:

—Լաւ, վաղը առաւօտեան կը ստանաս ֆիթուան, վաղը երեկոյ էլ այստեղ կը լինես:

—Աչքիս վրայ, պատասխանեց եսթերը և դուրս նետուեց սենեակից ու մի գլուխ վաղեց Լէյլա խանըմի սենեակը: Այդտեղ, այլ ևս չը կարողանալով բռնել իրան խեղդող հեծկլտանքը, նա ընկաւ գետնին, սուփրայի առաջ և դառնապէս լացեց:

ՇԱՀՐԻԱՐ

(Կը շարունակուի)

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԵԱՆՔԻՑ

Այս տարուայ առևտրական կրիզիսը, որ զգալի եղաւ ընդհանրապէս և ամբողջ Պարսկաստանում, վերջերս շատ լայն չափեր ընդունեց: Այդ առիթ է տալիս մեզ մի տեսութիւն տալ Պարսկաստանի արդիւնաբերութեան մասին և փորձել՝ պարզելու կրիզիսի մի քանի բնորոշ կողմերը:

Պարսկաստանը բաւական հարուստ երկիր է. նրա այս կամ այն գաւառները արդիւնաբերում են տհազին քանակութեամբ հում նիւթեր: Այդպէս, Խորասանը, ընդարձակ Մազանդարանը, Ղազրինը իր շրջակայքով տալիս են տարեկան մօտ մէկ միլիօն պուդ բամբակ, իսկ Ղօչանը, Մարագան, Ուրմին, Բիհաբը և այլն արտադրում են էլ աւելի մեծ քանակութեամբ սաբզա, իր բոլոր տեսակներով: Ռաշտից, Թաւրիզից, Ղազրինից և այլ մասերից ստացւում են մեծ քանակութեամբ բրինձ և չոր մրգեր: Բացի վերե յիշուած հում նիւթերից Պարսկաստանը արդիւնագործում է գեղեցիկ գորգեր, պատրաստում է մորթիներ և այլն և այլն:

Սակայն Պարսկաստանը իր ներկայ կառավարութեան թոյլ և անհոգ վերաբերմունքի շնորհիւ զուրկ է մի շարք պայմաններից, որոնք նպաստում են երկրի արդիւնագործութեան զարգացման:

Այդպէս, օրինակ, չը կան հաղորդակցութեան միջոցներ. կանոնաւոր ճանապարհների, խճուղիների կառուցուածքայնականութիւն: Թաւրիզը, որ համարւում է Ատրպատականի կենտրոնական քաղաքը ու ամենավաճառաչաֆն է և միշտ էլ յարաբերութեան մէջ Ռուսաստանի հետ, չունի կարգին ճանապարհներ:

Ահա այս աստիճան բարձի թողի են արուած հաղորդակցութեան հասարակ միջոցները. ամենեկին խօսք չի կարող լինել երկաթուղու մասին, որի հետքն անգամ չէ նշմարւում ամբողջ Պարսկաստանում: Ժողովուրդը տգէտ է, իրաւագուրկ, և հարս-

տահարուած. նա անկարող է իր սեփական նախաձեռնութեամբ մի կանոնաւոր առևտրական կամ գործարանական ձեռնարկութիւն հիմնել: Երկրի բնական հարստութիւնը սկսել են շահագործել եւրոպացիները. նրանց թիւը հետզհետէ աւելանում է:

Հէնց այժմ Պարսկաստանի գրէթէ բոլոր նշանաւոր կենտրոններում, օր. Թեհրան, Թաւրիզ, Ռաշտ, Իսպահան և այլն, կան եւրոպական վաճառականական ճիւղեր (Ֆրանսիացի, հրէայ, ռուս, անգլիացի, ամերիկացի և այլն), որոնք արտահանում են անմշակ նիւթեր և ներմուծում պատրաստի ապրանք: Եւրոպացիները նոյն իսկ յատուկ գործարաններ են բանում Պարսկաստանի մէջ, ինչպէս գերմանական Զիգլեր ընկերութիւնը, որ իր սեփական գորգագործական գործարանում՝ պատրաստում է և արտահանում մեծ քանակութեամբ գորգեր:

Հայերը զգացել են, որ եւրոպացիների մուտքը Պարսկաստան ոյժերի մի անհաւասար մրցում է աստղադնելու: Վերջին տարիներս շատ զգալի եղաւ հայ վաճառականների մէջ ընկերութիւններ կազմելը, ինչպէս «Սևան», «Արամեան», «Արաքս», «Եղը. Թումանեաններ» և ուրիշ մանր ընկերութիւններ և վաճառականական տներ: Սրանք գրեթէ միայն արտահանութեամբ են զբաղւում. արտահանում են գլխաւորապէս Բուսաստան հում նիւթեր, չոր մրգեր, գորգ և այլն: Հայ ընկերութիւնները թէև չունեն խոշոր կապիտալներ, բայց յամենայն դէպս վերջին տարիներս ահապին քանակութեամբ անմշակ նիւթեր,—հարիւր հազարաւոր պուդերով բամբակ և սաբլա են արտահանում:

Մի քանի տարիների վայելուն յաջողութիւնը մեզանում շատերին չլացրեց և գրաւեց առևտրական ասպարէզը: Արհեստաւորները մէկիկ մէկիկ թողնում էին իրանց արհեստները և հետեւում առևտրի զիրկը, անդամակցում այս կամ այն ընկերութեան կամ գործաւորի պաշտօն ստանձնում:

Անցեալ 1900—1901 տարուայ ընդհանուր կրիզիսը ազդեց և Պարսկաստանի վրայ: Այդ ուժեղ հարուածին ենթարկուեցին գրեթէ բոլոր ընկերութիւնները և վաճառականական տները, շատ աննշան լացաւութեամբ: Մի քանի ընկերութիւններ սնանկացան, շատերը միանգամայն քայքայուեցին, առևտուրը կանգնեց և միայն կենտրոնացաւ մի քանիսի ձեռքում: Կրիզիսը երկար շարունակուեց և ընդհանուր սարսափ տարածեց բոլոր արտահանողների վրայ:

Պարսկաստանի հայ վաճառականները վերջին տարիները արտակարգ յաջողութիւն ունեցան: Ահա հէնց զրանից խրախուսուած անցեալ տարի էլ աւելի մեծ չափով են արտահանում վերև յիշուած նիւթերից: Միմիայն Խորասանի նիւթափուր

և Սարգուար քաղաքներից 300,000 պուղից աւելի բամբակ է արտահանուել, դեռ չենք ասում Մազանդարանը և Պարսկաստանի ուրիշ մասերը, որ յայտնի քանակութիւն են տալիս, իսկ Ղազըրիից և Ղօչանից միմիայն անցեալ տարի հայ և պարսիկ վաճառականները արտահանել են 400,000 պուղ սարգաւ. դրա եռապատիկը դեռ աւելի արտահանուել է Մարաղայի չրջակայքից, Բինաբից, Ուրմիի գաւառից և այլ մասերից: Զոր միրգ, նուշ և բրինձ արտահանել են մօտ չորս միլիոն պուղ: Ահա այսպէս ասած է եղել արտահանութիւնը անցեալ տարի, դրա մէջ դեռ չի հաշուած եւրոպացի գործարանատէրերի արտահանածը, որ խոշոր քանակութիւն է կազմում անշուշտ:

Ինչպէս տեսնում էք հրապարակ հանած ապրանքը սովորականից շատ շատ է, ծախողների թիւը մեծ, բայց սպառողների պահանջը նոյնն է, ինչ որ մասջ էր: Բնականաբար, ապրանքների արժէքը իջնում է, այն էլ շատ զգալի չափով. յանկարծ բամբակի գինը 9 ու. 50 կոպ. իջնում է 6 ու. 80 կոպէկի, նոյն այդ համեմատութեամբ իջնում է և սարգայի արժէքը: Ոմանք հէնց այդ գներով ծախում են, իսկ շատերը, գլխաւորապէս մեծ ընկերակցութիւնները, երկար սպասում են, յոյս ունենալով, որ գները նորից կը բարձրանան: Սպասում են երկար, բայց ոչ միայն չի բարձրանում արժէքը, այլ աւելի ու աւելի իջնում: Մի կողմից այս հանգամանքը, միւս կողմից ընկերութիւնների մասնաձեւերի անընդհատ կրկնուող պահանջները, անհրաժեշտ ծախքերը, դրանց աւելանալով և այն, որ հետզհետէ սեանում, փչանում է սարգան, գլխաւորապէս Ղօչանի սարգան, — այդ բոլորը ստիպում են շատերին վաճառել արտահանած ապրանքը գրէթէ կէս գնի: Հարուածը չափազանց խիստ էր և թողած տպաւորութիւնը սարսափեցնում էր ամենքին, ահ ու դող սփռում ամենուրեք:

Այստեղ պէտք է և այս երևոյթը շնչտել, որ նկատելի էր բացառապէս անցեալ տարեչրջանին և որոշ մասով նպաստեց լայն չափով վնասուելուն, այդ այն է, որ շատ առևտրականներ, չլացած անցեալ տարիների արտակարգ յաջողութիւնից, առել են ապրանքները սովորական գներից բարձր: Առևտուրը շահագիտական, սպեկուլիատիվ բնաւորութիւն ստացաւ. գները շատ աւելի բարձր էին քան իսկապէս արժէին:

Պէտք է ի նկատի ունենալ և այն որ ընկերութիւնների մեծ մասը զուրկ է մեծ հիմնական դրամագլխից և մեծ 0/0 է վճարում վերցրած գումարներին:

Դրամի նեղութիւնը այդպիսի ընկերութիւններ չէին կա-

րող երկար տանել, անանկութիւնները անխուսափելի էին դառել: «Եղբ. Մէքայէլեանները», «Արաքս», «Սեւան», ~~«Սեւան»~~» ընկերութիւնները միանգամայն քայքայուել, պարտքերով ծանրաբեռնուել էին, և վերջ ի վերջոյ անանկացան:

Այս ընկերութիւնների մէջ աշխատում էին սառուար թուով գործաւորներ, որոնք անանկութիւնների և առևտրի դադարման պատճառով դուրս մնացին: Վերջին ժամանակներս թաւրիղում մեծ թուով գործակատարներ էին թափուել, չափերը պարապ էին, իսկ նրանք, որոնք անցեալ տարիների յաջող առևտրից խրախուսուած թողել էին իրենց արհեստը և նետուել էին առևտրական ասպարէզը՝ էլի սկսում են իրենց նախկին ապահով գործը:

Այս երկու տարի է որ թաւրիղի արհեստաւորների մէջ կազմուել է «Արհեստաւորաց խնայողական ընկերութիւն»։ Այս ընկերութեանը մասնակցում են արհեստաւորները, գործաւորները և ուսուցիչները: Սա թէև աղքատ ժամանակամիջոցում մի առանձին աչքի ընկնող գործ է կատարել, բայց յառեւայն դէպս հիմքը դրուած է և կարող է ապագայում օգտակար դառնալ, եթէ իհարկէ մտածուած և լուրջ կերպով տարուի գործը, և գործի գլուխը անցնեն աւելի ընդունակ և հմուտ անձնաւորութիւններ: Մինչև այժմ անդամների թիւը հասնում է մօտ 130-ի, և անդամակցելու համար իւրաքանչիւրը վճարում է 5 թուման (10 ռ.), Գումարուած դրամը ի հարկէ շահեցնում են, օր. այժմ թեթեւ առևտուր են սկսել, նպատակ ունեն ապագայում աւելի ընդարձակ գործ սկսելու, իսկ արդիւնքի մի որոշ տոկոսը, օրինակ 100-ին 300/0 առանձին բաժին է կազմում և համարոււմ է «խնայողական»։ Այդ «խնայողական» բաժնից չը պէտք է գործ ածուի մինչև առնուազն 5 տարի, որպէս զի մի որոշ գումար հաւաքուի: Բայց ի հարկէ, թէ այս և թէ միւս բաժինը գործածութեան մէջ կը լինեն, և այսպէս տարէց տարի թէ «խնայողական» բաժինը առանձին կը շահեցընեն և թէ միւս բաժնի արդիւնքի յայտնի տոկոսը կ'աւելանայ դրա վրայ: Առայժմ ընկերութիւնը ունի 1500 թուման դրամագլուխ:

«Արհեստաւորաց խնայողական» ընկերութեան նպատակն է *) օգնել արհեստաւորին, գործակատարին և իր այլ անդամներին կեանքի դժուար դէպքերում: Օրինակ, հէնց այժմեան պայ-

*) Այս ընկերութեան կանոնադրութիւնը թէև դեռ տպուած չէ, բայց ես կարդացի նրա ձեռագիր մատեանները և իմացայ արձանագրուած որոշումներն ու նպատակը:

մաններում, երբ գործակատարը պաշտօն չունի, ընկերութիւնը կ'աշխատէ պաշտօն գտնել նրա համար, կամ մի որոշ գումար տալ նրան՝ ձեռնտու տոկոսով գործ սկսելու համար: Եթէ հիւանդ է արհեստաւորը, անկարող է աշխատել և աշխատող ուրիշ ձեռք չը կայ, ընկերութիւնը պարտաւորուում է խնամել նրան, օգնութեան հասնել, իսկ անդամը պէտք է նոյն գումարը հասցնի ընկերութեանը առողջանալուց յետոյ, երբ գործի կը մտնի, աշխատանք կը սկսի: Մի խօսքով, ընկերութիւնը պարտք է զգում օգնութեան հասնել օգնութեան կարօտ իր ամեն մի անդամին, լինի նա ուսուցիչ, գործակատար և թէ արհեստաւոր: Այս բոլոր դէպքերումն էլ, որ յիշեցինք, տրւում է «խնայողական» բաժնից, միւս բաժինը միշտ մնում է գործածութեան մէջ:

Բայի վերեւ յիշած հանգամանքները և կրիդիսը, ինչպէս իրանք են ասում, որոշ չափով ազդեցութիւն են ունեցել արհեստաւորաց «խնայողական» ընկերութեան կազմակերպութեան գործում նաև եւրոպական բանուորական ընկերութիւնները: Ահա երեք տարի է, որ կազմուել է և մի ուրիշ ընկերութիւն, որ կոչւում է «Արագած»: Այս ընկերութեանը մասնակցում են միմիայն արհեստաւորները և գործակատարները. սրան պատկն էլ նոյն է, և համարեա նոյն հիմքերով է առաջ տարւում գործը, ինչպէս որ տեսանք արհեստաւորաց խնայողական ընկերութեան վերաբերմամբ: Բայց այս ընկերութեան անդամաւճարն է 50 թուման (100 ու.), մի գումար, որ մեծամասնութեան համար մատչելի չէ. և հէնց դրան պէտք է վերագրել այն, որ «Արագածը» շատ քիչ անդամներ ունի, այն է՝ 30—50:

Ցանկալի է, որ առհասարակ ընկերակցութիւններ կազմելու ոգին որքան կարելի է լայն տարածուի պարսկաստանցիների կեանքում: Այս ոգին և ժամանակակից պահանջներին համեմատ կրթութիւնը միայն կարող են խելացի հիմքերի վրայ դնել պարսկահայերի տնտեսական գործունէութիւնը:

ԵՐ. ՖՐԱՆԳԵԱՆ

Ա Ն Պ Ո Չ Հ Ո Ր Թ Ը*)

(Պատմաւածք Սանսերի Ինգմանի)

Չի կարելի ասել, որ Պ. փոքրիկ քաղաքը Ֆինլանդիայի ամենաանշան քաղաքն էր: Այնտեղ կայ տպարան, լրագիր է հրատարակուում, բայց չէ որ կան այնպիսի քաղաքներ էլ, որոնք չունեն ոչ մէկը և ոչ էլ միւսը: Եւ այդպէս, Պ. փոքրիկ քաղաքում հիմնուեց տպարան, այն էլ բոլորովին նոր և արտասահմանեան վերջին ձեւով: Մի բան միայն շատ մտաւորութիւն էր պատճառում նրա տէրերին, այն է՝ ոչինչ չը կար տպագրելու: Լրագիրը չաբաթական միայն երկու անգամ էր լոյս տեսնում: Մնացած օրերը տպարանը մոտնուած էր անգործունէութեան, իսկ բանուորները, ոտնիկ ստանալով, թափառում էին դէս ու դէն, պարապութիւնից արեւցողութեամբ էին զբաղւում, գայթակղեցնում միւս բանուորներին և փոքրիկ քաղաքի խաղաղ բնակիչների դժգոհութիւնը գրգռում:

Հապա, ասացէք, խնդրեմ, մի՞թէ այդ կարգ է:

Բաժնետէրերն արդէն մի քանի անգամ ժողովուել էին միասին խորհրդակցելու այն կարեւոր հարցի մասին, թէ ինչ տպագրեն: Նրանք խորհեցին, դատեցին, վիճեցին, բայց չը կարողացան մի բան հնարել: Շատ լաւ ծրագիրներ առաջարկուեցին, շատ խելացի առաջարկութիւններ եղան, բայց այդ բոլորն էլ մանրազնին քննութիւնից յետոյ ինչ ինչ պատճառներով աննպատակայարմար համարուեցին, իսկ տպագրական մեքենան այդ միջոցին ժանգոտում էր ու փչանում:

*) Ֆինլանդական աշխարհի մի անկիւնի կեանքից վերցրած այս պատկերը պատկանում է ֆին բեղետորիստ՝ Ներկայումս „Päivälehti“ ֆին ազգաբնակութեան կուսակցութեան արմատական մասի լրագրի խմբագիր պ. Ինգմանի գրչին: Թարգմանուած է ռուսերէնից:

Մի անգամ էլ ժողովուրդին, թոււմ էր թէ այդ ժողովն էլ նախորդ ժողովների նման ապարդիւն պիտի անցնի, երբ յանկարծ տեղից բարձրացաւ բաժնետէրերից մէկը՝ կաշուեգործ Նիրանէնը, Դա մի համեստ մարդ էր, որ իրան ձեռնհաս չէր համարում «գրական» նիւթերի մասին դատողութիւն տալ, բայց տեսնելով, որ գործը գլուխ չի գալիս, նա յողթահարեց իր ամաչկոտութիւնը և սիրտ առաւ իր ծրագիրն առաջարկելու:

—Մենք տպարան հիմնեցինք,—սկսեց նա.—մենք հիմնեցինք տպագրական գործի բաժնետիրական ընկերութիւն. մենք ամիսն երկու անգամ ժողովում ենք, բայց ոչ մի կերպ չենք կարողանում տեղից շարժուել:

Թէեւ ինձ համար այնքան էլ պարզ չէ, թէ ինչու մենք մերժում էինք ինչ որ էլ առաջարկոււմ էր տպագրութեան, բայց յոյս ունեւ, որ իմ ծրագիրը բոլորիդ էլ դուր կը գայ: Ես առաջարկում նմ պատկել մեր գործը, սկսելով սկզբից, այսինքն ես առաջարկում եմ տպագրել այբուբենարան: Միտքը բոլորովին նոր էր և միանգամից բոլորին էլ դուր եկաւ:

—Ես ջերմ կերպով պաշտպանում եմ մեր ընկերակցի գեղեցիկ ծրագիրը, ասաց պոստատան կառավարիչը, որ սովորաբար ամենից առաջ էր բողոքում իւրաքանչիւր առաջարկութեան դէմ:—Ես միայն իմ կողմից այն կ'աւելացնեմ, որ ցանկալի էր այբուբենարանի պատկերները Գերմանիայում պատուիրել:

—Ես էլ մի և նոյն կրածիքին եմ,—ասաց տեղացի վաճառական Ռիխտոնէն:—Դա հաստատ գործ է, դրանում մենք ոչ մի կերպ չենք վնասուիլ, իսկ ժամանակին թերեւս լաւ օգուտ էլ ստանանք: Տպագրական ծախսերը մեծ չեն լինի, եթէ նոյն իսկ պատկերներն էլ Գերմանիայում պատուիրենք. հեղինակի վարձատրութիւնն էլ մեծ ծախս չի պահանջի, իսկ ապրանքը հեշտ ծախուողներին է:

Ժողովրդական ուսուցիչ Պօսին, որ այդ բոլորի վրայ նայում էր աւելի բարձր և գաղափարական տեսակէտից քան թէ միւսները՝ նոյնպէս այս ծրագրի կողմն էր:

—Մենք պէտք է շնորհակալ լինենք պ. Նիրանէնից նրա յաջող մտքի համար և միահամուռ կերպով ձեռնարկենք վերջինս իրագործման: Մեզ, որպէս լուսաւորութեան մեծ գործի մէջ նոր մարդկանց, միանգամայն վայել է փոքրից սկսել: Իսկապէս դա այնքան էլ փոքրիկ գործ չէ, որքան նա թուում է առաջին հայեացքից:

Ընդհակառակն, իմ կարծիքով...

Նա խօսեց երկար: Կաշուեգործի առաջարկութիւնը համակրութիւն գտաւ և՛ քաղաքային ֆիսկալի և՛ գիւմնադիպի վերատեսչի կողմից: Չը հակառակեց նոյն իսկ բժշկապետը, միայն երբեմնակի ինքն իրան ծիծաղում էր:

Նախագահը, որ քաղաքում միակ վաճառականական խորհրդականն էր, համբերութեամբ լսում էր երկար ճառաբանութիւնները: Փիլիսոփայութեան մագիստրոսը մի առ մի արձանագրում էր այն բոլորը, ինչ որ խօսւում էր: Երբ ամենքն իրանց կարծիքը յայտնեցին, նախագահը տեղից վեր կացաւ:

— Երկրայ ժողովում բաժնետէրերից մէկը մինչանաւոր առաջարկութիւն արեց, որ ընդհանուր համակրութեամբ ընդունուեց և, որքան ինձ յայտնի է, ոչ մէկի կողմից առարկութեան չը հանդիպեց: Այդա ուրեմն, ես դնում եմ առաջին հարցը՝ արդեօք պէտք է մենք, այսպէս տաճ, սկսենք սկզբից:

— Այո:

— Ուրեմն մենք վճռում ենք, ապադրել պատկերադարձ այբուբենարան:

— Այո, այո:

— Եւ պատկերները Գերմանիայումն ենք պատուիրում:

— Այո, Գերմանիայում:

Նախագահը մուրճով զարկեց, ցոյց տալու համար, որ վիճաբանութիւնները վերջացած են, և սրբեց իր ճակատի քրտինքը: Փնփն Աստուծու, վերջապէս մի վճիռ կայացրինք:

Ամենքն էլ թեթեւութիւն զգացին, կարծես թէ մի լուսն չափ ծանրութիւն նրանց ուսերից վայր գլորուեց: Ուրեմն մենք էլ մի բանի պէտքական ենք, ուրեմն մենք էլ խոստ արածողներից չենք:

Մի առ ժամանակ վէճերը և փոխադարձ դիմադարձութիւնները մոռացուեցին: Կատարած պարտքի զգացողութիւնը և սեփական արժանապատուութեան պիտակցութիւնը բաժնետէրերի մէջ առաջացրին եռանդի մի արաստովոր հոսանք և նրանք անմիջապէս ընտրեցին մի կարգադրիչ մասնաժողով, որից յետոյ ամենքը միասին դնացին հիւրանոց բարի գործի սկիզբը ըմպելիով ցօղելու:

Անցաւ մի ամսից աւելի: Այբուբենարանը կազմեցին, այսինքն վերջրին հէնց առաջին՝ պատահաբար իրանց ձեռքն ընկած հին օրինակը, տեղ-տեղ իրանցից աւելացրին մի քանի բան, բերել տուին պատկերները և նորից հաւաքուեցին՝ կարգադրիչ մասնաժողովի ղեկուցումը լսելու: Սեղանի վրայ դրուած էին Գերմանիայից հէնց նոր ստացուած կլիշէները, որոնք, ի հարկէ, ընդհանուրի ուշադրութիւնը գրաւեցին: Ի մի-

ջի այլոց մի պատկեր ներկայացնում էր Յովսէփին՝ հօտն արածացնելիս:

—Նայեցէք, խնդրեմ, այս անասուններին, կարծէք մեր առջևը կենդանի լինեն կանգնած:

—Այո, իսկապէս: Իսկ այս կայտուուն հորթն իր ցրած պոչով... Զարմանալի է:

Ծշմարիտ է, մտիկ արէք... հորթը վազում է՝ պոչը կեռ ցրած: Հրաշալի է:

—Է՛, այդ աղբէն չափազանցութիւն է: Տարօրինակ երեւակայութիւն է՝ հորթը ներկայացնել այդպիսի անվայել զիրքով: Զեմ կարող ասել, թէ այդ յաջող միտք է եղել, — նկատեց պոստատան կառավարիչը, ուրախանալով, որ վիճաբանելու առիթ է գտել:

—Կատարեալ անտեղի հանաք լուրջ գործի մէջ, — աւելացրեց վերատեսուչը:

—Ո՛չ թէ միայն անտեղի, այլ ուղղակի անվայելուչ, — բարձրացրեց ձայնը ժողովրդական ուսուցիչ Պօսիոն: — Հանաք, որ սաստիկ դիպչում է մարդու գեղեցկի զգացմունքին և վիրաւորում է ամօթխածութիւնը:

—Այստեղ ի՞նչ անվայելուչ բան կայ... Պոչը պոչէ: Վերեւ ցրած, թէ ներքեւ կախ ընկած, մի և նոյն բանը չէ: Ինձ պատկերը դուր է գալիս, — նկատեց կաշուեգործ Նիրանէնը:

—Իսկ ինձ ամենևին դուր չէ գալիս: Զեմ հասկանում, այբուբենարանի համար ինչպէս կարելի է նկարել այդպիսի լկախ բաներ: — Վերատեսուչն արհամարհական կերպով ձգեց սեղանի վրայ կլիշէն: — Այդպիսի բաներ, — նա մատը տնկեց կլիշէի վրայ ճիշտ այն տեղում ուր հորթի պոչն էր, — այդպիսի բաները չի կարելի տպագրել այբուբենարանում: Ես առաջարկում եմ մերժել նկարը:

—Այդ բանին ես համաձայն չեմ, — հակաճառեց վաճառական Ռիսկոնէնը: Նկարները մենք ենք Գերմանիայում պատուիրել, դրանց համար փող ենք վճարել, և այն էլ ոչ քիչ, — ինչու մեր փողերը իդուր կորչեն: Եթէ անպատշաճ է հորթը ցրած պոչով ներկայացնել, ապա ուրեմն մենք կը ձեւակերպենք առանց պոչի... Զէ որ այդ անելը դժուար չէ:

—Այդ ի՞նչ կը դառնայ... կը ստացուի անպոչ հորթ, — հարցրեց չուարուած մագիստրոսը, զուխը չբարձրացնելով արձանագրութիւնից:

—Է՛, թէպէտ հէնց այդպէս: Բայց և այնպէս նկարը վայելուչ կը լինի:

—Միթէ մենք տպագրում ենք... անպոչ հորթը... Նախա-

գահը չփոթուեց, չիմանալով, թէ ինչ կերպով դնի հարցը ձայնատուութեան:

Տեղից վեր է կենում բժշկապետը:

—Պարոններ, այդ վէճը միտք չունի: Արուեստագէտը նկարել է ջահիլ, աշխոյժ կենդանին իսկ և իսկ այն վայրկեանում, երբ նա, համակուած ուրախութեան յանկարծակի բռնկումով դատկոտում է դաշտում, մարմնի տարօրինակ շարժումներ անելով: Կենսութիւն զգացմունքը պատմեցութեան յատուկ է: Յնժութեան յանկարծական բռնկումներ հորթերին յատուկ են, (այսանդից — «հորթային հրճուանք»): Ուրախութեան այն արտաքին արտայայտութիւնները, որոնք մեզ անվայել են թւում ոչ մի ամօթայի բան չեն պարունակում, որովհետեւ բնական են, անարուեստ: Նկարիչը պարտաւոր էր ձեւակերպել հորթը պոչը դից, որովհետեւ դա բնական է: Նա դրանով երեւան է հանել նուրբ գիտողութեան ընդունակութիւն, կենդանի իւմոր: Եթէ որ, հետեւելով կեղծ ամօթխածութեան, նա ներկայացնէր կայտառ հորթը պոչը կախ, այն ժամանակ նա կը մեղմնէր գեղարուեստական ճշմարտութեան դէմ, իսկ նրա արտադրութիւնը կը կորցնէր իր անկեղծութեան, ճշմարտութեան, իրականութեան ամբողջ գրաւչութիւնը: Տարօրինակ է այդպիսի բան մերժելը, իսկ առաւել եւս տարօրինակ է հորթը պոչից զրկելը:

—Ինչ վերաբերում է իրական լինելուն, այդ մասին ես չեմ վիճում: Պատկերն արդարն շատ իրական է, —ասաց վերադառնալով, սկսելով տաքանալ:—Բայց այդ գոյաբանուած գէտականութիւնը ներկայ դէպքում արդեօք յարմար է գալիս: Շունը իր լուսներն է քթիթում, խոզը թաւալում է դիւխի մէջ, —չէ՞ որ սրանք էլ զուտ իրական նիւթեր են, բայց ի՞նչ տուէք հարցնել, արդեօք սրանք յարմար նիւթեր են գեղարուեստական երկերի համար: Արդեօք այդ գեղարուեստական կերակուրն երեխաների, մեր ժողովրդի երեխաների համար առողջարար է:

—Է՛, տանք այդքան էլ հեռու չի կարելի գնալ, —հակաճառեց պոստատան կառավարիչը, որին հորթի պոչի մասին յարուցած բոլոր վէճը՝ այնքան էլ լուրջ բան չէր թւում: Այդպիսի ջնջին բաներին նշանակութիւն չը պիտի տանք: Միթէ գիւղացի երեխաները ոչ մի անգամ չեն տեսել պոչերը դից հորթեր: Եւ նրանք համարեւ ամենայն օր են տեսնում այդ, և դրանից ոչ մի վատ բան չի դուրս գալիս:

—Ինչպէս, դուք ուրեմն ընդունում էք, որ այդ պատկերի

մէջ ոչ մի անպատկառ բան չը կայ: Ներեցէք... Իմ խորին համոզմունքն է, որ մենք գլխիվայր ենք հասկանում մեր պարտականութիւնները: Հարիւր անգամ աւելի լաւ կը լինէր ամենեւին այբուբենարան չը տպագրել, և առհասարակ աւելի լաւ կը լինէր ոչ մի գիրք չը տպագրել, քան տարածել համանման ցեխ: Ո՞ւր ենք մոլորեցնում: Մաքուր մանկական հոգիներին: Ո՞րտեղ ենք մոլորում բարքերի ապականութիւն: Մեր ժողովրդի անարատ սիրտը: Կարծես թէ մենք նպատակ ունենք քանդել այն բարոյական հիմքերը, որոնց վրայ կառուցուած է ազգի ապագան:

— Ի հարկէ, այդ միջիչ անվայելուչ բան է, որ հորթը ցցել է սյուշը,— դրանում և կաշուեգործը համաձայն էր:— Բայց,— չարունակեց նա,— ախր չէ որ այդ յիմար երկչարաթափան հորթ է, որից շատ բան պահանջել չի կարելի: Նթէ գա լինէր օրինակ կով կամ եղ, այն ժամանակ ուրիշ բան է: Իսկ հորթ, դա ոչինչ...

— Ոչ, ոչինչ չէ,— հակաճառեց հարկահանը:

— Յոյց տուէք երեխաներին այդպիսի նկար,— նրանք լինչպիսի հասկացողութիւն կը կազմեն վայելչութեան և բարեկրթութեան մասին:

Ես արդէն ասացի, որ դրանք դատարկ բաներ են,— նորից միջամտեց բժշկապետը: Արժէ արդեօք ամբողջ մի ժամ վիճաբանել այդպիսի յիմար բանի մասին և ներս խոթել այստեղ բարոյականութեան հարցեր... Հանգիստ թողնենք այդ հորթը: Աստուած նրա հետ, թող այբուբենարանի մէջ չը մտնի: Աւելի լաւ է խօսենք սր և է աւելի հետաքրքիր բանի մասին: Մենք չէ որ ուրիշ շատ, աւելի կարեւոր գործեր ունենք:

— Հարցը հորթի մէջ չէ, այլ սկզբունքի, այն իդէալների, որոնցով մեր բաժնետիրական ընկերութիւնը պիտի առաջնորդուի իր լուսաւորութեան գործի ընթացքում:— Վերատեսուէն աւելի բորբոքուեց:— Կասեմ աւելին, այստեղ հանդիպել են իրար երկու աշխարհացեղութիւններ: Եւ մեր խաղաղ երկրումն էլ է սկսւում բռնկուել կռիւն ազնիւ իդէալիզմի և այն ուղղութեան մէջ, որը նատուրալիզմ անմեղ անուան տակ իսկապէս քողարկում է խորին ապականութիւն: Իմ բարոյական պարտքս եմ համարում է նախազգուշացնել ընկերներին այդ մահաբեր թոյնից, որը հեշտութեամբ կարող է թունաւորել և փչացնել մեր գեղեցիկ գործը:

Բժշկապետը աթոռի վրայ սկսեց կուչ գալ: Նախազահը նկատեց այդ և կարևոր համարեց վիճաբանութիւնն ընդհատել:

— Ներեցէք, պարոններ, դուք շատ չեղուեցիք հարցից:

Այդպէս մենք երբեք չենք վերջացնիլ: Հարցը դնենք: Եթէ ես չեմ սխալուում, առաջարկուած է երկու ծրագիր. ոմանք ցանկանում են, որ չարաբաստիկ պատկերն ամենեւին չը տպագրուի, ոմանք էլ ընդունում են, որ կարելի է տպագրել, բայց առանց պոչի: Սակայն, երկրորդ ծրագիրը, թւում է թէ, չի գտել բաւականաչափ կողմնակիցներ:

Այդ ժամանակ հարկահանը ձայն խնդրեց:

— Հէնց այդ ծրագրի կողմնակից եմ, թէպէտ և, կարելի է, որ ես առիթ չունեցայ որոշակի յայտնել իմ կարծիքը այդ մասին: Բոլոր գծախտութիւնը պոչի մէջ է. հէնց այդտեղ է միայն անպատշաճութիւնը: Բայց դրա համար չարժէ այբու-բենարանից դուրս հանել Հովսէփի և իր հօտի կրթիչ պատկերը:

Կաշուեղործ Նիրանէնը, իսկ նրա հետ միասին և պոստատան կառավարիչը, բողոքում էին անպոչ հորթի կողմնակիցների դէմ: Վէճը նորից բռնկուեց, ժողովդրական ուսուցիչը դարձեալ սկսեց ձառնել բարձր նիւթերի և այն վաճառքների մասին, որոնք, եթէ միայն տուած փաստի բոլոր հետեւանքները նախատեսուի, վնաս են ապառնում ժողովրդին և հայրենիքին: Վերատեսուչը նատուրալիստների դէմ արտասանած ճառով նրանց ջարդ ու փշուր արեց և բորբոքուած ասաց, որ կոպտութեան պաշտպան մարդիկ թէպէտ և զաճաճ են, բայց առաւել եւս երեւան են հանում ամօթխածութեան բացակայութիւն և զատելու անընդունակութիւն այն բանի մասին՝ թէ ինչ է չնորհալի, ինչը՝ ոչ:

Բժշկապետը կրակ կտրեց:

— Իսկ այն մարդը, որ կարմրում է պոչը տեանելիս, երևան է հանում չափազանց կասկածելի բարոյականութիւն: Ժողովրդի, իսկ առաւել ևս երեխաների երևակայութիւնն առողջ է: Ապականուած է միայն նրանց երևակայութիւնը, որոնք տհաճութեամբ երեսները շուռ են տալիս՝ պոչը վերի ցցած հորթից: Այդ արդէն չափազանցութիւն էր: Նախագահն ընդհատեց վիճաբանողներին և խնդրեց նրանց ոտք չը դնել անձնական հողի վրայ: Բայց վերատեսուչն արդէն գլխարկը վերցրել էր: Հրաժեշտ տալիս՝ նա մեղմ, կարծես թէ խզուած ձայնով արտասանեց մի քանի սրտաբուլիս խօսքեր այն մասին, թէ ինչպէս նրա համար ծանր է տեսնել, որ այնպիսի գեղեցիկ պտուղներ խոստացող գործը ստացել է կորստաբեր ուղղութիւն: Նա թօթափում է իր ոտների փոշին: Նմանապէս նա չի կարող անդամ մնալ այն բնկերութեան, որտեղ թոյլ են տալիս վիրաւորել այն մարդկանց, որոնք համարձակ և ազնուաբար արտայայտում են իւրեանց համոզմունքները: Իսկ ինչ վերաբերում է

վիրաւորողին՝ նա դատաստանի առջև նրանից հաշիւ կը պահանջի: Նա դուրս գնաց, իսկ նրա յետևից դուրս եկան ժողովրդական ուսուցիչը և հարկահանը: Մնացողներին տիրեց մի ծանր զգացմունք: Թւում էր նրանց, թէ հողը իրանց ոտներին տակ օրօրում է: Իրանց ընկերութեան ապագան, որ մի քիչ առաջ վարդապետն լուսով էր ներկայանում աչքերին, յանկարծ անյայտութեան մառախուղով ծածկուեց: Եւ այդ բոլորը մի ինչ որ հորթի պոչի կամ անպոչ հորթի համար:

Վիճարանութիւնները նորից արծարծելու մասին մտածելն անգամ աւելորդ էր: Վտանգաւոր էր բարձրացնել վիճելի հարցը, որ յանգում էր երկու կամ աւելի ճիշտ երեք հակասական վճիռների: Այդ կարող էր վերջնականապէս կործանել ընկերութիւնը: Գործը յետաձգուեց երկրորդ նիստին, աւելի նրա համար, որ արդէն ուշ էր: Կաշուեգործի խորհրդի համաձայն խնդիրը պարզելու համար վճեցին հարցնել ձեռնհաս և գործի մէջ չը շահագրգռուած անձանց՝ ինչպէս օրինակ քաղաքագլխի և քաղաքային պատօրի կարծիքը: Քաղաքագլուխը պատասխանեց, որ Պ. քաղաքի ընտկիչները, ի հարկէ, մի քիչ կը խռովուէին, եթէ տեսնէին հրապարակում վիճելի նկարի նման մի տեսարան: Բայց, ուշադրութեան առնելով, որ պատկերը ժողովրդի համար է նշանակուած, իսկ ժողովուրդն այդքան էլ մանրակրկիտ չէ, նա կարծում է, որ այդ կարելի է ուշադրութեան չառնել: Պատօրը անորոշ կերպով պատասխանեց, — որ ոչ Աստուածաշնչում, ոչ էլ եկեղեցական կանոնադրութիւնների մէջ չէ կարող պատասխան գտնել տուած հարցին:

Խորհեցին և վճեցին, որ պատկերը կարելի է տպել իրաւարանական յայտնի սկզբունքի հիման վրայ, որով թոյլատրելի է համարուում այն բոլորը, ինչ որ օրէնքով չէ արգելուած:

Այդպէս էլ արին: Այբուբենարանը լոյս ընծայեցին հորթի պատկերով, հորթն էլ մնաց պոչով: Բայց վերատեսուչը, ժողովրդական ուսուցիչը և հարկահանը վերջին իրանց վրայից ամեն մի պատասխանատուութիւն այդչափ թեթեամիտ արարքի հետեանքների համար:

Նրանք վաճառեցին իրանց բաժինները:

Թարգմ. ՅՈՎ. ՍՏԵՓԱՆԵԱՆ

էս ջինջ աղբո՛ւրն է՝ ուրա՛խ, քչքչո՛ւն,
Վարդերի միջով ձորն՝ ի վար կ'երթայ.
—Ա՛խ, էս իմ եարն է՝ սիրո՛ւն, քչքչո՛ւն,
Ուրիշ աղի հետ պսակի կ'երթայ...

—Դուն պսակ կ'երթաս քու նոր եարի հետ,
Բարով վայելես, իմ աղիզ քո՛ւր ջան.
Ես էլ եար ունիմ հեռո՛ւ տեղերում,
Նոր սիրուս հիմի, զուքուիմ, տես կ'երթամ:

Սև ձիս կը նստիմ ու սև գիշերին,
Ասպտաղս կապած՝ կ'երթամ եարիս քով.
Իմ սէրս հիմի մէջ քօլին-չօլին
Ինձի կ'ըսպասէ սիրտը կարօտով:

Ձան, փոթարանքն է իմ աղիզ հարսը,
Վիշապ-բամին *) է եարըս աննման.
Կ'երթամ սիրուելու, սիրելու էնոր,
Ու տաք գրկի մէջ մեռնելո՛ւ կ'երթամ...

էս իմ բարդիքն են, անո՛ւշ կը խշշան,
Ու ձէնը կ'երթայ հեռո՛ւ շատ հեռո՛ւ.
Ա՛խ, շատ կը լսես էս ձէնը, մէր ջան,
Բայց բալիդ ձէնը էլ չես լսելու...

Կ'ընկնիմ չօլի մէջ՝ հեռո՛ւ, անգի՛ւման,
Աւաղների մէջ, բո՛րկ արիւի տակ.
Ա՛խ, ձիս կը վորէ ինձի գերեզման
Ու քուն կը մտնիմ դարդիս հետ մէնակ...

Ա.Ի. ԻՍԱՀԱԿԵԱՆ

*) Վիշապ-բամին = ուրազ անո

ՇՎԷՑՑԱՐԱԿԱՆ ԳԻՒՂԸ

Սիրելի ընկեր!

Տեղեկութիւններ եւ խնդրում Շվէյցարիայից, իրաւունք ունեւ, արժէ ծանօթանալ այդ երկրի հետ, եւ սիրով եւ կատարում ցանկութիւնդ Միայն թոյլ տուր ինձ խնդրեմ, որ իմ տպաւորութիւնները քեզ հաղորդեմ հրապարակով, կարծում եմ, որ քեզ պէս շատ շատերին դա հետաքրքիր կը լինի:

Ես չը գիտեմ իսկապէս, թէ չվէյցարական կեանքի որ կողմի հետ դու կը կամենայիր աւելի մօտիկից ծանօթանալ, բայց ես քեզ գրելու եմ պարբերաբար այս երկրի գիւղի մասին: Ես համոզուած եմ, որ դա քեզ մասնաւորապէս կը հետաքրքրի. դու գիւղացի ես, ինչպէս և ես: Ամբողջ քաղաքակիրթ աշխարհում չվէյցարական գիւղը առանձին հետաքրքրութեան և ուսումնասիրութեան առարկայ է եղել միշտ: Ես յիշում եմ, թէ Պարիզի վերջին 1900 թուի ցուցահանդիսին ամեն օր ինչ ահագին բազմութիւն էր խոնւում այն մուտքի առաջ, որ տանում էր դէպի չվէյցարական գիւղը: Շատ կողմերով դա չափազանց օրիգինալ է, այդ ճշմարիտ է, բայց դրանից բացի ես իմ առանձին պատճառներն ունեմ այս երկրի գիւղն ընտրել իմ նամակներին նիւթ. բացատրեմ, գուցէ և դու համաձայնես ինձ հետ:

Մի ընդհանուր քաղաքակրթութիւն կայ, որի անունն է արեւմտեան քաղաքակրթութիւն և որ յատուկ է եւրոպական բոլոր երկիրներին: Այս ու այն երկրում որոշ տեղական գոյն, տեղական առանձնայատկութիւններ, ազգային բնաւորութիւն ընդունելով հանդերձ, եւրոպական քաղաքակրթութիւնը, եւրոպական կուլտուրան իր ընդհանուր բնորոշ գծերով մնում է համարեա նոյնը ամեն տեղ: Այդ նմանողութիւնն արտայայտուում է մասնաւոր մեծ քաղաքներում, արդիւնաբերական խոշոր կենտրոններում, և արեւմուտքին բոլորովին մի անծանօթ մարդ, օրինակ, հեռաւոր արեւելքից առաջին անգամ հասած մի չինա-

յի, մի սխալի հետզհետէ զանազան քաղաքներ այցելելով՝ հեշտութեամբ կարող է ինքն իրան միշտ մի և նոյն երկրում կարծելու թիւրիմացութեան մէջ ընկնել: Ինչ ասել կ'ուզի, որ ծիծաղելի կը լինէր ասել, թէ չը կայ գերմանական, ֆրանսիական, անգլիական նոյն իսկ շվեյցարական ուրոյն կուլտուրա, արգինք իւրաքանչիւր ազգի ստեղծագործող հանճարի, յեղական առանձնայատկութիւնների, հոգեբանական զանազան ֆակտորներ, տեղական-աշխարհագրական, կլիմայական և քաղաքական պայմանների, բայց անուրանալի է, որ այդ բոլոր քաղաքակրթութիւնները, իրանց պրինցիպներով, իրանց հիմունքներով ընդհանուր նմանողութիւն ունեն պահպանելով յատուկ նրամաներ: Եւ այդ քաղաքակրթութիւնը հարթ, հաւասար հոսող ջրի պէս միապաղաղ չի պատել արեւմուտքի բոլոր երկիրները, նրա ընթացքը ալէծածան է, վեր ու վար, մէկ տեղ չատ, միւս տեղ նուազ, մէկ տեղ հաստ շերտով, միւս տեղ նօսր: Այսպիսով կուլտուրական բարիքները անհամաչափ կերպով են տարածուած ոչ միայն զանազան երկիրներում, այլ և մի և նոյն երկրի զանազան մասերում: Շատ անգամ մի և նոյն երկրում քաղաքակրթութեան բարձրագոյն պահանջներին համապատասխանող քաղաքների կողքին հեշտութեամբ կարելի է տեսնել գիւղեր, նոյն իսկ ամբողջ գաւառներ, որոնք կուլտուրական տեսակէտից կատարեալ անտափօնիզմի մէջ են նոյն քաղաքների հետ: Այցելելով օրինակ Ֆրանսիայի գլխաւոր քաղաքները, արգինաբերական խոշոր կենտրոնները՝ Պարիզ, Լիօն, Մարսէլ, Նանսի, մարդ հեշտութեամբ կարող է սխալ եզրակացութեան հասնել այդ երկրի ժողովրդի ամբողջութեան մըտաւոր և տնտեսական կայութեան մասին, եթէ նա անծանօթ է օրինակ Սալօյեայի գիւղերին: Նոյնը կարելի է ասել համարեա իւրաքանչիւր երկրի մասին:

Միմիայն քաղաքներով անհնարին է ընդհանուր և ճիշտ գաղափար կազմել որ և է երկրի մասին: Միայն կուլտուրական, քաղաքակրթական բարիքների այն չափը, որ բաժին է ընկել այս կամ այն երկրի գիւղական ժողովրդին կարող է որպէս չափ ծառայել որոշելու համար նոյն ժողովրդի ամբողջութեան մտաւոր, բարոյական և տնտեսական բարեկեցութեան ընդհանուր մակերեւոյթի բարձրութիւնը: Ինչ նշանակուածիւն կարող է ունենալ որ և է մեծ քաղաքի էլեկտրական լուսաւորութիւնը, էլեկտրական տրամվայները, գեղեցիկ և մեծ ձմեռները, չքեղ տները և այլ բազմապիսի յարմարութիւնները, եթէ մի քիչ հեռու գիւղեր կան, ուր ճանապարհ ու կամուրջ չը կայ, ուր ողորմելի խրճիթները գիշերները չեն լուսաւոր-

ւում. ուր մարդը խաբխաւում է տղիտութեան ու խեղճութեան անթափանցիկ խաւարի մէջ:

Ահա թէ ինչո՞ւ անհրաժեշտ է ամենից ասա՞յ գիւղն ուսումնասիրել, մօտիկից ծանօթանալ գիւղական ժողովրդի, այն աշխատաւոր սեւ մասսայի հետ, որ բոլոր դարերում, բոլոր աշխարհներում իր ուսերին է կրել իր հայրենիքի ճակատագրի ծանրութեան մեծագոյն մասը, որի քրտինքի կաթիլների քանակութիւնից է կախուած այս ու այն երկրի բազմազանութիւնը, որ իր ծոցում կրում է մի ամբողջ ազգի կենսական ոյժերի աղբիւրը, կարող է քաղաքային մաշուած սերունդը փոխանակել առողջ հոսանքով և պրօլետարիայի թիւը սահմանել:

Գիւղի ազդեցութիւնն ու նշանակութիւնն էլ աւելի մեծ է մանաւանդ այն երկրներում, ուր կազմուած չեն տակաւին արդիւնաբերական խոշոր կենտրոններ, մուտք չեն գործել մեծամեծ գրամագլուխներ, կօլլեկտիվ հսկայական ձեռնարկութիւններ արդիւնաբերական նշանաւոր ճիւղերի համար, և ուր ժողովուրդը շարունակում է կապուած մնալ իր հողին: Շվեյցարիայում ուր մեծամեծ քաղաքներ չը կան և ժողովրդի մեծամասնութիւնը երկրի բնական պայմանների շնորհիւ երկրագործութեամբ և խաշնարածութեամբ է պարապում, ուր նա՝ այդ ժողովուրդը ներկայանում է որպէս կրթուած գիւղացիների մի բազմութիւն—«Les paysans cultivés»—ինչպէս սիրում են իրանք իրանց անուանել չվէյցարացիք, գիւղի առաջնակարգ նշանակութիւնն ակներև է:

Ահա թէ ինչո՞ւ, սիրելիս, Շվեյցարիայի մասին քեզ որոշ գաղափար տալու համար ես կը սկսեմ հէնց գիւղից, երբ մի երկրում գիւղը իր աշխատաւոր ժողովրդով երջանիկ է, քաղաքների երջանկութիւնն ակներև է, մինչդեռ հակառակը միշտ չի կարող ձիշտ լինել:

Այս յառաջաբանից յետոյ, ես անցնում եմ իմ բուն նիւթին՝ չվէյցարական գիւղին: Այժմ՝ երբ այս երկրի մի գիւղում նստած գրում եմ քեզ այս տողերը, բնականապէս անկարող եմ ամեն վայրկեան չը յիշել միւս գիւղը, այն հեռաւորը, որից հեռացել ենք երկուսով էլ, ուր անցել է մեր մանկութիւնը, որ մեր կեանքի արշալոյսին ժպտացել է մեզ իր դաւոտ, գունատ ժպտով, որ մեր ճակատին դրոշմել է գեռ օրօրոցի մէջ իր անվերջ թախիծի կնիքը և որի ճակատագիրն այնքան դժբաղեցնում է մեզ, ես անկարող եմ շարունակ օւշի առաջ չունենալ մեր աղէտ, խաւար ամբոխին, որ սողում է իր ցաւերի ծանրութեան տակ մի խուլ անքոցով, որ աչքերի մէջ էլ փայլ

չունի, սրտում նուանդ ու յոյս, և երբեք, երբեք չի կարողանում երեւակայել թէ երկնքի տակ այլ վիճակ, այլ բողոք, այլ կայութիւն հնարաւոր է իր համար: Սե գոյութիւն, անասնական մի ողբալի գոյութիւն, որ նա քաշ է տալիս դարերի միջից, ինչպէս յոգնած ճանապարհորդը փշտ, խանձուած անապատների մէջ, լալիս է և հնազանդ է իր ճակատագրին: Ի՞նչպէս մոռանալ նրան, ի՞նչպէս ջնջել զլիւից այն յիշողութիւնները, որոնք լոյսի առաջին շողի, և մայրական կաթի առաջին կաթիլի հետ են տեղ բռնել: Արեւելքի յայտնի առածը յիշում եմ՝ «կաթի հետ մտածը՝ հոգու հետ դուրս կը գայ»: Հաւատացած եմ, որ քեզ չեմ ձանձրացնի, եթէ երբեմն իմ նամակներում, եւրոպական կեանքի պատկերների կողքին, դու գտնես նաև հայրենի ծանօթ պատկերներ, ծանօթ դէմքեր, ծանօթ երեսփոխներ: Ժամանակի և տարածութեան միջից այս վերջիններն ինձ երևում են ինչպէս մանկութեան երազներ, հեռու և մշուշապատ, բայց հէնց այդպէս նրանք աւելի սիրելի են ինձ, աւելի հմայք ունեն:

I

Ես ուրախ եմ, սիրելիս, որ քո նամակն ինձ հասաւ ճիշտ այն ժամանակ, երբ ամսուային արձակուրդներն անցկացնելու համար եկել եմ չվէյցաական մի գիւղ: Եւ հէնց այս գեղերիկ անթիլից կ'օգտուեմ՝ քո հարցաթրութեանը բաւականութիւն տալու: Շվէյցարական շատ գիւղեր եմ տեսել, բայց ինչու չը սկսել հէնց՝ սրանից, ուր ապրում եմ: Դա աւելի հեշտ և անլի ճշգրիտ կը լինի: Սա կարող է առաջին պատահած գիւղը համարուել, ամենատոգորականներից, որ միւսներից ոչ մի ուսմանին առաւելութիւն չունի: Ես քեզ կը նկարագրեմ այդ գիւղն այնպէս, ինչպէս որ նա կայ, առանց աւելացնելու, առանց չափազանցութիւնների: Եթէ նկարագրիս մէջ երբեմն գտնես փռո գոյներ, բանաստեղծական կտորներ, այդ էլ ընդունիր իբրև զուտ իրականութիւն և ոչ արդիւնք իմ երեւակայութեան թռիչքներին:

Գիւղը՝ ուր ես ապրում եմ, Պիղու է կոչւում և գտնւում է Վօ կանտօնում Լօդանից ոչ հեռու: Իերն գնացող չերկաթուղու գիծն անցնում է մօտով և մի փոքրիկ կայարանից մինչև գիւղը հազիւ երկու կիլոմետր ճանապարհ է: Այդ տարածութիւնը ուղքով անցնելը խիստ հաճելի զբօսանք է: Վար ես իջնում մի սիրուն խճուղիով, մի պահ քայլում ես անտառապատ բլրակի կողքով, չուտով քեզ ընկերանում է մի կարկաչին վը-

տակ, որ ներքեւում աղմկում է ծառերի և խոտերի մէջ. ահա մի տնակ, ճանապարհի վրայ մէջքը դարձրած դէպի անտառն ու վտակը, չորս կողմից ծառեր. ահա երկրորդը, մենաւոր ու տը-
խուր, ուր մի քանի հաւեր թափառում են խոտերի մէջ, մի քանի չիկահներ երեխաներ, որոնք խաղում են դրան առաջ և հետաքրքրութեամբ նայում օտարականին, մի բան փսփսում, ծիծաղում: Անցնում ես կամուրջով, կրկին լուծիւն, անտա-
ռակի ստուերը ծածկել է ճանապարհը, դով է և խաղաղ. խը-
ճուղին հարթ է, ինչպէս կտաւ, նա գալարում է ծառերի մէջ, մարդ չի շտապում և քայլում է հանգարտ, ազահաբար ներս քաշելով սառն օդը և ականջ դնելով անտառի մեղմ փսփսուկին:

Ահա և գիւղը. մեծ է նա, հազիւ 15—20 տնից բաղկա-
ցած. առհասարակ Շվեյցարիայում չը կան մեծ գիւղեր ինչ-
պէս մեր երկրում, ուր 3—4 հարիւր տներ իրար վրայ խիտ առ խիտ կուտակուած են երբեմն: Այստեղ գիւղերը միշտ փոքր են և տներն էլ իրար վրայ թափուած չեն, այլ փռած չրջակայքում: Առաջին շէնքը՝ որ բարձրանում է հայեացքի ա-
ռաջ՝ գիւղական երկյարկանի սպիտակ գպրոցն է, նա իշխում է բոլոր տների վրայ, ամենից մեծն է, ամենից չքեղն է: Չը կայ մի գիւղ, ուր գպրոցը չունենայ առաջին շինութիւնը: Դպրոցի առաջից է անցնում գիւղի միակ լայն փողոցը, մի սիրուն խճուղի, որի երկու կողմերում շարուած են տները: Այս փողոցի վրայ շինուած են հասարակաց քարեայ աւազան-
ներ, ուր ջուրը անընդհատ հոսում է քարէ մեծ կուռի մէջ, աւաղանը ծածկուած է և օրուայ որ ժամին ասես, այնտեղ կարելի է տեսնել գիւղացի կանանց և երեխաներին: Վճիտ և առողջարար է ջուրը, մաքուր է աւազանի շուրջը, նա ոչնչով չի յիշեցնում մեր լեռնային գիւղերի աղբիւրները, որոնց չորս կողմում կարելի է միշտ տեսնել լուացած կանաչեղէնի մնա-
ցորդներ, հաւի և ձկան փորոտիք, փետուրներ, պտուղների կեղեւներ և ուրիշ այնպիսի գարշութիւններ, որ մարդ նոդ-
կանք է զգում աղբիւրին մօտենալիս: Այստեղ հաճելի է նստել աւաղանի մօտ և լսել նրա մեղմ խշշոցը:

Տների կազմութեան, բաժանմունքների նկարագիրը թող-
նելով մի այլ անգամի, կ'ասեմ այժմ որ նրանք շինուած են իրարից դատ դատ և իւրաքանչիւրն ունի իր փոքրիկ պարտեզն ու բանջարանոցը, ուր աշխատում է մի կին, մի աղջիկ, կամ մի փոքրիկ երեխա: Տների շուրջը բակի պատեր չը կան, պար-
տեզն ու բանջարանոցները ոչնչով չեն փակուած, դռների ա-
ռաջ ընկած են երկրագործական զանազան գործիքներ, կահ
կարասիք, տախտակներ, դամբիւղներ, կողովներ և այս բոլորի

վրայ ոչ մի հակող աչք չը կայ, որովհետև ոչ մի վտանգ չը կայ։ Օտարականը կարող է ապահով կերպով անցնել փողոցով, մտնել որ տունը կամենում է, հաստավիզ դամբներ չեն պառկած դռների տուփ, նրանց հաջորդը չի աղմկում գիւղի խաղաղութիւնը, եղած մէկ երկու շներն էլ այնքան մեղմ տեսք ունին, այն աստիճան խեղճ են, կարծես հրաման են ստացել չը հաջել, նրանք նայում են անցորդին և պոչերը կախ ձգած թողնում գնում փրկիստփաների անտարբերութեամբ։ Մի փոքր մեծ, կասկածելի շների դնչերն էլ դրուած են երկաթէ ցանցի մէջ, որ գրկել է նրանց յանցաւոր փորձի որ և է հնարաւորութեանից։ Շատ վաղուց է, որ շունն այստեղ դարձել է տան զարդ և ոչ պահապան, որովհետև անծանօթն էլ թշնամի չէ, այլ եղբայր, բարեկամ։ Մեր երկրի ահագին, կատաղի շների մասին յաճախ ստիժ եմ ունեցել պատմել չվէյցարացիներին. նրանք մանկական դարմանքով լսելուց յետոյ, անմեղօրէն հարցնում են, թէ ինչո՞ւ համար են այդ գազանները։—Գողերի, լինում է պատասխանը, և նրանք ինքնաբերական են այն երեխայի կացութեան մէջ, որ հէնց նոր լսել վերջացրել է մի ֆանտաստիկ հէքիտի։

Ասացի, որ Պիդուն հաղիւ 15—20 տուն ունենայ միասին խմբուած, որոնք և կազմում են նրա կեդրոնը, կորիզը, ուր գտնւում է պոստատունը, դպրոցը ինչպէս և շինական կառավարութիւնը։ Բայց սրանցից բացի գիւղական համայնքը էլի տներ ունի, հետու կեդրոնից, չըջակալքում։ Այդ տները մի բանաստեղծական անկարգութեամբ ցաք ու ցրիւ փռուած են զաշտավայրի բոլոր անկիւններում իրարից խոտված մանուկների պէս։ Սա մի սովորական երևոյթ է չվէյցարական բոլոր գիւղերում։ Արևելքում անապահովութիւնը, սպանութեան և կողոպուտի մշտական սարսափը ստիպել է մարդկանց ոչ միայն իրար մօտ սղմուած ապրել, այլ և հարեան տների պատերի մէջ անցքեր չինել՝ վտանգների ժամանակ օգնութիւն կանչելու։ Այսպիսով մեր երկրի գիւղերում այլ է տան տեղը, այլ է այգու տեղը, որ սովորաբար տների մօտ է լինում և վերջապէս այլ է ցանովի տեղը կամ արտը։ Շվէյցարական գիւղում հողն այգալիսի կատեգորիաների չի բաժանւում. գիւղացին իր տունը չինում է, ուր կամենում է, բանջարանոցը՝ և այգին, ուր յարմար է։ Այդ բնորոշութիւնը կախուած է բացառապէս իր անձնական յարմարութիւններից, այդպէս նա իր տունը չատ անգամ աշխատում է չինել իր ամենամեծ արտի մօտ, ուր և լինի, որքան և գիւղից հեռու ընկած, այդ մի և նոյն է, ոչ մի արդեւք, ոչ մի երկիւղ, նա հանգիստ կարող է ապրել իր արտում։ Եւ նայելով՝ թէ ինչ անուն ունի այս կամ այն արտ, այս կամ

այն բլրակ, որի կողքին գնում է բնակուելու գիւղացին, նոյն անունը տրուում է և նրա շինած տանը. այսպէս Պիդուի դաշտերում կայ մննաւոր տուն որ կոչւում է՝ «Pied de boeuf» (եղան սաք), «Corne de cerf» (եղջերուի եղջիւր) և այլն: Եւ տնկուած է այնտեղ մի հատիկ տունը, հեռու մնացած բնակութիւններից, ցերեկը արևի շողերով ողողուած գեղանկարչօրէն սպիտակին է տալիս դաշտերի միապաղաղ կանաչի մէջ, իսկ գիշերները համատարած խաւարի մէջ նրա ճրագը լուսամտտներից թարթում է անցորդին և լսութեան ու ամացութեան մէջ կեանքից, յոյսից ու աշխատանքից խօսում: Որքան պօէգիտ, որքան գրաւչութիւն կայ այդ տների մննաւորութեան մէջ. այստեղ ամեն ինչ գեղեցիկ է ու մեղմ, և՛ ինձսրի ու տանձի ծառերը, որոնք պատսպարում են նրան և՛ փոքրիկ շունը, որ վազվզում է, կամ պառկած է դրան առաջ, և՛ մեծ, սպիտակ կատուն, որ հնձած խոտատեղում մկներ է սրտում առաօտից երկիւյ և՛ մանաւանդ փոքրիկ աւաղանը, ուր շեռնային աղբրի վճիտ ջուրը հոսում է, հոսում է անընդհատ մի անուշ կարկաչիւնով: Ցերեկը այդ տներում շատ անգամ մարդ չը կայ, եթէ աշխատանքի օրեր են. բայց դուռը բաց է և դրան առաջ նստած են երկու փոքրիկներ, երկու գանդրահեր չէկ երեխաներ, քոյր ու եղբայր, որոնց մայրը դաշտ գնալիս պատուիրել է տանը նստել: Եւ այնտեղ են փոքրիկներն իրանց շան, հաւերի և կատուի հետ, վազվզում են, կամ ճանապարհի վրայ տնակներ շինում: Խոհեմ, խելացի մանուկներ, որոնք միշտ այնպէս հնազանդ են ծնողներին, այնքան հոգատար, այնպէս մեղմ դէմքով, մեղմ աչքերով:

Երեկոններն զբօսանքի ժամերին ևս դուրս եմ գնում գիւղից գէպի դաշտ: Այնտեղ՝ կանաչազարդ հարթութեան մէջ բարձրանում է մի բլրակ, որի կատարին ծառերի մի խումբ, պսակ են կազմում: Բարձրանում եմ այդ բլրակը և խոտերի մէջ ընկղմուած նայում եմ գէպի արեւմուտք, գէպի դաշտավայրը, գէպի լեռները: Գիւղի վրայ բացուող տեսարանը կարելի է գիտել ամեն օր և չը կշտանալ: Շվէյցարական բնութեան գեղեցկութեան մասին շատ է գրուել, կրկնութիւններ չեմ ուզում անել, կ'ասեմ միայն որ այդ բնութեան մի խիստ բնորոշ գիծն է դարմանալի քնքշութիւնը, անօրինակ նրբութիւնը: Ամեն ինչ մեղմ է այստեղ, խաղաղ, նուրբ. ոչինչ վայրենի, ոչինչ յախուռն ու յանկարծական. փոփոխութիւնները թէ երկրի վրայ և թէ երկնքում, մի ամպից միւսը, մի գոյնից միւսը, ձորից գէպի բլուրը, բլրից գէպի հարթութիւնը կատարուում է կամ կատարուել է անուշիկ զգուշութեամբ, մեղմիկ շարժումով, որ հայեացքը չը

խրոնի, սիրաբեր թուեղ չը լինի: Հարաւի փոթորիկներն իրանց աւերիչ թափով չեն գալիս խռովելու այս վսեմ ներդաշնակութիւնը, բնութիւնն այստեղ ընդոստ կերպով չի ցնցւում, այլ պառկած կոյսի պէս մեղմօրէն հեւում է, մարդը յանկարծական յոգների բռնկումներ չի ստանում այստեղ, այլ խոհերի և մեղանխօլիայի մէջ ընկղմւում: Առաջ քաջուող տեսարանը Շվէյցարիայի ամենաստփորական տեսարաններից մէկն է և օակայն նա առասպելօրէն նկարչական է: Այս դաշտավայրը, սա մի հարթութիւն չէ, այլ կանաչի ալէծածան մի ծով, բուքալից ու գեղեցիկ, որի մակերևոյթը երեկոյեան զով քամու առաջ դողգողում է այնքան մեղմութեամբ, այնքան քնքշութեամբ: Եւ այդ կանաչագարդ հարթութեան վրայ դալարւում են կտուրի պէս սպիտակ, կոկիկ խճուղիներ, երկու կողմից եզերւած ծառերի շարքերով: Հորիզոնը եզերող լեռներն արեւմուտքում երկնքի փոնի վրայ ծրագրւում են իրանց կատարների անտառներով, և նրանցից իւրաքանչիւրը նման է գոթական ճաշակի ատամնաւոր հսկայական դղեակի, որի սրածայր աշտարակները իրանց անթիւ քանդակներով լողում են վերջալոյսի շողերում: Ամենից շատ սիրում եմ մի մենաւոր ժայռոտ բլուր, որ յամառ կերպով պահում է իր կատարին մի քանի ծառեր, ասես եղանակների խտութեան դէմ իր գլխի ճաղատն արօղելու Բլուրների լանջերին, ձորակներում դեռ նրեւում են հնձող գիւղացիներ, առանց բաճկոնի, լայնեզր ցօղէ գլխարկով: մի սայլ խոտով բարձած բարձրանում է յամրաբար, քաշող մի հատիկ եղ է, երբեմն նոյն իսկ մի կով, ահա մի կին, որ չանգոյնը ուսին դրած յետ է գալիս դաշտերից, մի խումբ աղջիկներ, որոնք ծածկւում են անտառի մէջ երգելով, նրանց տները հեռու են, բարձր լեռնալանջին, գիւղից անջատուած: Լեռնադաշտի հէնց կենտրոնում մի ձկնածու բլուր, որի վրայ երեկոյեան մշուշի միջից երեւում է Պիլու գիւղը իր կղմինդրածածկ կտուրներով, իր սպիտակ տներով: Հեռու դաշտերում կանաչների մէջ թաղուած՝ տեսնում եմ գերեզմանատունը, ուր հանգչում են մեռելները ծաղիկների բուրմունքի և մշտադալար ծառերի սօսափունի տակ: Գիւղից դէպի հարաւ ձգուած է մի սայլ բլուր, որ կրում է իր մէջքին գիւղական եկեղեցին, մի փոքրիկ շէնք, պարզ, անզարդ, որի սուր գոթական զանգակատունը բարձրանում է համեստօրէն, և կարծես ամաչում է, որ այնքան փոքրիկ, կծկուած շէնքի վրայ ինքն այնքան բարձր է, այնպէս երկար:

Լուռ է չրջակայքը, լռութիւն է իշխում և գիւղում: Զարմանալի է, երեկոները՝ երբ դաշտերեց, արտերից աշխատա-

որները վերագառնում են տուն, դարձեալ դիւղում առանձին փոփոխութիւն չի առաջ գալիս. նոյն խաղաղութիւնը, նոյն մեղմութիւնը, որ այնպէս յատուկ է Շվէյցարիային, չվէյցարական ժողովրդին, չարունակում է: Շուն չի հաջում, անասուններ չեն բառաչում, երեխաներ չեն լալիս, մարդիկ չեն աղմկում, տներում մէկիկ մէկիկ վառում են ճրագները, ընթրիքի ժամն է, քիչ յետոյ ամենքը քուն կը մտնեն, այս օրհնուած երկնքի տակ:

Նայում եմ այս պատկերին և դարձեալ միտս է գալիս մեր գիւղը, այն տխուր հարթութիւնը, որ ձգւում է մինչև Մասիսի ստորոտները, աղային սպիտակ շերտով ծածկուած ահագին տարածութիւնը, որտեղից անասունները խոյս են տալիս, այն ճահճապատ հողերը, որոնք այնքան առատօրէն մոծակներ ու միազմներ են տալիս, այն ըլրակները, որոնք մեղաւնում «զուեր» են կոչւում, քարերով պատած, չոր, խանձուած, անմարդաբնակ, ուր սողում է օձը և ուր հրացանը ձեռքին մարաղ է մտել արիւնածարաւ քիւրդը: Յիշում եմ մեր ճանապարհները, որոնք կարծես ոչ թէ մարդկանց ձեռքով, մտածուած կերպով են շինուած, այլ իրանք անցել են, որտեղից և ինչպէս կամեցել են, կտրտուած ցեխերով լի փոսերով. փոշու մէջ կորած՝ չոր եղանակին, անանցանելի՝ անձրեւոտ օրերին. մեր առուները, խոր ու տղմոտ, որոնք կամուրջ չունեն, յիշում եմ նրանց մէջ թաղուած ծանրակազմ, սլոյանդակ սայլը, ահագին, հաստավիզ գոմէշները, որոնք ձկնում են, գալարւում են, բռնը գուրս քաշել չեն կարողանում. երեկոյ է, մթնում է, տէրը՝ տանջուած փոշոտ, քրտինքոտ դիւղային, անհանդիստ է, նա կատաղած է, չարժում է խարսզանք, կաշուէ ոլորուն խարսզանք ֆռում է օդի մէջ, կենդանու մարմնով փաթաթւում, պորտը պատռում, որտեղից արիւնը կաթիլ կաթիլ հոսում է տղիտու թեւան և վայրենութեան սեղանի վրայ: Յիշում եմ մանաւանդ մեր դիւղի առաջի կամուրջը, որ տարին մի անգամ դարնանք կը շինէին բարակ փայտերով ու ցեխով, չորացած հողը վրայից կը թափուէր, կը մնար կամուրջի միայն կմախքը, մի քանի փայտեր, յետոյ այն էլ կը գողանային թուրքերը, առուն կը մնար առանց կամրջի, ճանապարհը անանցանելի, մինչև որ Մահտեսի X-ը իր հողու վարձքի համար մի գերանի կտոր ձգէր վրան ոտքով անց ու դարձի համար մի ու դու մեր մանկութեան օրերում քանի անգամ դաշտ զնալիս իրար բռնած, դողդողալով անցել ենք այդ բարակ գերանի վրայից, քանի քանի ուրիշները ջուրն են թափուել և ակամայ վարդավառ արել: Ա՛խ այդ կամուրջը ես երբէք չեմ մոռանայ:

Խեղճ մանկութիւն, այն ժամանակ ես համոզուած էի, որ այն առուի վրայ ուրիշ որ և է կամուրջ հնարաւոր չէ և թէ ամեն երկրի մանուկներ գիւղից հեռանալիս պարտական են դողդողալով անցնել մի նման գերանի վրայից:

Հապա մեր գիւղի ամառային երեկոները. դաշտից՝ գունատ, չորացած դաշտից, նախիրը յետ է գալիս և իր հետ գիւղ է բերում միջատների անթիւ բազմութեան հետ և փոշու ամպեր. ամենքը իրար են խառնում, չներ՝ չը գիտես ինչու, մէկէն սկսում են հաչել, հալածել փոշոտ, կեղտոտ, հիւծւած անասուններին, մարդիկ էլ աղմկում են, գգիւրն էլ չը գիտես ինչ է կանչում, փողոյներում աթարի կոյտերի վրայ շարուած կանայք էլ իրար են անցնում, սկսում են ճվճվալ, գիւղի հրապարակի մէջ ոէսն է գողգոռում, մէկին ծեծում են, միւսին հայհոյում և ամբողջ գիւղը կարծես զբուռ է պատերազմական դրութեան մէջ: Այս բոլորը անցնում է աչքիս առաջից, իսկ ես շարունակում եմ բլրից նայել շվէյարական գիւղի տեսարանին և տխուր մտքերը պաշարում են ինձ:

Յը գրութիւն!

Ընկերդ՝

ԿՈՒՐԲԱԹ-ՀԱՐՈՒՆ

Ի Մ Ա Ս Տ Ո Ւ Ն Ը

I

Կաթնաշէնցի Տօնի ապէրը մի շատ ժամատէր մարդ է. նրա ոտը ժամից բոլորովին չէ կտրւում: Հէնց որ ժամկոչը եկեղեցու դուռը բաց է անում, Տօնի ապէրը գլխի վրայ ներս է ընկնում, կ'ասես թէ անտեղ մի բան լինի կորցրած: Ժամն առանց Տօնի ապօրը ժամ՝ չէ. երբ նա ջերմեռանդութեամբ տարածւում է գետնին ծունր դնելու, բոլոր ժամաւորները հետեւում են նրա օրինակին. ջահիլ-ջուլն անգամ ձայն ու ծպտուն չէ հանում: Բայց երբ Տօնի ապէրը հիւանդութեան պատճառով բացակայ է լինում, ժամի համը կորչում է. քչիչոցն ընկնում է ջահիլ-ջուլի մէջ. տէրտէրն ստիպուած է լինում ամեն րոպէ յետ նայել, որ նրանց զօպի. այն ինչ Տօնի ապէրն իր օրինակով նրանց միշտ յափշտակում է. եկեղեցում մեռելային յուլթիւն է տիրում նրա անտեղ եղած ժամանակ: Ասենք շատ ու շատ հազիւ է պատահում, որ Տօնի ապէրը բացակայ լինի եկեղեցուց: Յաճախ պատահում է, որ նա հիւանդ, սաստիկ հեւալով, գնում է ժամ: Նրա հաւատարիմ կողակից Հերիք աքիրը մեծ դժուարութեամբ է կարողանում նրան տանը մի կերպ պահել: Շատ անգամ Հերիք աքօր համբերութիւնը հատնում է, և նա դառնում է Տօնի ապօրը այսպիսի խօսքերով՝ «Ա՛հ, հայ, ա՛հ դեմ էդ

դուրսդ, բայց, հերիք աս, խրիկ ժամ դնա՛, ահա հիւանդ ես. մի-երկու օր տեղի տակին մնա՛, որ լաւ դառնաս. այն ժամն այնտեղից փախչում չի. լաւանաս ու կը գնաս. ինչ ա ուզում ես ժամի ճանապարհին մեռնե՞լ»

— Հա՛, հա՛, — ասում է Տօնի ապէրը:

— Չո՛ւ, չո՛ւ, — պատասխանում է Հերիք արիւրը, — դէ գնա՛, դէ գնա՛ մեռի՛:

Տօնի ապէրը վեր է կենում տեղից ու ծանր հառաչ քաշելով ճանապարհում է ժամ, որտեղից նա վերադառնում է երբեմն ողջ — առողջ, կ'ասես բոլորովին հիւանդ պառկած չը լինի:

«Անիծուես դու, անիծուես, — ասում է նա Հերիք արօրը, — տեսնո՛ր, որ ժամի ճանապարհին չը մեռայ, դու ինձ թող չէիր անում գնալ եկեղեցի. տեսնո՛ր, որ Աստուծու առաջին այս անգամ էլ չի իմ աղօթքը զուր կորաւ»: Հերիք արիւրը ի պատասխան խորին ջերմեւան դուրթեամբ խաշակնքում է երեսին ու ասում «Ես մեղայ Աստուծու, վայ ինձ, ես մեղայ Աստուծու. իմ լեզուն լալիտի»: Տօնի ապէրը հանում է գրպանից նշխարքը, համբուրում է նքան ու կէս անում Հերիք արօր հետ: Նրանք միասին ճաշակում են նշխարքով ու փառք տալիս Աստուծուն:

Ամառ — ձմեռը Տօնի ապէրը ժամից բնաւ յետ չէ մնում: Նրա տրեխները ժամի ճանապարհին են մաշում: Թէեւ գրեւ — կարգալը «փալասով է բռնում», այսինքը հազիւ գիտէ, բայց այնքան է ժամ գնացել, որ աւետարանը, սաղմոսները, շարականներն ու առհասարակ բոլոր ժամագրքերը «ջուր է արել» իր ասելով, այսինքն անգիր գիտէ: Յաճախ աէրտէրին օգնում է, երբ տիրացու չէ լինում եկեղեցում. գրքի ո՛ր երեսը բաց է անում, առանց որ և է գթութութեան կարգում է, այբուբենի վրայ այնքան էլ մեծ ուշադրութիւն չէ դարձնում: Ամառուայ օրերում, երբ գիւղացիք իրանց ջաւերի ետեւից ընկած, օր ու գիշեր տան երես չեն

տեսնում, ցրտած դաշտերում ու սարերում, վարում են կամ հնձում, շատ ժամանակ առաւօտեան ժամին Տօնի ապէրն է լինում միակ ժամաւորը: Վար ու ցանքս, հունձ ու փունջ, կալ ու կուտ նրա համար երկրորդական, միմիայն անցաւոր կեանքի պէտքերին ծառայող բաներ են: Նա մինչև ծունր չը դնի եկեղեցում ու նրա յատակից չը համբուրի, մինչև տէրտէրին «օրհնեան, տէր» չ'ասի ու նշխարք ստանայ նրանից, գործի չի գնալ: Շատերն ասում են, որ Տօնի ապօր հէնց այդ ժամասիրութիւնն է պատճառ, որ ամեն տարի նրա բանը միշտ պակաս է լինում ու պակաս: Նրա դրացի Մուսունց Մնացականը, որը տարին մի անգամ հազիւ է ժամի շէմքը կտիւում, յաճախ ասում է Տօնի ապօրը՝ «Սըլընդ—ժամ, *) սըլընդ—ժամ: ատա, տնաչէնի տղայ, այնտեղ ոսկի են բաժանում: Կնա մի բրտնի, աշխատի, տափերը պոկի, որ Աստուած աղօթքդ լսի է»:

—Մնացական, —պատասխանում է նրան Տօնի ապէրը, —հոգիդ խեղճ ա. այդպէս մի ասիր. Աստուծու ահաւոր դատաստանի առաջին պատասխան կը տաս: Չէ, եկեղեցում ոսկի չեն բաժանում. այնտեղ ճշմարիտ հաւատացողների ու ջերմեւանդ աղօթողների վրայ Աստուծու պարգեւ ա թափւում:

—Բա այդ պարգեւից քեզ վրայ չի ընկնում, —հարցնում է Մնացականը, —թէ ընկել ա, ցոյց տուր տեսնեմ, ահր դնա տանջուի, չարչարուի մեզ պէս, որ վերեւից պարգեւ թափուի վրադ:

—Անիծուի սատանան, անիծուի սատանան, որը քո սրտում բուն ա դրել, —ասում է Տօնի ապէրը ու փէշերը թափ տալով հեռանում Մնացականից:

Տօնի ապօրը ձեռնտու չեն Մուսունց Մնացականի նկատողութիւնները:

Հերիք արօր համբերութիւնը երբ հասնում է իսպառ, նա էլ նոյնն է ասում Տօնի ապօրը, որը,

*) Գլորում ես ժամ:

գործից, աշխատանքից խուսափելով, միշտ գէպի ժամ է վազում:

—Ա՛ գլխամեռ, —ասում է նրան Հերիք արիւրը, — բաւական տ ժամ՝ գնալդ. մի օր էլ ժամից ընկի ու գնն մեր բաղչան ջրի. ահր անջուր մնալով չորանում ա նա:

—Աստուած կը ջրի, — պատասխանում է Տօնի ապէրը ու հանգիստ նստում սրահի տակի սաքուի վրայ դրին նայելու:

II

Գրին նայելը մի մեծ, շատ մեծ հմտութիւն է, որով ամենուրեք յայտնի է Տօնի ապէրը ու որի շնորհով նա իմաստունի հռչակ է վայելում: Գիրքը, որին նա նայում է, կոչւում է «Գիրք իմաստութեան»՝ նա մի ծիստած, հին, շատ հին ձեռագիր է, որը Տօնի տպէրը շատ մեծ խնամքով պահում է բազմաթիւ փարսաների մէջ փաթաթած: Գիշերները պառկելիս նա դնում է այդ գիրքը իր գլխի տակ, որպէս զի իմաստութիւնը նրա գլխից միշտ անպակաս լինի: Շատերն են հետաքրքրւում այդ գրքով, բայց նա ոչ ոքի ցոյց չէ տալիս, մինչեւ անգամ քահանաներին, վախենալով, մի գուցէ հրաշագործ գրքի մէջ գտնուող իմաստութեան անհուն պաշարից մի մասն էլ նրանց գլուխները ներս մուծի ու այդպիսով նրանց փտանդաւոր մրցողներ դարձնի: Ո՞ր ժամանակի գրուածք է «Գիրք իմաստութեանը», ո՞վ է գրել, — այդ յայտնի է միայն իրան Տօնի ապօրը: Մուսունց Մնացականը ասում է, որ նա «կռապաշտի աւետարան է», բայց նրան հաւատացող չը կայ: Նրա գլուխը մեռնի. նա յայտնի «փարմուէն») է: Մեծ կանայք հոգում են Մնացականի գլուխը, որ նա այնպիսի սուրբ գրքին այդպիսի սոս-

*) Զր հաւատացող, քննող, սկեպտիկ:

կալի անունն է տալիս: Երբ Տօնի ապօրը պատահում է մարդկանց մէջ խօսել, նա միշտ սկսում է այսպիսի դարձուածքով՝ «Գիրք իմաստութեանը» ասում՝ ա...»

Մեծ ու փոքր, լարած իրանց բոլոր ուշադրութիւնը, խորին լռութեամբ ու ակնածութեամբ լսում են Տօնի ապօրը, որի մենախօսութեան վերջ չի լինում: «Գիրք իմաստութեանը» գուշակութիւնների մի անսպառ աղբիւր է: Տօնի ապէրը նայում է նրան ու գուշակում ամենայն չարի ու բարիի դալուստ: Նրա հեղինակաւոր գուշակութիւնները ահագին իրարանցումներ են առաջ բերում: Յանկարծ Տօնի ապէրը գուշակում է, որ դարնանը սաստիկ կարկուտ է գալու: Իսկոյն ահագին դղրդոց ու սարսափ է ընկնում գիւղը:

—Ա՛ Մակ, լսել ես, ինչ են ասում:—խօսում են իրար հետ երկու գիւղացիներ:

—Չէ, ինչ են ասում, ա՛ Սադ, խէր լինի. ասա, տեսնեմ, ինչ կայ:

—Ասում են՝ Տօնի ապէրը գրին մոիկ ա արել ու ասել, որ այս տարի կարկուտ պիտի գայ:

—Տէր, մեղայ քեզ, Աստուած: Ադա՛, բա մենք էս քնն կանենք. ահր մեր արտերն ու այգիները կը ոչնչանան:

—Ո՞քնց պիտի անենք. կարկուտ ա, կը գայ ու ամեն բան ջարդ ու փշուր կ'անի: Այսուհետեւ Աստուած ա միայն մեր տէրը:

—Արա՛, երբ ա նա գրին մոիկ արել:

—Անցեալ կիրակի օրին:

—Բա էլ ուրիշ մոիկ անող չի եղել:

—Չէ, գլխամեռ Տօնի ապէրը գիրը ոչ մի մարդի նշանց չի տալիս: Ամա ասում են, որ էգուց տանուտէրը, տէր-Հանէսը ու մի քանի իշխաններ պէտք ա գնան Տօնի ապօր կուշտը ու նրան իրանց մօտ գրին մի լաւ մոիկ տալ տան իմանալու համար՝ կարկուտը թեթեւ լինելու, թէ սաստիկ:

Տանուտէրը իր այդ շքաւամբով հանգիսաւոր կեր-

պով այցելութեան է գնում Տօնի ապօր մօտ ու պաշտօնապէս ստուգում բերանից բերան անցնող չարագուշակ լուրերը:

Տօնի ապէրը խորին լրջութեամբ հսնում է փախսների միջից «Խմաստութեան դիրքը», թերթում գէս, թերթում գէն ու յայտնում ի լուր աշխարհի, որ կարկուտը սաստիկ է լինելու: Այն ժամանակ ընդհանուր իրարանցումն ու յուզմունքն էլ չափ ու սահման չեն ունենում: Դիմում են սրբերի օգնութեան ու նրանց բարեխօսութիւնը աղերսում:

Սկսում է թափօրների մի երկար շարք: Մորթըւում ու մաքրաղարգւում են բաղում մատաղներ: Խեղճ տէր-Հանէսն ու ինքը Տօնի ապէրն անդամ հանդստութիւն չեն ունենում գիշերօցերեկ: Մատաղների հէրիներից ու մորթիներից Տօնի ապէրն ևս աչքի ընկնող բաժին է ստանում: Այդ ընդհանուր սարսափի ժամանակ մինչև անդամ «փարմաէն» Մուսունց Մնացականը խոնարհւում է Տօնի ապօր հեղինակութեան առաջ ու նրա «Խմաստութեան դրբին» էլ «կռապաշտի աւետարան» չէ ասում:

III

Պատահում է, մի որ և է տան խօսում են աղջկան մարդի տալու, տղային պսակելու, կամ մի ուրիշ շատ նշանաւոր գործի մասին, և մինը տնեցիներից յանկարծ փռչում է:

—Պա՛հ հօ,—ասում է տան մեծը,—այս ո՞վ սաբրն *) եկաւ, այդ ինչո՞ւ հէնց էս սհաթիս սաբրն եկաւ. տեսնես էդ սաբրը խէր սփ, թէ չառ **):

—Գուցէ չառ ա,—ասում է մի ուրիշը,—այն ժամանակ մեր բռնած բանը շատ ծուռ կը դայ:

—Բա էս ո՞նց անենք:

*) Փռչողը: **) Բարի է, թէ չար. օգուտ է, թէ վնաս:

—Ուրիշ ճար չը կայ, պէտք ա գնալ Տօնի ապօրն ասել, որ գրին մտիկ անի: Նա իմաստուն մարդ ա. խէրն ու շառը իրարից նա լաւ կը ջսկի: Աշխարհիս իմաստութիւնը տեղովը նրան ա տուած:

Էլ առանց երկար դէս ու դէն ընկնելու գնում են Տօնի ապօր մօտ, գնում են նրա առաջին մի թունգի գինի ու մի աման շուշան: Տօնի ապէրն խօսոյն հասկանում է, թէ ինչումն է բանը:

—Տօնի ապէր,—ասում են նրան,—ահր այսօր մեր Մայանին մարգի տալու մասին խօսում էինք, յանկարծ մեր Ղուկասի երեխան սաբրն եկաւ. հիմա մնացել ենք շշկուած. տես մի, բեղ արքայութիւն լինի, էդ սաբրը խէր ա, թէ շառ:

Տօնի ապէրը խօսոյն տեղաշօրի ծալքի տակից հանում է «Գիրք իմաստութեանը», փափախը գլխից վերցնում ու գնում ծնկան տակին, հանում է գրպանից կաշուէ բռնոթամանը և սկսում ծանր ու բարակ նրա թելը յետ տալ: Մի—երկու անգամ բռնոթի է քաշում Տօնի ապէրը, մի բանի անգամ իրար յետեւից փռատում ու «խէր Աստուած» ասում ու յետոյ խօրին ակնածութեամբ սկսում «Իմաստութեան գրքի» փալատները յետ-յետ անել: Վերջապէս նա բանում է գիրքը, մի քիչ բաց ու խուփ է անում, այս երեսին է նայում, այն երեսին է նայում, աչքերը մի բանի անգամ պարանպարան է անում, վերեւ երկնքին է նայում, կարծես հրեշտակների հետ լինի խօսելիս, ցած գետնին է նայում, կարծես սատանային լինի հայածելիս. յանկարծ գիրքը կրկին ծածկում է ու ասում՝ «Գիրքը խէր ա ասում»:

Ուրախացած վերադառնում են տուն ու յայտնում՝ «Տօնի ապէրն ասաց, որ գիրը խէր ա տուան: Ուրախալի լուրը խօսոյն տարածւում է բոլոր ազգականների ու բարեկամների շրջանում. աջ ու ձախ հէնց այն է լսում, թէ՝ «Տօնի ապէրը գրին մտիկ ա արել, ասում ա՝ գիրը խէր ա ասում»: Նշանդրէքը կամ հարսանիքը

իրագործում է: Սիրահար երիտասարդները անշարժ ուրախանում են. Տօնի ապերը խէր է ասել, կարծում էր, թէ դա մի չնչին բան է, ինչ է: Ասենք շատ ու շատ սակաւ է պատահում, որ Տօնի ապերը գրին նայի ու տօի, թէ՛ այդ «սաբըը» այս ինչ զոյգի պսակադրութեան մասին «չառ» է ասում: Կարծեմ Տօնի ապերը այդպիսի բան իր օրում բոլորովին չի տրել, ահր նա իներ էլ մի ժամանակ ջահիլ-ջիւան տղայ է եղել, նա էլ է Հերիք աքօր՝ դեռ աղջիկ ժամանակ՝ նրա յետեւից շատ դէս ու դէն արել, շատ հալ ու մաշ եղել ու շատ տափերը պոկել: Նա շատ լաւ է հասկանում, թէ ինչ անաստուած բան է ջահիլ-ջիւան տղին իր սրտի մուրազից զրկելը, ուստի նրա հրաշադրօր «Փիք իմաստութեանը» նշանդրէքի ու հարսանիքի մասին միշտ «խէր» է խօսում: Հեշտ է, ինչ է «չառ» ասելը, եթէ այդպիսի բան նա անի, աղջիկը կը դնայ ու կը նետի իրան կամրջից ցած, երբ նրան իր սրտի ուղածին չեն տալ, աղան էլ կը դնայ ու երկրից երկիր կը կորչի իր սիրած էակից զրկուելուց յետոյ: Ո՞վ է իմանում, գուցէ իր մուրազը սրտում մեռնի. միթէ՞ Աստուած վեր կունի այդ Մի անգամ Տօնի ապերը, սատանայի դրդմամբ էր, ինչ էր, լաւ յայտնի չէ այդ, մի այդպիսի սխալ արեց, «չառ» ասեց: Հետեւանքն այն եղաւ, որ տասնութամեայ գեղեցկուհի եղունց Վարդին գնաց ու նետեց իրան կամրջից ցած ու այդպիսով այրուող սրտին հովութիւն գտաւ գետի ալիքների մէջ: Շատ արտասուք թափեցին նրա համար, շատ ցաւեցին, շատ տափերը պոկեցին: Տօնի ապերը երկու ձեռքով իր գլուխը ծեծեց, բայց սխալն ուղղել անկարելի էր արդէն: Վարդին մուրազը սրտում իր հետ միասին գերեզման տարաւ... «Անիծուի սատանան, անիծուի,—ասում է յաճախ Տօնի ապերը, մոռբերելով դժբախտ Վարդին,—խաբուեցի նղովեալից, թող Աստուած իները նա գլխին մի քար գցի: սրպէս զի աշ-

խարհս նրանից ազատուի. ամեն ցաւ ու չոռի, ամեն
գժբախտութեան պատճառ նա ա ու միմիայն նա»:

IV

Պատահում է, որ Տօնի ապէլը գրին հայում է ու
յայտնում, որ առաջիկայ տարին մուկ ու մորեխ են
գալու: Կայծակի արագութեամբ այդ սոսկալի լուրը
տարածւում է գիւղից գիւղ: Հեռու տեղերից գալիս
են ստուգելու սարսափելի լուրը ու գլուխները թա-
փահարելով վերադառնում են կրկին:

— Ագձ, Տօնի ապէլն ինչ ասեց,—հարցնում են
վերադարձողից:

— Ո՞նց թէ ինչ ասեց. էն ա էն ասեց, ինչ որ լսել
ենք էլի. չէ, մեր տները մեր գլխներին քանդուել են,
պրծել:

— Ո՞նց թէ քանդուել են, ինչ ես ասում:

— Էնհէնց են քանդուել, որ մուկն ու մորեխը ան-
պատճառ գալու են:

— Ագա քո կշտին գրին մտիկ տուէց:

— Հո՛ւ:

— Բա գիրն ինչ ասեց, մուկն ու մորեխը շատ կը
լինեն, թէ բիշ:

— Շատ կը լինեն. նրանց էլ ոչ տուտ ա լինելու,
ոչ սլուծախ:

— Պա՛հճճ, ճշմարիտ որ մեր տները քանդուելու
են: Բա էլ բան չասեց Տօնի ապէլը՞:

— Ասեց, շատ բան ասեց:

— Ի՞նչ ասեց:

— Ասեց՝ Աստուծու փէշը պինդ բռնեցէր ու էլ
բաց չը թողնէր, գիշեր-ցերեկ նրա անունը յիշեցէր,
նրա սրբերի միջնորդութիւնը խնդրեցէր, թափօրներ
կատարեցէր, մատաղներ մորթեցէր, ձեր վարդապետ-
ներին ու երէցներին չահեցէր, որ նրանք ջերմեռանդ

սրտով ձեզ համար աղօթեն, ու Աստուած էլ ձեր լաց ու կոծը լսի:

—Էդ առանց նրան էլ գիտենք, բա մի ուրիշ նոր բան չասեց գլխամեռը⁶:

— Հն, ասեց՝ հաց ամբար արէք, հաց:

Դիւղացիները սկսում են հաց ամբարել:

«Ախ, Տօնի ապէր, ան գլխամեռ,—ասում են շատերը,—եանի ինչ կը լինի, որ մի անգամ էլ էդ իմաստուն դրբիդ մօտիկ տաս ու ասես՝ լիւթիւն ու առատութիւն կը լինի. կերէք, խմեցէք, բէֆ արէք»,

Դէ խեղճ Տօնի ապէրը ճնց անի, գլխին ինչ հօղն ու ցեխը տայ. նա մեղաւոր է, որ դիրն այդպէս է ասում: Ո՞ւր է. եթէ սխալուի այդպիսի գէպքերում, ինքն էլ ուրախ կը լինի, ոչ խեղճ ժողովրդին կը վշտացնի և ոչ ինքը կը վշտանայ: Ամա ինչ կ'անես, որ իմաստուն մարդ է, չի սխալուում երբէք: Նա հօ առաջի անգամը չի գրին նայում, առաջի անգամը չի իմաստունների հետ բան բռնում, նրանց հետ զրուցում, այս բազմամեղ անցաւոր աշխարհի ցաւերի, չոռի, աղէտների ու մարդկանց սխալների, սոսկալի մեղքերի մասին նրանց՝ սքանչելագործ սուրբ իմաստունների հետ խորհրդակցում: Տաճարակ տարիներ է արդէն, ինչ իրանց սաքունն նստած բռնութի բաշխով, նա այդ դործով է զբաղուած ու մինչև մահն էլ նրանից ձեռք չի վերցնելու, ի հարկէ: Մի կողմ թողած «Դիրք իմաստութեանը», որ նա վաղուց է ջուր արել, խմել ու մարսել, նա «Պղնձայ քաղաք» ու «Խիկար իմաստուն» գրքերը սկզբից մինչև վերջը անգիր է իմանում: Նրա հետ մրցող, նրա առաջն առնող, նրա լեզուն կապող մինչև օրս չէ գտնուել. Տօնի ապէրը մի անզուգական իմաստուն է:

Տօնի ապօր վատահամբաւ գուշակութիւնները յուսահատութիւն են տարածում ժողովրդի մէջ: Վար ու ցանքս անողների ձեռքերը թուլանում են:

—Հէ՛հ՛ Ուսէփ, Ուսէփ,—լսում է յաճախ սարերում ու դաշտերում:

— Հէյ, — հեռուից ձայն է տալիս Ուսէփը, — ինչ կայ, Ջաքար, տաս, խէր լինի:

— Արտ, տ խելառ, — ասում է նրան Ջաքարը, — վարում եմ, ինչ անես. եկող տարին մկները հօքո հօրն ողորմի չեն տալու: Եղներդ խեղճ են. զուր մի չարչարիր դրանց. դու թանից դուրս թող ու գնա տուն հանգիստ քեզ համար քնի:

— Արտ, խի ինչ ա պատահել, — դարմայմամբ հարցնում է Ուսէփը,

— Արա, Տօնի տպէրը դրին մտիկ ա արել, ասում ա՝ եկող տարին մեկն ու մըբխ են գալու է, մեկն ու մըբխ:

— Պահօօ, — ասում է ծոծրակը քորելով Ուսէփը, — աղտ, Ջաքար, բա էս ոնց կ'անենք:

— Ո՞նց պիտի անենք, — պատասխանում է Ջաքարը, — էն ա կը գնանք տանը հանգիստ կը քնենք ու Աստուծու տուածից մի կերպ լոքով, շուշանով, թանով ու կարտօպլով եօլա կը գնանք: Մկների համար ինչու մենք տանջուենք, չարչարուենք, մենք կ'աշխատենք, իսկ նրանք ծվծուալով կ'ուտեն ու քէֆ կ'անեն: Մենք նրանց դէմ ինչ կարող ենք անել, մկան մեծաւոր էլա չը կայ, թէ գնանք նրան գանգատուենք:

Տանը բոլորովին պարապ նստելը մեծ աննամուսութիւն համարելով, Ուսէփը մաճը բաց չի թողնում ձեռքից ու շարունակում է իր վար ու ցանքար, ասելով՝ «Դէ բան չի կայ. ոչինչ, թող մկները գան. ինչ որ Աստուած ինձ կը տայ, կէսը թող նրանց լինի, կէսն ինձ: Պարապ տանը նստեմ, որ մեր կնիկը օրը տասը անգամ գլուխ հողի, չէ, ես էդհէնց աննամուս չեմ»:

«Հօ է» ասում Ուսէփը եղներին ու՝ «քչեցէք, ձեզ մատաղ» գիմում է հօտաղներին, բայց ոչ առաջուայ եռանդով: Տօնի տպօր գուշակութիւնը չլատում է նրանց ոյժերը. նա էլ նախկին արիաշան երկրագործ Քիքունց Ուսէփը չէ. որի խրոխտ ձայնը միշտ ահաբեկում էր հօտաղներին ու եղներին: «Ախ, տ գլխամեռ, — ասում է նա

Տօնի ապօր հասցէին:—քեզ ո՞վ էր խնդրում տարի այս ժամանակ էդ զահրիմար դրիդ մտիկ տաս ու մեզ սըրտաճաք ու սրտակոտոր անես, ա՛ մահը տանի բեզ»:

Պատահում է երբեմն, որ մի գեղեցիկ օր, Վարդափառից շատ առաջ, չարագուշակ լուր է տարածւում, թէ՛ Տօնի ապէրը դրին մտիկ է արել, ասում է, որ Վարդափառին սաստիկ անձրև է գալու: Իրարանցումն ընկնում է իսկոյն ջահիլ-ջհուլի մէջ: Խեղճ Տօնի ապօր գլխին էլ ի՞նչ անէ՞ծըներ տես, որ չը թափուեն, կ'տես, թէ նա ինքը լինի անձրև բերողը: Լաւ, Տօնի ապէրը մեղաւոր է, երբ «Ի՛րը իմաստովեանը» անձրև է ասում:

Ջրի ճանապարհին երկու մատաղահաս աղջկերանց մէջ տեղի է ունենում այսպիսի խօսակցութիւն.

—Աղջի, Սուլթան, Վարդափառին արբեշումի արխալուզդ պէտք ա հագնե՞ս, թէ չէ,—հարցնում է նրանցից մինը:

—Չէ, Մայտն,—պատասխանում է նրան խորին տխրութեամբ Սուլթանը.—մեր հանը չի թողնում, որ արխալուզս կարեմ, ասում ա՛ պահի, Սուրբ Խաչի համար կը կարես:

—Աղջի, ի՞նչու:

—Ի՛է ասում ա՛ Տօնի ապէրը դրին մտիկ է արել, Վարդափառին պէտք ա անձրևի դոյ, թո՛ւ ու թաց լինի, Դիմաց-տեղում պար եկող չի լինի. էլ արխալուզդ կարում ես, ի՞նչ անես:

—Հողեմ Տօնի ապօր գլուխը, —ասում է Մայանը բարկացած,—նրան ասող կտր, դրին մտիկ տուր, ա՛ անտէր լինի նրա գիրն իր գլխին: Եանի որ Վարդափառից ետը մտիկ անէր, ի՞նչ կը լինէր: Թո՛ղ մենք թրջուենք. դարձը նրան չեն տուել:

Պատահում են նոյն ճանապարհին երկու նորասի հարսներ:

—Աղջի, Սանդուխտ,—հարցնում է նրանցից մինը,

—Վարդափառի համար ի՞նչ ես կարում:

—Պի, աղջի, Շուշան, բա դու բան չես լսել:

—Խի, ի՞նչ կայ, ի՞նչ է պատահել:

—Էնա էնհէնց բան ա պատահել, որ Տօնի ապէրը գրին մտիկ ա արել, ասում ա՝ էս տարի Վարդավառին պէտք ա սաստիկ անձրև դայ: Բա ես էլ ինչու համար հոր շոր կարեմ. մեր նանն ասում ա՝ ուզիլ չի:

—Վույ, հողեմ ես Տօնի ապօր գլուխը. նրան ասող կար, թէ դու գրին մտիկ տուր,—ասում է զայրացած Շուշանը:

—Ասող էլ ա եղել, բա ի՞նչ ա,—պատասխանում է Սանդուխտը,—մէկէլ օրին Մուսունց Մայան աքիրը, երբ հարսն ու աղջիկը շատ զահլան տարել են, թէ՛ անան, մեղ համար էս առ, էն առ, ահր Վարդավառը մօտենում ա, գնացել ա մի թունդի գլինով Տօնի ապօր մօտ ու գրին մտիկ տալ տուել, թէ տեսնի՝ Վարդավառին գիրն անձրև ա ասում, թէ արև: Տօնի ապէրը գրին մտիկ ա տուել ու ասել՝ «անձրև ա ասում»: Մայան աքիրը վերադառնում ա տուն ու ասում՝ բարկացած. «հողեմ գլուխներդ, քիչ ա մնում, թէ միսս ուտէ՞ր՝ անան, էս ան, անան, էն ան. էլ առնեմ ինչի համար, երբ գիրը Վարդավառին անձրև, ցեխ, թոռ ու թաց ա ասում»: Խաբարն իսկոյն մեր թաղում տա՛րածուեց: Մոնթունց Անայի աքիրը ու Սրնանանց Գեօղալ աքիրը, երբ էդ լսեցին, գնացին Տօնի ապօր մօտ, թէ տեսնեն՝ անձրևը բարակ ա ասում, թէ սաստիկ: Տօնի ապէրը գրին մին էլ է մտիկ տալիս ու ասում՝ սաստիկ:

—Վույ, հողեմ Տօնի ապօր գլուխը, հողեմ,—ասում է Շուշանը,—բանի-բանի անդամի ա նա Վարդավառը մեր գլխներին հարամ արել. պակասն էս տարի ա ուզում թամամի:

V

Տօնի ապօր իմաստութիւնը հասնում է այնպիսի զօրաւոր չափերի, որ նա կարողանում է գուշակել կարկուտը ու նոյն իսկ առնել նրա առաջը: Ինչպէս է այդ սքանչելագործութիւնը յաջողւում նրան. ինչու՞ն է նրա ոյժն ու զօրութիւնը, որ կարողանում է մռայլ մահաբեր ամպերը քշել երկնակամարի երեսից ու, ինչպէս ինքն է ասում, նետել նրանց տարտարօսի խորքերը, չալրաել նրանց կրկին այն ահաւոր վիշապի փորը, որտեղից դուրս են դալիս նրանք Աստուծու ստեղծած սքանչելատես աշխարհը դժոխք դարձնելու համար: Այդ բանի գաղտնիքը պէտք է փնտռել «Իմաստութեան գրքի» էջերում, որոնք մատչելի են միմիայն Տօնի ապօրը: Կարկուտի առաջն առնելու համար Տօնի ապէրը «գիր է անում», մի թղթի կտորի վրայ նա գրում է աղօթքների մի երկար շարք և ահա այդ աղօթքներով, մեծ մասամբ իր շարադրած, կարկտաբեր ամպերը ենթարկում է իրան ու նրանց դէս ու դէն քշում ու վերջ ի վերջոյ նետում ասարտարօսի ամենահեռաւոր խորքերը: Այդ հրաշագործ թուղթը կոչւում է «Կարկտագիր», որը, ինչպէս հաւատացնում է Տօնի ապէրը, գերբնական ոյժ ունի իր մէջ: Կարկտագիրը Տօնի ապէրը գրում է ուլի արիւնով, եթէ գրուի նա սովորական թանաքով, նրա մէջ այն ժամանակ ոչ մի զօրութիւն չէ լինիլ: Այդ ուլը պէտք է լինի արու ու սեւ. ճակատին նա պէտք է ունենայ մի հատ սպիտակ մեծ բիծ. առաջի երկու ոտների սրունքներն ու յետեւի մի ոտի ազդրը պէտք է ամբողջովին սպիտակ լինեն: Այդպիսի նշաններով ուլը, որից ոչ մի նշան չը պէտք է մի մազաչափ անգամ պակաս լինի, միշտ մեծ դժուարութեամբ է գտնւում, և երբ նա գտնւում է, Տօնի ապէրը ուրախանում է շատ ու յայտնում, որ նրա արիւնով գրած կարկտագիրը զօրաւոր կը լինի:

Ուլը փնտռում է գիւղական տանուաւորի հրամանով ու նուիրւում է Տօնի ապօրը հասարակութեան կողմից, բանի որ կարկտագիրը նա գրում է ամբողջ գիւղի համար, նրանով են պահպանւում բոլորի արտերն ու այգիները: Տօնի ապէրը նախ թաթախւում է ուլի տնարատ մնով ու յետոյ սկսում, երկար ու բարակ բըռնաթի բաշելով ու փռնալով, կաղմել փրկարար կարկտագիրը, որի վրայ երբեմն նա դործ է դնում ամբողջ օրեր: Ասենք Կաթնաշէնում միմիայն Տօնի ապէրը չէ այդ հրաշագործութեամբ զբաղւում: Թէ և նա անգուգական է ու անպայման անյաղթելի, բայց ունի ուլի բնորոշ մի սիրահար երկու մրցող հակառակորդներ: Ումանց Ակուփն ու Թոսանց Պօղոսն էլ են կարկըալի գէմ «գիր անում», բայց նրանց կաղմած կարկտագիրը ախբան էլ զօրաւոր չէ. յաճախ զուրկ է լինում նոյն իսկ որ և է ոյժից, բանի որ նրանք Տօնի ապօր չափ իմաստութիւն չունեն. նրանք անփորձ աշակերտներ են, իսկ Տօնի ապէրը հմուտ, փորձուած ու խիստ բանիմաց վարժապետ է: Տօնի ապէրն ասում է, որ եթէ նշա կաղմած կարկտագիրը տանես մի բարձր սարի գագաթում մի քարի տակ դնես, այն ժամանակ կարող ես սիրտդ խաղաղ բո գործին գնալ ու գիշերներ էլ հանգիստ քո տանը քնել, լաւ իմանալով, որ կարկուտը ոչ արտիգ կը գիպչի, ոչ այգուգ:

Մի տարի, լաւ չեմ յիշում, երբ էր այդ, Տօնի ապէրը խաղողի այգիների համար յատուկ կարկտագիր էր կաղմել ու տուել գիւղի ամենամեծ այգետէր Վարդանին, որ նա տանի այգիների գլխի ամենաբարձր սարի գագաթում թաղի: Վարդանը տաւնց երկար ու բարակ մոտձելու փրկարար կարկտագիրը տարել էր ու իր այգու գլխի բլրի գագաթում թաղել: Հէնց այդ տարի Վարդաւառի պատում սարսափելի կարկուտ եկաւ ու ամեն ինչ աւերեց, բարուքանդ արեց: Այգիներում կանաչ տերեւ չը մնաց, վաղները պոկուեցին իսպառ, կատարուեց մի զարմանալի հրաշք—Վարդանի

այդին մնաց բոլորովին անմնաս. կարծես կարկտաքեր ահարկու ամպերը նրա գոյութիւնը զիտմամբ մոռացած լինէին: Այդ դէպքը մեծ հարուած էր Տօնի ապօր ժողովրդականութեան ու անսխալականութեան համար: Նրանից սկսեցին բացարձակ գանգատուել: Տօնի ապօրը միշտ կուրօրէն հաւատացող ժողովրդի անբաւականութիւնն ու հիասթափութիւնը մեծ էին: Յուզուած կրքերը հանդստայներու համար տանուտէրը ստիպուած եղաւ վրդովել Տօնի ապօր հանդստութիւնը, կանչել նրան հրապարակ ու բացատրութիւն պահանջել նրանից:

—Ա՛ հայ, պառաւել ես, ի՞նչ ա,—դարձաւ նրան տանուտէրը,—կարկտաքիրդ ինչու ա իր առաջուայ զօրութիւնը կորցրել:

—Ա՛ սրբի,—ասաց նրան Տօնի ապէրը,—դու իմ թշնամիների խօսքերին ի՞նչու ես հաւատում: Քեզ երեւի Ումանց Ակուփն ու Թոսանց Պօղոսն են ասել, որ դու ինձ կանչես չէնամէջ ու հասարակութեան առաջ, քո իշխանների ու գատաւորների մօտ, խայտառակես, անպատուես ու անուշա կոտրես: Իմ կարկտաքիրը ամենակարող ա ու ամենահզօր: Ես միթէ մեղաւոր եմ, որ իմ կարկտաքիրը Վարդանը առանց քեզ հարցնելու տարել ա ու իր բազի գլխի թումբի գաղաթում թաղել: Նա ինչու չէր տանում բազերի գլխի ամենաբարձր սարի՝ Թաւրի գաղաթում՝ թաղում, որ կարկտաքրի հովանաւորութիւնը բոլոր բազերի վրայ տարածուի, այլ ոչ թէ միայն իր բազի: Ի՞նչու չէիր դու ինքդ, տանուտէրդ, մի քանի իշխան մարդկանց հետ միասին տանում քո ձեռքով իմ կարկտաքիրը Թաւրի գաղաթում թաղում, այլ թողնում էիր, որ մի մասնաւոր մարդ տանի ու իր քէֆի ուղածն ու իր խելքի կտրածն անի:

Տանուտէրն ու ժողովուրդը համոզւում են, որ մեղաւորը Տօնի ապէրը չէ: Իշխանները հրապարակով խօստանում են նրան միւս անգամ տանուտէրի հետ միասին անձամբ տանել Տօնի ապօր կարկտաքիրը Թաւրի

գազաթում թաղել, միայն թէ Տօնի ապէրը շարունակի միշտ «Իմաստութեան գրքի» անսպառ բարիքները նախկին աստութեամբ թափել գիւղի ու ժողովրդի վրայ:

Տօնի ապէրը, հպարտութեամբ քայլելով, վերագառնում է տուն, ծաղապատիկ նստում սաքունն ու բաց անում «Գիրք Իմաստութեանը»: Նա մինչև օրս էլ շարունակում է իր գուշակութիւններն ու այդպիսով փրկում կաթնաչէնցիներին զանազան պատուհասներից ու չար փորձանքներից...

ՍՏ. ՏԷՐ-ԱԻԵՏԻՔԵԱՆ

ՄՈՐԳԱՆԻ ԵՒ ՇԵՑԼԻ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ԳԻՒՏԵՐԸ

Ոչ մի գիտութիւն 19-րդ դարի վերջերում այնպիսի հսկայական քայլերով չէ առաջագլմել, ինչպէս որ պատմութիւնը, նա մանաւանդ նրա այն մասը, որի ուսումնասիրութեան գլխաւոր նիւթը կազմում են հին դարի, գլխաւորապէս Արեւելքի ազգերը:

Մինչև անցեալ դարի երկրորդ կէսը Արեւելքի քաղաքակրթ ազգերի պատմութիւնը թաղուած էր խորին մթութեան և թանձր մշուշի մէջ: Նրանք մեզ միայն անուններով և մի շարք առասպելական աւանդութիւններով էին յայտնի, իսկ այժմ, ներկայ դարում, մի քանի աշխարհահռչակ հնագէտների և պատմաբանների ջանքիւ վերայիշեալ ազգերի պատմութիւնը, կարելի է ասել, մեզ համար բաւական պարզուել ու լուսաբանուել է:

Չափազանցութիւն չի լինի, ասել, որ անցեալ դարի երկրորդ կիսում հնագրական պատմութիւնն աւելի մեծ չափով և շուտով է ուսումնասիրուել, քան թէ մարդկութեան նորագոյն պատմութիւնը, եթէ ի նկատի ունենանք գիտնական այն խաչար նուաճումները, որ հնագիտութիւնն է արել մարդկութեան նախնական պատմութեան վերաբերեալ: Եւ յիշելի պատմական ինչպիսի տեղեկութիւններ ունէինք մենք անցեալ դարի սկզբում կլասիկական արեւելքի, մի ժամանակ պատկառելի քաղաքակրթութեան տէր եգիպտացիների, ասորեստացիների, բաբելացիների, նախահայերի, պարսիկների և ուրիշ շատ ազգերի մասին: Շատ շատ մի քանի սեպածն արձանագրութիւններ և պատմական մի քանի երկրորդական յիշատակաբաններ. իսկ այժմ մեզ համար պարզուել է նրանց ոչ միայն քաղաքական, այլև, որ ամենազլխաւորն է, կուլտուրական պատմութեան գրեթէ մեծ մասը: Մեզ համար այժմ բաւական լուսաբանուած է այն հանդամանքը, թէ Արեւելքի պատմական

Նշանաւոր ազգերը ինչպիսի կեանք են վարել, քաղաքակրթական և կուլտուրական ինչպիսի զարգացման են հասել, իսկ մեղանից մօտ 50 տարի առաջ, այդ ազգերի պատմութիւնը ոչ այլ ինչ էր ներկայացնում, եթէ ոչ իրանց նշանաւոր թագաւորները կամ առաջնորդների չոր ու ցամաք սնունդների և թուականների մի ողորմելի ժողովածու:

Բայց արեւելեան ազգերի հնագիտութեան և պատմութեան համար ոչ մի հնադէտի գիւտերը 19-րդ դարի վերջում այնպէս խոշոր և դարազուտ կազմող չեն եղել, ինչպէս որ վերջին տարիներս ֆրանսիական երկու գիտնականների՝ Մորգանի և Շէյլի հնագիտական գիւտերը:

Այդ երկու գիտնականներին էր յաջողուել վերջապէս գտնել մարդկութեան նախնական պատմութեան ամենահին արխիւները և նրա ստեղծած կուլտուրայի ամենանախնական օրօրանքներից մէկը: Մորգանին և Շէյլին էր վերապահուած ուսումնասիրելու հին դարի համաշխարհային քաղաքներից մէկը, որ վերին աստիճանի ծաղկած դրութեան մէջ էր գտնուում մեղանից մօտ 6,000 տարի առաջ: Նրանք կարողացել են վերջին հինգ տարուայ ընթացքում մեզ համար բոլորովին բաց անել այն դրականական ազգի քոչարկուած պատմութիւնը, որի գոյութեան մասին անգամ պատմաբանները ամենաազգաստ և կըցկոտուր տեղեկութիւններ էլ չունէին: Այդ ազգը ելամացիներն են, որոնք դեռ մօտ 4,000 տարի (Ք. ծ. ա.) այնքան ծաղկած դրութեան մէջ էին գտնուում, որ ունէին 1,000 յօդուածներից բաղկացած գրաւոր օրէնսդրութիւն և իրանց ժամանակին կաղմում էին արեւելեական տիրապետութեան ձգտող և ազա՛ն Բաբելոնացիների ամենալուսնային մրցակիցները և որոնք զգալի կերպով վնասեցին Բաբելոնի քաղաքական ազդեցութիւնը նրա հարեան ազգերի վերաբերմամբ: Մորգանի և Շէյլի չնորհիւ այժմ մեզ համար բոլորովին պարզուել է էլամի տէրութեան թագաւորական մայրաքաղաք Սուզայի կամ Շուխանի պատմութիւնը, որ լուսարանում է մարդկութեան ամենահին պատմութիւնը ընդհանրապէս և նախահայերի պատմութիւնը մասնաւորապէս և որի մասին մենք ցանկանում ենք ներկայ յօդուածով մի ամփոփ տեղեկութիւն տալ:

Մորգանի և Շէյլի հնագիտական հռչակաւոր գիւտերի պատիւը մասամբ էլ պատկանում է ֆրանսիական հասարակապետութեանը, որը պետական գանձարանից նիւթական ահագին միջոցներ տուեց վերոյիշեալ գիտնականներին էլամի տէրութեան ուսումնասիրութեամբ զբաղուելու: Դեռ 10 տարի սրանից առաջ ֆրանսիական տէրութիւնը պարսից Նասր-էդդին

Շահից արտօնութիւն ստացաւ Պարսկաստանում հնազդիտական պեղումներ կազմակերպելու, այն պայմանով, որ գտնուած հր-նութիւնների կէսը Ֆրանսիան ստանայ, իսկ մնացած կէսը՝ Պարսկաստանը: Այդ պայմանը նորոգուեց ու հաստատուեց ան-յեալ տարի, երբ Մուղաֆֆէր-էֆէին Շահը ֆրանսիական հա-սարակապետութեան նախագահի հիւրն էր Պարիզում:

Հինգ տարի սրտնից առաջ ֆրանսիական կառավարու-թիւնը պատուիրեց դը-Մորզան նշանաւոր գիտնականին մի մեծ էկսպեդիցիա կազմակերպել՝ Սուլթան հնազդիտական տեսակէտից ուսումնասիրելու Վերոյիշեալ գիտնականն էլ մօտ 5 տարի Սուլթանում հնազդիտական շատ յաջող պեղումներ կատարեց, ու-րոնց արդիւնքները այժմ ի ցոյց են դրուած Պարիզի «Grand- Palais»-ում:

19-րդ դարի սկզբում հնազդիտութիւնը Սուլթանի մասին պատմական այն տեղեկութիւնները միայն ունէր, ինչ որ նրա մասին հաղորդել են Աստուածաշունչը, պատմութեան հայր Հերոտոզը և մի քանի ուրիշ յոյն պատմաբաններ: Անգլիացի Վիլեամս յայտնի գիտնականը մի ուրիշ հնադէտի ընկերակցու-թեամբ Սուլթանի փլատակների մէջ մի շարք պեղումներ կա-տարեց և կարողացաւ գտնել այն զահլիճը, ուր գտնուում էր պարսից Դարեհ թագաւորի յաջորդների ակթոը, յետոյ «Այա-դանէ» կոչուած շինութիւնը և մի քանի սեպագծեւ արձանա-զըրութիւններ, որոնց կարգալու բանալին այն ժամանակ դեռ ևս չէր գտնուած: Բայց երբ Ասորեստանի մայրաքաղաք Նի-նուէումն էլ բաւական արձանազրութիւններ երևան եկան, այն ժամանակ միայն յաջողուեց Վիլեամսի շնորհիւ գտնուած ար-ձանազրութիւնների թարգմանութիւնը: Այնտեղ, ի միջի պլոյց, գտնուեց և Ասորեստանի թագաւոր Ասսուրբանիպալի մի ար-ձանազրութիւնը, որի մէջ նա իր՝ դէպի Էլամը կատարած մի ար-շաւանքի մասին հետեւեալն է պատմում. «Ես մտայ Էլամացի-ների մեծ աստուածների և պատգամների սրբափայր համարուած Շուխան (Սուզա) մեծ քաղաքը, Ասսուրի և Իշտարի կամքով նուաճեցի նրա պալատները և այնտեղ հպարտութեամբ հանգըս-տացայ»: Էլամի տէրութեանը վերաբերող պատմական այս տեղեկութիւնը պատկանում է 655 թ. (Ք. ծ. ա.): Մեղանից 20 տարի առաջ Ֆրանսիան գիտնական մի ուրիշ էկսպեդիցիա ուղարկեց Սուզա, որ աւելի շուտ գեղարուեստական, քան թէ պատմական արժէք ունեցող շատ գտններ գտաւ այնտեղ և իր հետ բերեց Ֆրանսիա: Վերջին բոլոր իրերը պատկանում են Էլամի տէրութեան վերջին հաղարամեակին (Ք. ծ. ա.):

Մորզանը աւելի խոր և սխտեմաաիկ պեղումներ կատա-

րեց մի և նոյն տեղում: Նա հասաւ մինչև 25 մետր գետնի խորքին և պատմական բազմաթիւ յիշատակարաններ գտաւ: Նա աշխատեցնում էր մի քանի հարիւր բանուորներ Սուզայի այն բլրի վրայ, ուր մի ժամանակ ակրոպոլիսը կամ միջնաբերդն էր գտնուում և որի ստորոտում «թագաւորների թագաւոր»-ի պալատներն էին շինուած, բայց յետոյ զրաւք Աղէքսանդր Մեծի շնորհիւ աւերակների մի կոյտ դարձան: Յոյները այդ միջնաբերդից էին կողոպտել Դարեհի և Կոլումանի դանձնորը և Յունաստան տարել: Բայց վերոյիշեալ տիրապետողների անունները պատկանում են էլամի պատմութեան վերջին կամ նորագոյն շրջանին: Մորզանի չորհիւ միայն մենք այժմ հնաբաւորութիւն ենք ստանում զետ մի քանի հազար տարիներ էլ յետ գնալ և տեղեկութիւն ստանալ էլամի բազմաթիւ զօրեղ, իմաստուն թագաւորների մասին, որոնք իրանց ժամանակի և ժողովրդի համար գուցէ աւելի նշանաւոր էին, քան Դարեհը կամ Աղէքսանդր Մակեդոնացին:

Եթէ Մորզանին է պատկանում այն գլխաւոր ծառայութիւնը, որ նա Սուզայի աւերակների տակից ահագին չորչորանքով և մեծ զգուշութեամբ հանել է տուել բազմաթիւ քարեայ ու բրոնզէ կոթողներ, տախտակներ, ամանեղէններ, կաւեայ ու բրոնզէ կահ կարասիներ, դռնիկեան կրօնաւոր Շէյլըն էլ իր կողմից զբանց վրայ փորագրուած բազմաթիւ արձանագրութիւնները ամրողջապէս և լրիւ թարգմանել է: Նա գիտակօն տեսակէտից աւելի հեղինակաւոր մասնակցողն է և զել էկզպեդիցիային և մենք միայն նրան ենք պարտական, որ էլամի պատմութիւնը լուսաբանուում է մինչև 4,000 և աւելի տարիներ Ք. ծ. ա., այն ինչ մինչև այժմ այդ պատմութիւնը մեզ յայտնի էր մինչև 6-րդ դարը (Ք. ծ. ա.): Շէյլն առաջին անգամ հաստատեց, որ 4,000 տարի (Ք. ծ. ա.) Սուզան կոչւում էր Պարազա, ուր ապրում էին Անյան կամ Անխան ընդհանուր անունը կրող մի քանի ցեղեր: Նա առաջին անգամ կարգաց կաւեայ աղիւսների վրայ փորագրուած մի քանի սեպածեւ արձանագրութիւններ, որոնք աւելի քան 6,000 տարուայ հնութիւն ունեն և մեզ տանում են մինչև սեպածեւ գրերի ծագումը: Այդ ամենահին պատմական զոկումենտները, որոնք գլխաւորապէս ներկայացնում են այն ժամանակուայ վաճառականների առեւտրական մասնաւոր հաշիւները, հիմք են տալիս Շէյլին կարծելու, որ սեպածեւ գիրը առաջին անգամ Սուզայում է սկիզբն առել, և բացի զբանից Սուզան Բաբելոնացի նշանաւոր քաղաքակրթութեան ծննդավայրն է:

Այժմ համառօտ կերպով ծանօթանանք Սուզայի վաւերա-

կան պատմութեան այն գլխաւոր շրջանների հետ, որոնք Շէյ-լի գիտնական ծառայութեան ջնորհիւ բոլորովին հաստատուել են: 4,000—3,000 թուականների (Ք. ծ. ա.) մէջ իշխող Բաբելոնի թագաւոր Մանիսթուզուն իր տէրութիւնն ընդարձակեց մինչեւ Պարսից ծոցը և ի միջի ալլոց աիրեց և Սուզային: Հէնց այդ էպոխային պատկանող մի օրելիակ է գտնուել, սեպածեւ արձանագրութիւններով զարդարուած, որոնք մեզ տեղեկութիւն են տալիս այդ ժամանակ երկրում գոյութիւն ունեցող մի մեծ առեւտրական ընկերութեան և նրա սոցիալական օրէնսդրութեան մասին: Այդ արձանագրութիւններից իմանում ենք, որ ընկերութեանը մասնակցել է նաև թագաւորը, և որ բաժնետէրերը մարդասէր վարմունք են ունեցել զէպի իրանց ծառայողները՝ նրանց անունը, հագուստ և ոտնիկ տալու վերաբերմամբ: Պարզուած է, որ այն ժամանակ տէրութեան սոցիալական օրէնսդրութիւնը առեւտրական ընկերութիւններին թոյլ չէր տալիս շահագործել իրանց ծառայողներին և խստիւ պատուիրում էր վերջիններիս աշխատանքը մարդասիրաբար վարձատրել: Բաբելոնացի թագաւոր Նարամ-Սինի ժամանակից (մօտ 3,850 ա. Ք. ծ. ա.) Սուզայում գտնուել է մի յաղթական կամար, որի վրայ գտնուած սեպածեւ արձանագրութիւնները մեզ ծանօթացնում են երկրի պատմութեան հետ չորրորդ հազարամեակում (Ք. ծ. ա.): Բաբելոնիները մի արշաւանքի ժամանակ այդ կամարը տարել էին իրանց հետ Էլամից, մինչև որ Էլամի թագաւոր Շուգրուք-Նաքքունգէին յաջողուեց այդ աւարը գերութիւնից ազատել 1,100 թ. (Ք. ծ. ա.) և տանել Սուզա՝ Մորգանի և Շէյլի Սուզայում գտած հնութիւնների մի զգալի մասը կապուած է Էլամի վերոյիշեալ թագաւորի անունին հետ, որովհետեւ ինչպէս Շուգրուքն է ասում, մի արձանագրութեան մէջ, ինքը շատ էր սիրում արձանագրութիւններ ժողովել և ղետեղել իր տէրութեան թանգարաններում: Դրա համար էլ Շէյլ գիտնականը այդ թագաւորին համարում է պատմաբանների իսկական հայրը:

Այդ էպոխայից ի վեր Էլամն իր հարեւան Ուր երկրի թագաւորների վասալական երկրներից մէկն էր և այնտեղից ուղարկուած իշխանները Սուզայի համար կուսակալների դեր էին կատարում: Շէյլին ի միջի ալլոց յաջողուել է լրիւ կերպով կարգել և թարգմանել վերոյիշեալ իշխանների թողած արձանագրութիւնների մի ումբողջ շարքը, որ կաղմում է մօտ 1,000 տարուայ պատմութիւն: Այդ իշխաններից ամենանշանաւորն էր Շուշինակը, որ Սուզայում բաղմաթիւ փառաւոր արձաններ կանգնեցրեց և շինել տուեց հին գտրի շատ յայտնի Սիդուրի

չբանցքը: Այդ ժամանակից երկւան եկած սեպածեւ արձանագրութիւններին նայելով, Սուղայի աղգաբնակութիւնը բաղկացած էր երկու գլխաւոր ցեղերից՝ սեմիտներից և անցանիտներից: Աստուածաշունչի ասելով էլամը Սեմի ամենամեծ որդին էր, բայց շատ հաւանական է ենթագրել, որ անցանիտներն էլամում աւելի վաղուց գոյութիւն ունէին, քան թէ սեմիտները:

2,280 թ. (Ք. ծ. ա.) Քուդուր-Նաքքունգէ մեծ իշխանի ժամանակ, որի մասին Ասորեստանի Աստուրլանիպալ թագաւորն էլ է խօսում—չը նայելով որ նա նրանից 1,635 տարի յետոյ է կառավարել—էլամը թօթափեց օտարի տիրապետութեան ծանր լուծը և քաղաքական անկախութիւն ձեռք բերեց: Էլամը իր քաղաքական գերիշխանութեանն ենթարկեց մինչև անգամ Բաբելոնի թագաւորին և այդ ժամանակ Սուղան դարձաւ. էլամի ամբողջ տէրութեան թէ քաղաքական և թէ մտաւոր կենտրոնը: Վերոյիշեալ տէրութեան սահմանները տարածւում էին մինչև Միջերկրական ծովը: Բայց 2,000 թ. Բաբելոնն երկար կռիւներից յետոյ կրկին ձեռք բերեց քաղաքական գերիշխանութիւն: Այդ բանի մասին մեզ տեղեկութիւն է տալիս Մորգանի չնորհիւ Սուղայում գտնուած արձանագրութիւններից մէկը, որի մէջ պատմական այդ փաստի մասին խօսում է Բաբելոնի Քամմուրաբի թագաւորը: Բացի դրանից այդ մի և նոյն թագաւորին է պատկանում և Մորգանի գտած մի տախտակը, որի վրայ Քամմուրաբի թագաւորի հրամանով փորագրուած է երկրի համար պարտադիր այն փառաւոր օրէնսդրութիւնը կամ կողեկսը, որի մասին մենք խօսեցինք վերևում: Այդ կողեկսի չնորհիւ մենք ծանօթանում ենք էլամի ժամանակակից ժողովրդական սովորութիւնների և բարքերի հետ: Շէյլըն ամենայն իրաւամբ կարծում է, որ օրէնքների այդ կողեկսը տիեզերական պատմութեան ամենանշանաւոր պատմական յիշատակներից մէկն է կազմում, Այդ կողեկսը մեզ այնպէս անմիաս է հասել, որ նրա իւրաքանչիւր գիրը շատ պարզ կերպով որոշւում և կարդացւում է: Նրա իւրաքանչիւր յօդուած այնպէս պարզ, ամփոփ և տրամաբանօրէն է զրուած, որ մենք, կարծես թէ, մի ժամանակակից տէրութեան օրէնքների ժողովածու լինի: Այդտեղ մանրամասն կերպով վճռուած և որոշուած են տէրունական դատաւորների, պաշտօնեաների և հպատակների պարտականութիւնները, հողերի, արօտատեղիների և պարտէզների կապալով տալու պայմանները, սահմանուած են մարդկանց և անասունների վերաբերմամբ գործած ոճրագործութիւնների, զոդութեան և խաբեւայութեան պատիժները,

որոշուած են ստրուկներին, կենդանիներին և զիւղստնտեսական գործիքներին վարձով տալու. սլայմանները, ի նկատի են առնուած առեւտրին, ամուսնութեան, սեպհականութեան և կանանց դրութեան վերաբերեալ օրէնքները: Կողեկը բաղկացած է 1,000 պարագրաֆներից, որոնք միմեանցից առանձին առանձին գծերով բաժանուած են:

Այդ օրէնսդրութիւնը ներկայացնում է իր ժամանակի քաղաքական և բարոյական աշխարհայեցողութիւնը: Ահա օրինակի համար այս ժողովածուից մի քանի յօդուածների թարգմանութիւնը զանազան յանցանքների մասին:

«Եթէ մի որեւէ անհատի տանը հրդեհ ծագի և մէկ մարդ գնալ այդ հրդեհը հանդիմանալու և եթէ այնտեղ ի միջի այլոց մի բան զողանայ, այդ ժամանակ այդ զողը պէտք է հրդեհի մէջ ձգուի»:

«Եթէ մի որ և է ամուսին վաւերական և կնքուած դոկումենտներով կնոջը կտակել է իր տունը, գարտն ու պարտէզն, այն ժամանակ որդիներն իրատեւք չունեն դրա համար վիճել իրանց մօր հետ: Մօրիցն է կախուած իր ժառանգութիւնը թողնել որդիներինց նրան, որին ինքը գերադասում է»:

«Եթէ մէկը առանց վկայի կամ պայմանադրի մի ուրիշի մօտ առնող է գնում և ապագայում այդ մարդկանց մէջ թիւրմացութեան պատճառով վիճ է սկսում, այդ դէպքում առնող յանձնորդ իրատեւք չունի դատարանի դիմելու»:

«Եթէ մէկը առանց թոյլտւութիւն ստանալու սեփականատիրոջից նրա պարտիզի ծառը կտրում է, այդ դէպքում նա պարտաւոր է կէս արծաթ տուգանք վճարել»:

«Եթէ մէկը մի ուրիշ մարդուց մի եզն է վարձել և իր վատ վարմունքի շնորհիւ նրան սպանել է, այն ժամանակ նրա վախարէն պարտաւոր է մի եզն տալ սեփականատիրոջը. իսկ եթէ եզան մի աչքն է հանել կամ վնասել, այն ժամանակ նա պէտք է տիրոջը եզան արժէքի կէսը վճարի»:

«Եթէ որեւէ մէկը մի ուրիշ մարդու տան պատը ծակել է զողութիւն անելու նպատակով, այդ դէպքում զողը պէտք է սպանուի և պատի ծակի մօտ դետնում թաղուի» և այլն:

Վերոյիշեալ կողեկիսի զանազան վճիռների շնորհիւ մենք հնարաւորութիւն ենք ստանում այն ժամանակուայ էլրամացիների մասնաւոր և քաղաքական կեանքի հետ ծանօթանալու և նրա մասին պարզ գաղափար կազմելու: Մորգանի շնորհիւ գտնուած շատ հնութիւնների վրայ կարգացում են և մասնաւոր մարդկանց փոխադարձ յարաբերութիւնները որոշող պայմանները:

1,800 թ. (Ք. ծ. ա.) Սուղան Բարեւոյնից նորից աղատուեց և քաղաքական անկախութիւն ստացաւ, իսկ Բուսմանուսմանայի և նրա որդի ու յաջորդ Ունթաշ-Գալի թագաւորների ժա-

մանակ նոյն իսկ աշխարհակալական արչաւանքներ կազմակերպեց դէպի իր հարեւան երկիրները: Ինչպէս մի անգամ էլ յիշեցինք, էլամի ամենանշանաւոր թագաւորն էր Շուգրուք-նաք-քուդէն, որ Սուզան, եթէ կարելի է ասել, բաբելոնական մի իսկական արխիւ դարձրեց: Նա նորոգեց այն բոլոր տաճարները, որոնք իրանից մօտ 2,000 սարի առաջ զարդարում էին Սուզան: Նա վերին աստիճանի համեստ իշխող է եղել, ապացոյց՝ որ նա իր թողած արձանագրութիւններում մեծ յարգանքով և պատկառանքով է խօսում և յիշում իր նախորդ թագաւորների անուններն ու գործերը: Այդ արձանագրութիւնների շնորհիւ մենք կարողանում ենք էլամի պատմութեան աւելի խորքը թափանցելու: Որովհետեւ վերոյիշեալ թագաւորի ժամանակ էլամում տիրապետող ու պետական լեզուն սեմիտականի փոխարէն անցանիտեան լեզուն էր դարձել, դրա համար էլ Շուգրուք թագաւորը սեմիտական նախնական լեզուի հին բնագիրները թարգմանում է անցանիտեան լեզուով, փորագրել է տալիս քարերի վրայ, նրա կողքին մի և նոյն ժամանակ ճշտօրէն արտագրել տալով և բնագիրը: Մորգանին յաջողուել է երկու լեզուներով և մի և նոյն արձանագրութեամբ շատ քարեր հանել Սուզայի փլատակներից: Շատ պարզ է, որ Շուգրուքի թարգմանութիւնները մեծ նշանակութիւն ունեն և սեմիտական նախնական լեզուի ուսումնասիրութեան համար:

Շուգրուքին յաջորդեցին մի քանի թագաւորներ, որոնք նոյնպէս աշխատում էին էլամը ծաղկած դրութեան մէջ պահել, մինչեւ որ Ասորեստանի Ասսուրբանիպալ թագաւորն ահագին հարուած տուեց էլամին և բաւական թուլացրեց նրա քաղաքական ազդեցութիւնը: Կիրոսի ժամանակ էլամը, չը նայելով որ հպատակւում էր Պարսկաստանին, էլի մի ծաղկած և քաղաքակրթուած երկիր էր բաւական մեծ ազգաբնակչութեամբ:

Վերելում ասացինք, որ Շէյլին յաջողուել է թարգմանել կաւեայ գանազան տախտակների վրայ գտնուող այն բազմաթիւ արձանագրութիւնները, որոնց նիւթը գլխաւորապէս կազմում են մասնաւոր անհատների միմեանց հետ կապած առեւտրական պայմանագրերը: Բերենք այդ թարգմանութիւններից մէկը իբրեւ օրինակ. «Ես, Գոնրի Կումբանս, իմ յօժար կամքով և հասկացողութեամբ ծախեցի Սիլքհաքքային 600 սիկլով իմ 200 թղաչափ դաշտս, որի սահմանները կազմում են Շուքրան Գրումմիտան: Փողը լրիւ ստացել եմ: Ես, վաճառողս, աստուածների առաջ երգուեցի, որ եթէ մեզանից մէկն ու մէկը այս վաճառքի համար փոշմանի, այն ժամանակ նրա լի-

զուհի և ձեռքերը պէտք է կտրուեն: Այս պայմանագրին ստորագրել են ժողովը, զինգը և վիաները իրանց սեփական կախներով: Այն ժամանակ վաճառումներն էլամում սուրբ բաներ էին համարում և եթէ մէկը անարգարացի կերպով կասկածում էր տէրութեան պաշտօնեայի ձեռքով վաւերացրած առեւտրական մի դոկումենտի վրայ, այն ժամանակ իբրեւ պատիժ կտրում էին կտակածողի ձեռքը: Առեւտրական իւրաքանչիւր պայմանագիր տէրութեան պաշտօնեաները խնամքով փորագրում էին կաւեայ թաց տախտակի վրայ, չորացնում էին կրակի առաջ և յետոյ մի շարք նախազգուշական միջոցներ էին ձեռք առնում, որպէս զի մասնաւոր մարդիկ չկարողանան տէրութեան հաստատած դոկումենտները կեղծել:

Բացի դրանից Մորգանի շնորհիւ միայն մենք տեղեկանում ենք, որ հին Սուղայում գոյութիւն ունէր պետական մի առանձին վարչութիւն, որի գլխաւոր նպատակն ու պարտականութիւնն էր չափերն ու կշիռները քննութեան ենթարկել, որպէս զի մասնաւոր մարդիկ չկարողանան այդ բանը ի չարը դործածել: Այսինքն ճիշտ միեւնոյն վարչութիւնը, որ այժմ գոյութիւն ունի եւրոպական դրեթէ բոլոր երկրներում: Սուղայում կշիռքի ծանրութիւնները շինում էին քարից կամ բրոնզից և այն էլ զանազան թուշումների կերպարանքով, օր. կարապի, բադի և այլն: Այդպիսի իրերից Մորգանը ահազլին քանակութեամբ է գտել: Բացի վերոյիշեալ իրերից Մորգանը ի լոյս է հանել և բազմաթիւ այնպիսի իրեր, որոնք գեղարուեստական աւելի մեծ արժէք ունեն, քան թէ հին նզըպտսում գտնուած նոյնանման հնութիւնները, օր. հասարակ և կապոյտ էմալից պատրաստած շատ գեղեցիկ ամաններ և բացի դրանից զանազան կենդանիների պատկերներով զարդարուած, զանազան տախտակներ, որոնք, հաւանօրէն, մի հին տաճարի պատերի մնացորդներն են: Այդ տախտակների վրայ քանդաքաղործին յատուկ նրբութեամբ փորագրուած են օրսորդական զանազան առարաններ: Այդ տեսարաններից մէկը տեղի է ունեցել 1,150 թ. (Ք. ծ. ա.) և հետեւեալն է ներկայացնում: Մի քանի իշխոսներ նստած են ձիերի և փղերի վրայ անտառի մէջ սրարչաւ հալածում են վայրենի խոզերին, իսկ նրանց կանայքը անտառի մօտ գտնուող լճի վրայ նաւակում նստած դիտում են իրանց ամուսինների օրսորդութիւնը: Ամբողջ տեսարանը փորագրուած է շատ կենդանի և բնական կերպով:

Աւելի նոր ժամանակի վերաբերող և միեւնոյն ժամանակ թանկագին մետաղներից պատրաստուած իրեր Մորգանին քիչ է յաջողուել գտնել: Եւ այդ հասկանալի է քանի որ Ասսուր-

բանիպալ թագաւորն իր թողած մի արձանադրութեան մէջ ասում է, որ ինքը թանկագին մետաղներից շինուած բոլոր իրերը Սուղայից յափշտակել և տարել է Ասորեստան: Մորգանը գտել է միայն բրոնզեայ երկու աշխատանքներ, որոնք շատ ծանր են և երևի հէնց զրա համար Ասսուրացիները չէ կարողացել տանել իր երկիրը: Դրանից մէկը մի բրոնզեայ լայն կոթող է, իսկ միւսը մի սեղան արձանագրութիւններով և զեղեցիկ քանդակներով զարդարուած: Սեղանը ներկայացնում է երկու օձերով փաթաթուած մի զոհարան, հինգ կանացի գլուխների վրայ յենուած: Դրա վրայ գտնուող արձանագրութիւնների և քանդակների շնորհիւ մենք ծանօթանում ենք էլամացիների և նրանց հարեւան երկրների կրօնական ծիսակատարութիւնների, տարազների, զարդարանքների, մի խօսքով ամբողջ նիստ ու կացի հետ:

Մորգանի գիւտերի մի մասն էլ պատկանում է պարսից Քսերքսէս և Արտաքսերքսէս թագաւորների ժամանակին: Այդ, աւելի նոր ժամանակի վերաբերող հնութիւնները մեծ մասամբ զանազան տեսակ վագեր են, որոնք իրանց վրայ կրում են թագաւորների անունները սովորաբար 4 լեզուով, այն է կիպտական, ասորական, պարսկական և նոր-անցանիտեան: Պատմական այդ շրջանին է պատկանում և Մորգանի արած հնագիտական մի շատ նշանաւոր գիւտը, որ Պարսկաստանի կուէտուրական պատմութեան ուսումնասիրութեան համար առաջնակարգ նշանակութիւն ունի: Այդ հնութիւնը ներկայացնում է հինգերորդ դարի (Ք. ծ. ա.) Խսեմենիդեան մի իշխանուհու գերեզմանը: Իշխանուհին թաղուած է իր բոլոր թանկագին և նուրբ զարդարանքներով: Դրանց վրայ գտնուած արդ ու զարդերը արեւելեան ազգերի գեղարուեստը և նրա պատմութիւնը բաւական լուսաբանում են: Յիշենք և այն յունական պատմական յիշատակարանը, որ նոյնպէս Մորգանն է գտել: Դա մի շատ ծանր բրոնզեայ աման է, որ յոյները նուիրել էին Դիդիւմեան Ապօլլօնին և պարսից Դարեհ թագաւորը Յունաստանում իր կատարած արշաւանքի ժամանակ ձեռք է բերել և յետոյ տարել Սուգա: Այդ ամանի վրայ գտնուած արձանագրութիւնն ասում է, որ յոյներն այդ ընծան պատրաստել և ձուլել են իրանց յաղթուած թշնամիների բրոնզեայ զէնքերից:

Վերջացնելով սրանով մեր յօդուածը, նորից կրկնում ենք, որ Մորգանի և Շէյլի հնագիտական գարազը լի կազմող գիւտերը լուսաբանում են ոչ միայն էլամի պատմութիւնը, այլ և ամբողջ Արեւելքի պատմութիւնը ընդհանրապէս, և մասնաւորապէս հայերի նախնական պատմութիւնը, որ շատ սերտ կերպով

կապուած է էլամի, Ասորեստանի, Բաբելոնի և պարսիկների պատմութեան հետ: Ֆրանսիական յարգելի գիտնականները իրանց հնագիտական և պատմական աշխատանքները դեռ ևս չեն վերջացրել: Նրանք դեռ ևս զանաւում են իրանց գործի սկզբում և մինչեւ այժմ կարողացել են Սուզայի միայն միջնաբերդն ուսումնասիրել: Սուզա թագաւորական ամբողջ մայրաքաղաքը ուսումնասիրելու համար հարկաւոր են դեռ երկար տարիներ և նիւթական ահազին միջոցներ, որ ֆրանսիական հանրապետութիւնը խոստացել է դնել Մորգանի ու Շէյլի տրամադրութեան տակ Պարսկաստանում ընդհանրապէս և Սուզայում մասնաւորապէս ուսումնասիրութիւններ անելու նպատակով:

Լ. ԲԱԲԱՅԵԱՆ

ՑՆՈՐՔՆԵՐ ԵՒ ԵՐԱԶՆԵՐ

(Օ. ՇԵԼՆԵՐԻ)

Կ Ե Ա Ն Ք Ի Ն Ո Ւ Է Ր Ն Ե Ր

Ես տեսայ քնած կնոջը՝ Նա կրագում էր, թէ նրա առաջ կանգնած է Կեանքը և իւրաքանչիւր մի ձեռքում բռնած ունի մի մի նուէր՝ մէկի մէջ սէր, միւսի մէջ ազատութիւն։ Եւ Կեանքը առայ կնոջը՝ «ընտրիր» Երկար ժամանակ ընտրում էր կինը, վերջապէս նա առայ՝ «ազատութիւն»։

Եւ Կեանքը առայ նրան՝ «Դու լաւ ընտրութիւն արիր, եթէ անուանէիր սէր, ևս քեզ կը տայի այն, ինչ դու խնդրէիր ու կը հեռանայի քեզանից և էլ երբէք չէի վերադառնայ։ Իսկ հիմա գալու է մի օր, երբ ևս կը վերադառնամ քեզ մօտ։ Այդ օրը դու կը գտնես երկու նուէրներ ևս միասին մի ձեռքում»։

Ես լսեցի, ինչպէս կինը քնած տեղը ուրախ խնդաց։

Կ Ի Ր Ա Խ Տ Ա Ն Մ Ա Ն Պ Ա Ր Տ Է Զ Ն Ե Ր Ի Մ Է Զ

Կինը զբօսնում էր ծաղկալի, գրախտանման պարտէզներում, ծաղիկների սքանչելի անոյշ հոտը բուրում էր օդում ու նա քաղում էր ծաղիկներ մէկը միւսի հետեւից։

Յանկարծ Պարտաճանաչութիւնը իր գունատ, խիստ գծերով կանգնեց նրա առաջ և նայեց նրա վրայ, և կինը թողեց ծաղիկներ հաւաքելը, բայց շարունակում էր զբօսնել նրանց մէջ, խնդում էր և ուրախանում, իսկ նրա ձեռքերը ծաղիկներով լիքն էին։

Եւ Պարտաճանաչութիւնը կրկին երեւայ նրան և նայեց նրան, իսկ նա... Նա երեսը շուռ տուեց և հեռացաւ։

Երբ կինը նորից տեսաւ այդ սառը և գունատ գէմը, նա

վայր ձգեց ամենադեղեցիկ ծաղիկները, որ ձեռքերում բռնած ունէր, ու լուռ առաջ գնաց:

Բայց Պարտաճանաչութիւնը կրկին վերադարձաւ նրա մօտ. կիներ տխրեցան, դաժար խոնարհեցրեց զուխը և ծառեց դէպի պարտէզի ելքը, բայց երբ դուրս գնալիս յետ նայեց նա և իր սիրած ծաղիկները տեսաւ արեգակի վայլի տակ, զառն լաց եղաւ:

Եւ կիներ դուրս գնաց պարտէզից և զոնքերը յաւիտեան փակուելին նրա յետեւից, բայց նրա ձեռքերում մնում էին դեռ ևս այն ծաղիկներն ու կոկոնները, որ նա հաւաքել էր պարտիզում, և նրանք քնքոյշ բուրմունք էին ստրածում անսպասում:

Բայց Պարտաճանաչութիւնը անդադար հետևում էր կնոջը. կրկին երևաց նրան իր մեռելային զուսնառ գէմքով. և կիներ դիտէր, թէ ինչու համար է նա ևկել, կիներ բաց արեց իր դոյզ ձեռքերն ևս ու վայր ձգեց իր բոլոր ծաղիկները և առանց ծաղիկների առաջ գնաց չոր, բոլորքուամ աչքերով:

Վերջապէս Պարտաճանաչութիւնը դալիս է ամենավերջին անգամ:

Կիներ ցոյց է տալիս նրան իր դատարկ ձեռքերը՝ նրանց մէջ էլ ոչինչ չէր մնացել: Բայց նա չարունակ նայում էր կնոջը. ահա վերջապէս կիներ բաց է անում իր կուրծքի շորը, հանում է այնտեղից մի փոքրիկ ծաղիկ, որ նա այնտեղ թաքցրել էր և գնում է գետնի վրայ: Հիմա նա էլ ոչինչ չունի տալու... Ու կիներ հետադառն գնաց, և անսպասուի մոխրագոյն աւազը փոթորկի նման պտոյտներ արեց նրա շուրջը:

Թարգ. ոռու. Յ. Տ.-Դ.

Հ Ե Ն Ր Ի Կ Ի Բ Ս Է Ն*

XV

Իրսէն Վիեննայում.—Վերադարձը դէպի Նորվեգիայ.—»*Skarvare*»-ը
Սօլնէս (Սօլնէսի փառասիրութեան և եսականութեան զոհերը.—Բանեար
և Ֆօսլի.—Հիլդէ Վանդէլ.—»Նարնիլային» թագաւորութիւնը.—Ճալտարա-
պետի զոյժումը.—Սլինէ.—»Օդային ամբոյցները».—Հիլդէի յաղթանակը.—
Սօլնէսը իրեն արուեստագէտ.—Հիլդէի բնաւորութիւնը.—Սօլնէս—Իրսէն).
—»Փոփրիկ Էյօլֆ» (Սլմէրսի ընտանիքը.—Սլիլդէի ճանապարհորդու-
թիւնը և նրա հետեանքները.—Րիդայի մայրութիւնը.—»Մկնորս» և
Էյօլֆի վախճանը.—Աստույի հրաժեշտը.—Րիդայի բնաւորութեան չեղա-
շրջումը.—Ամուսնութեան հիմքերը).

1891-ի յունուարին Իրսէն Միւնխենի մի քանի օրով
գնացել էր Վիեննա, ուր նշանաւոր «Burgtheater»-ում իր «Ժա-
ղովրդի թշնամին» և «Գահաժառանգները» պէտք է ներկայա-
յուէին:

«Երիտասարդ Վիեննան», որ պատկառելի ծերունու մէջ
տեսնում էր իր հանճարեղ ուսուցիչներէ մէկին՝ հիացմունքով
և ողորուած յայցերով ընդունեց նրան: Մեծ զբաւառութիւն
պատուին կազմուած մի հանդիսաւոր երեկոյթում, ուր ներկայ
էին աւստրիական մայրաքաղաքի զիտութեան, գեղարուեստի
և քաղաքական կեանքի յայտնի ներկայացուցիչները, զանազան
ճառեր լսելույ յետոյ՝ Իրսէն արտասանեց հետեւեալը.—«Այս
երեկոյ ինձ համար մի բազմաւորութիւն է, որի յիշատակը
հետս կը տանեմ՝ դէպի Միւնխէն: Երբ ես կեանքումս այնպի-
սի բան եմ տեսնում, որ ինձ ուրախացնում, հոգեպէս ալիւ-
ծում է—այն ժամանակ զա կը դառնայ մի բանաստեղծութիւն:
Այս երեկոյն ինձ յուզեց, և ես տեսնում եմ արդէն աչքերիս
առաջ մի պատկեր, տեսնում եմ մի գեղեցիկ, պայծառ և ու-
րախ երեկոյթ—չնորհակալ եմ ձեզանից, չնորհակալ եմ ես հա-
ւատադատ եմ, որ սա կը դառնայ մի բանաստեղծութիւն»:

*) Տե՛ս «Մուրճ» № 7.

Մտրդ ակամայ այս հրապարակական խոստովանութիւնն է յիշում՝ երբ կարգում է Իբսէնի «Bysmester Solness» որ լոյս տեսաւ 1892-ին:

Վերոյիշեալ խօսքերից մի քանի ամիս վերջ՝ յուլիսին՝ Իբսէն քսանեակօթամեայ բացակայութիւնից յետոյ՝ մշտապէս վերադառնում է իր հայրենիք, որից մի ժամանակ հալածուած, իսկ այժմ՝ ընդունւում է իբրեւ անդուգտական մի պարծանք:— Այնպէս որ «Ճարտարապետ Սօլնէսը» նա Նօրվէգիայումն է գրում:

Սուրբ և սիրելիքական — միստիքական շղարշը, որով առհասարակ ծածկուած են Իբսէնի վերջին գրամաները՝ աչքի է ընկնում և ներկայ ստեղծագործութեան մէջ: Սակայն անորոշ դէմքերի, տարտամ ուրուագծերի շուրջ փայլում է նորից բէալիսական փօնը:

Հարկարգ Սօլնէս մի ճարտարապետ է, որ իր յաջողութեան ճանապարհը ոչ այնքան «աշակերանելով» ինչքան բնական, ինքնաբերական տաղանդով է հարթել:

Նա մի բարեպաշտ ընտանիքի զաւակ էր: Եւ հէնց այս պատճառով էլ իր տաղանդն սկզբում կրօնական նպատակների է ծառայեցնում— եկեղեցիներ է կառուցանում: Սակայն ժամանակի ընթացքում նա չէ բաւականանում միայն եկեղեցիներով՝ բայց հանգերձեալ աշխարհից՝ աշխարհային կարեքների մասին էլ է մտածում և սկսում է «մարդկանց համար բնակարաններ» շինել: Այսպէս իբրեւ բաղմանկողմանի ճարտարապետ՝ նա մեծ հոգով է փայելում: Սակայն լինչպէս— նպատակին հասնելու համար՝ առանց միջոցների մէջ որ և է խտրութիւն գնելու: Բարձրանալու, անուն վաստակելու նրա տենչը երևում է հէնց ամուսնութիւնից կարճ ժամանակ յետոյ: Սօլնէսի կինը՝ Ալինէն իր ծնողներից ժառանգել էր զեղեցիկ պարտելով չըջապատուած մի տուն, որ իր ճարտարապետ ամուսնու ճաշակին ամենին չէր յարմարում: Այդ տունը նա համարում էր մի «տղեղ, փայտե աբիլ», որ վերաշինութեան համար նա անկարող էր կործանել, որովհետեւ իր կինը թանկագին յիշողութիւններով կապուած էր այդ հին բնակարանի հետ: Բայց Սօլնէսին յայտնի էր մի գաղտնիք— սենեակներից մէկի ծխնելոյզը ճեղքուած էր: Նա կամովին չէ ծածկում այդ ճեղքուածքը, որպէս զի մի օր տունն այրուի— «կան ընտրուած, արտաքոյ կարգի մարդիկ, որոնց ոյժ և ընդունակութիւն է չնորհուած մի բան ցտնկանալ, սենչալ և կամեմալ— այնքան յամուռ և անդրդուելի կերպով, որ վերջ ի վերջոյ պէտք է տեղի ունենայ» — ճարտարապետի այս խօսքերը, որ նա արտասանում է երկրորդ գործողութեան մէջ,

ոնկական փորձառութիւնից են բղխում: Նրա ջերմ ջանկութիւնն իրականանում է—«փայտէ արկղն» այրւում և մի մութ-բակոյտ է ներկայացնում: Բայց կրակն ընկնում է ոչ թէ ծրխ-նելոյղից, այլ մի ուրիշ սենեակի զգեստանոցից: Հրդեհը անուղ-ղակի կերպով պատճառ է դառնում մի ծանր դժբաղդութեան— ճարտարապետի կինը երկիւղից սարսափահար է լինում և մի վտանգաւոր ջերմ է ստանում, որով վարակւում են և իր երկ-ւորեակները, որոնք դեռ մի քանի ամսակսն էին: Մայրն ազատ-ւում է, իսկ նորածին զաւակները զոհւում են: Դժբաղդ մօր համար սա ի հարկէ մի սոսկալի հարուած էր: Այնպէս որ այդ քստ էութեան բարի կինը այնուհետև համարեա ոչ մի ուրախ-օր չէ տեսնում և ջրուածի նման քաչէ տալիս իր կեանքը:

Նա խորապէս զգում էր, որ իր ամուսինը ուրիշների հա-մար կարող է բնակարաններ կառուցանել, իսկ «իր համար— երբէք»: Նրա միակ մխիթարութիւնն այն էր, որ նա իրանց ժամանակաւոր բնակարանում մի քանի սենեակներ անուանում էր յատկապէս «երեխաների սենեակներ»:

Այս անակնկալ դժբաղդութեան տուջ ճարտարապետն ի հարկէ նոյնպէս շանթահար է լինում—հէնց իր կնոջ վկայու-թեամբ՝ նա «որքան խիստ է, նոյնքան փափկասիրտ»: Սակայն նա բնգունակ է և ինքնատիրապետութեան նրա սիրտը, զոնէ առժամանակ, օժտուած է մոռացկոտութեան զգացմունքով, որ կառարկեալէս անմտաշէլի էր: Ալինէլի մայրուկան փխրուն հո-գուն: Նա իր անմեղ զաւակների գիւղիների վրայից հարթում է իր ճարտարապետական փառքի ուղին և դափնիներ վաւտա-կելու համար—դարձեալ ոչ մի խորութիւն:

Ճարտարապետ Սօլնէսը որքան փառասէր էր, նոյնքան էլ ետական: Նրա ջերմ փափաղն էր առաջնութեան պսակը շա-րունակ թարմ պահել իր ճակատին, մնալ ընդ միշտ եղակի մի մեծութիւն: Եւ եթէ նրա փառասիրական պաշտամունքի հա-մար չը իննայտեցին նոյն իսկ իւր հօրազատ զաւակները, հոտ-կանալի է թէ անդուգականութեան փայլը պահպանելու համար՝ նա ինչպէս անողոր պէտք է լինէր գէպի օտարները: Մրցու-թեան ամենաանշուն խրատուն անդամ նա իր սողմնային վի-ճակի մէջ ընկձում, խեղդամահ է անում: Բաւական չէ օրինակ, որ նա իր նախկին ուսուցիչ՝ ծերունի Քնուտ Բրօվիկին իր օգ-նականն է դարձրել—աշխատում է սրա որդուն՝ Բանեարին, որ իր մօտ դժագրողի պաշտօն է փարում և փայլուն դուղանդ է ցոյց տալիս, ամեն կերպ ճնշել և ինքնուրոյն յառաջադիմու-թեան ոչ մի ասպարէզ չը տալ: Որպէս զի Բանեարի նման մի կարեւոր ոյժ շարունակ իր ստորագրեալը մնայ՝ ահա թէ նա

ինչ տգեղ և խորամանկ միջոցի է դիմում: Բանեարը վաղուց նշանուած է լինում իր հօրեղբոր աղջիկ Կայեայ ֆօպլիի հետ: Եւ ճարտարապետը որպէս զի առաջինին իր մօտ պահէ՝ նրա նշանածին էլ վերցնում է իբրեւ հաշուապահ: Սօնէսն իրան այնպէս է պահում, որ միամիտ Կայեան ուղղակի սիրահարւում է նրա վրայ: Ճարտարապետն ի հարկէ սիրոյ ոչ մի նշոյլ չէր տածում զէպի այս աղջիկը. սակայն իրա գործնական նպատակների համար՝ իրան անտարբեր չէր յոյս տալիս—այնպէս որ սրանով չարժւում է նոյն իսկ իր դժբախտ կնոջ նախանձը: Բանեարն ամուսնանալու համար մտածում էր ինքնուրոյն դիրք ձեռք բերել: Սակայն ոչինչ այնքան չէր սարսափեցնում կասկածոտ և ինքնավստահութիւնից զուրկ Սօնէսին՝ ինչքան նոր ուժերի ինքնուրոյնութիւնը. նա վախենում էր նրանց արցունքից և նոյն իսկ գերազանցութիւնից.— «Այսպէս, այսպէս. Հալվարդ Սօնէսը պէտք է յետ մղուի, տեղի պէտք է տայ երիտասարդներին, մանաւանդ ամենաներիտասարդին: Տեղի պէտք է տայ, տեղի...»—ահա կատաղի ճարտարապետի սրտի փղձկոցը:

Նա ի հարկ է ամեն կերպ պէտք է աշխատէր պահել Բանեարին: Նա առաջարկում է ամուսնանալ և դարձեալ իր մօտ մնալ: Այսպէս էր և Կայեայի ցանկութիւնը, որի սէրը զէպի ճարտարապետը այնպիսի չափեր էր ընդունել, որ նա բացարձակապէս արդէն խոստովանում է թէ Սօնէսից «չէ կարող հեռանալ, պէտք է մնայ նրա մօտ»: Նա այնքան սուաջ է գնում, որ նոյն իսկ պատրաստ է բաժանուել Բանեարից: Սակայն միամիտ օրիորդը անընդունակ էր ճարտարապետի յետին մտքերը հասկանալ, զգալ, որ ինքը անձամբ ոչ մի նշանակութիւն չունի իր անխիղճ մեծաւորի համար: Սա իսկոյն պարզւում է կրք Բանեարը պնդում է իր հրաժարականի վրայ և և դուրս գալուց առաջ ճարտարապետից մի վկայական է պահանջում: Վերջինս ամեն կերպ ձգձգում է և չէ ուզում նրան վկայական տալ: Այնպէս որ Հիլդէ Վանդէլի նման մի արկածախնդիր և բարոյականութեան կօղէքան արհամարհող կինն անգամ նրա վարմունքը դտնում է «չափազանց տգեղ, խիստ, չար և անխիղճ»: Միայն Հիլդէի ստիպմամբն է նա համաձայնւում վերջապէս նրան վկայական տալ: Սակայն ճարտարապետի խստասրտութիւնը այս զէպըունն էլ տուեց իր զոհը: Նա Բանեարի ծերունի հօրը՝ Քնուտին կաթուածահար դարձրեց:

Բայց ով էր Հիլդէն, որի անունը մենք իսկոյն յիշեցինք: Ընթերցողն անշուշտ չէ մոռացել «Ծովի տիկնոջ» հերոսուհին:

րից մէկին՝ բժիշկ Վանգէլի կրտսեր աղջկան՝ փոքրիկ Հիլդէին, որ «օտարոտի» և «գրաւիչ» բաների սիրահար էր: Ահա «Ճարտարապետ Սօլնէսի» Հիլդէն այս նոյն անձնաւորութիւնն է և հէնց ուղղակի կոչւում է Հիլդէ Վանգէլ: Իսկ դրամայում մինչև իսկ մի անգամ ակնարկւում է, որ նրա հայրը վիճակային բժիշկ է եղել—և սա, ինչպէս յայտնի է, Վանգէլի պարապմունքն էր: Հիլդէն այն ժամանակ դեռ եռման շրջանի մէջ էր. հոգեկան յայտնի սաղմերով զինուած, բայց դեռ անկազմ և անպատրաստ: Այժմ նա արդէն 23 տարեկան է՝ մեծացած, չափահաս դարձած: Նրա բնաւորութեան հիմնական գծերը համարեա թէ պահպանուած են—մանաւանդ զէպի «գրաւիչն» ունեցած ջերմ հակումը փայլում է իր ամբողջ մակերևոյթականութեամբ:

Տասը տարի առաջ Հիլդէն իր հայրենիքում հանդիպել էր ճարտարապետ Սօլնէսին, որ այնտեղ շինել էր մի եկեղեցի՝ շատ բարձր գմբէթով: Հիլդէն ամենայն մանրամասնութեամբ յիշում է թէ ինչպէս գմբէթը կանգնեցնելուց յետոյ մեծ տօն էր քաղաքում—«եկեղեցու գաւթում երաժշտութիւն կար. և հարիւրաւոր մարդիկ էին հաւաքուած: Մենք դպրոցական աշակերտուհիներս սպիտակազգեստ էինք և դրօշակներ էինք կրում ձեռներին»: Յետոյ նա պատմում է թէ ինչպէս ճարտարապետը մի մեծ պսակ վերցրած՝ բարձրանում է եկեղեցու պատերից վեր և կախ է անում գմբէթի ծայրից—«Այդ ժամանակ այնպէս հրաշալի էր և գրաւիչ ներքև կանգնած զէպի ձեզ նայել: Բայց եթէ յանկարծ նա վայր գլորուէր—ինքը՝ ճարտարապետը»:

—«Դա հեշտութեամբ կարող էր պատահել»: Նկատում է Սօլնէսը, «որովհետև սպիտակազգեստ սատանայի աղջիկներից մէկը այնպիսի վայրենի ձայնով աղաղակեց...»:

—«Կեցցէ ճարտարապետ Սօլնէս—այն»:

—«Եւ դրօշակն: այնպէս էր տատանում, որ այդ տեսարանից գլուխս ուղղակի պտոյտ էր գալիս»:

—«Այդ սատանայի աղջիկը հէնց ես էի»:

Չարածճի Հիլդէն այնուհետև ուղղում է ճարտարապետին հաւատացնել թէ նոյն օրը՝ երեկոյեան մի մեծ ընթրիքի ժամանակ՝ վերջինս ցանկութիւն է յայտնել՝ տեսնել այդ փոքրիկ աղջկան, որին նա համբուրել է և խոստացել է 10 տարուց յետոյ դալ և տանել Սպանիա կամ մի ուրիշ տեղ ու նրան տալ մի ամբողջ թագաւորութիւն—«Նարնջային թագաւորութիւն»: Եւ նա այժմ եկել այս թագաւորութիւնն էր պահանջում. նա կամենում էր «դքսուհի» դառնալ:

Ճարտարապետը, որ սկզբում շուարել և Հիլդէի այս վեր-

ջին պատմութիւնը միանգամայն անհասկանալի էր գտնում՝ յանկարծ խորհրդաւոր կերպով նկատում է—«Այդ բոլորը ես անշուշտ մտածած, կամեցած, ցանկացած—էհ, սատանան տանի—գործած պէտք է լինեմ»:

Բայց Հիլդէն շատ յարմար ժամանակին է գալիս. ճարտարապետը մեծ յուսահատութեան և զղջման զգացմունքի մէջ էր: Նա որոնում էր մէկին, որպէս զի բայց անէր իր ամբողջ ներքին աշխարհը: Նա զգում է յիշուի, որ ինքը կոչուած է միայն ուրիշների համար բնակարաններ շինելու, իսկ իր համար—երբէք: Նա տեսնում է թէ ինչպիսի թանգ գնով է ձեռք բերել իր յաջողութեան դափնիները—«ոչ թէ փողով, այլ մարդկային բազդաւորութեամբ. և այդ ոչ միայն իմ սեփական բազդաւորութեամբ, այլ և ուրիշների... Ո՞վ հրաւիրեց օգնականներին և ծառաներին—ես ինքս: Եւ ահա եկան նրանք և ենթարկուեցին իմ կամբքին: Այս է, որ մարդիկ անուանում են «բազդ ունենալ»: Բայց զիտէք ինչպէս է այդ բազդի զգացմունքը: Դա նման է կրծքի վրայ բացուած կաշեզուրկ մի տեղի. և օգնականներն ու ծառաները ուրիշ մարդկանց կաշուից կտորներ են խլում իմ վէրքիս սպեղանի անկուռ: Սակայն անուամենայնիւ վէրքը չէ բուժւում և երբէք չի բուժուի: Ա՛խ, եթէ գիտենայիք՝ սա երբեմն ինչպէս կծում, աչրում է ինձ»:

Ճարտարապետը խղճի զօրեղ խայթ է զգում մանաւանդ իր կնոջ՝ Ալինէի նկատմամբ—«Նա էլ կեանքում իր կոչումն ունէր. ճիշտ այնպէս ինչպէս ես իմն ունէի: Բայց նրա կոչումը պէտք է ճնշուէր, քայքայուէր, ոջնանար, որպէս զի իմն ինձ յառաջ մղէր՝ գէպի մեծ յաղթութիւնը: Նա էլ ունէր ստեղծագործելու, կառուցանելու յատկութիւններ—փոքրիկ երեխայական հոգիներ ստեղծել, Հիլդէ—հոգիներ, որոնք պէտք է մեծանային հաւասարակշռութեամբ և ազնիւ ու գեղեցիկ ձևերով... Այս էր Ալինէի կոչումը, որ երբէք չը գործադրուեց և յաւիտեան չի դործադրուի...»:

Բայց Հիլդէն ամեն կերպ աշխատում է արմատախիլ անել նրա մէջ փափուկ զգացմունքի վերջին հետքերը, նրան ըստ կարելոյն խստասիրտ և անողոք դարձնել: Նրա միակ ցանկութիւնն է, որ Սօլնէսի «խիղճը նրբազգաց չը լինի»: Իսկ «պարտականութիւնների մասին» նա լսել անգամ չէ կամենում—«Դա մի սառն, անախորժ և խայթոյ տպաւորութիւն է թողնում—պարտականութիւն, պարտականութիւն, պարտականութիւն—չէք զգում, որ այս բառը ուղղակի մարդուս խայթում է»:

Իսկ երբ Սօլնէսը իր երկիւղն է յայտնում երիտասարդու-

թեան վերաբերմամբ, որի երևան գալու մէջ նա տեսնում է մի տեսակ «փոխարինութիւն» — Հիլդէն հանգստացնում է նրան՝ յորդորելով ոչ մի վախ չունենալ երիտասարդութիւնից:

Այս տարօրինակ կիներ, որ կոյր կերպով հաւատում էր ճարտարապետի կարողութեանը՝ նորից ինքնավստահութիւն և համարձակութեան ոգի է ներշնչում նրան: Նա պնդում է խոստացուած «թագաւորութեան» վրայ, որի ամբողջները պէտք է լինէին միանգամայն անմատչելի, օգային: Այո, նա կատարեալ լրջութեամբ պահանջում է Սօնէսից իր ճարտարապետական դործունէութեան երրորդ և փառաւոր շրջանում «օգային ամբողջներ» կառուցանել: Որքան փանտաստիկական լինի այս պահանջը՝ այնուամենայնիւ դրա մէջ ամփոփուած է մի խորիմաստ սիմբոլիզմ — Հիլդէն այնքան է ոգևորում Սօնէսին, որ նա համարձակութիւն է ստանում մի անգամ էլ ձեռնամուխ լինել «Անկարելիին»: Նա կատարելապէս յուսահատուել էր և եկել էր այն եղբակացութեան, որ «մարդկանց համար կառուցուած բնակարանները միանգամայն անարժէք են» և մինչև իսկ մի յետագարձ հայեացքով գտել էր, որ ինքը ըստ էութեան «ոչինչ չէ կառուցել»: Նրան մեծ վիշտ էր պատճառում մանաւանդ այն հանգամանքը, որ ինչքան նա բարձր էր սլանում, դէպի ամպերն, այնքան չը գնահատուած էր մնում հասարակ մահկանացուներից, որոնք աւելի համեստ ոճով կառուցուած բնակարանների պէտք ունէին: Սակայն Հիլդէն ոչ միայն գնահատում, այլ և ջերմ կերպով խրախուսում է նրան: Եւ ահա թէ ինչ է լինում այս խրախուսանքի հետեանքը:

Ճարտարապետ Սօնէսը «փայտէ արկղի» բեկորների վրայ կառուցել էր իր սեփական բնակարանը՝ մի բարձր սրածայր աշտարակով: Հիլդէի բուն ցանկութիւնն էր «իր ճարտարապետին այդ նորակառոյց բարձրութեան գագաթին տեսնել»: Սակայն ոչ ոք չէր կարող Սօնէսից այս բանն սպասել, որովհետեւ ամենքին յայտնի էր, որ նա «գլխի պտոյտ» ունի — այս հիւանդութիւնը սիմբոլիքական է՝ ցոյց է տալիս ճարտարապետի կասկածոտ և անինքնավստահ լինելը: Մեծ երկիւղի մէջ էր մանաւանդ Ալինէն, որ շատ լաւ էր ճանաչում իր ամուսնուն և սրտազին թախանձանքով յորդորում էր իրանց տնային բժշկին՝ արգելել այդ բանը:

Բայց Հիլդէի կամքը յաղթող է հանդիսանում — ճարտարապետը խուռն բազմութեան առաջ՝ պսակը ձեռքին վերեւ է բարձրանում: Ահա նա արդէն աշտարակի գագաթին է և պսակը կախ է անում: Ամենքը ապշած են մնացել, որովհետեւ սա մի անակնկալ էր: Եւ մինչդեռ բժիշկը իր շրջապատող հանդի-

սականներին զդուշացնում է ծպտուն անգամ չը հանել—Հիլդէն խլում է նրա ձեռքից մի սպիտակ շալ և տատանելով՝ հիասքանչ ոգևորութեամբ աղաղակում է—«Կեցցէ՛ ճարտարապետ Սօլնէս»:

Հիլդէի այս աղաղակը էլեկտրականացնում է բոլոր ներկայ եղջերներին: Շարժւում են թաշկինակներ և հնչում է «Կեցցէ՛»-ների որոտընդոտ ձայնը, որ սակայն յանկարծ ընդհատւում է և տեղի տալիս սարսափի աղաղակներին: Ծարտարապետը կորցնում է իր հաւասարակշռութիւնը և ահազին բարձրութիւնից վայր գլորուելով իսկոյն անշնչանում է:

Ահա յամառ Հիլդէի հիւանդոտ կամայականութեան վախճանը: Բայց իր այս ողբերգական վախճանի համար նոյնքան պատասխանատու է և ինքը՝ ճարտարապետը: Սա փառամոլութեան և նեղ եսականութեան ասօթէօղն էր: Կան սրբութիւններ, որոնց ոտնակոխ լինելը ինչպիսի խստասրտութեամբ էլ տեղ ունենայ՝ այնուամենայնիւ վաղ թէ ուշ չկը փոխարինուի, անպատիժ չի մնայ: Սօլնէսի խստասրտութիւնն անշուշտ ուրիշ հերպարանք կը ստանար, եթէ նա մարդկային զոհերը ոչ թէ իր փառասիրական հակումներին, այլ յատկապէս իր արուեստին ծառայէին—գեղարուեստի և մարդկային կեանքի ու բազդաւորութեան մէջ եղած հետաքրքիր խնդրին մենք կը վերադառնանք հետեւեալ անգամ՝ Իբսէնի վերջին գրամանքնակիւ:

Սակայն անկախ եսական դիտումներից՝ ճարտարապետ Սօլնէսը այսպէս թէ այնպէս ուշադրաւ է նաև իբրև արուեստագէտ: Իբրև ստեղծագործող խոշոր մի աղանդ մենք տեսնում ենք նրա մէջ մշտական դժգոհութեան, նիւթի փոփոխութեան պահանջ—եկեղեցուց նա անցնում է «մարդկային բնակարանների և վերջապէս «օդային ամրոցների» Իր ճաշակով, ազատ և վերամբարձ ոճով չինուած «բնակարանները» երբ առօրեայ կեանքում չեն գնահատւում՝ նա բնականաբար կարիք պէտք է զգար մեկուսանալու: Եւ այս հակումին մեծ զարկ է տալիս Հիլդէն, որ անշուշտ աւելի թեթեւ էր նայում խնդրի վրայ, լուր «գրաւորութեան» տեսակէտից: Սակայն եթերային արուեստի սիրահարներից մէկը դեռ «օդային ամրոցներ» չը կառուցած՝ ի հարկէ ողբալի կերպով պէտք է վայր գլորուէր: Իսկ միւսը՝ կիսախեղագար ապշութեամբ պէտք է հիասթափութեան հարուածով շանթահարուէր: Սրանով Իբսէն թէ կեանքի և թէ գեղարուեստական իգէալիզմի մէջ՝ խորիմաստ հետևողականութեամբ՝ նորից իր յուշամատն ուղղում

է դէպի փրկարար իրականութիւնը և ոչ թէ դէպի «երևակայութեան կանաչ կղզիները»:

Հիլդէն ինչքան ինքնատիպ և հետաքրքիր, այնուամենայնիւ իր ամբողջ էութեամբ մի թեթևօղիկ երևոյթ է ներկայացնում: «Գրաւիչի» fixe ydee-ով անբուժելի կերպով վարակուած՝ նա պէտք է շատ ծանր գնով զսպուէր: Զուրկ հոգեկան հաւասարակշռութիւնից, մաքի և զգայմունքի ներդաշնակ կրթութիւնից՝ նա շարունակ անծանօթի, «անկարելի» կարօտն էր զգում: Ընտանեկան յարկը նրան թւում էր մի «վանդակ»: Այս պատճառով ազատասէր թռչունը դուրսն է սաւառնում: Ճարտարապետ Սօլնէսը նրան մի անգամ անուանում է «անտառաթռչուն», բայց Հիլդէն դժգոհ էր այս մականունից: Նա ինքն իրան անուանում է «գիշատիչ թռչուն» և ոչ թէ «անտառաթռչուն», որովհետև վերջինս թագնւում է փայտակոյտերի մէջ, իսկ ինքը ազատ, համարձակ որսի յետնն է սլանում:

Նա միանգամայն մակերևոյթական է. գուցէ ինքնատիպ բայց ոչ ինքնուրոյն: Նա իր աշխարհայեացքի ամբողջ պաշարը գրքերիցն է քաղել, բայց դեռ մարմին և արիւն չէ դարձրել: Ապացոյց՝ այն թեթև ու անհետկողական վերաբերմունքը, որ նա ցոյց է տալիս «խղճի» և «պարտականութեան» զգացմունքի նկատմամբ: Նա մի բոպէ խօսքի հարուածներով բարոյականութիւնը ոտնակոխ է անում—իբրև «բարիից և չարից դէնը» սկզբունքի երկրպագու՝ նզովքի մի կատաղի տարափ է թափում յանուն «խայթող պարտականութեան»: Իսկ միւս բոպէին ամենաամենայն կերպով դատապարտում է Սօլնէսի խնայողականութիւնը:

Ինչպէս իւր նախկին հերոսներից շատերի, այնպէս էլ Սօլնէսի մէջ հեղինակը գրել է իր բնաստութիւնից մի քանի դժեր: Բայց մեծ թիւրիմացութիւն կը լինէր Սօլնէսը միանգամայն Իբսէնի մարմնացումը համարել: Մի քանի քննադատներ «ճարտարապետ Սօլնէսի» մէջ տեսնում են Իբսէնի «գեղարուեստական ինքնախոստովանութիւնը»: Բայց հանճարեղ, դրամատուրգի ինքնախոստովանութիւնը տեղի ունեցաւ եօթ տարի յետոյ՝ 1899-ին՝ երբ լոյս տեսաւ նրա վերջին դրաման—«Երբ մենք մեռածներս յարութիւն առնենք»:

Մեզ շատ սխալ է թւում մանաւանդ այն միտքը թէ՝ «երիտասարդութեան սարսափը» պատել է նաև առանձնութեան սիրահար Իբսէնին: Եթէ այս կարծիքին իբրև փաստ ծառայում է այն հանգամանքը, որ Իբսէն ինտենական թուականների սկզբներին հրապարակով հրաժարուեց Միլնիսէնում կազմուելիք «ազատ բեմի» պատուաւոր անդամ ընտրուելուց—այն ժամանակ

չը պէտք է անուշադիր թողնել, որ հեռատես և նրբազգայ դրամատուրգը իր այս քայլի նկատմամբ ունէր անշուշտ իր լուրջ վերապահումները, որոնք միայն նեղ-կուսակցական մանրակրկտութիւնից կարող էին վրիպել: Թէ որքան իրաւացի էր ևզել իրսէն—դա երևայ այն տարօրինակ մետամորֆոզից, որին ենթարկուել է վերջին տասնամեակում «modern» գրականութիւնը: Իսկ մի բացարձակապէս ինքնուրոյն, վաղուց կազմակերպուած—այո՛, մինչև իսկ ծերացած—և ապառաժ բնաւորութեան տէր արուեստագէտի կարելի էր միթէ քամու թեթև հոսանքների ենթարկել:

«Երիտասարդութիւնից վախենալու» առակը կրկնակի ծիծաղելի է դառնում, երբ մարդ մտածում է—իրսէն ինչ տեղիք ունէր երկրւոյ կրելու՝ քանի որ խորապէս զգում է, որ ներկայումս ինքը՝ իբրև դրամատուրգ՝ ուղղակի անզուգական է: Չէ որ նոր դրամատիկական դպրոցի բոլոր յայտնի ներկայացուցիչները նրա հետեւողներն են. համարեա ամենքը՝ Հաուստումայից և Զուգէրմանից սկսած՝ նրա աշակերտներն են—առանց սակայն մեծ ուսուցչին ոչ միայն գերազանցելու, այլ գէթ հաւասարուելու: Եւ հասուն ու տաղանդաւոր աշակերտները իրսէնի հսկայական մեծութեան առաջ՝ գուցէ այս յաւակնութիւնն անգամ չունենան:

XVI

«Ծովի տիկինը» իւր օպտիմիստական վերջաբանով տեղի տուեց երկու այնպիսի դրամաների, որոնց մէջ, ինչպէս տեսանք, պեստիմիստական տարրը գերակշռում էր: 1894-ին իրսէն գրում է մի նոր դրամա—«Փոֆրիկ էյօլֆ» («Lille Eyolf»), որ իր հիմնական իդէայով «Վայրի բաղի» հակապատկերն է ներկայացնում: Այստեղ չը կայ այն մոայլ տրամադրութիւնը, այն ճնշող մթնոլորդը, որ սկզբից մինչև վերջ ծանրացած է «Վայրի բաղի» ամբողջ հիւստուածքի վրայ: Յիրաւի երկինքն այստեղ էլ անամպ չէ, բայց մթապին խաւարի միջից փայլում է յոյսի ճառագայթը, իդէալի յաղթանակի գործը, որ հետզհետէ բորբոքուելով՝ իր պայծառ շողերով զովութիւն, վերականգանութիւն է ներհնչում: Եւ որքան գեղեցիկ, որքան մխիթարական է՝ յոռետես դրամատուրգին իր 64-ամեայ հասակում տեսնել հաւատքի ջերմութեամբ համակուած: Իր կեանքի արեմուտքում նա այլ ևս միայն քանդող, աւերող, հերքող, բացասող չէ, այլ շինող, վերականգանաշնող, դորձնական իդէալիզմի յաղթանակն աւետող: Այնպէս որ նրա քոյրը կատարելապէս

իրաւունք ունէր էմիլ Բայիսին նկատելու.—«Իմ եղբայրը ուղղակի մի մարգարէ է, որ կոչուած է մարդկանց ազգարարելու՝ հեռու մնալ ծանր փորձութիւններից և ժամանակի վտանգաւոր հոսանքներից»:

Նւ ամեն մի իսկական, մեծ բանաստեղծը որոշ չափով անշուշտ մի մարգարէ է:

Ալֆրէդ Ալմէրս՝ նախկին ուսուցիչը՝ ամուսնանալով գեղեցիկ և հարուստ Բիտայի հետ՝ վերջինիս «ոսկով և կանաչ անտառներով» դառնում է մի մեծ կալուածատէր: Նա իր ամուսնութիւնը այսպիսի մի կնոջ հետ պատճառաբանում է նրանով թէ՛ կամենում էր ապահովել իր կոյր Աստային: Բայց Բիտայի հետ ունեցած կապի առաւելութիւնն այն է լինում, որ հէնց ինքը Ալֆրէդն է ապահովւում: Նա աշխատասէր և գիտական զբաղմունք սիրող մի մարդ էր—այնպէս որ այս տեսակ ամուսնութիւնից յետոյ հանգիստ կարող էր նուիրուել իր գործին: Սակայն նրա կեանքը միակողմանի ուղղութեամբ է առաջ գնում. տարիներ շարունակ զբքերի և թղթերի մէջ թաղուած՝ նա կատարելապէս մոռացութեան է տալիս իր ընտանեկան միւս պարտականութիւնները—իր միակ որդի փոքրիկ Էյօլֆի համար նա «միայն ուսուցիչ» էր և ոչ «իսկական հայր»: Առանց այն էլ նա իր կնոջ հետ միասին մեծ պատասխանատւութիւն էր կրում զէպի իր որդին: Վերջինս ծնուելուց մի քանի շաբաթ յետոյ՝ ծնողների անզգուշութեան պատճառով՝ վայր է ընկնում և ոտը վտանգաւոր կերպով վնասում, կալ է դառնում: Փոխանակ այս ֆիզիկական արատից խրատուելու և դժբախտ փոքրիկի առողջութեան մասին առանձին հոգ տանելու՝ հայրը մանկական տարիներից նրան միայն խիստ աշխատասիրութեան է վարժեցնում: Ինչ վերաբերում Բիտային՝ նա ոչ միայն մայրական, այլ և մարդկային կարեկցութեան նշոյլ անգամ չէր տածում զէպի իր որդին: Նա պատկանում էր այն անխիղճ, հրէշաւոր կանանց շրջանին, որոնք ամուսնութեան մէջ որոնում են միայն իրանց անձնական հաճոյքը, զգայական անսանձ կիրքը: Իսկ այդ կրքի պողի մասին չեն էլ մտածում. ընդհակառակն՝ ամենավայրագ ցանկութեամբ կը կամենային ոջնալանել այդ պտուղը՝ եթէ ոչ սաղմում, զէթ հասունացած ժամանակ...

Այս տեսակ հանգամանքներում փոքրիկ Էյօլֆի միակ խնամատարն էր իր ազնիւ հօրաքոյրը՝ օրիորդ Աստան:

Ալֆրէդը ամուսնանալուց յետոյ տարիներ շարունակ իր կնոջ հետն էր եղել: Միայն ամուսնութեան տասնամեակում՝ ամառը՝ նա մի քանի շաբաթով հեռանում է Շէպի լեռները: Այստեղ՝ գեղածիծաղ ընտրեան գրկում, խորհրդաւոր առանձ-

նութեան մէջ նրա միտքը թարմանում, հոգին պարզւում է: Երբ նա ականատես է լինում «լեռների կատարներում մարող վերջալոյսի շողերին», իրան «մօտ է զգում» և աստղին և արեւին, և ծովին և ցամաքին: Բայց այս պանթիստական արամադրութիւնից դուրս՝ նրա մէջ տեղի է ունենում մի՝ թէեւ իր խօսքով «իռքերիկ» բայց մեծ յեղաշրջում: Իր 10 տարուան կեանքը նրան թւում է «մի հէքիաթ կամ մի քուն»: Նա տարիներ շարունակ նստել է գրասեղանի առաջ և գրել մի մեծ աշխատութիւն «մարդկային պատասխանատուութեան» մասին: Այժմ էլ նոյն իսկ նա վերցրել էր իր թղթերի մի կապոց՝ ճանապարհին նոր բաներ գրելու, լակայն այդ կապոցը անշարժ է մնում: Նա սկսում է ասել մտաւոր զբաղմունքը, նոյն իսկ մեծ երկը, որի վրայ նա քրտնաջան աշխատանք էր թափել, այժմ նրան մի ողնջութիւն է թւում: Խիստ ինքնաքննադատութեամբ նա այժմ այն եզրակացութեանն է գալիս, որ իրաւունք չունի խօսել անգամ «մարդկային պատասխանատուութեան» մասին, որովհետեւ ինքը իբրեւ հայր՝ միանգամայն պարտազանց է գտնուել: Նրա խոհերի և մտորումների կենտրոնակէտը այժմ միայն էյօլֆն է. նա զգում է թէ որքան անխնամ է գտնուել դէպի նա և հաստատակամ կերպով վճռում է այդ վիռքերիկի «ազնիւ հակումներից» ընտիր բողբոջներ և շաւարոյն պտուղներ առաջացնել: Էյօլֆը այլ ևս առաջուայ նման միայն գրելով և կարդալով չը պէտք է զբաղուէր, այլ պէտք է «թարմ օդում լինէր, կատարեալ ազատութիւն վայելէր»:

Իր որդու դաստիարակութեան խնդիրն այնքան յափշտակել, մտազբաղ էր դարձրել Ալֆրէդին, որ նա մէկ և կէս ամսուայ ճանապարհորդութիւնից վերադառնալիս՝ մոռանում է իմել կնոջ պատրաստած «չամպայնը»: Նա մոռանում, մոռանում և մոռանում էր: Սակայն այս բոլորի հետ միասին նրա մէջ կազմակերպուել էր դրական մի անդրդուելի վճիռ—վտանակ գրքեր գրելու՝ կենդանի օրինակով ապացուցել թէ «նրբան մեծ է մարդկային պարտականութիւնը»:

Երբ Ալֆրէդը իր այս ծրագրի մասին տեղեկացնում է իր կնոջ՝ նա զարմանում և շատ բնորոշ «տգիտութեամբ» հարցնում է—«միթէ այդ բարձր նպատակներդ այստեղ՝ տանը՝ պէտք է իրականացնես»:—«Քեզ հետ միասին»—պատասխանում է միամիտ Ալֆրէդը:

Այս պատասխանից յետոյ արդէն կատարելապէս պարզւում է Ռիտայի ոգին իր հրէշաւոր մերկութեամբ: Նա իբրեւ «կին» կամենում էր, որ Ալֆրէդը «միմիայն իրան պատկանի»: Նա անկարող էր հրաժարուել նրանից: Այս պատճառով լու-

Թեան մէջ նա ինչպէս ատուած էր Ալֆրէդին՝ երբ նա մինչև կէս գիշերը նստած՝ աշխատում էր, իսկ ինքը ժամերով միայնակ պիտի մնար: Եւ այժմ աւելի՞ է ատուած նրան, որովհետև մտաւոր աշխատանքը թողած «ուրիշ նպատակի էր նուիրւում» աւելի վասքաւ: Այս նպատակը—էյօլֆի կրթութեան նուիրուելը—նա համարում էր «սրբազան կապերը կտրել»: Նա յայտնապէս նկատում է Ալֆրէդին՝ «երեխան կիսով է միայն ինձ պատկանում, իսկ դու ամբողջովին»: Իսկ այս «կէս» բռնից էլ ազատուելու համար նա ամենաանպատկառ անտարբերութեամբ իր քան կը կամենար, որ էյօլֆը «երբեք ծնուած չը լինէր»: Նրա մտքովն անգամ չէր անցնում լինել «միայն մայր էյօլֆի», այլ ամենից առաջ «կին Ալֆրէդի»: Այս է պատճառը, որ երբ վերջինս յայտնում է թէ վճռել է դառնալ էյօլֆի համար իսկական հայր—նախանձոտ կինը իսկոյն հարցնում է—«Իսկ ինձ համար»: «Հանգիստ և խաղաղ սիրով մի ամուսին»—պատասխանում է Ալֆրէդը: Սակայն զգայականութեան ստրուկը չէ բաւականանում «այս ողորմելի փշրանքներով»: Նա լիակատար և կրքոտ սէր է պահանջում—հակառակ դէպքում սպառնում է մինչև իսկ գնալ և «առաջին հանդիպողի գիրկն ընկնել»:

Մինչդեռ Րիտան իր հրաբորբոք խանդի և վայրագ ցանկութիւնների լեղին էր արտաթափում—յանկարծ դուրսը լըսւում է մանուկների խառնիճաղանձ մի աղաղակ, որ հետզհետէ պարզւում է և յայտնւում, որ նրանցից մէկը ջուրն է ընկել և խեղդուել: Ալֆրէդը և իր քոյրը սոսկալի երկիւղի մէջ են և էյօլֆի մասին մտածում. իսկ անխիղճ մայրը ահա թէ ինչ խորհրդաւոր ցանկութիւն է յայտնում—«Աստուած տայ նա չը լինէր»: Մի քանի վայրկեանից յետոյ յայտնւում է, որ խեղդուողը էյօլֆն է եղել: Սա մի սոսկալի հարուած էր դժբաղդ Ալֆրէդի համար. նա իր ականջներին չէր ուղում հաւատալ—«Անկարելի է. այսպիսի թանկագին մի կեանք»—մրմնջում է վշտաբեկ հայրը:

Բայց ինչպէս պատահեց էյօլֆի մահը: Ալֆրէդի վերադարձից մի քիչ յետոյ ներս է գալիս մի պառաւ կին, որ իրան անուանում է «մինորս»: Նա հաւաքում էր «փոքրիկ կենդանիներին», որոնց բոլորը «ատում և խիստ կերպով հալածում են»: Նա գալիս էր «հետու կղզիներից», որոնց բնակիչներին—«փոքրիկ կենդանիներին» շատութիւնից—մնացել էր միայն «թթու խնձոր» ուտելու: Նա ժողովում և տանում էր այս «փոքրիկներին» ջրի յատակը, ուր նրանք «այնպէս քաղցր և երկար քնով են քնում»: Այս պատճառով պատահաբար եկել էր Ալմէրսի տունը և հարցնում—«Այստեղ, պարոնների մօտ ոչինչ չէ կրճում»:

Յետոյ նա շատ ցաւում է՝ երբ տանելու բան չէ գտնում, որովհետեւ այլ եւս չշատ ուշ էր վերադառնալու: Փոքրիկ էյօլֆը մի կողմից վախվիւնելով, իսկ միւս կողմից առանձին հետաքրքրութեամբ էր նայում «մկնորսին», մանաւանդ նրա փոքրիկ շանը: Իսկ պառաւը երբեմն խորհրդաւոր հայեացք էր ձգում «վիրաւորուած փոքրիկ զինւորականի» վրայ — էյօլֆը այդ օր մի սիրուն համազգեստ էր հագել:

Ահա հետեւելով այս պառաւին և նրա շանը՝ էյօլֆը ծովափին սայթաքում է և ջուրն է ընկնում: Նրա ընկերները, որոնք բոլորն էլ լողանալ գիտէին, ականատես են լինում այս դժբաղդութեան՝ առանց սակայն ծովը նետուելու և խեղճ էյօլֆին աղատելու:—մի կաղի համար՝ ոչ ոք չէր ուզում այգալիսի նեղութիւն յանձն առնել: Եւ նրանք տեսնում են՝ թէ ինչպէս վճիտ ջրի յատակից «աչքերը բաց, հանգիստ և անթարթ նայում է» — մինչև որ մի զօրեղ հոսանք գալիս և նրան կուլ է տալիս:

Այս «մկնորսը» անշուշտ սիմբօլիքական է: Նա «կրծող կենդանիներ» էր փնտռում, չէ որ իր դաժան մօրը համար փոքրիկ էյօլֆը հէնց մի «կրծող կենդանի» էր: Նա էլ է գնում ջրի յատակը հանգիստ քուն վայելելու:

Սակայն այս անմեղ զոհը մի մեծ յեղաշրջում է առաջ բերում Ալմէրսի ընտանիքում: «Փոփոխութեան օրէնքին» Ալֆրէդը գործնականապէս արդէն ծանօթ էր, նա ընդունակ էր մինչևեւ իսկ «կորուստի մէջ օգուտ տեսնել»: Բայց այժմ պատահում է ամենամեծ անակնկալը — Րիտան հոգեպէս կերպարանափոխում է. նրա զգայականութիւնը նսեմանում, կրքի արեւիոթութիւնը խաղաղում է: Փոքրիկ էյօլֆի ուրուականը այլ եւս երբէք չէր կարող նրան հանգիստ տալ: Նա կարծես միշտ տեսնում էր նրան «մեծ, լայն բացուած աչքերով», որոնք դէպի ինքն են յառած: Նա որ մի փոքր առաջ կատաղի խանդով էր վերաբերում դէպի Աստան՝ այժմ խնդրում, պաղատում է մնալ իրանց մօտ, որովհետեւ նա «անկարող էր իր վիշտը, իր կորուստը Ալֆրէդի հետ միայնակ կրել»: Նա ուզում էր, որ Աստան մնար և դառնար իրանց «էյօլֆը» (Աստայի փաղաքշական անունը մանկութեան ժամանակ): Սակայն Աստան՝ ինչքան էլ ցանկանար՝ անկարող էր մնալ: Նա իր մօր նամակները քրքրելիս՝ մի նշանաւոր գիւտ էր արել — որ ինքը Ալֆրէդի քոյրը չէ: «Ես իրաւունք չունեմ քո հօր անունը կրելու» — ասում է նա իր «եղբօրը»: Իսկ դեռ եւս միամիտ Ալֆրեդը հարցնում է — «դու փախուստ ես տալիս ինձանից»:

«Թէ քեզանից և թէ ինձանից» — պատասխանում է Աստան

խորհրդաւոր կերպով: Նա սիրում էր Ալֆրէդին, և վերոյիշեալ անակնկալ յայտնագործութիւնից յետոյ՝ կարող էր մնալ և նրան խել Բիտայի ձեռքից: Բայց Աստան ոչ Բէքէկկայի կամ Հիլդէի տեմպերամէնտն էր կրում իր մէջ և ոչ նրանց հոգին: Նա ինքնակամ հրաժարւում է այս բաղդաւորութիւնից և կապւում ինժինէր Բուրգհայմի հետ: Վերջինս մի ազնիւ, կենսուրախ և գործունեայ անձնաւորութիւն էր, որի համար «բաղդը գալիս էր, ինչպէս դարնանալին հոսանքը»: Այս զոյգը ձեռք ձեռքի տուած գնում է բաղդաւորուելու: Սակայն մնացող զոյգը, որ ըստ երեւոյթին շատ անբաղդ պէտք է լինէր՝ նոյնպէս բաղդաւորւում է:

Էյօլֆի յիշատակը Բիտայի զգայմունքներն աջքան է անգուայնում, որ նա իր համբերողութեամբ և հոգու վեհութեամբ գերազանցում է նոյն իսկ Ալֆրէդին: Վերջինս որքան ցանկանում էր «ծովեղերքը մաքրել» այն տղաներից, որոնք անտարբեր հանգստութեամբ ակնատես եղան իր որդու խեղճուելուն: Բերկրութեան ժպիտը փայլում է նրա դէմքին՝ երբ լսում է այդ փոքրիկների վայնասունը—«հարբած հայրերը եկել են և ծեծում իրանց որդիներին: Լսում ես՝ ինչպէս աղաղակում են մանուկները, իսկ կանայքը օգնութիւն են աղերսում»:

—«Միթէ չես գնայ նրանց օգնելու»—հարցնում է Բիտան:

—«Նրանց, որոնք չը կամեցան օգնել Էյօլֆին—թող կորչեն նրանք, ինչպէս կորցնել տուին իմ փոքրիկին»:

Իսկ երբ Բիտան «անմեղ երեխաներից» է խօսում—«Ա՛խ, մեղ ինչ փոյթ», խստասիրտ կերպով նկատում է Ալֆրէդը, «նրանց ոչնչանալը կամ ապրելը միթէ մեղ համար մի և նոյն չէ»:

—«Քո բնաւորութեանդ չէ պատշաճում այդպէս խիստ լինել, Ալֆրէդ»:

—«Իմ իրաւունքն է խիստ լինելը և նոյն իսկ պարտաւորութիւնը», նկատում է անողոր ամուսինը:

Բիտան աջքան է առաջ գնում, որ վճռում է ապրել փողոցի երեխաների հետ իբրեւ իր «սեփական երեխաների»: Նրանք պէտք է փոխարինէին Էյօլֆին—«նրա սենեակում ջնէին, նրա գրքերը կարդային, նրա խաղալիքներով խաղային»: Նա մինչեւ իսկ յայտնապէս խոստովանում է—«Մենք փակել ենք այդ խեղճ երեխաների առաջ ոչ միայն մեր փողոցամանները, այլ և մեր սրտերը»: Ահա թէ «սրտատեսաց» կինը ինչ աստիճանի փափկութեան հասաւ.—«Դու դատարկութիւն առաջացրիր իմ մէջ, Ալֆրէդ, իսկ ես կը կամենայի որ և է բանով լցնել—մի

բան, որ գէթ մի քիչ նման լինէր սիրոյ: Փողոցային թշուառ երեխաների խնամատարութիւնն է նրա այս սիրոյ արտայայտութիւնը:

Այնպէս որ Ալֆրէդը, որ իր կնոջ ազդեցութեան տակ նոյնպէս կամաց կամաց մեղմանում է—իրաւունք ունէր նկատելու՝ «էյօլֆը իզուր չը ծնունդ և մեզանից իզուր չը խլուեց»: Եւ նրանք ձեռք ձեռքի տուած գնում են «երկնքին և աստղերին հանդիպելու». նրանք գնում են զէպի «մեծ խաղաղութիւնը»—խաղաղութիւն երկրի վրայ, ուր սաւառնում են հարազատների հոգիները:

Իսկական ամուսնութեան բովանդակութիւնը չեչտելիս՝ Իւսէնը մինչև այժմ ընդհանրապէս սիրոյ, ազատութեան և ճշմարտութեան սկզբունքներն էր պաշտպանում: Այս անգամ նա կանգ է առնում ամուսնութեան հիմնական անկիւնաքարերից մէկի—զաւակի՝ նշանակութեան—վրայ: Մայրական պարտականութիւնները նա, անշուշտ, չատ լայն է հասկանում: Եւ ամենաընտիր ու իդէալական մայրերը նրանք են, որոնք անցել են ոչ թէ «թեթեւ աղատամտութեան» կամ անասնական զգայականութեան ճանապարհով, այլ իսկական ազատութեան և ճշմարտութեան զպրոցով:

Վ. ՆԱԼԲԱՆԴԵԱՆ

(Վերջը հեռեւեալ անգամ)

Ե Ա Ն Թ Է Ի Ն

(Փոխադրութիւն լորդ Բայրոնից *)

Ոչ Արեւելքի կլիմաների մէջ
Ուր թափառել եմ ես աստանդական,
Թէն այնտեղի գեղեցկութիւններն
Համբաւուած են միշտ որպէս աննրման,
Եւ ոչ մինչև իսկ անուրջների մէջ
Որ ցոյց են տալիս հոգուն մի պատկեր,
Որի ետեւից հառաչում է մարդ
Թէ էր երազ են այդպիսի դէմքեր,
Ոչ իսկութեան մէջ, ոչ անիսկութեան
Չեմ տեսել երբէք էակ քեզ նրման,
Ոչ էլ կը փորձեմ քեզ տեսնելուց յետ
Գծագրել պատկերն այդ գեղեցկութեան:
Այն մարդկանց համար որ քեզ չեն տեսել
Բառերս անհաս են.
Իսկ նոցա, որոնք հայել են դէմքիդ,
Այլ ևս ինչ տեսն:

Երանի՛ր թէ միշտ մընաս ինչպէս այժմ
Պահես իրոստումը զարնանդ օրերի,
Միրառդ տաք, բայց սուրբ. սիրոյ պատկերը
Այս երկրի վերայ, առանց թեւերի.
Եւ այնպէս անբիծ որ երբէք կոյսը
Մտածութեամբ իսկ քեզ չը մօտենայ,

*) «Ասլլդ Հարուդի» նախերգանքը:

Այլ անմեղութիւնդ այսպէս յաւիտեան
 Հրապոյրներիդ հետ անբաժան մընայ:
 Եւ, անշուշտ քո մայրդ, որ գուրգուրում է
 Մանկութեանդ վերայ կաթոգին այնպէս,
 Այն ինչ փթթում ես ծաղիկի նըման
 Այն ինչ ժամ առ ժամ գեղեցկանում ես,
 Քո դէմքի վերայ իր ապագայի
 Խաղաղ ծիածանն արդէն տեսնում է,
 Որի երկնային բոյրերի առաջ
 Ամեն տրամուլթիւն անհետանում է:

—
 Ո՛վ Արեւմուտքի մատղահաս փէրի
 Երջանիկ եմ ես որ իմ ամերը
 Կրկնապատիկն են քո տարիների.
 Անցան ինձ համար սիրոյ ժամերը.
 Տարիանքից ազատ իմ աչքն այսուհետ
 Կարող է դիտել քեզ անյոյզ սրտով,
 Եւ հասունացող քո գեղեցկութեան
 Լոկ հանդիսատես լինել անվրդով.
 Բաղդաւոր եմ ես որ ինձ չէ տրուած
 Տեսնել թառամունքն այդ հըմայքներիդ,
 Բայց էլ բաղդաւոր որ երբ կը տանջուին
 Մատղահաս սրտեր ի սէր աչքերիդ,
 Գէթ իմն այն բաղդից ազատ կը լինի
 Որ դու պահել ես քեզ սիրողներին,
 Որոնք պիտի զգան շատ վիշտ և անձուկ
 Սիրոյ ամենից սիրուն ժամերին:

—
 Օհ, թող այդ աչքը, նըման այծեամի,
 Մերթ վառ ու խիզախ, մերթ մեղմ, ամօթխած,
 Որ հըմայում է երբ թափառում է
 Եւ շլացնում է երբ կանգ է առած՝
 Մի ալնարկ ձգէ այս էջի վերայ,
 Եւ մի լոկ ժըպիտ շնորհէ իմ երգին,

Ժպիտ, որ պիտի խնայէիր գուցէ
 Թէ այլ ղգացմունք յուզէր իմ հոգին:
 Մի հարց աներ ինձ թէ ինչո՞ւ իմ երգս
 Զօնում եմ քեզ պէս դեռահաս մէկին
 Շնորհիր մի ժպիտ, հվ կոյս նազելի,
 Եւ թոյլ տուր միայն որ իմ պըսակին
 Կցեմ աննըման
 Անարատ շուշան:

Ահա զուգուեցաւ անունդ իմ երգիս.
 Եւ բարի աչքեր երբ «Հարուդ» կարդան,
 Քեզ կը հանդիպեն ամենից առաջ,
 Եւ ամենից յետ քեզ կը մոռանան:
 Եւ երբ կ'աւարտուին օրերն իմ կեանքի,
 Եթէ անցեալի այս ձօնը խոնարհ
 Գրաւէ մատերը քո հրեշտակային
 Դէպ քեզ երգողի մոռացուած քընար,
 Յիշիր դու յայնժամ, որ այդ է իղձըս
 Եւ յիշատակիս բաւ է այդ միայն,
 Եւ ինչ որ Յոյսը չի ակնկալում
 Բարեկամութեան շնորհիր դու այն:

ՅՈՎ.-ԽԱՆ ՄԱՍԵՀԵԱՆ

Մ Ա Տ Ե Ն Ա Խ Օ Ս ՈՒ Թ Ի Ի Ն

27) Poèmes arméniens, anciens et modernes traduits par A. Tchobanian et précédés d'une étude de Gabriel Mourey sur la poésie et l'art arméniens 1902, Paris.

Հայկական հին և ժամանակակից պոեմներ, թարգմանությունն Ա. Չոպանյանի և մի ուսումնասիրություն հայ բանաստեղծության և գեղարվեստի մասին Գաբրիել Մուրէջի. 1902, Պարիզ:

Այս տարուայ մայիսի 29-ին Պարիզում յօգուտ հայ որբերի հայկական գեղարուեստական մի երեկոյթ տեղի ունեցաւ. էրնեստ Լավիս, Դընի Կօչէն և Վիկտօր Բերար հայասէրների հովանաւորութեան ներքոյ, Գաբրիէլ Մուրէջ մի դասախօսութիւն կարդայ այդ երեկոյթում հայ բանաստեղծութեան և ընդհանրապէս հայ գեղարուեստի մասին, որ մի հակիրճ, բայց և պերճախօս ու յաջողուած տեսութիւն կարելի է համարել մեր ցեղային էստետիկական տաղանդի արտադրութիւնների: Ահա այս դասախօսութիւնն է, որ պ. Չոպանեան լոյս է ընծայել, նրան կցելով Քրանսերէն հատուածներ հայ բանաստեղծներից իր թարգմանութեամբ:

Հայ ժողովրդի ծանօթութիւնը Եւրոպայում գլխիվայր ընթացաւ և շատ թանգ դնով: Արեւմուտքը մի օր յանկարծ ցընցուեց հեռու արեւելքում մի քրիստոնեայ ազգի անօրինակ մարտիրոսութեան սրտաճմլիկ լուրերով: Կոտորում էր մի ամբողջ ժողովուրդ, անղէն, անպաշտպան մի անծանօթ ժողովուրդ և նրա յուսահատ աղաղակները մեռան անտարբերութեան այն ժայռի վրայ, որ նստած է տգիտութեան և զազանային չկամութեան հիմքում:

Արիւնոտ ժողովրդից յետոյ հայով զբաղւողները և նրան ուսումնասիրողները բազմաթիւ են ամբողջ աշխարհում: Այժմ են ծանօթանում մեզ հետ, միայն այժմ... բայց էլի զաւ է ուշ,

քան երբէք»։ «Հայաստանը մենք միայն ճանաչում ենք, ասում է Գ. Մուրէյ իր ունկնդիրներին, այն չը տեսնուած տառապանքներով, որոնք յօշոտեցին նրան և ևս դողում եմ մտածելով, որ գուցէ ձեզանից շատերը չեն էլ երեւակայում, թէ գոյութիւն ունեն հայ բանաստեղծներ, ճարտարապետներ, երաժիշտներ, արուեստագէտներ, այսինքն հայկական ուրոյն քաղաքակրթութիւն, իր յատուկ բնաւորութեամբ, որ անցնալում և ներկայում ծնել է գաղափարների, անուրջների և գործի մարդիկ, որոնց ստեղծագործութիւնը ամենայն կողմով արժանի է ճանաչուելու և հիացմունքի»։

Ճարտարախառար ֆրանսիացի հայասէրի մատնանիշ արած այս տխուր երեւոյթը դառն իրողութիւն է, որ մասամբ ծանրանում է և՛ մեր խղճերի վրայ։

Պատմական փաստերի ամբողջութիւնը, համաշխարհային ամբողջութիւնը ըմբռնելու անընդունակ գլուխները անկարող պիտի լինեն որոշելու հայի դերը աշխարհի պատմութեան մէջ։ Վաղուց արգէն բանալ դարձած ֆրազը, թէ հայերը միջնորդ են եղել արեւելքի և արեւմուտքի քաղաքակրթութիւնների մէջ՝ շատ է անորոշ, շատ է դունատ, որ կարողանայ համոզել սկեպտիկներին մեր քաղաքակրթական դերի կարեւորութեան մէջ։ Բայց ով որ պատմութեան փիլիսոփայութեան, քաղաքակրթութիւնների դարաւոր պայքարի խորը թափանցելու կարողութիւնն ունի, ընդունակ է կապել Մարաթոնը և Սալամինը Աւարայրի հետ, միայն նա է ձեռնհաս հայի իսկական տեղը որոշելու պատմութեան մէջ, միայն նա կարող է պատմական ճշմարտութեան կատարները թեւակոխել։ Ուրախալի է նկատել, որ Գ. Մուրէյ պատկանում է վերջին կատեգորիային։

«Մի կողմ թողնենք նախապաշարմունքը,—բացականչում է Մուրէյ և բաց անենք պատմութիւնը։ Անաչառ պատմութիւնը մեզ ցոյց է տալիս, որ չը նայելով դարերի ընթացքում հայերի կրած ճշումներին բոլոր այն տիրապետողներից, որոնք ծանրացան նրանց վրայ, լինեն նրանք ասորացիք թէ մեդերը, պարսիկներ թէ պարթեւներ, սելջուկներ թէ արաբներ, ասիական ցեղերի աշխարհակալական ախորժակին մատուցուած այս որսը, հայ ժողովուրդը շարունակ արեւելքից դէպի արեւմուտք է ձգտում... հակադրելով արեւելքի ազդեցութեանը, իր ցեղական տոկունութեան, անկախութեան և յառաջադիմութեան իր անընկճելի ցանկութեան հետ նաև մի հաստատուն պատուար տրադիցիաների և ինքնուրոյն էվոլուցիայի, պայքարելով անընդհատ իր երկրում ներս բերելու հւրուպական միտքը, իր կարծիքով միակ բեղմնաւորը, միակ վերանորոգիչը, բարոյա-

կան և մտաւոր կատարելութեան համար: Մի ժողովրդի ինքնուրոյնութեան չափը որոշուած է այն եռանդով և այն յարատեւութեամբ, որ նա գործ է դնում պահելու և զարգացնելու իրան առանձնայատուկ կենսական հասկացողութիւնը, իրանից դուրս, արտաքին իրերի ընդունելու և տիեզերական գաղտնիքների և բնութեան յաւիտենական օրէնքների իր ըմբռնողութիւնը»:

Իր ասածներն ապացուցանելու համար պ. Մուրէյ քաղուածքներ է բերում զանազան ժամանակ հայերին վերաբերեալ հրատարակութիւններից և մասնաւորապէս մատնանիշ է անում անգլիացի Լինչի մեծահատոր աշխատութիւնը և Pro-Armenia-ի տուած ճշգրիտ տեղեկութիւնները: Պատկերը մնայլ է, իրականութիւնը խեղդող, անցեալը արիւնալի և վշտոտ: Տառապանքներով միջնած այդ երկնքի տակ և յաւերով անած այդ հողի վրայ բուսած ծաղիկը, հայ գեղարուեստը, բնականապէս մնայլ է, թախիծը դարձել է հայի ազգային ոգու հիմնական գիծը:

Այսպէս է բնորոշում նաև Գ. Մուրէյ, հայ բանաստեղծութիւնը: «Հայաստանի ոգին... մինչև իսկ այն վայրկեանին, երբ նա մի վայրկեան մոռանում է իր ամենջանքներն ու տառապանքները, երբ նա զեղւում է սիրոյ երգերում, անգամ այդ վայրկեանին թւում է, որ թախիծի մի քօղ ծածանւում է նրա գլխին. նա ըմբոստ է անգամ իր ժպիտների մէջ այսօրուայ և երէկուայ հայ բանաստեղծութիւնը»:

Խօսելով հայկական ճարտարապետութեան մասին, պ. Գ. Մուրէյ գտնում է, որ նա կարող է նկատուել որպէս կապ ասորական և արաբ-բիւղանդական ճարտարապետութիւնների մէջ: Հայկական հին յիշատակարանները չեն ծանրաբեռնուած զարդարանքներով ինչպէս պարսկականը, և առհասարակ հայ ճարտարապետութիւնը միմիայն արեւելեան չէ, նոյն իսկ շատ բանով նա արեւմտեան է: Պ. Մուրէյի կարծիքով հայ շէնքերը երբեմն յիշեցնում են միջին դարերի իտալական և ֆրանսիական շէնքերը: Նա օրինակ է բերում Աղթամարի վանքը, Ս. Կարապետը, Ախլաթի մաւզօլէն, Մարմաշէնը, Անիի մայր եկեղեցին, Ս. Գրիգորը, Խօշափանք և այլն, որոնք բոլորը վկայում են հայ ճարտարապետութեան ինքնուրոյնութիւնը:

Ինչ վերաբերում է հայ երաժշտութեան, Գ. Մուրէյ զրուսում է որ նա դերում է, յուզում, արցունք է քամել տալիս, առանց, որ մարդ իմանայ ինչո՞ւ համար: Օտարները հայի երգը լսելով անգամ նրա ուրախութեան ժամերին զարմացած են մնում թախիծի թանձրութեան վրայ, որ պատառ պատառ

Թափուում է կարծես երգչի սրտի կտորների հետ և բացականչում են՝ «ինչո՞ւ»։ այդ «ինչո՞ւ»-ի պատասխանը դարձեալ փնտրելու է հայի պատմութեան մէջ։ այն շրթունքները, որոնք ամբողջ դարեր լացել են կամ աղօթել, որոնք սիրոյ մրմունջներն էլ մի մի ողբեր են, ուրիշ տեսակ երաժշտութիւն յօրինել չէին կարող։ երբ մի ժողովրդի գոյութեան հիմունքը ցաւն է, նրա իւրաքանչիւր հնչիւնը անխուսափելի կերպով ցաւի շեշտ ունի։

Ազգերի յարաբերութիւնների մէջ առաջ եկած պատմական խոշոր թիւրիմացութիւնները յաճախ արդիւնք են տգիտութեան կամ անգիտութեան, ստեղծել են և ստեղծում են ցաւալի բարդութիւններ, կամ փոխադարձ դատապարտելի պարտադանցութիւններ, որոնք խեղդող կօշմարի պէս ծանրանում են թոյլերի ճակատագրի վրայ։ Ամեն մի ջանք, որ նպատակ ունի պարզել այդ յարաբերութիւնները և ժողովուրդներին արժանի տեղը որոշել քաղաքակրթութեան պատմութեան մէջ, անպայման շնորհակալութեան արժանի է։ Ո՞վ գիտէ, թէ ինչպէս կ'ընթանար վերջին տասը տարուայ պատմութիւնը, եթէ ըազմաթիւ Գ. Մուրէյներ այնպէս խօսէին, ինչպէս խօսում են այսօր, եթէ ինչիւրը դառնար ոչ միայն լոկ գլխութեան, այլ նաև իրաւունքի, մարդկութեան անբռնաբարելի բարոյական շահերի վրայ հաստատուած իրաւունքի շուրջը, որ կը գոհացնէր հզօրների էգօիզմը,

Եթէ ճշմարիտ է, որ մօրալը գործ չունի այսօր միջազային յարաբերութիւնների մէջ, եթէ լոկ իդէալի համար անյաջողութիւնները անցել են հերոսական դարերի լեգենդաների շարքը, «Թող խօսի այն ժամանակ մեր էգօիզմը,—բացականչում է Գ. Մուրէյ,—մեր դորժնական խելքը։ Մենք նիւթական շահեր ունենք, որ հայ ժողովուրդն ապրի, մենք բարոյական շահեր ունենք, որ նա չը մեռնի։ Արեւելքում նա միակ պահապանն է մեր մտքի, իրան չըջապատող բարբարոսների աչքի տակ... Նա պաշտպանում է մի անընկճելի հերոսութեամբ եւրոպական կուլտուրայի և արեւմտեան քաղաքակրթութեան գերիշխանութիւնը արեւելքի կուլտութեան և ֆանատիկոսութեան դէմ»։ Այս է ճշմարտութիւնը, այս փաստը հզօրների էգօիզմը գոհացնելով հանդերձ, թոյլի, օգնութեան կարօտի ճակատը չի ծածկում ամօթի կարմրութեամբ, որ այնպէս պատշաճ է բոլոր աղերսողներին։

Գրքի երկրորդ մասը կազմում են հայ հին և նոր բանաստեղծներից վերջրած քաղուածներ ֆրանսերէն յաջող թարգմանութեամբ։ այդտեղ մենք պատահում ենք մի քանի

յայտնի և սիրելի անունների, Գր, Նարեկացի, Խաչատուր Աբովեան (Երևանի բերդը), Պետրոս Դուրեան (Իմ վիշտը), Սմբատ Շահաղիզեան (Երկու մուսա), Գամ. Քաթիպա (Օրոր), Պէշխէթաշեան (Կոյսի քնարը և Զէյթունցի աղջիկը). այս բոլորը շատ լաւ, բայց հասկանալ չը կարողացանք, թէ ինչ գործ ունի սըրանց մէջ մի Վահրամ Սվաջեան, որ անուանուած է poète et musicien—բանաստեղծ և երաժիշտ, մինչդեռ նա գեղարուեստական այդ երկու ճիւղերի մէջ էլ մի առանձին աչքի ընկնող տեղ չի բռնում, որ իրաւունք ունենար օտարների առաջ հանդիսանալ իբրեւ հայ տաղանդի մի ներկայացուցիչ: Պ. Զոպանեան շարունակուում է կարօտ մնալ գրական չափի, որ նրան միշտ ձգում է ցաւալի չափազանցութիւնների մէջ:

Ա. Ա.

ՋՅ) ՄԻՔԱՅԷԼ ՓԱՇԱ ՓՕՐԹՈՒԳԱԼ.—Եղիշէի վարդապետի վասն Վարդանանց և Հայոց Պատերազմի և Քննադատութիւնք. Վենետիկ, 1902, 455 էր., գինը 5 ֆրանկ:

Զորս տարի ու կէս առաջ, 1897-ի վերջերում, վախճանուեց Կ. Պօլսում Միքայէլ փաշա Փօրթուղալ, սուլթանի անձնական գանձի մինիստրը: Ահա այդ բարձրաստիճան պաշտօնական է գրել այն զիջքը, որի վերնագիրը գրինք վերետւում: Մինիստր և հայ գրող: Սա հրաշքի նման մի բան է երևում, քանի որ հայը, հէնց որ մի քիչ սկսում է բարձրանալ ծառայութեան աստիճաններով, պարտք է համարում կտրել իր բոլոր յարաբերութիւնները իր ազգի հետ, օտարանալ ամենահիմնաւոր կերպով: Միքայէլ փաշա Փօրթուղալ այն զարմանալի, ուղղակի անգիւտ անհատներից է, որոնք փառքի բարձրութեան գագաթնակէտին հասնելուց յետոյ էլ այնքան մօտ են մնում իրանց ազգութեան, որ նոյն խի գրքեր էլ են գրում: Գուցէ շատ զարմանալի չը լինի այս հանգամանքը, եթէ նկատի առնենք որ Փօրթուղալ փաշան Հ. Ալիշանի աշակերտն էր:

Ամենից հետաքրքրականն այն է, ի հարկէ, թէ ինչ է տուել իր գրական աշխատութեան մէջ այդ մինիստրը: Նա վերցրել է Եղիշէի պատմութիւնը, բացատրել, քննել է: Եւ ստացուել է մի աշխատութիւն, որը ամենայն իրաւունքով կարող ենք մի գանձ համարել մեր պատմագրական գրականութեան համար:

Եթէ մեր բոլոր հին մատենագիրները այգալիսի խոր հիմ-

տութեամբ, նուրբ ըմբռնողութեամբ, այդքան տաղանդաւոր կերպով քննուած ու բացատրուած լինէին, այսօր մենք կարող կը լինէինք սպասել որ հայոց պատմութիւն գրելու ժամանակը եկել է, պատմութիւն, որ կը լինէր զիտութեան համապատասխանող մի գործ, որ կը տար, վերջապէս, մեր անդած կեանքի նկարագիրը: Դժբախտաբար, մեզանում հին մատենագրութիւնը դեռ չարունակում է մնալ անմշակ, հում նիւթ, դեռ չը քննուած, չը ուսումնասիրուած: Մեզանում աւելի խժժանքներով, բժախնդրութիւններով, բառակերութեամբ են զբաղուած, քան լուրջ օգտակար աշխատութեամբ: Միքայէլ փաշան մի շատ գեղեցիկ դաս է տուել մեզ: Իր պաշտօնական զբաղմունքների մէջ նա գտել է ազատ ժամեր, առանձնացել է իր զբաղարանում եւ աշխատել է Եղիշէի քննութեան վրայ ամբողջ ութ տարի:— Որքան բարեխղճութիւն, որքան բազմակողմանի հմտութիւն է նա ցոյց է տուել այդ աշխատութեան մէջ, որքան շատ լոյս է թափել հինգերորդ դարի կրօնական պատերազմի պատմութեան վրայ:

Նկատենք այստեղ Փօրթուգալ փաշայի, իբրեւ մի պատմական աշխատութիւն քննողի, թանկագին յատկութիւնը: Նա ուսումնասիրել է ամբողջ գրականութիւնը, ուսումնասիրել է Եղիշէն իր բոլոր հանգամանքներով: Նա գիտէ հին և նոր պարսկերէն, լաւ ծանօթ է ոչ միայն հայ հետազոտողների գործերին, այլ և այն ընդարձակ գրականութեան, որ գոյութիւն ունի Եւրոպայում Պարսկաստանի և առհասարակ Արեւելքի հին պատմութեան մասին: Փօրթուգալ փաշան շատ տեղ զիմում է արաբական աղբիւրներին, սանսկրիտ, պէհլէվի լեզուների օգնութեամբ բացատրում է շատ մութ տեղեր և անծանօթ պաշտօններ: Ամեն ջանք գործ է դնում երկրի ներքին կեանքի հանգամանքները բացայայտելու, մանաւանդ մեծ խնամք և հմտութիւն է ցոյց տալիս աշխարհագրական դիրքերը որոշելու, անունները պարզելու մէջ: Այս բոլորը դեռ այնքան մեծ նշանակութիւն չունի, որքան քննադատի այն սուր հայեացքները, նրբամտութիւնը, որոնք երևան են գալիս քաղաքական դէպքերի բացատրութեան և լուսաբանութեան մէջ: Մեր հեղինակը շարունակաւ հետազոտողներից չէ. Պարսկաստանի, Յունաստանի բռնած դիրքերը ուսումնասիրել է նա ոչ թէ ազգային նեղ ու սահմանակ աղբիւրներով միայն, այլ և այն փաստերով, որ տալիս է ընդհանուր պատմութիւնը: Իբրեւ դատաւոր նա անաչառ է, չէ վարակուած կոյր հայրենամոլութեամբ, կղերական տենդենցիաներով, թէև, պէտք է ասել, տեղ-տեղ շատ զգոյշ է և այդ զգուշութիւնը աւելորդութեան է համեմատ:

Աշխատութիւնը կատարուած է այսպիսի ծրագրով:

Գրքի 158 երեսը «Նախադրութիւնն է» Այդտեղ հեղինակը պատկերացնում է Հայաստանի դրութիւնը և յարաբերութիւնները պարսիկների և յոյների հետ՝ Արշակունեաց թագաւորութիւնը վերջանալուց յետոյ, բնորոշում է գործող անձինքներին, լուսարանում է հոսանքները, կարգերը հայոց աշխարհում: Այսպէս, նա ցոյց է տալիս, որ քաղաքական իշխանութիւնը իրապէս անցել էր եկեղեցականութեան ձեռքը, որ այդ պատճառով էլ ընդհարում էր նախարարական տների հետ: Հինգերորդ դարի շարժման մէջ նշանաւոր է այն հանգամանքը, որ Հայաստանում այդ ժամանակ աւելի խիստ էր որոշուել յունական և պարսկական կուսակցութիւնների սուր ընդդիմադրութիւնը: Յունական կուսակցութեան պարագլուխն է, ինչպէս և ամբողջ չորրորդ դարի ընթացքում, Գրիգոր Լուսաւորչի տոհմը, որի ներկայացուցիչն էր Վարդանը: Զօրեղ էր այդ կուսակցութիւնը մանաւանդ այն պատճառով, որ Մամիկոնեանների հետ խնամիրական և ազգականական կապերով կապուած էին շատ նշանաւոր նախարարական տներ:

Շատ հետաքրքրական է հեղինակի վերաբերմունքը դէպի Վասակ Սիւնին: Արդէն Գարադաշեանը իր «Քննական Պատմութեան» մէջ փորձել է ցոյց տալ Վասակին ոչ այնպէս, ինչպէս նկարել են Եղիշէն ու Փարպեցիս: Մեր կղերական պատմագիրները Վասակին հռչակել են իբրի մի զգուելի, ստոր դաւաճան և մատնիչ: Քննական պատմութիւնը, վերաբերուելով այդ պատմագիրներին այնպէս, ինչպէս հարկաւոր է, Վասակի անձնաւորութեան մէջ տեսնում է պարսկամոլ կուսակցութեան ներկայացուցիչին, կուսակցութեան, որ հարկաւոր էր համարում հաշտ ապրել Պարսկաստանի հետ, վտանգի չենթարկել Հայաստանի ապստամբութեան և դիմադրութեան միջոցով: Մենք կարող ենք հաւանել կամ չք հաւանել պարսկական կուսակցութեան հայեացքները, գործ դրած միջոցները, բայց չենք կարող չընդունել որ այդ կուսակցութիւնը սրիկաներից և վարձկան դաւաճաններից չէր կազմուած, այլ ունէր իր ծրագիրը, աշխատում էր քաղաքական իշխանութիւնը զօրեղացնել և չը թոյլ տալ որ եկեղեցականները լինեն իրերի կատարեալ տէրերը:

Փորթուգալ փաշան էլ այդպէս է վերաբերում պարսկական կուսակցութեան: Թոյլ Հայաստանի և վիթխարի Պարսկաստանի դրութիւնը չափելով քաղաքագէտի հայեացքով, նա էլ Գարադաշեանի պէս գտնում է որ կրօնական պատերազմը կարող էր և տեղի չունենալ, որ նա անխուսափելի անհրաժեշ-

տութիւն չէր, եթէ հայերը կարողանային չըջահայեաց խոհեմութեամբ վարուել այն պետութեան հետ, որին հպատակուած էին: Վասակի վերաբերմամբ նա ցոյց է տալիս այն հանգամանքը, որ Սիւնեաց իշխանը բառի բուն նշանակութեամբ ուրացող չէր. ճիշտ է, նա թոյլ էր քրիստոնէութեան մէջ, բայց պարսկական կրօնն էլ չընդունեց: Եւ ով գիտէ, եթէ մեր պատմագիրները այնպիսի անհաշտ թշնամութեամբ վերաբերուած չըլինէին Վասակին, գուցէ այսօր մենք կունենայինք այնպիսի նիւթեր, որոնք թոյլ կը տային ենթադրել որ Սիւնեաց իշխանը ոչ քրիստոնէութեան, ոչ մազդեզականութեան երկրպագու էր, այլ ձգտում ունէր դէպի հայոց հին կրօնը, որին հետևողներ, ինչպէս յայտնի է, կային Սիւնիքի կողմերում: Վասակի ժամանակը—Միքայէլ փաշան գուրս է բերում Վասակին մի քաղաքագետ, որ ուզում էր իր հայրենիքը ազատել պարսից լուծից, բայց ոչ թէ հայերի սեփական ոյժով, որ չնչին էր, այլ շրջակայ ցեղերի հետ դաշնակցութիւն կապելով:

Շատ ափսոս, որ մեր հեղինակը կիսատ է թողել իր շատ հետաքրքրական, շատ խելօք պատմական տեսութիւնը. նա չէ հետևում Վարդանին, Վասակին, հոգևորական գործիչներին մինչև կրօնական պատերազմի վերջը, որովհետև հաւատում է Եղիշէին, համարում է նրան անպայման վստահելի, թէև տենդենցիօզ պատմիչ կամ աւելի լաւ է ասել՝ վիպագրող:

Մեղանում նեղ հայեացքը, ֆանատիկոսութիւնը այն աստիճան տիրապետող է հանդիսանում, որ երբ մի քննադատ փորձում է ցոյց տալ որ 15 դար ուրացող, մասնիչ հռչակուած Վասակին պէտք է մի քիչ ուրիշ կերպ հասկանալ, իսկոյն աղմուկ են հանում և այդպէս ասողին էլ պատրաստ են դաւաճան և ուրացող անուանել: Սակայն աղմուկը ոչինչ չէ ապացուցանում: Քննադատութիւնը հետզհետէ պարզում է որ Վասակը կղերական անհաշտութեան շնորհիւ է կորցրել իր իսկական դէմքը, ինչպէս նոյն անհաշտութեան զոհ է մեր համակրելի թագաւորներից մէկը, Պապը—Ի՞նչ վնաս ունենք, եթէ քննադատութեան աջողուի վերականգնել պատմական ճշմարտութիւնը: Եւ Վասակին արդարացնողները հօ չեն կարող նրան մաքուր, ձիւնափայլ գործիչ համարել: Փաստեր կան, որոնք Վասակի օգտին են խօսում, բայց շատ են և այն փաստերը, որոնք նրա դէմ են: Պարսից զօրքի շարքերում հայերի դէմ կռուելը արդէն բաւական է ցոյց տալու, որ այդ մարդը միջոցների խտրութիւն գտնել չը կարողացաւ իր հայեացքները, իր ծրագիրը պաշտպանելու մէջ: Անաշառ վճիւր տեղ կայ, որ կարգարացնէ նրան և տեղ կայ, որ կը դատապարտէ:

Ինչ և իցէ, շատ ուրախալի է, որ քննական կարողութիւնը այսօր նոր, լայն հորիզոններ է բաց անում մեր առջև և մեր պատմութիւնը կերպարանափոխւում է կամայ կամայ. մենք սկսում ենք հասկանալ մեր անցեալը ոչ այնպէս, ինչպէս կամեցել են մեր կրօնաւոր, տենդենցիօզ մատենագիրները, այլ ինչպէս թոյլ է տալիս բաղմակողմանի, խիստ հետապօտութիւնը: Ահա մենք մանկութիւնից սովորել ենք որ եթէ պարսիկները մեզ տանջում էին հինգերորդ դարում, պատճառն այն էր, որ նրանք անօրէններ էին, իսկ մենք ամեն կողմով լաւ մարդիկ, որ մենք գնում էինք մեռնելու, որպէս զի ժառանգենք արքայութիւնը: Սակայն անօրէնի և օրինաւորի հարցով չէ կարելի բացատրել պատմական մեծ դէպքերը. կային պետական, քաղաքական շահեր, կային աշխարհայեցողութիւնների, ուղղութիւնների ընդհարումներ: Պէտք է բացատրել այդ բոլորը, պէտք է հասկանալ իրերի իսկական իմաստը: Միքայէլ փաշան այդպէս էլ արել է: Նա, երևի, շատ լաւ գիտէր, որ հայը իր պատմական դասագրքերից, իր դպրոցից միայն այն ողորմելի բանն է սովորում, որ պարսիկը մոխրապաշտ էր, զգուշի կրօն ունէր: Եւ խնդհայի միտքը մի քիչ բաց անելու համար նա երկար և մանրամասն պատմում է թէ ինչ էր մագդեղականութիւնը, ինչեր էր նա դաւանում, ինչ սկզբունքներ էր սրբացնում: Մեր զրականութեան մէջ ինձ յայտնի չէ մի այլ աշխատութիւն, որ այդքան մանրամասն կերպով խօսէր պտրսկական դէնի մասին: Հէնց միայն այդ կտորը բաւական է, որ մենք շատ չնորհակալ լինենք հանգուցեալ հեղինակից:

Իր ընդարձակ և շատ հետաքրքրական ճախագրութիւնից» յետոյ Միքայէլ փաշան դնում է Եղիշէի ամբողջ պատմագրութիւնը և լուսարանում է նրան անթիւ ծանօթութիւններով, որոնք թանկազին նիւթեր են, հաւաքուած հմուտ ձեռքով: Մի համառօտ մատենախօսական յօդուածի մէջ հազիւ թէ կարելի լինի պահանջել որ մենք գոնէ հարևանցի ծանօթութիւն տանք այդ բացատրութիւնների մասին: Կարող ենք այսօր ասել որ դրանք շատ բովանդակալից են, հետաքրքրաշարժ և բաղմակողմանի հարցեր են չօշափում: Հեղինակի մանրակրկիտ հետազօտութիւնները ոչ միայն պարզաբանում են աշխարհագրական դիրքերը, ճանապարհները, այլ և մօտաւոր հասկացողութիւն են տալիս, օրինակ, թէ ինչ էր Սասանեանների հարկային սխտեմը և Հայաստանը ինչ տեսակ հարկեր էր վճարում Պարսկաստանին:

Իբրև նմուշ մի օրինակ բերենք: Սովորութիւն է դարձել մեզանում այժմեան թիւրքիան անուանել Տաճկաստան և

օսմանցիներին՝ տաճիկներ: Դա մի անմիտ սովորութիւն է, որ ոչինչ հիմք չունի: Որ այժմեան օսմանցիները տաճիկներ չեն, ցոյց է տալիս այն, որ Խորենացին և Եղիշէն գործ են ածում «տաճիկ» անունը, մինչդեռ յայտնի է որ նրանց ժամանակ չը կային այժմեան թիւրքերը: «Տաճկաստան, ասում է Փօրթուգալ փաշան, այս է Ասորւոց արեւելիողմը՝ Միջագետաց մէջ բնակող Արաբացիք կամ արուայիկք, որք Շապուհ երկրորդի ատենը զՏիգրոն զարկեր ու զԲաբելաստան ասպատակեր էին: Դազի պարսկերէն նշանակէ «արաբացի», միանգամայն և «վազուկ» (ձի կամ չուն), որպէս ի մեզ «տաճիկ»: Դրա հնազոյն ձևն էր դազիք կամ դանիք, յոգնակի դանիքան, որ Պունտահիշի մէջ ալ Միջագետաց Արաբացոյ անունն էր— Օսմանեան Պետութեան Տաճկաստան ասելը սխալ է ուրեմն. այդ անունը Միջագետաց Արաբացոյ կը պատկանի, որք ի հինգերորդ դարուն մահմեդական ալ չէին:— Ըստ աւանդութեան՝ զոր ի մէջ բերէ Միւսթէլ Իթթաւարիի հեղինակը, այդպէս յորջորջեալ են Արաբացիքը յանուն Դան Նահապետին իւրեանց, որ հաստատեր է զբնակութիւն իւր ի Բաբելոն, և որոյ թոռանը թոռն է եղեր Բիւրասպի Աժդահակի— Դաճիք՝ ըստ արդի պարսիկ բառագրոց է այր արաբացի մնելով ի Պարսկաստան»: Մեր կողմից կաւելացնենք որ տաճիկ անունով մի ցեղ այժմ ապրում է Միջին Ասիայում և ոչ մի առնչութիւն չունի թիւրքերի հետ: Այսպէս ուրեմն, պէտք է թողնել օսմանեան պետութեան «Տաճկաստան» անունը տալու սովորութիւնը և անուանել նրան Թիւրքիա, ինչպէս անուանում է ամբողջ աշխարհը:

Մի նմուշ էլ լեզուական բացատրութիւններից: Եղիշէն գրել է «զհրաչակերտ յարութիւնն առնելով բոլորեցունց»: Միքայէլ փաշան զնում է այսպիսի ծանօթութիւն: «Դիտելի է՝ որ բահլաւի մատենից մէջ Ֆրաւաբեթ՝ գոյական անուն կը նշանակէ ընդհանուր յարութիւնն ի մեռելոց. Ֆրա սկզբնական վանկը կը փոխի ի հրա հայերէնի մէջ. որպէս Ֆիրիթքէ լինի հրեշտակ, Ֆերման՝ հրաման, Ֆերվաթէ՝ հրապարակ: Ունիմք և մեք «հրաչակերտ» գոյական անուն»:

Եւ այսպէս շատ ու շատ բացատրութիւններ, որոնք կրնաճիռներ են լուծում, մթութիւններ են լուսարանում:

Հեղինակի մէջ երևում է մի վառ սէր դէպի իր հայրենիքը, իր ազգութիւնը: Բայց այդ սէրը խելացի, զարգացած մարդու սէրն է և ոչ մի տեղ կուրութեան չէ հասնում: Միքայէլ փաշան Յազկերտին, Եղիշէի պէս, չէ համարում մի հրէշ, սատանայի գործիք. ընդհակառակն, նա դուրս է բերում այդ թագաւորի խելքը, հեռատեսութիւնը, իր պետութիւնը ամրապնդե-

լու, նրա քաղաքական շահերը ընդարձակելու մեծամեծ ջանքերը՝ Միհրներսեսի հաղարապետը, որ մեր պատմիչների տսելով նոյնպէս մի դաժան հրէշ էր, պետական մի խելօք գործիչ էր, ահագին ազդեցութեան տէր մարդ։ Մեր հեղինակը արաբացի հեղինակների հաղորդած տեղեկութիւններն է բերում Միհրներսեսի մասին և մենք տեսնում ենք որ դա, ճիշտ որ, մի փորձուած, խորագէտ պաշտօնեայ էր։ Այժմ բոլորովին հասկանալի է դառնում որ հայերի ապստամբութիւնը հինգերորդ դարում ոչինչ արդիւնք չէր կարող տալ, նա միայն կը լինէր մի հիւսնալի նահատակութիւն, գաղափարական մի ինքնազոհութիւն։ Այդպէս էլ եղաւ Հայաստանը քարուքանդ եղաւ և այլ հս չը կարողացաւ առաջուայ պէս ապրել։

Վերջացնելով մեր խօսքը փորձուգալ փաշա գեղեցիկ աշխատութեան մասին, մենք ամբողջ սրտից կը ցանկայինք որ մեր բոլոր պատմագիրները գտնէին այդ բարձրաստիճան, զարգացած և վերին աստիճանի բարեխիղճ աշխատաւոր հայի նման բացատրողներ և լուսաբանողներ։

Լ.

Ն Ո Ր Ս Տ Ա Ճ Ո Ւ Ա Ծ Գ Ր Ք Ե Ր

- 1) Իվան Տուրգենեւի, Արձակ բանաստեղծութիւններ, թարգմանութիւն Ա. Ծատուրեանի. Բագու, 1902 թ., գինն է 2 կոպ.։
- 2) Բժ. Ա. Բուդուղեան, Առողջ ու հիւանդ երեխայի ոգին, Ս.-Պետերբուրգ, 1902 թ., գինն է 20 կոպ.։
- 3) В. Потто, Первые добровольцы Карабага въ эпоху водворения русскаго владычества (Меликъ-Вани и Акопъ-Юзбаши Атабековы), Тифлисъ, 1902 г., цѣна 60 коп.
- 4) Հաչիւ Սանկտ-Պետերբուրգի հայոց եկեղեցական գոյքերի կառավարութեան խորհրդի 1901 տարուան, Ս.-Պետերբուրգ, 1902 թ.։
- 5) Լէօ. Ստեփանոս Նազարեան, II հատոր, 1902, երկու հատորի գինն է 1 ռ. 50 կ.։
- 6) Լ. Մանուէլեան, Դէպի վեր, զրամատիկական պօէմա, Ս.-Պետերբուրգ, 1902 թ., գինն է 10 կոպ.։

Ն Ե Ր Ք Ի Ն Տ Ե Ս Ո Ւ Թ Ի Ի Ն

Հայ գաղթականների վերադարձը.—Հայ ժողովուրդը, իր հոգևոր պետերը
և թիւրքաց կառավարութիւնը.—Ձինուած աւաղակներ և անդէն աշխա-
տատորներ.—Ձէնք կրկու իրաւունքի վերացումը.—Հայ ազնուականներ.—
Մանուկ բէյ.—Սշակերտների ֆիլիկական զարգացման մասին հոգատա-
րութիւն.—† Բեկետով, † Սեմիրադսկի:

Գաղթականները Կարսում:

Գաղթականները գնում են... վեց-եօթ տարուայ անորոշ,
խեղտող, սպասողական կացութիւնից յետոյ վերջապէս նրանք
վերադառնում են հայրենիք:

Նրանց ասացին, որ կարող են մնալ բարեկարգ ու խաղաղ
երկրում, վայելել կեանքի, պատուի, գոյքի ապահովութիւն, բայց
նրանք անկարող եղան ընդունել բարեմիտ հրաւերը. պակաս-
տում էր զխաւորը, էականը, հայ գեղջուկի աշխատանքն ու
նուիրական քրտինքը բեղմնաւորող մայրը՝ հողը: Երբ չը կայ
հողը՝ չը կայ ոչինչ, հայ գեղջուկը սերմ է, նա ապագաւոր վրայ
չի բուսնի, արմատ չի ձգի:

Քանի մի տարի առաջ՝ երբ նրանք առաջին անգամ հա-
լածական ու տառապած ոտք կոխեցին մեր երկիրը, չը նայե-
լով իրանց կրած բոլոր սարսափներին, նրանք շուտով, շատ
շուտով վերադառնալու վարդապոյն յոյսերն ունէին: Իրանց
լեռներն ու ձորերը հեռաւոր կարմիր մշուշի միջից ասեա նրանց
թարթում էին ժպտում: Մի յուզիչ ու վսեմ բան կար այն
յամառութեան մէջ, որով նրանք աշխատում էին մնալ իրանց
հայրենիքից բերած զգեստներով: Կարծես նրանք իրանց զգեստ-
ների ծալքերում կրում էին այն անօրինակ ոյժի թալիսմը, որ
նրանց վերադարձի և լաւ ապագայի յոյսեր էր ներշնչում, վառ
էր պահում հաւատը, հայրենի խրճիթի, լեռ ու ձորի, դաշտի

ու արտի հոսն ու յիշատակը կապում էր այդ մաշուած, ծուխի ծուխի եղած քուրջերի հետ նրանք վախենում էին հանել, դէս ձգել այդ զգեստները, կարծես հայրենի արտերի և դաշտերի մէջ մաշուած այդ ցնցոտիների իւրաքանչիւր կտորը իր հետ կը տանէր նաև նրանց յոյսերի մասը, նրանց հաւատը կը խախտէր: Եւ քաշ էին գալիս երկրէ երկիր նոյն մաշուած պատառ պատառ զգեստներով, նոյն փայփայած, բայց գունատ, երերուն յոյսով՝ վերագառնալու իրանց նոյնքան գունատ, նոյնքան աւեր ու յօշոտուած հայրենիքը:

Ես չեմ կարող մոռանալ երբէք մի ծերունի գաղթական, որ երկար ժամանակ թելերով կապկապում էր հայրենի երկրից բերած իր ծուէնները, նրան առաջարկեցին ցրտից պաշտպանելու համար հագնել զինուորի մի հին վերարկու. բարեսէր մարդիկ էին առաջարկողները, նսլաստ և զգեստներ էին բաժանում, ծերունի գաղթականը առաւ իր համար այնքան տարօրինակ այդ վերնազգեստը, դիտեց երկար. ցուրտ էր, հագաւ, իր վրայ նայեց վերից վար, ապա հանեց, դէն դրեց, և արտասուելով դուրս գնաց իր ցնցոտիներով. կարծես օտարի վերարկուն իր յոյսերի, իր արժանապատուութեան, նոյն իսկ հայրենիքի պատանը լինէր, նա անկարող եղաւ թաղել միանգամից այնքան գեղեցիկ բաներ: Հայի դարաւոր պատմութիւնն էր կրկնում այդ ծերունու յուզմունքով, նրա մարած աչքերից քամուած արցունքի կաթիլներով:

Հայ գիւղը, որքան և բազմամարդ լինի, նա մի ընտանիք է, մի հատիկ նահապետական տուն: Եւ գաղթողները հատ հատ մարդիկ չէին, այլ գիւղեր, ամբողջ համայնքներ, այդպէս էլ թափառեցին նրանք, հարեաններից անբաժան, միասին տառապեցին, միասին լացին, միասին յուսային: Դուռ դրան վրայ, պատկից ապրող հարեանները, օտար երկրում էլ հայրենի գիւղի պէս մի բան կազմեցին տարափոխիկ թռչունների պէս, հեռաւորը երազեցին և նոր ցաւերի տակ, միասին կռացան: Եւ նստում էին նրանք իրար կողքի, պատերի տակ, աշնանային արեւի առաջ, աղքատի արևի, և խօսում, խօսում ճերկրից, վաթանից, սեւ բաղդից: Արցունքի ու ցաւի մէջ հարսանիքներ էլ տեղի ունեցան, սգաւորի հարսանիք, բայց միշտ աղջիկ ուղեցին հարեաններից, աղջիկ առան դարձեալ հարեաններից: Նրանք չէին ուզում իրանց զաւակը օտար երկրում թողնել, և օտարին իրանց հետ տանել հեռու հեռու. չէ որ նրանք հաւատացած էին միշտ, որ չուտով յետ են գնալու, չուտով տեսնելու են հայրենի հողը: Եւ երկար ժամանակ աշխարհի ծովի վրայ նրանք միասին թիավարեցին իրանց դժբաղդու թեան

նաւը: Յոյսը կար... Փրկարար, կենսաւէտ, մխիթարիչ յոյսը: Անտունն ու թափառական, այս ողորմելի վտարանդիները Կուրի ավերում Արածանին երազեցին, Արաքսի ալիքներից լուրեր հարցրին Բինգեօլի բարձրութիւններից, Բարձր Հալքի ձորերից, ուր լռել էին աշխատաւորների երգերը, ուր բարեբեր հողը դատապարտուել է բռնի ամլութեան: Հարցրին և սպասեցին: Եւ այսպէս տարիներ...

Այժմ վերադառնում են, որովհետեւ էլ սպասել հնարաւոր չէ: Շատերն այնտեղ երկրում թողել են իրանց մերձաւոր սիրելիները, ընտանիքը, բազմամարդ նահապետական ընտանիքը տարիներից ի վեր պատառ պատառ է եղել իրանց սրտերի պէս: Մնացածները մոխրի վրայ սգացողների նման սպասում են իրանց զղարիւ-կուրքաթներին: մէկն իր եղբորը, մէկն իր ամուսնուն, հօրը, քրոջը զուակին. սպասում են, որ վերադառնան, ամեն բան նորից սկսելու համար: Սրանք օտարութեան մէջ, հայրենի հողի, մշակութեան, հալալ քրտինքի կարօտը սրտերում, վերադառնում են իրանց սիրելիներին հասնելու:

Երկու պատկեր կանգնած է նրանց առաջ. դժբաղդ վաթան, արիւնոտ անակնկալներով հարուստ մի ապագայ, հայրենի օջաղի, արտի, դաշտի, ջրի օդի մէջ, և արկածալից, թափառական մի կեանք օտարութեան մէջ. երկուսն էլ անհամբույր, երկուսն էլ խեղտող, հոգեհան, և գաղթականներն առաջինն ընտրեցին: Խեղճերին թւում է, որ հայրենի հողը, էլի մայր է, հարազատ մայր, որ ծոցը ինչ էլ լինի ջերմ է, ստինքը պարարիչ: Փոթորկոտ մի ծովի ուռած ծփանքների պէս կատաղի հողմերով մղած, զարկուեցին ամերի լեռնապագածներին, զարկուեցին կականով, լացով, այժմ նորէն յետ են գնում գրաւելու իրանց նախկին տեղերը, թէև ալեկոծումը դեռ չի դադարել: Ջրուտ բաղուկներ ունեն, հաւատում են այդ բաղուկներին, յաղթ թիկունք ու իրան ունեն, ուր կեանքի էնեգիան դեռ չի մնուել, վարել ու հնձել գիտեն, հող, հող են խնդրում:

Ինչպիսի ոգեւորութեամբ էր պատմում մի գաղթական իրանց հողի առատութիւնն ու բարեբերութիւնը, խոտն ու ցորենն ասում էր, մարդու կրծքին է հասնում, ճահ էսլա, չուն էս ա տեղա: Նա ձեռքով ցոյց էր տալիս իր կուրծքը, և աչքերը, այդ մարած, թախծապատ աչքերը այդ վայրկեանին փայլում էին ոգեւորութեան յանկարծական կրակով: Գեղեցիկ էր գեղջուկն այդ ժամին, ինքը հայ ժողովուրդն էր խօսում նրա շրթութուններով. հող, հող:

Պէտք էր տեսնել այդ սրբազան ոգեւորութիւնն, որոշելու համար նողկանքի, զգուանքի այն չափը, որին արժանի են հա-

յին հրէաների հետ համեմատող դազան մարդակերները, պէտք էր նայել այդ գեղջուկ դէմքին, ուր հողի կարօտը, իր արտերի ակօսների չափ, կնճիռներ էր քաշել, պէտք էր կարդալ այդ դէմքը՝ ըմբռնելու համար, թէ մինչև որ աստիճան ստոր, զազիր հոգի պիտի ունենայ մարդ, այդպիսի ճակատին չարչի, վաշխառու անարգական ածականները չպրտելու: Եւ որչափ շատ են այդ դէմքերը, հայ ժողովրդի մեծագոյն մասը, նրա ութսուն և աւելի տոկոսը: Հող, հող... վերադառնում են հողի սիրահարները խումբ խումբ: Օղոստոսի 10-ից սկսած Թիֆլիսի երկաթուղային կայարանը մի անօրինակ, մի յուզիչ տեսարան է ներկայացնում ամեն երեկոյ: Մարտիրոսների մի կարաւան է այն, որ ցաւեր չարկած յամբօրէն բարձրանում է քարէ սանդուխներից, ներս է մտնում երրորդ կարգի դահլիճն և թափւում յատակի վրայ խառն ու անկարգ, խուլ մոմոցով, նստում է և սպասում է վերջին սուլոյին, որ նրան տանելու է դէպի մի սփինքս:

Էլ համայնքներ, գիւղեր չեն, այլ մեծ մասամբ զատ զատ մարդիկ, կեանքի փոթորիկը նրանց բաժանել է իրարից, չպրտել հազար կողմեր: Գալիս են իրանց երեսանների, իրանց կանանց հետ, բերում են իրանց ամբողջ հարստութիւնը, որ շատ անգամ մի հատիկ մէջօկի մէջ է պառկած: Զգեստի նմանութիւն էլ չը կայ, հայրենի երկրից բերածը ծուխի ծուխի թափւում է օտարների դռներում, սահմանից մինչև Թուսաստանի հեռաւոր քաղաքները: Հագել են, ինչ ձեռք են բերել, ինչ տուել են: Ողորմութիւնը նրանց խայտաբղէտ է դարձրել, միեւնոյն ընտանիքի մի քանի անդամներ քանի քանի տարազների նմուշներ ունին իրանց տանջուած մարմինների վրայ, մէկը եւրոպական գլխատից մի բան ունի իւզոտ ու ճմռած, միւսը չուխայ, երրորդը հնոտի արխալուզ, մէկը գլխին թասագ ունի, միւսը ահագին փափախ, երրորդը զինուորական գլխարկ, ոմանք նման են չիրակեցու, ուրիշները զաղախեցու, զարաբաղցու. ով ինչ կամեցել է, հագցրել է նրանց և ցաւերին համբերատար թիկունքները կրում են այդ բոլորը: Բարբառների մէջ էլ նմանութիւնը խախտուել է, խորթ անծանօթ բառեր են հնչում, օտար ապշեցուցիչ բառեր. օտարութիւնը կրծել է բարոյական չէնքը, մի փոքր աւեր գործել հայրենի յիշատակների, յիշողութիւնների մէջ, շատ փոքր, բայց ամբողջութիւնը դեռ մնում է, դիմանում է: Նման և անփոփոխ են մնացել դէմքերը, թախծապատ դէմքերը. այդ խոհուն ու տառապալից աչքերը, որոնք բոլորն էլ նոյն յոյզն ու յոյան ունեն: Արտաքին այդ բազմազան պատկերի տակ թաքնուած է ներքինը, նա որ ընդհա-

նուր է բոլորի մէջ, հոգու ցաւերը, հողի կարօտը, Շատերն իրար օտար են, անծանօթ, բայց հէնց տեղն ու տեղը, կայարանում, բարեկամանում են, ընդհանուր «զարդի» կապը շատ է զօրեղ, Հին օրերի հարեւանութիւնը վերսկսւում է, օգնութեան ձեռք են մեկնում իրար, քանի քանի շունեւոր գաղթականներ իրանց հարեւանների դրամով, ծանր աշխատանքի քրտինքի պտուղով, ճանապարհ ընկան և ձեռք չը մեկնեցին:

Որչափ փոխուել են այս մարդիկ, վեց եօթ տարի առաջ իմ տեսած մարդիկը չեն. այն ժամանակ նրանք խեղճ ու կրակ մուրացկաններ էին, լալկան ու մեղկ, այսօր նրանք դարձեալ մարդ են, դարձեալ բունաւեր թռչունների պէս են, բայց էլ մուրացիկ չեն, նրանք չեն դիմում, չեն աղերսում նպաստ բաժանողին և գնում են, իրանց կացութեան, անորոշ ապագայի գիտակցութիւնն ունենալով հանգերձ, գիտակից են նաև իրանց մարդկային արժանիքի: Մինչև այժմ նրանցից ամենաշուշանեւորներին, «Մշակի» բացարձակ մի քանի օրուայ հանգանակութեան չնորհիւ, կարելի եղաւ միայն ձրի տոմսակ տալ մինչև կարս, և միայն այսքան, և միայն այսքանով բաւականանում են խեղճերը:

Մինչև այժմ հազարից աւելի արդէն խմբուել են կարս, և դեռ գնում են նորերը և շուտով երեւի այնտեղ նրանց թիւը կը հասնի մի քանի հազարի: Գնում են և նրանք, որոնք որոշ չափով տանելի վիճակ էին ստեղծել իրանց համար մեր կողմերում, հայրենի հողի սէրը, որպէս գիւթական թալիսմ, քաշում տանում է ամենքին: Գնում են էլի մի անգամ բաղխելու անհիւրընկալ դարձած վաթանի դռները, գուցէ բացուի, գուցէ ներս ընկնեն և այնուհետեւ ո՞վ գիտէ...

Օգնել, օգնել է հարկաւոր ամենալայն չափով, ամեն տեղ, ամենքին, անխտիր, գաղթականը հարուստ չէ, նա հարուստ լինել չի կարող, որքան չար ու բարի է կապուած այդ կենդանի նահատակների ոտքերին, ո՞վ գիտէ, թէ ինչեր է սպասում նրանց, էլ տուն, օջաղ կնյ, արտ ու անդաստան մնացել է, որքան աշխատանք, որքան քրտինք է հարկաւոր այնտեղ, ամեն բան պէտք է նորից սկսել...

Ա. Ա.

Մեր ընթերցողներին յայտնի է որ դեռ այս մարտ ամսում կառավարութիւնը առաջարկել էր թիւրքահայ փախստականներին՝ կամ ընդունել ռուսահպատակութիւն կամ վերադառնալ Թիւրքիա: Փախստականների մի մասը բարուրդ համարեց ընդունել ռուսահպատակութիւն և հաստատուելով Ռուսաստան

նուժ, փախստականից դառնալ դաղթական, սակայն մեծ մասը անկարող եղաւ համակերպուել այդ առաջարկութեան, որովհետեւ թողել էր իր դժբախտ ծննդավայրում տուն, տեղ, ընտանիք: Միւս կողմից, դրանք օտարութեան մէջ տեսան թէ ինչ է նշանակում անտուն-անտեղ, աստանդական, չարքաշ կեանքը: Անշուշտ, եթէ այդ խեղճերը յոյս չունենային որ մի օր, վերջապէս, կ'իրագործուեն գէթ այն բէֆօրմները, որ մշակել էին երեք մեծ պետութիւնների գեսպանները Պօլսում դեռ 1895 թուականին և ընդունել էր ու վաւերացրել իր ստորագրութեամբ սուլթան Համիդը և ապա սնմեղ զոհերի արեան գետերով ջրնջել այդ ստորագրութիւնը, եթէ լաւագոյն ապագայի յոյսը իսպառ մարած լինէր այդ խեղճերի սրտում—նրանք չէին վերադառնալ ու նորից փորձանքների ենթարկել իրանց բազմաշարժար գլուխը: Իսկ սպասելու այլևս ժամանակ չը կար: Կառավարութեան նըշանակած պայմանաժամը հասել էր. Թիֆլիսի ոստիկանապետը ամսիս սկզբում մի շրջաբերական հրամանով պատուիրել էր պրիստուններին՝ յայտնել բոլոր հայ գաղթականներին, որոնք դեռ չեն ընդունել ռուսահպատակութիւն, որ մինչև այս օգոստոս ամսի 10-ը պիտի գրուեն մեշչանների դասակարգի անդամ: Եւ ոստիկանապետը առաջարկել էր պրիստուններին՝ օգոստոսի 10-ին կազմել այդպիսի հայ փախստականների անուանական յուշակը:

Ի հարկէ, այդ կարգադրութիւնը մի անակնկալ բան չէր և՛ եթէ ոչ իրանք փախստականները, զոնէ այդ թշուառ հօտի պաշտօնական հովիւները (կաթողիկոսը, պատրիարքը) պէտք է մարտից սկսած մտածէին այս օրուայ մասին, պէտք է հոգային սահմանագլխից անցնելու թոյլաւութեան մասին: Թշուառութիւնից շուարած ամբոխը դնում է այսօր, թողնելով մի կերպ տաքացրած իր անկիւնը, դնում է իր ծննդավայրը, մոռանալով այնտեղ իր կրած սոսկալի արհաւիրքները. նա պատրաստ է դարձնալ գրաստի համբերութեամբ աշխատել իր նեղիչների համար, լքնել իր արիւն քրտինքով թրքական դատարկ գանձարանը, որից պէտք է ագրուստ ստանան իրան հարստահարող փաշաները, իր ընտանեկան սրբութիւնը լլկող և հային շան պէս գնտակահար անող համիրդականները: Եւ այդ՝ եղան համբերութիւն ու անսպառ աշխատասիրութիւն ունեցող և մինչև վախկոտութիւնը խաղաղասէր թշուառ ժողովուրդը վրտանդաւոր տարր է համարւում: Չը գիտենք էլ ինչ կարելի է սպասել մի կառավարութիւնից, որ այդքան տխմար է, այդչափ անարգօր. չը գիտենք էլ ինչի է յետ վերցնում իր հրաժարա-

կանը Օրմանեանը, եթէ նա անկարող է աջողցնել նոյն իսկ մի այդպիսի ջնջին զիջում, այն է՝ թոյլ տան անգէն, խեղճ ու կրակ փախստականներին վերադառնալ իրանց աւերուած խրճիթները, վառել իրանց հանգած օջախները և դարձեալ «հարկ ու խարճի» համար «վօթիլ արիւն ու քրտինք»։ Ահա այդպիսի քաջասիրտ զազապետներ» ունենք...

Այդպէս ուրեմն ոչինչ չէ արուած թեթեւայնելու համար փախստականների վերադարձը։ Բայց նրանք այնուամենայնիւ խումբ խումբ թողնում են Թիֆլիսը և ուղեւորւում Կարս։ Նախամտածած, որոշ ոչինչ չը կայ. Թիֆլիսում նրանց տալիս են ճանապարհածախք, Կարսում կը հոգան նրանց մասին, սակայն երբ կը բացուին դժոխքի դռները, այդ չը գիտէ ոչ ոք, նոյն իսկ դռնապանները—սահմանագլխի թուրք պաշտօնեաները։

Իսկ շուտով վրայ կը հասնեն ցրտերը, Բարձր Հայքի բուքն է սպասում այդ վտարանդիներին, եթէ ուշ բացուի նրանց առաջ հայրենիքի դուռը. հակառակ դէպքում, եթէ թոյլտուութիւն չը ստանան անցել սահմանը, դարձեալ պէտք է աստանդական թափառեն, դռնէ դուռ ընկած։

Թշուառ կացութիւն։

Եւ այդպիսի կեանք են քարշում թիւրքահայ փախստականները յիւր ու ցան կովկասում, Պարսկաստանում, Յունաստանում, Եգիպտոսում, Բուլղարիայում, Ամերիկայում. դրանցից շատ քչերը իրանց յօժար կամքով կը վերադառնան իրանց կարօտած հայրենիքը, եթէ չարունակուի այնտեղ սուլթանական ներկայ բեօխը, որի վայրագութիւնը ընդունում են և իրանք «եխտասարդ» թուրքերը։

Դժբախտաբար այդ դժգոհ տարրերը այնքան են վախեցնում սուլթանին, որքան եւրոպական դիպլոմատիայի բարեկամական խորհուրդները։ 1895 թուի մայիսի 11-ին Մեծ-Բրիտանիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի լիազօր դեսպանների կողմից առաջարկուած մեմօրանդումի մէջ ասուած էր. «Բոլոր հայերը, ինչ կրօնի էլ պատկանեն, որոնք առանց դատաստանի աքսորուած են օսմանեան պետութեան սահմաններից կամ իւրանց բնական գաւառներից դուրս, կամ որոնք ստիպուած են եղել պանդխտել՝ աղքատութեան կամ ուրիշ հանգամանքների շնորհիւ, առանց մասնակցած լինելու որ և է քրէական գործում, թոյլտուութիւն պէտք է ստանան ազատ կերպով վերադառնալ Թիւրքիա կամ այն գաւառները, ուր նրանք առաջ ապրում էին, առանց որ և է ճնշումների տեղական իշխանութիւնների կողմից։ Նրանք նորից պէտք է ստանան այն սեփա-

կանութիւնները, որ նրանք ունէին երկիրը թողնելուց առաջ»։ Մի այլ յօդուածում ասուած է. «Սովորական ժամանակներում, երբ համիդիէ հեծելագունդը ծառայութեան մէջ չէ, չը պէտք է կրի ոչ նշանազգեստ և ոչ էլ զէնք»։ Սակայն որն է այդ պահանջներից կատարուելը։ Մենք ընդհակառակն ենք տեսնում. կոտորածներից փախածները քաղաքական յանցաւորներ են համարուում, իսկ կոտորած սարքող աւազակները վայելում են այդ փախստականների ստացուածքը և ոտքից ցզլուիլ ղինուած չըջում են անզէն, անպաշտպան, իրաւագուրկ ուսայի մէջ։

Ուրիշ երկրներում աշխատում են զինաթափ անել աւազակներին և պաշտպանել խաղաղ ազգաբնակիւթիւնը, իսկ թիւրքիայում դրա հակառակ ձեւով են վարուում։ Մինչդեռ մի տէրութիւն որ ինքը անկարող է պաշտպանել խաղաղ ժողովրդի դոյքը, պատիւը, կեանքը՝ զոնէ պէտք է իրաւունք տար դրանց զէնք կրել ինքնապաշտպանութեան համար։

Չէնք կրելը աւելորդ է դառնում խաղաղած երկրում, ուր իշխանութիւնը ոյժ ունի ստիպել հնազանդուելու օրէնքներին։ Այդպէս, միանգամայն աւելորդ և վտանգաւոր արտօնութիւն էր կովկասում ազնուականների իրաւունքը՝ ման գալ խէնչարով ղինուած։ Վրացի ազնուականները և թիւրք բէգերը առանձին ուշադրութիւն էին դարձնում այդ՝ «տղամարդային» զարդարանքի վրայ և, որովհետեւ պարապութիւնը, քէֆ անելը, կոնծաբանութիւնը, սիրահարութիւնը նոյնպէս ազնուականութեան յատկանիշներից մէկն է համարուում, բնականաբար՝ խէնչարը, յաճախ, զարդարանքից ոճրագործութեան միջոց էր դառնում։ Կառավարութեան կարգադրութեամբ օգոստոսի 10-ից յետոյ այլ ևս մեր այդ «ազնուականների» արծաթապատ գօտիներից կախ ընկած չի լինի նրանց «քաջասրտութեան» էմբլէման։ Ուրիշի աշխատանքով քէֆեր անող մեր տապաւնները այդպիսով զրկուում են իրանց խէնչարի ոյժը իրանց նմանների վրայ վորձելու հաճոյքից։

Բախտի բերմամբ մենք հայերս համարեա չունենք ազնուականութիւն. պատմութիւնը ասում է որ պարսից խաները կոտորում էին հայոց իսկական ազնուականներին և ապա իրանց հաւատարիմ նօքարներին, ախոռապաններին և իրանց հաւատարիմ մատնիչ հայերին չնորհում մելիքութիւն, բէգութիւն։ Ինչ և իցէ։ Սակաւաթիւ հայ ազնուականներից մէկն էր և օգոստոսի 1-ին Օդեսսայում վախճանուած անզաւակ Գրիգոր Մանուկ-բէյը, որ թողեց ոչ ազգին, այլ իր քոյրերին 9—10 միլիօն կարողութիւն։ Հոգակաւոր Լազարեան տոհմի այդ ազգակիցը, կարծեմ, ոչ մի խոշոր բարեգործութիւն չէ արել հայ ազգի օգտին, եթէ

չը հաշուենք իր կալուածք Հնչեւտի մէջ կատարած մի քանի աննշան գործերը: Գիտենք որ Մանուկ-բէյերից մէկը, չենք յիշում որը, մի քանի տարի առաջ բաւական խոշոր գումար էր նուիրել Լազարեան ճեմարանին: Այդ նուիրատութեան շնորհիւ ճեմարանը, ի միջի՝ այլոց, կարողացաւ յարմարութիւններ ստեղծել աշակերտների ֆիզիկական վարժութիւնների համար:

Մատաղ սերնդի ֆիզիկական զարգացման վրայ, դժբախտաբար, մինչև այժմ չատ քիչ ուշադրութիւն էր դարձնում պետական բոլոր դպրոցներում: Դպրոցական կեանքի այդ պակաս կողմի վրայ առանձին ուշադրութիւն է հրաւիրում լուսաւորութեան ներկայ մինիստրը, որի վերջին, օգոստոսի 15-ի, չրջաբերականը առաջարկում է մի շարք միջոցներ՝ արմատացած չարիքը վերացնելու համար: Այդ միջոցները հետեւեալներն են.

1) Աշակերտների մէջ երգեմն նկատուող յոգնածութիւնը վերացնելու նպատակով, իբրև փորձ մի տարի ժամանակով, բոլոր թէ՛ արական և թէ՛ իգական միջնակարգ դպրոցների մանկավարժական խորհուրդներին տալ իրաւունք՝ այն չարաթնեւում, երբ տոն օրեր չեն ընկնում, յատկացնել աշակերտներին, եթէ այդ կարեւոր կը համարուի, մի մի օր հանգստութիւն դպրոցական զբաղմունքներից, սակայն այն պայմանով, որ այդ օրերը չը թողնուին աշակերտների անկօնտրօլ կարգադրութեան ներքոյ, այլ նուիրուած լինեն էքսկուրսիաների, ընթերցանութեան, թանգարանների այցելութեան և այլ նման խելացի գուարճութիւնների՝ տաբուայ կղանակի և տեղական պայմանների համեմատ, բայց մանկավարժական ժողովների կարգադրութեան տակ գտնուող այդպիսի օրերի թիւը տարուայ ընթացքում եօթից չը պիտի անցնի:

2) Ի նկատի ունենալով որ դպրոցական կեանքի չատ և չատ երեւոյթներ սերտ կապ ունեն սովորողների առողջութեան հետ և կարող են մանկավարժական խորհուրդներում ուղիղ բացատրութիւն գտնել միայն դպրոցական բժշկի օգնութեամբ, — իբրև կանոն դարձնել, որ դպրոցական բժիշկը, որ միջնակարգ դպրոցների գործադրուող կանոնադրութիւններով մանկավարժական խորհրդի նիստերին հրաւիրւում է միայն այն ժամանակ, երբ այդ կարեւոր է համարում խորհրդի նախագահը, այսուհետեւ միւս անդամների հետ հաւաստարապէս մասնակցի մանկավարժական խորհրդի բոլոր նիստերին, ձայնի իրաւունքով բոլոր այն հարցերում, որոնք բժշկականութեան հետ կապ ունեն:

Բացի այդ, մինիստրը մի շարք ղեկավարող ցուցմունքներ է անում, որոնք պէտք է բարուրդեն դպրոցների առողջապահու-

կան զրութիւնը, խելացի հիմքերի վրայ զննն սովորողների ֆիզիկական վարժութիւնները, աւելացնեն հանգստութեան ժամերը, մի խօսքով պէտք է իրագործեն *mens sana in corpore sano*. (առողջ միտք առողջ մարմնի մէջ) իմաստուն ասացուածքը:

Պարոն մինիստրը ուշադրութիւն է դարձնում նաև սովորողների էստեթիկական զարգացման, երգեցողութեան, երաժշտական գործիքների վրայ ածելու և պարի վրայ:

Անշուշտ այդ բոլոր առաջարկութիւնները ինչպէս հարկն է իրագործելու համար նախ և առաջ հարկաւոր են նիւթական միջոցներ, սակայն ճանաչելով որևէ հարուստների առատաձեռնութիւնը, կարելի է վստահ լինել որ կը գտնուին և այդ միջոցները, քանի որ զրանցից է կախուած մատակարար սերնդի ամբողջ ապագան. չէ որ առողջութիւնը մարդուս ամենամեծ բախտաւորութիւնն է, եռանդի և գործունէութեան աղբիւրն է: Ի հարկէ այդ միջոցների գործադրութիւնն էլ պահանջում է մանկավարժներից սիրով վերաբերմունք դէպի իրանց ստանձնած գործը և ոչ չոր ու ցամաք, բիւրօկրատիական, ձեւական վերաբերմունք: Պէտք է մանկավարժը նախ և առաջ սիրի սովորողներին: Այդ տիպի ուսուցիչներից էր, յուլիսի 16-ին վախճանուած պրօֆէսոր Անդրէյ Նիկոլաեւիչ Բեկետովը, Պետերբուրգի համալսարանի բուսաբանութեան ուսուցչապետը: 1844 թուականին աւարտելով համալսարանն Բեկետովը գալիս է Թիֆլիս գիմնազիայում բնական գիտութիւնների ուսուցչի պաշտօնով: Կովկասում նա պատրաստում է իր մագիստրութեան դիսերտացիան (*Очеркъ Тифлисской флоры, съ описаніемъ лютиковыхъ ей принадлежащихъ*) որ և պաշտպանում է 1853 թուականին Պետերբուրգի համալսարանում: Հինգ տարուց յետոյ նա ստանում է բուսաբանութեան դոկտորի աստիճան և հրաւիրւում է Խարկովի համալսարանը, ապա մի քանի տարի անց՝ փոխադրւում է Պետերբուրգի համալսարանը, ուր և մնում է մինչև վերջ: Բեկետովի շնորհիւ բուսաբանութեան պարսպամէքները Պետերբուրգի համալսարանում շատ յարմարութիւններ են ստանում: Այդ գիտնականը պատկանում էր այն պրօֆէսորների շարքին, որոնք իրանց սիրող, մեղմ բնաւորութեամբ վայելում են ուսանողների բուռն համակրանքը: Բեկետովը ջերմ մասնակցութիւն էր ցոյց տալիս նաև հասարակական բոլոր համակրելի ձեռնարկութիւններին. կանանց բարձրագոյն կուրսերը, բնագէտների և բժիշկների համաժողովները, ժողովրդական դասախօսութիւնները միշտ գտնում էին յանձին այդ նշանաւոր գիտնականի ամենաջերմ մասնակցութիւն:

Գեղարուեստի աշխարհից էր միւս կողմստը. օգոստոսի

11-ին իր սեփական կալուածքում վախճանուեց հոշակաւոր նկարիչ Հենրիխ Իպպօլիտօվիչ Սեմիրազսկիյ, մօտ 60 տարեկան հասակում: Աւարտելով Պարկովի համալսարանի բնագիտական բաժինը, նա, իր իսկական կոչման ծառայելու համար, մտաւ Գեղարուեստների Ակադեմիան Պետերբուրգում և քիչ ժամանակ անցած դարձրեց ոչ միայն ամբողջ Ռուսաստանի այլ և Եւրոպայի ուշադրութիւնը իր փայլուն տաղանդի վրայ: Այդ լեհացի նշանաւոր նկարիչը առանձին սիրով իր վրձինը նուիրում էր հին կլասիկական (անտիկ) կեանքին, նա պատմական սիւժէի նկարիչ էր: Վառ գոյները, դէմքերի և ձեւերի հարուստ պէսպիսութիւնը, մեռած բնութեան նուրբ արտայայտութիւնը, անտիկ ոճի ըմբռնումը նրա տաղանդի բնորոշ կողմերն էին: Անտիկական կեանքը նա շատ խոր ուսումնասիրել էր, այնպէս որ նրա նկարները մարդուն տեղափոխում են նրա վերջրած էպօիները: Երկար տարիներ տալիսով Հոռմի մէջ, ուր նա ունէր սեփական մի զղեակ, Սեմիրազսկին իւրացրել էր կլասիկական անցեալի ոգին և այդ կեանքի ուրոյն արտաքին արտայայտութիւնները: Նրա վրձինի փայլուն ստեղծագործութիւններից ամենանշանաւորն էր 1877 թուին ցոյց դրուած «Ներօնի Ջահերը», որ և համաշխարհային հռչակ տուեց Սեմիրազսկու անուան: Մի խօսքով անիտիական կեանքը յանձին Սեմիրազսկու կորցրեց իր ոգեւորումը և մեծ բանաստեղծին, ինչպէս որ ովկիանոսը, ծովի ալիքները՝ իրանց Այվազովսկուն:

Լ. Ս.

25 օգոստոսի.

«Մեակիկն» գրում են Կարսի օգոստոսի 25-ին.

«Քանի որ առաջ եկած գաղթականները ղեռ այստեղ են:

«Օր չէ անցնում, որ նրանք չը գան տեղական թիւրքաց հիւպատոսի մօտ. հէնց այսօր համարեա բոլոր գաղթականները՝ կանայք իրանց ծծի երեխաներով, տղամարդիկ՝ դեռահաս որդիներով, չըջապատել էին թիւրք հիւպատոսի տունը և խնդրում շուտափոյթ որոշումն իրանց անորոշ վիճակի:

«Սակայն անորոշ դրութիւնն ու այս մի շաբաթուայ Կարսի փողոցներում անօգուտ թափառելը, կարծես, գաղթականներին բերեց այն եզրակացութեան, որ Կարսումը մնալով ոչինչ չի լինի, հարկաւոր է գնալ դէպի սահմանադրուիւք. թէ ընդունեցին լաւ, իսկ եթէ ոչ այնտեղից դիմում անեն ում հարկն է:

«Տեղիս յաջորդ Կիւրեղ վարդապետի համաձայնութեամբ

այսօր նահանգապետի մօտ գնաց խորէն քահանան, խնդրելու, որ մինչև սահմանագլուխը՝ ճանապարհներին գնացող գաղթականներին արդեւքներ չը լինեն, որին նահանգապետը պատասխանել էր, որ ինքն արդէն ուղարկել է շրջաբերականներ այդ առիթով:

«Պէտք է շտապել. թող այս լաւ գիտենան վերադարձող գաղթականները, որ քանի ուշացնեն, այնքան կը ծանրանայ նրանց դրութիւնը, որովհետեւ թէ մօտների ունեցածը և ձեռքներն ընկած մի քանի կողէկը կը ծախսեն եւ թէ վրայ կը հասնեն ձմեռուայ ցրտերը, ինչպէս այդ ցոյց են տալիս այս մի քանի օրուայ անժամանակ ցրտերը:

«Գաղթականների դէպի Կարս գալը դեռ չէ ընդհատուել. թէև քիչ թուով սակայն ամեն օր գալիս են:

«Անցած օրերը տեղիս մի քանի աչքի ընկնող անձինք հաւաքուելոյն հայր Կիւրեղի մօտ մտածելու եկող գնացող գաղթականների հոգսերի և կարիքների մասին, սակայն երկար ու բարակ խօսելուց յետոյ հեռացան բոլորն ուրախ ուրախ, առանց մի հետեւանքի գալու, չը կամենալով ժողովրդի առածի պէս ջըր ցաւած գլուխները աւետարանի տակ դնել»:

«Թիւրքահայ գաղթականների մի մասը Օլթիի շրջանի սահմանագծով ուղղուել է դէպի հայրենիք»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Կղերական դպրոցների փակումը Ֆրանսիայում.—Կղերականների գլխավոր դաշնակիցը ժողովրդի տգիտութիւնն է.—Կղերական ոգու թուլացումը Ֆրանսիայում.—Սուլսբերիի հրաժարականը և անգլիական նոր պրեմիէր Բալֆուրը.—Բօէյր գեներալները Անգլիայում.—Հանգանակութիւն բօէրների օգտին.—Վիլհէլմ կայսրը Պօլնանում.—Մակեդոնական համաժողով:

Պ օ լ ս ի թ ե ը թ ե ը թ ի ց . Ինչպէ՞ս կընտրուի Վիէննայի մխիթարեանց արքահայրը.—Ժէզուիթները Մարզուանի մէջ.—Ամուսնալուծում.—Վիլիկիայի կաթողիկոսական ընտրութեան հարցը:

Մեր տեսութիւններէց մէկում (№ 6) մենք յիշել էինք որ Ֆրանսիական նոր կարինէտի ծրագրի մէջ առաջին տեղն է բռնում միաբանութիւնների նկատմամբ օրէնքների խիստ գործադրութիւնը: Այդ օրէնքների հետ ծանօթացրել ենք մեր ընթերցողներին դեռ անցեալ տարի (№ 4): Այժմ սկսուել է իրագործման շրջանը: Մինիստր-նախագահ Կամբը դեռ յունիս ամսի վերջերում յանձնարարեց բոլոր պրեֆեկտներին՝ իրազեկ անել այն կրօնական միաբանութիւններին, որոնք թոյլաւութիւն չէին խնդրել հիմնուել Ֆրանսիայում, միաբանութիւնների մասին ընդունուած օրէնքի յայտարարութիւններից յետոյ, որ զրանք բոլորը պարտաւոր են մի շարաթուայ ընթացքում վերջացնել իրանց հաշիւները և յրուել չակառակ գէպքում իրանք պրեֆեկտները պարտաւոր էին ձեռնամուխ լինել միաբանակոն դպրոցների փակման: Կղերականները մեծ յոյս ունէին որ զըպրօցների փակումը, աշակերտների «անել գրութիւնը», դաստիարակող քոյրերի լայն ու կոծը և «փողոց չպրտուիլը» ամբողջ Ֆրանսիայում պէտք է սարսափելի զգոհութիւն յարուցանեն կառավարութեան դէմ: Նրանք յոյս ունէին հսկայական ցոյցերով յետ կանգնեցնել Կամբին իր վճռական քայլից: Բայց կղերական վայնասունը և ցոյցերը համեմատաբար շատ քիչ տպա-

ւորութիւն թողին ներկայ Ֆրանսիայում և նոյն իսկ 1880 թըւականներին, Ֆերրիի ժամանակ, եզուիտների արտորումը աւելի ցնցեց Ֆրանսիան քան այժմեան պայքարը:

Այնուամենայնիւ Կոմբի միակտրութիւնը բաւական զըլխացաւանք ունեցաւ և ստիպուած եղաւ մեծ հաստատակամութիւն և վճռողականութիւն ցոյց տալ: Դեռ պարլամենտի արծակուրդներից առաջ, պատգամաւորների վերջին նիստերում, յետադիմական տարրերը փորձեցին աղմկալի վիճաբանութիւններով կտորել Կոմբի հաստատակամութիւնը: Դրնի Կօչէնին պատասխանելով Կոմբը յայտնեց, որ միաբանութիւնների մասին նոր օրէնքի իմաստը միանգամայն պարզ է. ոչ մի նոր միաբանութիւն, ոչ մի նոր հիմնարկութիւն կամ գոյութիւն ունեցող միաբանութեան բաժանմունք՝ չի կարող հիմնուել առանց կառավարութեան թոյլտուութեան: Մինչդեռ 1901 թուականի օրէնքի հրատարակութիւնից յետոյ հիմնուել են միաբանութեան շատ նոր դպրոցներ, և այդ բացարձակապէս կոռւի մի կոչ է՝ ուղղած կառավարութեան հայեցին: Բայց կառավարութիւնը համբերում էր, և երբ մի քանի միաբանութիւններ մերժեցին հնաղանդուել օրէնքին, — հիմնուելով այն բանի վրայ, թէ քանի որ իրանք թոյլատրուած են, չի կարելի արգելել նրանց նոր բաժանմունքներ հիմնել, — կառավարութիւնը մի սնգամ եւ բացատրեց զրանց, որ իւնաքանչիւր միաբանական նոր հիմնարկութիւն կարօտ է թոյլտուութեան: Այն ժամանակ միաբանութիւնների մեծ մասը ինգրեկ պահանջուող թոյլտուութիւնը, բայց վեց միաբանութիւններ դրանից յետոյ էլ չարունակում էին գործել առանց թոյլտուութեան, և հէնց զրանց դէմ էր ուղղուած դպրոցների փակման հրամանը: Չուղենալով ենթարկուել օրէնքին, այդ միաբանութիւնները սկսեցին առարկել, որ իրանք յանձնել են դպրոցները աշխարհական անձանց, որոնց մօտ իրանք վարձով դասատուներ են: Սակայն պետական խորհուրդը բացատրեց, որ դպրոցները, որոնց մէջ դասաւանդում են միաբանութիւնների անդամները, հաւասարուած են միաբանական դպրոցներին: Այդպիսով կառավարութիւնը մեծ երկայնամտութիւն ցոյց տուեց և հակառակորդների բոլոր մեղադրանքները՝ խտաբարտութեան և անգթութեան մէջ՝ բոլորովին անհիմն են: Միաբանութիւնները վաղուց ի վեր գիտէին թէ ինչ է նրանց սպասում, բայց մինչեւ վերջին րոպէն յամառ ընդդիմադրութիւն էին ցոյց տալիս վաշջութեան: «Մենք, — ասաց վերջում Կոմբը, — գործադրեցինք միաբանութիւնների մասին օրէնքը չափաւորութեան ոգով, սակայն հաստատուն վճռողականութեամբ՝ տալ հասկանալ բոլորին, որ մենք մինչև վերջ

գլուխ կը բերենք մեր պարտաւորութիւնը: Եւ մենք կանգ չենք առնի նոր ընդունած միջոցի վրայ. նրան կը հետեւեն և ուրիշները: Յունիսի 14-ին հրատարակած հրամանը՝ չը թոյլատրած դպրոցների մասին՝ հանդիսանում է իբրև ուղղակի հետեւանք մեր յայտարարութեան, որ ձեր կողմից հաւանութիւն գտաւ, ուստի մենք խնդրում ենք հանրապետական կուսակցութիւնից՝ ցոյց տալ մեզ միահամուռ աջակցութիւն: Ֆրանսիան ազգային ժողովը (պալատը) ուղարկեց հանրապետական մեծամասնութիւն նրա համար, որ ապահովի քաղաքացիական հասարակութեան յաղթանակը արեղայական հնազանդութեան վրայ»:

Եւ պարլամենտը ձայների ահագին մեծամասնութեամբ հաւանութիւն տուաւ կառավարութեան բացատրութեանը և որոշեց Կոմբի ճառը կայցնել ամբողջ Ֆրանսիայում:

Իր մի այլ ճառում (Պօնտում) Կոմբը ասաց. «Միաբանութիւնների մասին օրէնքը անհրաժեշտ դառաւ միաբանութիւնների բազմանալու և երկրի քաղաքական կեանքի մէջ զբանց միջամտումների չնորհիւ: Առանց այդ օրէնքի հանրապետութեան տեղ կը թագաւորէր միապետութիւն կամ թէօկրատիա»...

Մենք արդէն տեսանք թէ կղերականութիւնը Ֆրանսիայի մէջ ինչ խաւերի համակրութիւնն էր գրաւել չհորհիւ. Յալլուի օրէնքի (№ 6): Բնականաբար առանց ցոյցերի, առանց ընդդիմադրութեան, և կոիւնների չէին կարող փակուել միաբանութիւնների դպրոցները: Եւ թէ Պարիզում թէ գաւառներում ամբողջ, զրդուած կղերականներից, արքայականներից և այլ յետադէմ ոյժերից, աշխատում էր բռնի ոյժով պաշտպանել հալածուող կոյսերին և սուրբ հայրերին: Կարծես նորից Դրէյֆուսեան օրերն էին նորոգւում ամբողջ Ֆրանսիայում:

Կղերականների ոյժի մասին գաղափար են տալիս, ի միջի այլոց, հետեւեալ թուերը. Ֆրանսիական միաբանութիւնները 6—13 տարեկան երեխաների համար ունեն 22,167 դպրոցներ 1,629,612 աշակերտներով, կառավարութեան 62,192 նման դպրոցների հանդէպ, որոնք ունեն 3,780,405 աշակերտներ: Սրանից բացի կրօնական միաբանութիւններն ունեն 2,905 մանկապարտէզներ 362,214 երեխաներով, մինչդեռ պետական մանկապարտէզների թիւը հասնում է 2,574-ի 395,661 երեխաներով: Պետութեան և քաղաքային ինքնավարութիւններին պատկանող միջնակարգ դպրոցների թիւն է Ֆրանսիայում 85,599, մինչդեռ մասնաւոր միջնակարգ վարժարանների և կրօնական միաբանութիւնների վարժարանների թիւը, բացի զուտ կրօնական դպրոցները, հասնում է 68,825 ի. թող որ աղջիկների բարձրագոյն կրթութիւնը գլխաւորապէս կրօնական միաբանութիւնների ձեռքին է:

Դպրոցից դուրս հասարակական համոզմունքի վրայ ազդելու համար, միաբանութիւններն իրանց ձեռքի տակ ունեցած ահագին նիւթական միջոցներով հրատարակում են La Croix-ի նման մի թերթ, որի գլխաւոր կենտրոնը Պարիզումն է, բայց գաւառական եօթ գլխաւոր քաղաքներում ունի նաև յաւելուածներ տեղական նորութիւնների: La Croix թերթը և իր տպարանը պատկանում են ասոսիացիօնիստների կարգին: Նոյն տրպարանից դուրս էին գալիս, լրագրներից բացի, նաև ազիտացիական բնաւորութիւն կրող բազմաթիւ այլ հրատարակութիւններ՝ օրացոյցներ, շաբաթաթերթեր, ժողովրդական գրքեր, պատկերազարդ ժողովրդական լրագրներ, պամֆլետներ, թռուցիկ թերթեր՝ բուլվարների վրայ յրելու համար և այլն:

Սակայն չը նայած կղերի այդ ահագին ոյժին, այնուամենայնիւ, նկատելի է որ կղերականութիւնը այս վերջին 20 տարիների ընթացքում կամաց կամաց թուլացել է Ֆրանսիայում, և դրա գլխաւոր պատճառը այն է, որ 1880 թուականից յետոյ Ֆրանսիական կառավարութիւնը մտցրեց ձրի, հասարակական, աշխարհիկ կրթութիւնը, բացեց կանանց համար աշխարհական միջնակարգ դպրոցներ: Անշուշտ եթէ աւելի ևս մեծ ուշադրութիւն դարձնուէր ժողովրդի կրթութեան վրայ, եթէ մասսայի համար աւելի մատչելի լինէին սկզբնականից բացի նաև միջին և բարձրագոյն կրթութիւնը (համեմատիր մեր Ներք. Տես. 1901 թ. № 7) կղերականութիւնը կը զրկուէր իր ամենամեծ դաշնակցից—տգիտութիւնից: Իսկ քանի լայն տարածուած լինի տգիտութեան թագաւորութիւնը, այնքան ամուր կը լինի և կղերի ոյժը: Արմատական կուսակցութիւնները այդ լաւ են ըմբռնել, իսկ բուրժուազիային և արքայականներին ի հարկէ ձեռնադրուէ հասկանալ այդ պարզ ճշմարտութիւնը: Եւ եթէ այժմ կղերական բոլոր ճիգերը իսկապէս ողորմելի հետեւանքներ ունեցան, դրա պատճառը Ֆրանսիայի աշխարհական կրթութեան առաջադիմութիւնն է: Եւ հանրապետական ոգին այնքան խոր արմատներ է դրել Ֆրանսիայում, որ այդ քոյրեր ու հայրերի բոլոր ջանքերն անզօր եղան փողոցային ցոյցերին համաժողովրդական կերպարանք տալ. այդ իրարանցումն ու աղմուկները մի բաժակ ջրի մէջ բարձրացած փոթորկի էին նմանում: Իզուր չէ Հոմը դժգոհ այդ կերպով վարած մաքառումից. պապը անշուշտ կը գերադասէր օրինական ճանապարհով, սուս ու փուս, տակից մղուող մաքառումը, ձգձգումով և քաջջուկով թշնամուն յոգնեցնելը, քան բացարձակ, ճակատ առ ճակատ վարած կռիւը կամ աղմկալի ցոյցերը, որոնք մի կողմից գրգռեցին հակառակորդների եռանդն ու հաստատակամութիւնը, իսկ միւս կողմից՝ անպտուղ հետե-

ւանքներով՝ աւելի վայր գցեցին կղերի հեղինակութիւնը ժողովրդի աչքում:

Ընկճուած միաբանութիւնների մի մասը գաղթեց Պրանսիայից ուրիշ երկիրներ—Բելգիա, Շվեյցարիա, Աւստրիա, իսկ 12 հազար միաբանական հիմնարկութիւններ, ենթարկուելով օրէնքի պահանջներին, թոյլտուութիւն են խնդրել կառավարութիւնից վերսկսել իրանց գործունէութիւնը: Կղերական ցոյցերի այգպիսի անփառունակ վախճանից յետոյ, միթէ արժէ լուրջ խօսել մի քանի փոխօգաթների կազմած ընկերութեան մասին, որի նպատակն է «տուրք չը վճարելով» բողոքել հանրապետական կառավարութեան «բռնութիւնների» դէմ: Պրանսուա Կօպպէի, Դրիւմօնի և Libre Parole թերթի ամբողջ խմբագրութիւնը, մի քանի տասնեակ խեղկատակ համախոհներով, միայն ծաղրածուների փառքին կարող են արժանանալ այս կղերական կատակերգութեան մէջ: Ի վերջոյ, լուրջ ընդդիմադրութիւն ցոյց տուին և ժողովրդական համակրութիւն ունեցան կղերականները իսկապէս Պրանսիայի միայն այն գաւառներում, ուր մասսան աւելի խաւար է: այգպէս էր, օրինակ, Բրետանում (Ֆինիստէր) և Վանդէյայի գիւղերում:

Բրետանից հիւսիս, ծովի միւս կողմում՝ Մեծ Բրիտանիայում՝ վաղուց չը դիտեն թէ ինչ բան է կղերական ցար: Բայց Անգլիան այս վերջին տարիներս բռնուած է աշխարհակալական, խմբերիակատակական ցաւով. նա միայն մի քանի ամիս է, որ ազատուել է մի վաճառար տաղնապից—հարաւ-աֆրիկական պատերազմից: Անգլիական պահպանողականների պարագլուխ 72 ամեայ Սօլսբէրին, կարծես այդ պատերազմի վախճանին էր սպասում որ իր հրաժարականը սոյ պրէմիէրութիւնից: Հեռանալով քաղաքական ասպարէզից Սօլսբէրին չենք կարծում որ բարի յիշատակներ թողնի ոչ միայն Անգլիայից հեռու երկրներում, մանաւանդ Թիւրքիայի քրիստոնեաների սրտերում, իր արտաքին քաղաքականութեան չորհիւ, այլ և իր հայրենիքում, ուր նրա համակրանքը միշտ յետագիմական կարգերի և արտօնաւ զաւակարգերի կողմն էր: Սօլսբէրի յաջորդ նշանակուեց նրա քրոջ որդին և սրտակից բարեկամը, Արթուր Բալֆօրը, որ այժմ մօտ 54 տարեկան է: Ընդունուած է ասել, թէ Անգլիայում թագաւորը միայն թագաւորում է և ոչ կառավարում, իսկ կառավարում է կամ ղեկավարում նրա առաջին մինիստրը, պրէմիէրը: Այժմեան պրէմիէրին նկատում են իբրեւ մի հարուստ, կրթուած արիստոկրատ, մի անհոգ, գիջող, փառասիրութիւնից զուրկ, դէպի ամեն մի սչգրունք փիլիսոփայական թերահաւատութեամբ վերաբերուող սրամիտ մարդ, որ

«քաղաքականութեան մէջ դիւտանտ է», այսինքն՝ քաղաքականութեան վերաբերում է սիրողի հետաքրքրութեամբ, աւելի զուարճութեան, քան լուրջ գործ կատարելու նպատակով: Այդ բնորոշումից յետոյ, դուք է, հիմք ունի այն գուշակութիւնը, որ Բալֆորի պրեմիէրութեան ժամանակ իրապէս կառավարողը լինելու է նրա բարեկամ Չեմբերլէյնը, այդ եւանդոտ, ընդունակ և փառասէր նախկին արմատականը, որի ժողովրդականութիւնը Անգլիայում շատ բարձրացաւ բօէրների դէմ վարած պատերազմի աջող վախճանի շնորհիւ:

Անգլիայիները այժմ աշխատում են շտապութեան տուր՝ այդ տիտուր և զարհուրելի անցեալը, ինչպէս նկատեց Բօգսի գործակալ տիրահոջակ Ջեմսօնը Կապի պարլամենտում: Սարսափելի պատերազմի աւերումներից յետոյ բօէրներին ոտքի կանգնեցնելու, որքերին և այրիներին օգնելու համար՝ բօէրական գնեթաւներից Բօթման, Դելարէյը և Դեվետը ուղևորեցին Եւրոպա: Նրանք մտադիր են նախ և առաջ Անգլիայից պահանջել 10 միլիօն ֆ. ստերլինգ՝ վերականգնեցնելու համար աւերուած երկրի իսպառ խանգարուած սնտեսութիւնը: Եւ անդիպցի ժողովուրդը իր թագաւորի հետ շատ փառասուր և ջերմ ընդունելութիւն ցոյց տուին այդ հերոս մարտնչողներին: Նրանց դիմաւորեցին Չեմբերլէյնը, Բօրերտսը և Կիտչենէրը: Նախկին ռեսերվի թէրմինները՝ անգլիական հողի վրայ իրար հանդիպում էին ձեռքի սիրալիր սեղմումներով... Իսկ Վիլհէլմ կայսրը, որ մի ժամանակ հեռագրով խրախուսում էր Կրիլգէրին, այժմ մոռացել է յաղթուածներին և հրաւիրում է իր մօտ այցելութեան յաղթողին—Կիտչենէրին: Երեւի Հնդկաստան մեկնելուց առաջ հարաւաֆրիկական բրիտանական զօրքի նախկին հրամանատարը, որ այժմ նշանակուած է Հնդկաստանի անգլիական զօրքի հրամանատար, կը կատարի միլիտարիզմի երկրպագու կայսրի այդ ցանկութիւնը:

Վիլհէլմ կայսրը այժմ Լեհաստանում, Պօդանում, զբաղուած է իր զօրքերի զինախաղերով: Լեհացիների հասցէին նա աւելորդ չէ համարել ուղղել հետեւեալ խօսքերը, ինչպէս այդ հաղորդում է հեռագիրը.

«Կատասխանելով զաւառական լանդմարշալի ճառին, կայսրը ցաւակցութիւն յայտնեց, որ ոչ-գերմանական ծագումի հպատակների մի մասը զօնաւարութեամբ է յարմարում միապետութեան պայմաններին. պատճառը, երեւի, կաթօլիկ դաւանութեան դէմ ոտնձգութիւններ անելու երկիւղն է եւ տեղական առանձնայատկութիւններն եւ աւանդութիւններն են: Այդ երկու երկիւղն եւս սնապաման անհիմն են. սակայն աւանդութիւնները պատկա-

նում են պատմութեան. նա ճանաչում է միայն Պրուսիային և և հող կը տանէ, որ գաւառը անբաժան կապուած լինի Պրուսիայի հետ, որպէս զի նա բուն պրուսական, գերմանական մնայ»:

Այդպէս է աշխարհիս բաները, հռոմայեցիք այդ ճշմարտութիւնը կարողացան արտայայտել երկու կարճ խօսքերով. «veh victis!»:

Այդպիսի պարտութեաներից են և մակեդոնացիները. բայց դարերի ծանր լուծը չի մեղցրել նրանց մէջ յոյսը—մի օր էլ յաղթողների շարքն անցնել: Եւ երբէք Մակեդոնիան չի խաղաղուի մինչև որ վերջ չը գնուի թրքական անարգ րեժիմին: Այն կազմակերպութիւնը, որ ղեկավարում է այդ շարժումը, ոչ միայն բացարձակ գործում է Բուլղարիայում, այլ և այս յաւիտի վերջերում և օգոստոսի սկզբներում Սօֆիայում գումարել էր մակեդոնական կօնգրէս, որի նպատակն էր որոշ բարեփոխութիւններ մտցնել մակեդոնական կենտրոնական կօմիտեայի կազմի և ծրագրի մէջ: Բ. Դուռը, ի հարկէ, հաշտ աչքով չէր կարող դիտել այդ կօնգրէսի զբաղմունքները. նա բողոքեց բուլղարական այդ «թուլութեան» դէմ, սակայն անուանական կախում ունեցող այդ վասսալը պատասխանեց՝ որ Բուլղարիայում ազգաբնակչութիւնը օրէնքով վայելում է՝ ընկերութիւններ և ժողովներ կազմելու իրաւունքը, և մակեդոնական կօնգրէսը այդ օրէնքի սահմաններից դուրս չէ գալիս:

Սակայն մակեդոնական այդ համաժողովում գործիչների երկու ուղղութիւնները—չափաւոր և ծայրայեղ—չը կարողացան համաձայնութեան գալ: Չափաւորների կողմն է և բուլղարական կառավարութեան համակրանքն ու աջակցութիւնը. դրանց պարագլուխն է Միխայիլովսկին. չափաւորները մակեդոնական հարցում հետամուտ են բուլղարական քաղաքականութեան շահերին. մինչդեռ ծայրայեղները, որոնց առաջնորդն է Բօրիս Սարաֆովը, իրանց նշանաբանն են համարում «Մակեդոնիան մակեդոնացիների համար»: Ծայրայեղների մօտաւոր ծրագիրն է ստիպել որ եւրոպական պետութիւնները միջամտեն մակեդոնական հարցում. դրա համար նրանք ձգտում են անչէջ պահպանել Մակեդոնիայում յեղափոխական կրակը, կազմակերպում են խռովութիւններ, ընդհարումներ տեղական վարչութեան հետ, աշխատում են մշտապէս եւրոպական պետութիւնների հըպատակների շահերին Մակեդոնիայում և այդպիսով զգալի դարձնել մերկանալի Եւրոպային Մակեդոնիայում տիրող րեժիմի վատթարութիւնը:

Մակեդոնական յեղափոխականների այդ երկու կուսակցութիւնների վէճը այնքան սուր կերպարանք ստացաւ կօնգրէ-

սում, որ երկու կողմերն էլ անջատուելով՝ սկսեցին առանձին նիստեր ունենալ: Դրանց փոխադարձ մերկացումներից պարզուեց, որ միսս Ստոնի առեւանգումը *) կատարուել է Բօրիս Սարաֆովի որոշմամբ, իսկ ստացուած փրկանքը գործադրուել է յեղափոխական շարժման վրայ: Այդ ներքին պառակտումները այնուամենայնիւ չեն խանգարում յեղափոխական գլխուած հրոսակներ կազմելուն Մակեդոնիայում, ուր այժմ 11 այգպիսի խմբեր են գործում և յաճախ արիւնալի ընդհարումներ ունենում օսմանեան զօրքի հետ: Մի անգամ արդէն արթնացել է ազատութեան ոգին դարերի ընթացքում տանջուած մակեդոնացիների մէջ և, հաեւապէս, ինչ և լինի պէտք է վաղ ուշ մակեդոնական հարցը ստանայ իր արդար լուծումը: Եթէ Թիւրքիան չուզնայ խրատուել իր մօտիկ անյեալից, եթէ նա չօգտուի Եւրոպայի այդչափ զիջող և բարեկամական վերաբերմունքից, որ համնում է զարհուրելի երեսպաշտութեան, աւելի վատ նրա համար, որովհետեւ ի չար գործ գնել մարդկային համբերութիւնը նրան միշտ չի աջողուի: Ինչ կարող է աւելի արդարացի լինել քան աշխատաւոր խողաղ աղգաբնակութեան պահանջը, վայելել գոքի, պատուի և կեանքի ապահովութիւն. իսկ այդ չի տալիս իր հըպատակներին սուլթանի բեժիմը:

Լ. Ս:

Պոստսոսի 26.

Պ Օ Լ Ս Ի Թ Ե Ր Թ Ե Ր Ի Յ

Այսընեան Աբբահօր մահուան առթիւ մասնաւորաբար հետաքրքրական է գիտնալ թէ ինչպէս կը կատարուի Վիեննայի Միխիթարեան միաբանութեան Աբբահօր ընտրութիւնը: Այդ մասին, արժանահաւատ աղբիւրէ քաղած ենք հետեւեալ տեղեկութիւնները՝ որոնք բաւական յստակ գաղափար մը կրնան կազմել տալ ընտրութեան նկատմամբ: Ինչպէս յայտնի է, որչափ ատեն որ Աբբահայր մը ողջ է, նոր Աբբահօր ընտրութիւն չի կրնար կատարուիլ, այլ փոխ վանահայր մը կը կարգուի, եւ իր պաշտօնը վարելու անկարող Աբբահայրը գործէ կը քաշուի՝ «Պատուակալ Աբբահայր» տիտղոսով: Երբոր Աբբահայրը մեռնի, որոշ օր մը ի նիստ կը գումարուի ընտրողական ժողովը՝ որուն կը մասնակցին երբեմն 17 և երբեմն ալ մինչեւ 20 ընտրողներ, հետեւեալ կերպով.— Միաբանութեան չորս «առաջիկայ» անդամները, Հոռմի Գործակալը, վանատանց մեծաւորները (3 հոգի), միաբանութենէն չորս նշանաւոր անդամներ՝ զորս կ'ընտրեն «առաջի-

*) «Մուրճ», 1901 թ., № 10:

կառները, եւ որոնց թիւը ըստ պարագային կրնայ բարձրանալ, ու վանական պատուիրակներ՝ երեք հոգի վիեննայէն, մէկ հոգի Պօլսէն, եւ մէկ հոգի ալ Իզմիրէն: Ընտրողական ժողովը գումարուելուն պէս աղօթք մը կը կարդացուի, ուրկէ վերջ ժողովը կը ձեռնարկէ երեք քննիչներու ընտրութեան: Այդ երեք քննիչները ընդհանուր հսկողութեան իրաւունք մը ունին բովանդակ գործողութեան վրայ: Քննիչներու անուանումէն վերջ կը սկսի «տոմսարկութիւն»ը. իւրաքանչիւր ժողովական, իրեն յանձնուած քուէթուղթի մը վրայ պէտք է զրէ անունը այն միաբանին՝ զոր արժանի կը նկատէ իբր Աբբահայր: Այդ տոմսարկութեան մէջ առաւելագոյն քուէ ստացող միաբանը, եթէ երբեք ընտրողական ժողովին մէջ կը գտնի, դուրս կը հանուի ժողովէն: Անմիջապէս վերջ ընտրողական ժողովին անդամները իրենք իրենց միջեւ «խօսակցութիւն» մը կը սկսին առաւելագոյն քուէ ստացող այդ միաբանին նկատմամբ, եւ կարծեաց փոխանակութիւն մը կատարեն անոր արժանաւորութեան մասին: Այդ «խօսակցութեան» վերջ կրկին ներս կը բերուի առաւելագոյն քուէ ստացող միաբանը, ու կը սկսի բուն վճռական ընտրութիւնը: Իւրաքանչիւր ընտրող, իր քուէն տալէ առաջ, իրաւութեան պատկերին առջեւ երգում կ'ընէ «ըստ խղճի եւ ըստ Աստուծոյ» ընտրելու: Եթէ երբեք առաւելագոյն քուէ ստացող այդ եկեղեցականը յաջողի ընտրողներէն երեք քառորդին քուէն ստանալ, Աբբահայր կը հռչակուի իսկոյն: Կը պատահի երբեմն որ ընտրողներէն երեք քառորդի քուէն չի կեցրնանար տոմսարկութեան մէջ առաւելագոյն քուէ ստացող եկեղեցականին անուան չուրջը, ան առեն, ընտրական գործողութիւնը կրկին սկիզբէն կը սկսի իր բոլոր մանրամասնութիւններով: Շատ անգամ, հինգ վեց հեղ կը կրկնուին այդ գործողութիւնները մինչեւ որ վերջ ի վերջոյ միակ միաբան մը կը յաջողի ստանալ ընտրողական ժողովին անդամներէն երեք քառորդին քուէն: Աբբահայր ընտրութենէն վերջ, միաբանութեան իւրաքանչիւր անդամը աջհամբոյրի կուգայ: Նորընտիր Աբբահայրը հակիրճ յորդորական մը կը կարդայ միաբաններուն, ուրկէ վերջ եկեղեցի կ'իջնէ բովանդակ միաբանութիւնը, առաջնորդութեամբ Աբբահայր, գոհաբանական աղօթք կատարելու համար: Ըսենք նաեւ սա թէ միաբանութեան բոլոր անդամներն ալ անխտիր, մեծէն մինչեւ պզտիկը կրնան Աբբահայր ընտրուիլ:

Մարգուանում Հայ—Հոռմէականները գրեթէ 50—55 տունէ կը բաղկանան: Ունին փոքրիկ եկեղեցի մը եւ եկեղեցիի բակին մէջ մանչերու դպրոց մը: Աղջկանց համար իրենց սեպհական դըպ-

րոյ չունին, որուն պակասը կը լրացնէ իրենց եկեղեցիին կից եզոզ ժէզուիթներու մէկ փառաւոր չէնքը և որուն կրթական ղեկը բոլորովին օտարազգի մարապետներու տրամադրութեան տակ կը գտնուի:

Իրենց կրթական գործը թէեւ ոչ այնչափ գոհացուցիչ՝ բայց միջակ վիճակ մը ունի. վերջին տարիներս ալ ժէզուիթները ընդարձակ չէնք մը գնած են, զոր մտադիր են մանչերու կրթական մեծ հաստատութեան մը վերածել:

Սակայն ինչպէս կարգ մը տեղեր՝ հոս ալ ժէզուիթները օգնական մարմին մը ըլլալէ աւելի այս տկար եւ փոքրիկ հասարակութեան վրայ զօրեղապէս տիրող տարր մը ըլլալու շարունակական մարմաջը ունեցած են: Այսպէս, իրենց հոս հաստատուած օրէն սկսեալ՝ զուտ հայ—հոռմէական ծէսերը անհետացնելով՝ անոնց տեղը լատինական ծէսերը և օտարասիրութեան ոգին ներմուծելու ջանադիր եղած են, և ցաւալի է ըսել թէ յաջողած ալ են:

Հաստատուելու համար մեր ըսածը՝ պէտք կը զգանք հոս մէջ բերել այդ լատինական ծէսերէն քանի մը նմոյշներ միայն, որոնք Տօնացոյցին մէջ բնաւ չեն գտնուիր:

1. «Մայիսի աղօթք», ամսուան սկիզբէն մինչեւ վերջը, որ բոլոր ժողովուրդէն կը պահանջուի: 2. «Իննօրեայ կրթութիւն» աղջկանց համար, ինը օր կը քարոզուի մարապետանոցին մէջ ժէզուիթներէ, և երեք օր ալ զիշեր ցերեկ աղջիկները հոն կը մնան՝ միմիայն աղօթելու համար: 3. «Իննօրեայ կրթութիւն». Զատիկի պատրաստութեան համար, ընդհանուր ժողովուրդին զիշերուան քարոզութիւն ժէզուիթներէ: 4. «Լ'անֆան տը Մառիի» ընկերութիւն. ասոր նպատակն է Աստուածածնայ նուիրեալ մասնաւոր ջերմեռանդութիւն. ամէն կիրակի անդամոց և կիներու քարոզութիւն կ'ըլլայ ժէզուիթներէ: 5 «Սիրտ Յիսուսի» ընկերութեան աղօթք. նոր տոմարի ամէն ամսուան ուրբաթ օրերը բոլոր ժողովուրդէն կը պահանջուի այս նպատակին յատկացուած աղօթքներ: 6. «Աստուածածնայ և օթը խոյի աղօթից ընկերութիւն». ամէն ուրբաթ եկեղեցիին մէջ կը մատուցուին մասնաւոր աղօթքներ: 7. «Լուրտ Աստուածածնայ աղօթքներ». Փրանսայի Լուրտ նահանգին մէջ հովուհիի մը երեւցող Աստուածածնայ յատկացուած աղօթքներ են, որոնք ընդհանուրէն կը պահանջուին: Կ'ըսուի թէ այն տեղի ժողովրդեան ջերմեռանդութեան իբր աղացոյց՝ Աստուածածին հովուհիի մը կ'երևայ և վարդարան մը կը նուիրէ անոր, իբր հրահանգ աղօթասիրութեան. և նոյն օրէն ի վեր մուտք կը գտնէ վարդարանի գործածութիւնը: 8. «Ճանապարհ խաչի

աղօթքներ»։ մեծ պահքի ուրբաթ օրերուն յատուկ։ 9. «Հրեշտակ Տեառն աղօթք»։ օրը երեք անգամ, երբ զանգակը հնչէ՝ ամէն մարդ պարտաւոր է իր եղած տեղը ծնրադրել աղօթելու համար։

Լատինականութեան մէջ դեռ շատ կան այս և ասոր նման աղօթքներ, որոնց սաչափ անգամ արտասանութեամբ միշտ սաչափ քանակութեամբ ներողութիւն կը ստացուի, օրինակի համար 100, 200, 500, 1000 օրուան եւայլն։ մեր մասնաւոր նպատակն է հոս ցուցնել թէ այս կարգի լատինական ծէսեր ներմուծուած ըլլալով տոհմային ծէսերը կ'անհետանան։

Հոս կ'ուզենք դիտել տալ թէ Հայ—Հռոմէական Ս. Պատրիարքին պաշտօնավարութեան օրէն սկսեալ՝ իր և Պապին կնիքովը վաւերացած շրջաբերական մը հրատարակուած է բոլոր Հայ—Հռոմէականներուն ուղղուած, որով կը ծանուցուի թէ լատինականները միայն նիւթապէս և բարոյապէս օգնականներ են տեղացւոյ։

Ասիկա ամէնէն նորագոյն և հզօրագոյն սղջարարութիւնն է որ կ'ըլլայ հայ—Հռոմէական հասարակութեան, քանի որ հայ—Հռոմէական ժողովուրդը սկիզբէն ի վեր սիրով ընդունած է իր հօտին մէջ՝ իրենց վաղեմի տօնացոյցովը և քանի որ թէ հայ և թէ հայ-Հռոմէական մամուլները այլեւայլ ժամանակներու մէջ ազդու կերպով մեղադրած և բողոքած են այս ցաւալի և անարդար ընթացքին դէմ, կը դարմանանք թէ ինչպէս կարելի կ'ըլլայ որ օտար կղերականութեան այս խումբը իրենց իրաւասութեան սահմաններէն շատ անդին անցնելու յանդգնած ըլլալով՝ կը համարձակին լատինական ծէսերը ներմուծելու՝ անշուշտ տոհմային ծէսերը իրենց տեղերէն վտարելու նպատակով։

Լատիններու իրենց այս խորամանկ ծրագրին մէջ յաջողելուն գլխաւոր պատճառներէն մէկը պէտք է նկատել խեղճ և տկար ժողովրդեան Լատիններու հետ իրենց ունեցած վերաբերման նկատմամբ կատարեալ անգիտութիւնը և կամ անփութութիւնը, որուն կրնանք միացնել նաև ռամիկ ժողովրդեան օտար կղերին հանդէպ ունեցած միամիտ մէկ պատկառանքը։

Երկրորդ. ժողովուրդին աղքատութեանը պատճառով՝ թէ կրթական և թէ ընտանեկան յարկերու մէջ, լատին կղերին իր նպաստներովը հայ ժողովրդեան քսակին վրայ տիրելն է, որովհետեւ յաւով կը տեսնենք որ թէ հոս և թէ ուրիշ տեղեր լատին կղերը աւելի արտագին համակրթութիւն կը ցուցնէ մասնաւոր անոնց՝ որոնք իրենց ծէսերուն ամենահաւատարիմ և խղճամիտ հետևողները եղած են։

Ասով հանդերձ, մխիթարական է տակաւին տեսնել այս ամէնուն մէջ հոս հոս փոքրիկ խումբեր կամ աննշան կարծուած անհատներ՝ որոնք անտարբեր աչքով չեն կրնար նայիլ այս վիճակին վրայ, և խուլ բողոք մը կը կրեն իրենց կուրծքին տակ: Որքան ալ տկար և անքաղաքավար նկատուին այս ռամիկ անուանուած զստակարգին երեւմտակի գանդատները և բողոքելու կերպերը՝ հանրային իրաւունքը և խիղճը գէթ կրնան արդարացիւ զսոսնք: Վերջերս երբ քաղաքիս լատին կրօնաւորներէն մէկը կը քարոզէր եկեղեցիին մէջ, այս կարգի հրապարակային բողոք մը տեղի կունենայ Պ. Կիրակոս Մէրկէլեանի կողմէ, զոր Ժէզուիթները անմիջապէս բանտարկել կու տան իբր եկեղեցիին մէջ անկարգութիւն յարուցանող:

Ասիկա թէև ինքնին պզտիկ միջադէպ մը կրնայ նկատուիլ դաւառային անկիւնի մը մէջ, սակայն իր ապօրինի ձեւին ներքեւ՝ կը պարունակէ կարեւոր նշանակութիւն մը, և արդարացի բողոք մը:

Հայրապետական Կոնգակ մը, որուն ամփոփումը հրատարակեցին օրաթերթերը, ամուսնալուծման ու կրկնամուսնութեան պայմանները ի յայտ կը բերէ նոր ու ինքնատիպ երեւոյթի մը տակ, մինչև հիմայ ըմբռնուածներէն ու զործադրուածներէն աւելի լայն սահմանով մը:

Խնդիրը անձի վրայ չըլլալով, այլ սկզբունքի վրայ, իրողութիւնը յիշենք՝ առանց անուններ տալու—Ասկէ իբր վեց ամիս առաջ, Ն. Ս. Օծութիւնը՝ իրեն եղած դիմումի մը վրայ՝ գիր մը ուղղելով Պատրիարքարան, արտօնութիւն կուտար կնոջմէն բաժանուած երիտասարդի մը՝ վերստին ամուսնանալու, միեւնոյն ատեն այդ արտօնութիւնը զլանալով լքուած կնոջը: Այս Հայրապետական յանձնարարութիւնը ստանալուն, Կրօնական Ժողովը փութաց բացատրական գիր մը ուղղել Էջմիածին, արդարացիելով կրկնամուսնանալու իրաւունքէն զերկուած կողմը—կինը—և յայտարարելով թէ մեղապարտ ընթացք մը ունեցած չէ անիկայ:

Լրագրութեան համար մութ մնաց սա պարագոյն, թէ Կրօնական Ժողովը՝ իր այդ միջամտութեամբ՝ ինչ եզրակացութեան կը յանդէր.—ամուսնութիւնը բնաւ չի լուծել, թէ ոչ՝ երկու կողմին ալ հաւասարապէս արտօնութիւն տալ վերստին կարգուելու:

Իրողութիւնը սա է որ, Ս. Հայրապետը՝ բարեփոխելու իր նախորդ որոշումը՝ այս անգամ երկրորդ գիր մը ուղղած է Պատրիարքարան, որուն մէջ կըսէ թէ քանի ու երկու ամուսին-

ներուն միջեւ սեւ եւ վսահութիւնը վերցած են եւ երկուքին կենսակցութիւնը անհնար է այլեւս, ուստի երկուքին ալ առանձին առանձին նորէն ամուսնանալու արտօնութիւն կը չնորհէ:

Հայրապետական այս բացորոշ և կտրուկ հրամանին վրայ, ուրիշ բան ընել չէր մնար Պատրիարքարանին, բայց եթէ հաղորդել զայն բաժնուած ամուսիններուն և անոնց տաներէցներուն,—ինչ որ կատարուած ըլլալու է արդէն:

Մեր Եկեղեցւոյ հոգեւոր պետին այս թոյլատու հրամանը, որ ամուսնական կեանքի պատահական զժառղղութիւններուն զիտակից ոգիէ մը կը բղխի և անշուշտ հիմնուած է եկեղեցական կանոններու վրայ, սկզբունք մը կը նուիրագործէ,—վասնզի կարելի չէ ենթադրել թէ բացառաբար սրուած ըլլայ այսինչ ամուլին ի նպաստ ու վաղը զլացուի այնինչ ամուլին որ համանման զիմում մը ընէ,—յեզդ. Պատրիարքարանի բովէն անցընելով ի հարկէ իր խնդրանքը,—ն. Ս. Օծութեան մօտ Սյա ըսել չէ անշուշտ, թէ այն էրիկ—կնիկները որոնց ընտանեկան յարկէն սէրը ու վստահութիւնը վերցած են՝ պիտի կրնան ամուսնալուծման վճիռ ձեռք բերել իսկոյն. բայց երբ կենսակցութիւնը անհնար դարձած է այլեւս անոնց միջեւ, ոչ թէ դադարաբային կերպով՝ այլ իրականապէս, երբ զիրար ձգած են, մէկտեղ չեն ապրիր ու ալ չպիտի կրնան ապրիլ երբէք, երբ զանոնք բաժնողը պարզ գտութիւն մը չէ, որ միջնորդութեամբ վերջ գտնէր. այլ անհաշտութեան ու պժգանքի զգացում մը՝ մէկ կամ միւս կողմէն, որուն շարժառիթները Դատաստանական Խորհուրդին առջեւ երթալ նկարագրել ու ապացուցանելը ամէն անհատի ու ամէն ընտանոթութեան տըրուած չէ, այդ պարագային՝ կրօն. ժողով, փոխանորդարան, Դատաստանական Խորհուրդ՝ իրողութիւնը քննելով, ստուգելով, ինքզինքնին արտօնուած պիտի զգան՝ խղճի ու մարդասիրութեան համաձայն լուծել ամուսնական միութիւն մը որ արդէն դադրած է գոյութիւն ունենալէ, ինչպէս ներկայ պարագային մէջ ըրաւ Ս. Հայրապետը. ն. Ս. Օծութիւնը կընդունի ուրեմն՝ Յրանսխացիներուն incompatibilité de mœurs ըսած կացութիւնը՝ ամուսնական կեանքի մէջ, և երբ այդ անհամերաշխութիւնը ծայր աստիճանի հասնի՝ ամուսնալուծման հարկ կը տեսնէ: Սյա կերպով, «նախընթաց» մը (précédent) կը հաստատէ, զոր իրաւ է թէ պէտք չէ չարաչար գործածել, բայց որ նոր յնարան մը կ'աւելացնէ ամուսնալուծման ի նպաստ: Իր հայեցակէտը գերազանցապէս վեր է ստոր ու ձղձիմ մտածումներէ, և եթէ ամուսնալուծման ուխտեալ հաւատարմորդները զժգոհութեան շարժում մը զսպեցին՝ կարգա-

լով տրուած վճիռը, անդին՝ ստուար մեծամասնութիւն մը անոր մէջ տեսաւ խանդաղատանք մը, կարեկցութիւն մը, լայն ըմբռնում մը եկեղեցական օրէնքի ոգիին՝ փոխանակ անոր տառին կառչելու, և ընտանեկան յարկերու խանգարուած անդորրութիւնը այլապէս վերահաստատելու բարի ձգտում մը:

Երբ արդի Ս. Հայրապետը ամուսնալուծման իր առաջին վճիռը հաղորդեց Պատրիարքարանին, եօթը—ութը տարի առաջ, բփշկի մը ի նպաստ որուն կրկնամուսնութեան հրաման կուտար, բուն տպաւորութիւն մը առաջ եկաւ մեր կղերական շրջանակներուն մէջ մանաւանդ, ու տրտունջներ լսուեցան. բայց արդար կերպով կատարուած համանման ամուսնալուծմանց որոշումներ, Սինօդական արձանագրութեամբ, յաջորդելով իրարու, առաջին տպաւորութիւնը մեղմացուցին տակաւ տակաւ, և ինչ որ գայթակղական բան մը կերեւար անվարժներու աչքին՝ շատ բնական դարձաւ: Պոլսահայ մամուլին մէջ՝ Բիւզանդիոն ամէնէն ջերմ ջատագովը հանդիսացաւ ամուսնալուծութեան սկզբունքին ու կիրարկումին, և թէեւ լրագրական վէճեր, թերուդէմ կարծիքներ փոխանակուեցան՝ այդ թուականներուն՝ երկար ու խիստ, բայց միևնոյն ատեն անզղալապէս մեր բարքերուն մէջ մտաւ ապահարզանը, սեղմուած պայմաններով ու գրեթէ միշտ բացառութիւն նկատուելով, բայց վերջապէս ընդունուեցաւ: Տրուած հայրապետական վճիռները ընդհանրապէս մէկ կողմին իրաւունք կուտային միւս կողմը իբրեւ մեղապարտ՝ գրկելով պսակէ:

Այս անգամ, այդ խստութեան սահմանը քիչ մը կընդարձակուի, ինչ որ բարեդէպ սկզբնաւորութիւն մը և յաջող քայլ մըն է գէպի լուծումը այն ընտանեկան դառն խնդիրներուն ու դաւալի պառակտումներուն որոնք, պսակին անլուծանելիութեան բաղխելով, ամուլ ու տրտմաթախիժ դարձուցած են անքան երիտասարդ ու ծիծաղկոտ կեանքեր:

Պատրիարքը յատուկ շրջաբերականներ կը պատրաստէ Կիլիկոյ եւ անոր թեմերուն ուղղուած, կաթողիկոսական ընտրութեան առթիւ: Այդ շրջաբերականէն զատ՝ Պատրիարքը սկսած է պատրաստել նաեւ Կիլիկիոյ կաթողիկոսական պատուիրակ Մովսէս եպիսկոպոսի յատուկ պաշտօնագիրը, որուն մէջ Պատրիարքը կարգ մը հրահանգներ կուտայ ընտրական գործողութեանց մասին: Այդ պաշտօնագիրը իբրեւ առաջնորդ պիտի ծառայէ կաթողիկոսական պատուիրակին: Պատրիարքը նաեւ մի առ մի պատուէրներ կուտայ թէ կաթող, պատուիրակը ինչպէս պիտի վարժի ժողովականներուն հանդէպ, միանգամայն

կը պատուիրէ ամեն պարագաներուն վրայ մանրամասն տեղեկութիւններ հաղորդել ամեն շաբաթ, որպէս զի վարչութեան նաեւ ժողովն ալ ըստ այնմ շարժի եւ բացառիկ պարագաներուն ալ նոյն իսկ հեռագրով տեղեկութիւն հաղորդէ։ Նոյնպէս յիշատակած է թէ ընտրողը առ առաւելն երկու ձայն պէտք է ունենայ. իսկ անկից աւելի ձայն կամ քուէ բացարձակապէս անընդունելի նկատած է։ Նաեւ կառավարական պաշտօնեաներուն հանդէպ ունեցած պարտականութիւնն ալ ճշդած է, ինչպէս Ատանայի կուսակալին եւ մէքթուպճի պէյին հանդէպ։

Կիլիկիոյ պատուիրակին պաշտօնը հաստատող Պատրիարքական Կոնդակն ալ պատրաստուելով, չըջաբերականին եւ պաշտօնագիրներուն հետ միասին կը ղրկուին Ատանա, Տ. Մովսէս եպիսկոպոսի մեկնած օրն իսկ Պատրիարքարանի չըջանակներուն մէջ յոյս կը տածուի թէ Կիլիկիոյ Աթոռը ամիսէ մը, կամ շատ շատ ամիս ու կէսէն պիտի կրնայ ողջունել իր նորընտիր կաթողիկոսը։

Կիլիկիոյ կաթող. պատուիրակ Մովսէս եպիսկոպոս Կէօմրիւքճեան առաջի օր, յուլիսի 27-ին, հրաժեշտ առաւ Ս. Պատրիարքէն։ Կէօմրիւքճեան սրբազան յառաջիկայ հինգշաբթի, օգոստոսի 1-ին, Ատանայ կ'ուղեւորուի ֆրանսիական շոգենաւով, Ընտրողական ժողովի առաջին նիստը տեղի պիտի ունենայ սեպտ. 19-ին։ Ամիս մը առաջ հրաւիրագիր պիտի ղրկուի թեմերը։

† ՌՈՒԴՕԼՖ ՎԻՐԽՕՎ

Հեռագիրը օգոստոսի 23-ին գուժեց ժամանակակից ամենամեծ գիտնական, մարդկային սրտի լաւագոյն ձգտումների ներկայացուցիչ, տիեզերահռչակ Ռուդօլֆ Վիրխովի մահը: Մտքի այդ հսկայի և ալտրու-իստական զգացմունքների վեհ տիպարի մասին «Մուրճը» (№ 10) խօսել է նրա ծննդեան ութսունամեակի առիթով: Չը բաւականանալով դրանով մենք կ'աչխատենք պաշտելի գիտնականի աւելի մանրամասն կենսագրականը տալ յաջորդ համարներից մէկում:

ՆԱՄԱԿ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻՑ

ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԵԱՆՔԻՑ

Ֆրանսիացի պատմագէտ Սենեորոսը իր XIX-դ դարի պատմութեան մէջ *) շատ իրաւացի նկատում է, որ ժամանակակից Գերմանիան ենթարկուած է կրկնակի էվոլիւսիօնի. մէկը՝ միապետական-պահպանողական, որ ձգտում է Պրուսիայի բերօկրատիկ, զինուորական ու կրօնական տրագիգիցիաները իրականացնել. միւսը՝ ռամկավարական—յառաջադիմական, որ բղխում է աշխատող ու արդիւնաբերող զստակարգերից և զըլխաւորապէս կենտրոնացած է քաղաքներում: Այս երկու իրար հակառակ հոսանքները տալիս են Գերմանիայի կեանքին մի առանձին գոյն ու ակամայ գրաւում հասարակական կեանքի զարգացման օրէնքներով ու երեւոյթներով ամեն հետաքրքրուողի ուշադրութիւնը:

Առաջին էվոլիւսիօնի ներկայացուցիչն է կայսր Վիլհելմ II-ը՝ մի ողելորուած երկրպագու իր նախահայրերի և, մասնաւոր, իր պապ Վիլհելմ I-ի: Կայսրը իր գահակալութեան արդէն առաջին օրերին (1888 թ.) պարզ ու բացարձակ յայտարարեց, թէ ընդունելով կայսերական իշխանութիւնը երդուել է «Արքայից Արքայի» առաջ «վերականգնել յարգանքը՝ դէպի եկեղեցին ու օրէնքը և անպայման հնազանդութիւն կայսերական գահին»: Նա չը վարանեց նաև հռչակելու նորակազմ կայսրութեան մէջ հին միապետական սկզբունքը՝ *Suprema lex regis voluntas esto!* (Կայսեր կամքը թող լինի բարձրագոյն օրէնք): Կայսերական գահ, կրօն ու զօրք—անհա այն սիւները, որոնց վրայ Վիլհելմ II-ը ձգտում է կառուցանել պետական շինութիւնը: Կայսեր քաղաքականութիւնը յայ-

*) Шарль Сеньобосъ—Политическая история современной Европы. Томъ III. изд. Поповой.

անի է «նոր կուրս» (der neue Kurs) անունով, որ սկսուեց 1890 թ. «երկաթէ կանցլէր» Բիսմարկի հրամարուկուց յետոյ: Կայսրը սովորութիւն ունի իր հայացքները արտայայտել հասարակական ճառերում, որոնք գեղեցիկ կերպով լուսարանում են «նոր կուրսը»: Այս տեսակէտից ուշադրութեան արժանի է կայսեր Ասխենի ճառը, որ նա արտասանեց ամառս (6/19-ին յունիսի) Հոենհոսի արկերում կատարած ճանապարհորդութեան ժամանակ: Այդ ճառը բնորոշում է «նոր կուրսի» կղերական ուղղութիւնը, որ և կազմում է մեր ներկայ յօդուածի նիւթը. այս իսկ պատճառով առաջ ենք բերում ճառի բովանդակութեան էական մասերը:

«Կայսր մենք տեսնում ենք, ինչպէս կայսրութիւնը, թէև դեռ մատաղ, տարէջ տարի զօրանում է... գերմանական հզօր զօրքը հանդիսանում է Եւրոպայի խաղաղութեան զօրավիգը. մեր լեզուն տարածւում է հեռու իր չրջանից, անյնեղով ծովեր, ովկիանոսներ, մեր դիտական ուսումնասիրութեան թռիչքը հասնում է նոյնիսկ ամենահեռու երկիրներ... Ահա այն համաշխարհային իշխանութիւնը (Welt—imperium), որին ձգտում է գերմանական միտքը: Արդ, եթէ մենք կամենում ենք հասնել այդ մեծ նպատակներին, չը պէտք է մոռանանք, որ կայսրութեան կազմակերպութեան սկզբնապատճառները խոր արմատներ են ձգել մեր նախնեաց երկիւղածութեան, պարզութեան ու բարձր բարոյական հայեացքների մէջ:—...Ես սպասում եմ, որ դուք ամենքդ՝ հոգեւորական թէ աշխարհական, ինձ կ'օգնէք՝ կրօնը ժողովրդի մէջ հաստատ պահելու... Ես իրաւունք եմ համարում ասելու, որ մեր երկու դաւանութիւնները պէտք է աչքի առաջ ունենան մի մեծ նպատակ՝ պահպանել ու ամրապնդել երկիւղածութիւնը ու պատկառանքը դէպի կրօնը... Նա՛ ով իր կեանքը չէ նախաւորում կրօնի վրայ՝ կորած է իսպառ: Արդ, ես կամենում եմ համապատասխան այսօրուայ օրին ու տեղին, ո՛չ միայն խօսել, այլ եւ երդուել, որ ես իմ ամբողջ կայսրութիւնը, ժողովուրդը, իմ զօրքը, ինքս ինձ ու իմ բնականիքը դնում եմ ս. եւաչի ու Նորա բարձր հովանաւորութեան տակ» ..

Գերմանիայի գահակալի այսչափ ջերմ կրօնական զգացմունքները միշտ կենդանի արձագանք են գտել բողոքական ու կաթօլիկ դաւանանքների ներկայացուցիչների «երախտագէտ» սրտերում... Սակայն կաթօլիկ հոգեւորականութիւնը առաւել եւս առիթ ունէր երախտագէտ լինելու կայսեր. նա էր «կուլտուրկամպֆի» բոլոր պատուհասները կրել: Կայսեր կրօնասէր ձգտումները պարզ ապացոյց են եղել միշտ, որ կաթօլիկ ե-

կեղեցւոյ «երկաթէ կանցլէրից» կրած հալածանքները այսուհետեւ տեղի չեն ունենայ. նա՝ կաթօլիկ եկեղեցին՝ վայելելով գահակալի բարձ հովանաւորութիւնը, հնարաւորութիւն կ'ունենայ ազատ աճելու, զարգանալու... Արդարեւ, կաթօլիկ կղերականութիւնը կարողացաւ օգտուել քաղաքական բարեյաջող պայմաններէյ և այսօր նա՝ քաղաքականապէս կազմակերպուած՝ հանդիսանում է բոլոր կուսակցութիւնների մէջ բաւական զօրեղ ու ազդեցիկը, նա իշխում է ոչ միայն հարաւային Գերմանիայի տիրապէս կաթօլիկ պետութիւնների լանդտագմաներում, այլ և ռայխստագում:

Արդ, ծանօթացնել մի ամփոփ յօդուածով «Մուրճ» ընթացողներին Գերմանիայի կղերականութեան էութեան, նրա դործունէութեան ուղղութեան ու եղանակի հետ, փորձել նոյն իսկ գոնէ հարեւանցօրէն պարզելու նրա զարգացման ընհանուր հիմնական պատճառները—անհն երկայ առաջին զրութեան նպատակը:

Յետագայ յօդուածները մենք կը նուիրենք Գերմանիայի քաղաքական ու հասարակական կեանքի նկարագրութեան:

I Կղերականութիւնը Գերմանիայի մէջ

Մենք ունենք արդէն բաւականաչափ կրօն փոխադարձ ատելութեան համար, սակայն ո՛չ այնչափ՝ փոխադարձ սիրոյ համար:

Սվիճե

Ա.

Գերմանական կղերականութիւն ասելով պէտք է հասկանալ կաթօլիկ տարրը, որովհետեւ սա է հանդէս գալիս որպէս կազմակերպուած քաղաքական—հասարակական ազդեցիկ ոյժ: Մինչդեռ բողոքականները լուծուած են զանազան կուսակցութիւնների մէջ, կաթօլիկները կազմակերպուած ու միացած են քաղաքական—դաւանաբանական ընդհանուր ծրագրով և ունին յատուկ ներկայացուցիչներ թէ լանդտագմերում և թէ ռայխստագում: Սոքա են կազմում հռչակաւոր Centrum-ը (Կենտրոն), որի անդամների թիւը ռայխստագում այսօր հասնում է մին-

չեւ 100-ի, և որի ազդեցութիւնը պետական նաւի ղեկի ուղղութեան վրայ աներկբայելի է:

Centrum-ը կազմակերպուեց 1871 թ., երբ Գերմանիայի միութեան հաստատումից յետոյ, առաջին անգամ տեղի ունեցաւ ռայխստագի ընտրութիւնը, նոր ընտրողական իրաւունքի հիման վրայ, կուսակցութիւնը ձեւակերպեց այսպէս իր գործունէութեան ծրագիրը.

«Iustitia fundamentum regnorum. Գերմանական ռայխստագի Centrum կուսակցութիւնը ընդունել է իր գործունէութեան համար հետեւեալ սկզբունքները. 1. պահպանել պետութեան (Reich) հիմնական բնաւորութիւնը, որպէս միացեալ տէրութիւնների—համապատասխան դրան ընդդիմադրել այն բոլոր ձգտումներին, որոնք նպատակ կ'ունենան պետական սահմանադրութեան փեղեկաբախել բնաւորութիւնը փոփոխութեան ենթարկել. չը զոհել առանձին տէրութիւնների անկախութիւնը իրենց ներքին գործերում, բայց ի այն բացառիկ դէպքերից, երբ պետութեան ընդհանուր շահերը պահանջում են այդ ստիպողաբար: 2. ձգտել, կուսակցութեան ոյժերի ներածի չափ, բոլոր դասակարգերի բարոյական ու նիւթական ապահովութեան. ձեռք բերել պետութեան բոլոր հպատակների քաղաքական ու կրօնական ազատութեան համար սահմանադրութիւնից որոշուած երաշխաւորութիւններ և, մանաւանդ, պաշտպանել կրօնական ընկերութիւնների իրաւունքները օրէնսդրութեան ձեռնագրութիւնների դէմ: 3. այս սկզբունքների համաձայն կուսակցութիւնս կը մաքառի ու որոշումներ կը կայացնի ռայխստագում յարուցուած խնդիրների վերաբերմամբ. իւրաքանչիւր անգամ կարող է իր ձայնը տալ նաև հակառակ կուսակցութեանս ընդհանուր որոշումներին: Ստորագրել են հռչակաւոր Վինդհօրստը, Մալենկրոդտ և ուրիշները*):

Այս ծրագիրը, ինչպէս տեսնում է ընթերցողը, ձեւակերպուած է շատ ընդհանուր խօսքերով, բաւական անորոշ է ու առաձգական: Նա չէ արտայայտում պարզ ու բացարձակ կուսակցութեան բուն նպատակները, իսկական ցանկութիւնները. չէ երեւում նրա վերաբերմունքը դէպի այս կամ այն այրող քաղաքական ու սոցիալական հարցերը, նրա դիրքը դէպի կառավարութիւնը ու կուսակցութիւնները: Սակայն այն, ինչ միութեան մէջ է թաղնում ծրագիրը, պարզում է Centrum-ի առօրեայ գործունէութիւնը, նրա բռնած տակաբիկան: Հէնց

*) Das Zeitalter des Kaisers Wilhelm von Dr. W. Oncken, Zweiter Band. 1892., էջ 400.

նոյն 1871 թ. Centrum-ը երեւան եկաւ այնպիսի առաջարկութիւններով, որոնք մէկ անգամից վայր ձգեցին նրա դիմակը: Այսպէս, Պրուսիայի լանդտագում նա առաջարկեց վերականգնել... պապի աշխարհական իրաւունքները, իսկ ռայխստագում մտցնել պետական սահմանադրութեան մէջ Պրուսիայի 1850 թ. սահմանադրութեան այն յօդուածները, որոնք երաշխաւորում են եկեղեցւոյ անկախութիւնը պետական միջամտութիւնից: Այս փաստերը, անտարակոյս, պարզ ապացոյց էին, որ Centrum-ը de facto հետեւում է քաղաքական կաթօլիկութեան՝ ուլտրամոնսանիզմի ծրագրին ու հանդիսանում է վերջինիս քաղաքական օրգանը:

Ուլտրամոնտանիզմը էապէս նոյնքան հին, պատմական երեւոյթ է, որքան կաթօլիկ եկեղեցին ու պապականութիւնը իրանց քաղաքական, աշխարհական ձգտումներով: Սակայն կղերականութիւնը այդ անուան տակ առաջ է գալիս միայն XIX-դ դարի սկզբում Ֆրանսիայում, երբ մեծ յեղափոխութիւնից յետոյ սկսւում է ամբողջ Եւրոպայում ընդհանուր ռէակցիա: Գիւրադղաբար ներկայ գրութեան սահմանները մեզ թոյլ չեն տալիս կանգ առնել այդ խիստ հետաքրքիր ժամանակամիջոցի նկարագրութեան վրայ, ցոյց տալ ուլտրամոնտանիզմի ծագման հիմնական պատճառները, ներկայացնել նրա գլխաւոր ներկայացուցիչներին՝ Շատոբրիանի, դը Մէստրի, Բօնալդի, Լամմընէի և այլոց գործունէութիւնը: Մենք ստիպուած ենք բաւականաճաշ, պարզելով միայն ուլտրամոնտանիզմի էութիւնը թէ տեսականապէս և թէ գործնականապէս, ուրիշ խօսքով՝ տեսնել ինչ է ասում գրականութիւնը ու կեանքը ուլտրամոնտանիզմի մասին: Բնորոշելով ուլտրամոնտանիզմը երկու տեսակէտներից՝ մենք կ'ըմբռնենք կաթօլիկ կղերականութեան ուղղութիւնը, նրա նպատակներն ու ձգտումները, նրա գործունէութեան տակտիկան, միջոցները, նրա դիրքը ժամանակակից Գերմանիայի քաղաքական ու սոցիալական կեանքում:

Ամեն մի կաթօլիկ ուլտրամոնտան է, եթէ նա ընդունում է պապի գահերէցութիւնը (suprematie), աշխարհական իշխանութիւնն ու անսխալականութիւնը, իսկ ընդունելով այդ երեք հիմնական սկզբունքները, նա չէ կարող մերժել Պիոս IX-ի 1864 թ. հրատարակած համաւարտ էնցիկլիկան «Quanta cura»-ն ու մանաւանդ նրան կցած Syllabus-ը, սրանք կազմում են ուլտրամոնտանների Magua charta-ն... Էնցիկլիկան թէօկրատիկան սկզբունքների մարմնացումն է կաթօլիկ պետութիւն՝ միակ պարտաւորիչ կաթօլիկ դաւանութեամբ, անկախ եկեղեցական իշխանութեամբ, կրօնական ու աշխարհական

կեանքում—ահա «Quanta cura»-ի իղէալը՝ Պրոֆ. Օնկենը վերոյիշեալ աշխատութեան մէջ հետեւեալ խօսքերով է բնորոշում այս հետաքրքիր պատմական դօկումենտի բովանդակութիւնը.

«Հոռմէական եկեղեցին ու նրա պետի՝ պապի, իշխանութիւնը անսահման է. նրանց համար ոչ մի նշանակութիւն չունին աշխարհական իրաւունք կամ աշխարհական իշխանութիւն, սահմանադրութիւն կամ օրէնք, դաշնադրութիւն թէ կանոն՝ միեւնոյն է եկեղեցական թէ աշխարհական, եթէ նրանից չեն սահմանուած կամ չեն ենթարկուած ստրկօրէն նրա կամքին»*):

Syllabus-ը 80 յօդուածներից բաղկացած ցուցակ է ժամանակակից «մոլորութիւնների», որոնց պապը անաթէմայի է երթարկում:

Ահա մի քանի զանազան կարգերի «մոլորութիւններ»:

—«Խղճի ու կրօնի ազատութիւնն իւրաքանչիւր անհատի իրաւունքն է, որ և պէտք է ապահովուի ամեն բարեկարգ պետութիւնից»:

—«Եկեղեցին իրաւունք ու իշխանութիւն չունի դժգոհութիւն օրէն որդելու, որ Հոռմէական եկեղեցւոյ կրօնն է միակ ձգրիտ կրօնը» (§ 21)

—«Մեր ժամանակներին պատշաճ չէ հռչակել կաթօլիկ կրօնը որպէս միակ ու բացառիկ պէսական կրօն» (§ 77)

—«Բողոքականութիւնը մի առանձին ձեւ է մի և նոյն քրիստոնէական հաւատոյ, հետևաբար և բողոքականը նոյնպէս կարող է Աստուածանից արժանի համարուել, ինչպէս և կաթօլիկը» (§ 17):

Հետեւեալ յօդուածները խօսում են պապի ու եկեղեցու աշխարհական իրաւունքների մասին.

—«Եկեղեցական ու աշխարհական իշխանութիւնների մէջ ծագած անհամաձայնութեան դէպքերում առաւելութիւնը եկեղեցական օրէնքի կողմը չէ» (§ 42)

—«Թագաւորներն ու իշխաններն եկեղեցու դատաստանական իրաւանքութիւնից դուրս են. դատաստանական վիճելի հարցերում նրանք բարձր են կանգնած քան եկեղեցին» (§ 54)

—«Եկեղեցին պէտք է բաժանել պետութիւնից ու պետութիւնը եկեղեցւոյ» (§ 55)

Մի երկու յօդուած եւս ժամանակակից կրթութեան մասին.

*) էջ 374:

—«Քաղաքացիական կեանքի ամենալու ձեւը պահանջում է, որպէս զի ժողովրդական ուսումնարանները դռները բաց լինին բոլոր (իմն ամեն կրօնի) երեխաների համար. բոլոր հասարակական հիմնարկութիւնները բարձրագոյն կրթութեան համար պէտք է ազատ լինին եկեղեցական իշխանութիւնից ու միայն ստորադրուած աշխարհական իշխանութեան» (Տ 47).

—«Փիլիսոփայութիւնը ու բարոյագիտութիւնը նոյնպէս և քաղաքացիական օրէնքները կարող են և նոյն իսկ չը պէտք է հետեւեն Աստուածային Յայտնութեան ու եկեղեցու հեղինակութեան» (Տ 57)

—«Հոռւմի պապը կարող է ու պէտք է հաշտուի և դործի համաձայն ժամանակակից յառաջադիմութեան, լիբերալիզմի ու քաղաքակրթութեան պահանջների հետ» (Տ 80)*:

Ինչպէս արդէն նկատեցինք Պիոս IX-դը բոլոր այս գրութիւնները յայտարարում է որպէս մոլորութիւններ ու ննթարկում անաթէմայի...

Պրոֆ. Օնկներ, առաջ բերելով այդ յօդուածները մի շարք ուրիշների հետ, բացականչում է. «Այս վարդապետութեան հիման վրայ Հռովմէական եկեղեցին պետութիւն չէ պետութեան մէջ, կամ պետութիւն պետութեան դէմ, ոչ, այլ ինքը պետութիւնը»: Արդարեւ, կաթօլիկ եկեղեցին իր այդ սկզբունքներով ու աշխարհայեցողութեամբ չունի օրինակ մարդկութեան պատմութեան մէջ: Սակայն, դույշ, տարակուսելի է նրա հեղինակութեան իրական նշանակութիւնը: «Դրանք լոկ թէօրեաներ են՝ զուրկ մեռ օրերում որ և է դրական ազդեցութիւնից աղղերի քաղաքական ու սօցիալական կեանքի վրայ»— թերեւս առարկեն ընթերցողները:

Ճիշտ է, կաթօլիկ եկեղեցու ձգտումները դէպի աշխարհական ու կրօնական համաշխարհային գերիշխանութիւնը, դէպի Գրիգորիոս VII-դի օրերի վերադարձը, սոսկ զառանցանքներ են, ու անիրադրժելի տենչանքներ, սակայն և այնպէս «Quanta cura»-ի կամ Լեոն XIII-դի «Inscrutabili» էնցիկլիկայի (1878 թ.) հայեացքները ու Syllabus-ի պատգամները մեծաւ մասամբ, դժբախտաբար, դեռ ևւս չատ հեռու են սուլթան Համիդի մեռածին օրէնքներից... Սրան պարզ ապացոյց են ոչ միայն ժամանակակից Սպանիան ու Իտալիան՝ կաթօլիկութեան այդ դարաւոր ապաստարանները, այլ և հանարապետական Ֆրանսիան, ազատ Շվեյցարիան, անկախ Բելգիան, Weltimperium-ի ցնորքներով յափշտակուած Գերմանիան, և նոյն իսկ Հռովմից

*) Տե՛ս. W. Oncken էջ 374—76. ու Свѣободѣ էջ 288—289:

ովկրանոսներով անջատուած Ամերիկան... Ամենուրեք տարածուած է կաթօլիկ կղերականութիւնը, ամեն տեղ նա աչքի է ընկնում, և եթէ նա որեէ տեղ նուաստ ազդեցութիւն ունի, սակայն ոչ մի տեղ նա չէ կազմում *quantitée negligeeable*. Ահա ինչպէս է բնորոշում Սենեքոսը կաթօլիկ եկեղեցւոյ XIX դարում աշխարհական պետութիւնների ու ժամանակակից քաղաքակիրթութեան դէմ մղած կռուի հետևանքները.

«XIX-դ դարի ընթացքում պետութիւնը խլեց կաթօլիկ եկեղեցւոյ նրա ամբողջ նիւթական կարողութիւնը. նա ոչնչացրեց մի պարտադիր դաւանութեան սկզբունքը ու սահմանեց կրօնի ազատութիւնը: Բայց չնորհիւ այն հանգամանքների, որ եկեղեցական իշխանութիւնը իրապէս կենտրոնացաւ պապի ձեռքում, որ նա վերջինս, դարձաւ, միահեծան պետ, որ բոլոր երկրների պարլամենտներում կազմակերպուելին առանձին կաթօլիկ կուսակցութիւններ, ենթարկուած ընդհանուր Վերնորոնին (իմա Հոռովին), որ սպիտակ ու սև հոգեորականութեան թիւը բազմացաւ, վերջապէս չնորհիւ նրա նիւթական հարստութեան ու ամեն կարգի կաթօլիկ ուսումնարանների բացման— եկեղեցին ձեռք բերեց այնպիսի սոցիալական ու քաղաքական ոյժ, որ այսօր անհաւակոյս գերազանցում է նախկին պաշտօնական իշխանութիւնը»*):

Արդ, կաթօլիկ կղերականութիւնը այսօր հանդիսանում է զօրեղ մարառող նոյն աշխարհայեցողութեան, ինչ նրան ամբողջ դարեր շարունակ սնել, ոգևորել ու կեանք է տուել, կրօնական ասպարիզում նա ժխտում է խղճի ազատութիւնը, չէ ճանաչում ուրիշ դաւանութիւն բացի կաթօլիկ կրօնից. քաղաքական ու սոցիալական կեանքում նա՝ քարոզելով պապի աշխարհային իշխանութիւնը, գահերեցութիւնը ու անսխալականութիւնը, երևան է գալիս որպէս երգուհալ հակառակորդ ժամանակակից քաղաքակիրթութեան ու ազգային պետութիւններին և ձգտում է ստորադրել կաթօլիկ եկեղեցուն քաղաքացիական օրէնսդրութիւնը, սպառնալով, հետեաքար, ներկայ սոցիալական-քաղաքական կեանքի ամբողջ կազմին ու կանոնաւոր զարգացման:

Ուլտրամոնտանիզմի նոյն իսկ այս հակիրճ նկարագիրը կը մնայ անկատար, եթէ ի նկատի չառնենք նրա մի շատ հետաքրքիր կողմը, այն է՝ ինչ միջոցներով է ձգտում ուլտրամոնտանիզմը իրագործել իր ծրագիրը, հասնել իր նպատակներին, որոնք խիստ հակասում են ժամանակակից հասարակական կազմակերպութեան հիմունքներին:

*) Сеньюбость, էջ 302:

Այս հարցը իրօք ուշադրութեան արժանի է, որովհետեւ որչափ կաթօլիկ եկեղեցին յամառ ու անշեղ հետեւել է դարերի ընթացքում Խնակենտրոս III-ի թեոկրատիական սկզբունքներին, այնչափ նա եղել է ձկուն ու դիւրափօփոխ իր գործունէութեան միջոցների, տակաւկայի վերաբերմամբ Գործնական կեանքում կաթօլիկ եկեղեցին միշտ ընթացել է համաձայն ժամանակի պահանջներին, աշխատել է համակերպուելու կեանքի նոր ձեւերին, փնտռելով միշտ նոր պատշաճաւոր միջոցներ, եթէ միջին դարերում կաթօլիկ կղերականութիւնը հրով և սրով էր կռուում, այսօր նա ընտրողական իրաւունքն է դարձրել իր ձեռքին զօրաւոր զէնք. եթէ այն ժամանակներում նա առւտոգափէով էր մաքառում զիտութեան ու կրթութեան դէմ, այսօր նա նոյնը կատարում է մամուլի ու խօսքի ազատութեամբ. վերջապէս, միջնադարեան հրէշաւոր ինկվիզիցիան այսօր տեղի է տուել—*mirabile dictu!*—կրօնի ազատութեան... «Դարուս ձեռք բերած բոլոր քաղաքակրթական աշխարհակալութիւնները մեր օրերում կաթօլիկ կղերականութեան ձեռքին—ասում է Վիէնայի ակաճաւոր պրօֆ. Իօզլը—բաղձալի միջոցներ են քաղաքականապէս կազմակերպելու եկեղեցու կողմնակիցներին, հեռու արձագանք տալու եկեղեցու վարդապետութեան ու հայեացքներին. և պարլամենտների միջոցով հնազանդեցնելու պետութիւնները եկեղեցու ջանկութիւններին: Գործնական քաղաքական ասպարիզում եկեղեցու թշնամին պիտի կործանուի իր սեփական զէնքով» *):

Այսպէս է բնորոշում գրականութիւնը ու պատմութիւնը ուլտրամոնտանիզմի էութիւնը՝ նրա ոգին, նպատակները, ուղղութիւնը, գործունէութեան միջոցները:

Դառնանք այժմ իրականութեան՝ Գերմանիայի քաղաքական-սոցիալական կեանքին: Մի քանի աչքի ընկնող, ընդհանուր կուլտարական նշանակութիւն ունեցող երևոյթներ ընթացիկ հասարակական կեանքից կը պարզեն կաթօլիկ կղերականութեան դիրքը և վեարբերմունքը օրուայ այրող հարցերին:

Սկսենք կրթական շրջանից: Բայց զրա մասին միւս անգամ:

Quidam.

*) Prof. pr. Friedrich Iodl, Gedanken über Reform—Katholicismus. էջ 5:

ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

„Кавказский Вѣстникъ“, օգոստոս և սեպտեմբերի Սյու միացած համարում տպագրուած է Շարբօնելի մի հետաքրքրական լօղուածի թարգմանութիւնը „եզութիւնների կարգի մուսուլմանական ծաղումը“ վերնագրով: Իսլամական կղերական հոգի վրայ ծնունդ առած այդ հռչակաւոր կարգը, որ ամբողջ քրիստոնեայ աշխարհի վրայ այնքան զարեւր ծանրացան և ծանրանում է, լաղճաթիւ ուսումնասիրութիւնների նիւթ է հղել: Շատ փորձեր են եղել որոշելու համար, թէ Նզնասիրտ Լօլլայան ո՞րտեղից վերցրեց իր ուխտի ծրարը, ի՞նչը նրանում միտք ծագեցրեց տալ իր հետեւորներին այդ զարհուրելի կաղճակեւորութիւնը, որ քրիստոնէական անուանուելով հանդերձ, ամբողջ զարեւր թերթներով պլոծեց եկեղեցին և նենդութեան, զաւթի, մութ շանջանքների, խաղէտիւթեան, անբարոյականութեան, բռնութեան նողկալի զէնք դարձաւ: Շարբօնել իր նոր ուսումնասիրութեամբ զալիս է այդ փորձերի թիւր մէկով տեղացնելու և, պէտք է խոստովանել, հրապարակ նետուած խնդրին բաւական սրամիտ լուծումն է տուել:

Նրա կարծիքով Լօլլայայի կարգի և նրա ներքին կաղճութեան, ոգու, առաջնորդող պրինցիպների աղբիւրը պիտի փնտռել մուսուլմանական կրօնական կարգի մէջ, որոնցից շատերը գոյութիւն ունէին եղբայրներից առաջ և արաբների ձեռքով իրանց զաւթների ճիշդաւոր-

ութիւնները տարածել էին մինչև Սպանիա: Իր թեզն ապացուցանելու համար Շարբօնելը համեմատութիւններ է անում XV և XVI դարերում գոյութիւն ունեցող մուսուլմանական կրօնական կարգերի, ներանց կաղճակեւորութեան, գործունէութեան մեթոդի, նպատակի և եզութիւնների կարգի մէջ: Մուսուլմանական այդ կարգերից, որոնց մեծամասնութիւնը մինչև այժմ գոյութիւն ունեն, նա չիշում է երկու նշանաւորը՝ Կադրիաւի՝ Սիդ-Աբդել-Կադերի հիմնածր, Սարաւում, XII դարում, և Շաւքեյեւանի՝ Սաիդ-Աբուհասէին-էլ-Շադելի հիմնածր:

Այդ կարգերի անդամները կոչւում են Սուֆի կամ Կուան (միաբան), ասում է Շարբօնել, և նրանք հնազանդում էին Ուելլիքին, այսինքն միակ կանոնադրութեանը: Նրանք ունեն իրանց առանձին աղօթքը, հաւատի մի տեսակ սիմվոլ, ... և հւրօրոտակում են մի հատ Շէլիսի, որ կառավարում է միաբանութիւնը և Մօկադդեմին, որ վանահայրն է: Շարբօնել առանձին առանձին համեմատում է մուսուլմանական և եղբայրական կարգերի կանոնադրութեան համապատասխան մասերը, և զալիս է այն հետաքրքիր եզրակացութեան որ՝

«Մուսուլմանական կարգերում և եզութիւնների մօտ մինչև զաւրիւղինայիա ու իսլաղարութեան հասցնող ֆիդիկական և բարոյական ներմոծութեան պրոցեսսը բոլորովին նոյն է:

Մինչև իսկ մանր բաներում նմանողութիւնն ապշեցուցիչ է: Քրիստոնէական ո՛չ մի միարանութեան մէջ աչապիսի բան զործադրուած չէ:

Մուսուլմանական կուանները (միաբան) ինչպէս և եզուիտները համոզուած են, որ իրանց կանոնադրքերը երկնքից են ներշնչուած կամ իջած, թէ՛ նրանք և թէ՛ միաները ազօթքի առանձին վարժութիւններ ունին, որով իրանք իրանց հիպոթեզներում են, երկուսն էլ ունին տակտով ազօթելու սովորութիւնը. մուսուլման նորընծան հետըզհետէ երթարկում է 30—40 օր տքնութեան, ինչպէս և եզուիտ նորընծան. թէ՛ մէկ և թէ՛ միւս կարգերում (եզուիտ և մահմեդական) ներքին կազմակերպութեան մէջ ընդունուած է վերից վար իջնող երարխիպի սխառեմը և ամբողջը կուրօրէն հպատակում է պետին, որի կամքը ամբողջ կազմակերպութեան կամքն է. մէկն իր շէյխն ունի, միւսն իր գեներալը: Իսկ աչապիսի պրինցիպներ, ասում է Շարբօնել, եզուիտներից բացի ուրիշ ոչ մի քրիստոնէական միարանութիւն չունի:

Երկու կարգերի և նրանց կանոնադրութեան տեքստերի համեմատութեամբ աչապիսի նմանողութիւնէ երեւում, որ Շարբօնել տեղ տեղ Լօջօլլայի արածը համարում է պլագիատ, իսկ նրա ամբողջ եզուիտական կարգը բացարձակ կերպով յայտարարում է մուսուլմանական, միայն մի քիչ փոփոխուած կաթոլիկ կրօնի պահանջների համեմատ:

Այս եզրակացութիւնը՝ որքան և օրիգինալ լինի ու հետաքրքիր, զուցէ շատ շատերի կողմից չափազանց համարուի, զուցէ ոմանք այլ բացատրութիւններ տան Շարբօնելի մատնացոյց արած երեւոյթին: Բայց այն ինչ որ անհերքելի է և

ապացուցուած կարելի է համարել, զա երկու հարգելի մուսուլմանական և եզուիտական—ներքին կազմի, նպատակի, ոգու, զործունէութեան մեթոդի մէջ երկուսն եկող կատարեալ նմանութիւնն է, և դա խիստ հետաքրքիր է կարծես թէ ուրիշ կերպ չէր էլ կարող լինել, թէ մէկը և թէ միւսը կրօնը դարեւրի ընթացքում դարձրել են զէնք միանգամայն ոչ՝ կրօնական նպատակների համար:

Անստուծոյ տակ լինի վառքի համար, զէվիզը, թէ եզուիտներին և թէ մուսուլմաններին ծառայել է որպէս միջոց՝ որքան կարելի է աւելի մեծ օգուտ դուրս քաշելու իրանց վարդապետութիւնից, որ ձգտում է միացնել հոգեւոր և աշխարհական իշխանութիւնները, կրօնը, քաղաքականութիւն է և իշխել՝ գաղտնիքի և կրօնի ուսուցման ուժով խղճերի և կամքերի վրայ, իշխացի կերպով առում է Շարբօնել. Արդարեւ եզուիտների կազմակերպութիւնը միայն մուսուլմանական ֆանատիկ, գաղտնի կարգերին կարող էր նմանել, քանի որ դարեւրի ընթացքում մուսուլմանական քաղաքականութիւնը, ուր և լինէր նա, իբր հիմունք և առաջնորդող, օգնւորող սկզբունք ունեցել է կրօնը, իսկ իբրև շարժիչ, մղիչ ուժ՝ մահմեդական կղերի գաղտնի կամ լալտնի քարոզչի երև:

»Մուսուլմանական կուանները, ասում է Շարբօնել, կրօնական զործունէութեան քօղի տակ վարում են անընդհատ քաղաքական ազդեցիկա ծրրեմն, որ և է շէյխի դեսպանը շրջում է մուսուլմանական նահանգները և... յայտարարում է իր պետի հրամանը—նա քարոզում է սրբալոյս պատերազմի Մի քանի կարգեր 100—150 վանքեր ունեն, ուր հոնդիպում են շէյխի դեսպանին և արագութեամբ հաղորդում

են բոլոր հաւատացեալներին շէշխի հրամանը... Այդ միաբանութիւնները նրանով աւելի վտանգաւոր են, որ զործում են զազոնի և նրանց ազենտները ակօսում են Ասիան և Աֆրիկան, ոտքի հանելով ժողովուրդը առաքելութեան, մերձատրի սիրոյ, ուխտաւորութեան և կրօնատրական ջանասիրութեան պատրուակով՝

Արեւելքի բրիտոնեաներին այս պատկերը, այս զործունէութիւնը դարերից ի վեր ծանօթ է, «Ջըհաթը» անհաւատների այդ ընդհանուր կոտորածը Ալլահի սիրոյ համար, ամեն օր արի պէս կախուած է եղել միլիոնների զլխին, որոնք զուարէն չեն ձանաչել և Նազովրեցուն են հետեւել:

Եզովոնները իրանց զործունէութեամբ ինկվիզիցիայով, միջոցների անխտրականութեամբ, զազոնի քաղաքական ազդեցիկացով, իրանց երարխական կազմակերպութեամբ, կրօնի համար պայքարող, կռուող, արինամարտ տեմպերամենտով, իրանց զազոնի ազենտներով իրապէս դառնում են, եթէ կարելի է այսպէս ասել, «կաթոլիկ մուսուլմաններ», նոյնպէս ֆանատիկ, նոյնպէս արինըռուշտ, և անողորմ, որպէս իրանց մահմեդական եղբայրները՝ նման կազմակերպութիւն և զործունէութիւն ունենալուց չեւոյ, ընտանիք էր, որ երկու կարգերն էլ բոլորովին նման հետեւանքների հասնէին: Վստանաւորելով ժողովուրդները, ցեղերը, քաղաքականութիւնը, կրօնը, ասում է Շարքօնել, որոնց վրայ անդրադարձել է մուսուլմանական կուլանիզմը և եզովոնութիւնը, ամենից առաջ աչքի է ընկնում նոյնանման ապականութիւնը, եռանդի նոյն թուլութիւնը և կազմալուծուելու նոյն նշանը: Արեւելքը մեռած է: Ուրուզուայ և Պարագուայը մեռած են, Հարաւային Աֆրիկայի բոլոր

հանրապետութիւնները մեռած են, Նուրան և Փիլիպպեան կղզիները աւերուած են, և եթէ աշնտեղ առաջ չը գար աղատարար շարժում, աշն ժամանակ նրանք էլ մեռած կը լինէին: Սպանիան մեռած է: Բոլոր այդ երկրները սուֆիներէ ու կուլաններէ, կղերականների ու արեղաների զործունէութեան ասպարէզ են եղել: Աշնտեղ շէշխերի և կրօնական կարգերի գլխաւորութիւնները վերջացել են շէշխերի և բանականի զենեքալների յաղթանակով:

«C.-Петербург. Вѣд.» լրագրի մէջ տպուած է մի յօդուած ի պատուական «Моск. Вѣд.» ամեկոյցի վարձակումներին հայերի դէմ:

Այդ անխառն պնդումի դէմ հետեւալն է գրում «C.-Петербург. Вѣд.» թերթը.

«Պատալարչապետի խորհրդում և բարձր դիւանատան մէջ 38 անձերից միայն 1 հայ զործավոր կայ (օրացոյց 1901 թ.). 19 նահանգապետներից և օգնականներից—1 օգնականը հայ է: Պաշտտանի շըրջանում, ուր հայերը 0,2 տոկոս են հաշւում, 116 դատաւարներից և շըջանապետներից ու նրանց օգնականներից—միայն 5 են հայ: Դատատանական վարչութեան 146 անձերից (պալատը, նահանգական դատարանները և պրօկուրատուրան)—միայն 5 են հայեր: Պետական կալուածների մինիստրութեան 90 անձերից բարձր պաշտօնեաներ միայն 10 են հայեր: Հեռակարար, 403 բարձր պաշտօնեաներից—հայերը 22 հոգի են կամ 5,4 տոկոս, աշն ինչ նրանք կազմում են ալլաքանականութեան մօտ 20 տոկոս: Արդե՛՞ք բաւարար պերճախօս են այդ թուանշանները:

«C.-Петербург. Вѣд.» Սոքոտտի 1-ն լոյս տեսած համարում տպուած է

„Оцѣнка литературнаго труда въ армянской литературѣ“ (Գրական աշխատանքի գնահատությունը հայոց գրականության մեջ) վերնագրով յօդուածը, որ շօշափում է մեր գրականության զարգացման պայմաններից մէկը *)։ «Կար ժամանակ, ասում է յօդուածագիրը, երբ գրական աշխատանքի վարձատրութիւնը գոյութիւն չունէր և մինչև անգամ համարում էր թէ հասարակութեան, թէ իրանց գրողների կողմից սրբապօծութեան պէս մի բան։— Այդպիսի հայեացք գրողի աշխատանքի մասին հանդիսանում էր իբրև ուղղակի արդիւնք գրական աշխատանքի միտափիղիկական քմբլուման։ Ընթերցողները, ինչպէս և իրանք գրողները, բարձր, նոյն իսկ սուրբ համարելով գրիչը, չէին կարող հաշտուել այն մտքի հետ, որ գրչի սրբազան պտուղը կարող է գնահատութեան ենթարկուել արհամարհելի մետադով... Բայց աշխարհիս վրայ ոչ մի բան չափոտեանական չէ։ չափոտեանական չէր և այդ, թէև շատ իղէալական, բայց ըստ էութեան միաժող հասկացողութիւնը գրական աշխատանքի մասին։ Ժամանակի ընթացքում տպագրական արուեստի տարածմամբ և կուտուրացի զարգացմամբ կազմուեց գրողների դասակարգ, որ ապրում էր միայն գրչով։ Այդպիսով գրական աշխատանքի դրամական գնահատութիւնը անհրաժեշտութիւն դարձաւ։ Ներկայումս իւրաքանչիւր կրթուած ազգութիւն իւրաքանչիւր տարի տալիս է տասնեակ, գուցէ և հարիւր միլիոններ գրականագէտներին, որանց գրչի արտագրութիւնների համար Թուոսց հասարակութիւնը աժմ ալնքան ընտելացել է այդ սկզբունքի հետ,

*) Այդ հարցերը շօշափուած են և «Մուրճում», օրինակ, 1901 թ. № 11 և այլ տարուայ № 7 ներք. Տեսութիւնների մէջ։

նրա գործադրութեան շնորհիւ, որ զարմանքով կ'իմանայ թէ նաև XX դարի սկզբում գոյութիւն ունի մի փոքրիկ ազգի մէջ գրողների զասակարգ, որ ոչինչ չի ստանում իր աշխատանքի համար։ Այդպիսի մի դժբախտ դասակարգ հայ գրողների դասակարգն է։»

Ապա խօսելով հայոց գրականութեան վերածնութեան նահատակների մասին՝ ալսպէս է շարունակում յօդուածագիրը։

«Ինչպէս իւրաքանչիւր գրականութեան, այնպէս և հայոց գրականութեան ազատ զարգացման համար, անհրաժեշտ էր, որ գրողները զբաղուէին միմիայն գրելու արուեստով։ Իսկ զրա համար պէտք է սպառնակել նրանց գոյութիւնը լոկ գրական աշխատանքով։ Սակայն, հայոց գրականութեան կատարեալ զժախստութիւնից, այդպէս չեղաւ։ հայ գրողները դասակարգ կազմեցին միայն գաղափարական միութեամբ վերցրած, իսկ տնտեսապէս նրանք չունեն իրար մէջ ոչինչ ընդհանուր բան և մնացել են նոյն գրութեան մէջ, ինչ գրութեան մէջ գտնուում էին չափունական թուականների նրանց նախորդները։»

«Հայերը չեն հետաքրքրուում իրանց նորածին գրականութեան բախտով։ Մինչև անգամ, ամենալուսաւորութեամբ հայր, արհամարհելով իր հայրենի գրականութիւնը, ինչպէս և իր ազգի բոլոր հոգեկան սպահանջները, ամեն բանի վրայ բարձրից է նայում, լրագիր չի ստանում, հայերէն գրքեր չի ստանում, իսկ եթէ գտնում է հակառակ իր կամքի, չի կարդում և առհասարակ դէպի ամեն ինչ վերաբերում է տգէտ անտարբերութեամբ։ Այդ երևոյթի մէջ անընդունելիւն պատկանում է բարձրագոյն ինտելիգենցիային, որին հետևում են կուրորէն և հայ հասարակութեան այլ խաւերը...»

Նա այդպէս շարունակում է ուսաց թերթը մի շարք ճիշտ գիտողութիւններ յայտնել, դիտողութիւններ, որոնց նմանները հայերէն լեզուով շատ են գրուել, մնալով ձայն բարբառով յանապատիւ Արդեօք այդ անապատը—հայ հասարակութիւնը—ձայն կը տայ՝ լսելով այդ լռելիքը նաեւ օտար լեզուով... չենք հաւատում...

«Մեակը». «Մամուլի միջնադարին 8-րդ կօնգրէսում, որ տեղի ունեցաւ Քերնում ցրուց հանդիսականներին մի շրջաբերական՝ հայոց մամուլի մասին,—մի համառօտ ուրուագիծ հայկական լրագրութեան՝ սկսած 1794-ից, երբ լոյս տեսաւ Կալկաթայում առաջին հայ թերթը:

Նկարագրուած է այդ մամուլի երկչոտ սկզբնաւորութիւնը, երբ կրօնական ոգին էր իշխում հայոց հրապարակաստութեան մէջ և երբ հայկական լուսաւորութեան ճրագները փառում էին ոչ թէ հայրենիքում, ուր միջնադարեան պաշմանները անհնարին էին դարձնում տպագրութեան գոյութիւնը—այլ հեռաւոր կենտրոններում՝ Վենետիկ, Պարիզ, Մօսկուա...

Նկարագրուած է երկրորդ շրջանը, երբ մամուլը մոտք է գործում բուն հայրենիքը, երբ հրապարակաստութիւնը մօտենում է ժողովրդին, որոշ չափով արձագանք է լինում նրա ցաւերին, երբ կրօնական ոգին տեղի է տալիս աշխարհականին: Հայը աստարէզ է գալիս իր և ճշմարիտ կուլտուր—

տրեզեր և նա հիմնում է առաջին ապրանքն ու թերթը Փոքր-Սահալում (1857 թ.):

Նկարագրուած է երրորդ շրջանը,—հայոց մամուլը Թիւրքահայաստանում անդամաւորւած, հայ գրողները փոստում և թերթերի մեծ մասը կենտրոնացած դարձեալ արտասահմանում...

Մի փոքրիկ վիճակագրութիւն, որ կցուած է շրջաբերականին, պարզում է այդ մամուլի տնօրմալ վիճակը:

Այսօր գոյութիւն ունեն՝

Թիւրքահայաստանում 0 հայ հրատ. Ռուսահայաստանում. 5 " "

Կ. Պոլսում . . . 5 " "

Եդիպատում . . . 3 " "

Բօլքարիայում . . . 2 " "

Աստրիայում . . . 1 " "

Իտալիայում . . . 1 " "

Շվեյցարիայում . . . 1 " "

Ֆրանսիայում . . . 5 " "

Անգլիայում . . . 3 " "

Ամերիկայում . . . 3 " "

Շրջաբերականը ծանրացել էր այդ տնօրմալ գրութեան պատճառների վրայ: Երկու հարիւրի չափ հրապարակաստներ զանաւան երկրներէց իրանց ստորագրութիւններով բաղձացին ոչնչացնումը աչն պաշմանների, որոնք արգելում են Թիւրքահայ ինտելիգենցիային՝ ծաւալել իր տաղանդն ու կորովը, ստեղծել մի հզօր մամուլ, որը կոչուած կը լինի քաղաքակրթութեան կրող հանդիսանալ խաւար Արեւելքում:

Պ Ա Տ Ա Ս Խ Ա Ն Ն Ե Ր

Վեցեթիկ, «Բազմավեպի» խմբագրութեան.—Մենք չենք ստացել «Բազմավեպի» Օգոստոս ամսուայ համարը, նոյնպէս և «Հայապատում», «Արիւն» և վերջերումս լոյս տեսած Միւրանութեանդ ալլ հրատարակութիւնները:

Վիլենա, «Հանդէս Ամսօրեալի» խմբագրութեան.—Ձեռք ստացել «Հանդէսի» վերջին համարը:

Ժելեզնովոյսկ, պ. Բ. Ս.—Անկարող եղանք հրատարակել:

Հայդելբերգ, պ. Յ. Թ.—Ուրախութեամբ:

Մոսկուս, պ. Ա. Մ.—Ուշ ստացանք. լոյս կը տեսնի միւս համարում:

Եուսի, պ. Մ. Ղ.—Հաղորդէք 25-ից յետոյ ձեր հասցէն:

Սիմֆերոպոլ, պ. Ս. Բ.—Կ'աշխատենք օգտուել ծառմ ենք, որ Ղրիմի հացերը միայն անունով են հալս Շատ բնորոշ են զրանց ալս խօսքերը.—«Ա տ ա լ ա չ ը պ օ շ պ ա ն ե Ր Ե Ն. Կ լ օ խ ն ե Ր Ե Ս Կ օ տ օ շ փ ս ն ե լ ու չ է հ ա չ ն ա կ կ ա ղ է թ, ժ ու ո ն ա լ կ ա Ր թ ա ն ք-նը» Իսկ որ, ողորմելի տրամբ-ներ...

Վ Ր Ի Պ Ա Կ Ն Ե Ր

Անցեալ համարում

Նրեւ սող	սպուած է	պէտք է լինի
84 2	Նեկրասովից	Նիկիտինից

Լ Է Օ

ՄՏԵՓԱՆՈՍ ՆԱԶԱՐԵԱՆՑ

Ե Ր Կ Ո Ւ Հ ա տ ո Ր

Հատ. առաջին 12+224 էր., հատ. երկրորդ 14+406 էր.
ԵՐԿՈՒ ՀԱՏՈՐԻ ԳԻՆՆ Է ԹԻՖԼԻՍՈՒՄ 1 ՌՈՒԲԼԻ 50 ԿՈՊ.

Ճանապարհածախսով 2 սուրբի:

Դիմել. Тифлисъ. Редакция „Мшакъ“.

ԲԱԳԻՈՒՄ փաճառում է Սամսոն Յարուխնեանցի գրա-
ւածառանդում:

Թիֆլիսի բաժանորդներին խնդրում են շտապել ստանա-
լու իրանց գրքերը:

ԼԵՒՈՆ ՍԱՐԳՍԵԱՆ

Հ Ի Ն Ց Ա Ի

(Հրապարակախօսական խոհեր)

ԳԻՆՆ Է 30 ԿՈՊԵԿ

Ծախւում է Թիֆլիսում, «Դուռաճերէրդ» գրափա-
ճառանդում:

Լ Է Օ

ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Մեր կեանքը, գրականութիւնը անցեալում

Հասար. եկրոն. — XVIII դար

Ա ա ջ ի ն մ ա ս

ԳԻՆՆ Է 1 Ռ. 50 Կ.

Ծախւում է Թիֆլիսում, «Մշակի» խմբագրատանը եւ «Գուս-
տենեքերդ» գրականառանդում:

«Գուսսենբերգ» գրավաճառանոցում վաճառում են Ա. Պոզսեանի գումարով հրատարակուած հետեւեալ գրքերը.

Եօրն ազուա.	{ Պատկերազարդ } { մանկական } { հեքիաթներ: }	{ փոխադրեց } { Լեւոն Մելիք- } { Աղաման: }	40-ական կ.
Կարենն ու Մանենը կամ			
Քոյր եւ եղբայր.			
Պսիկ ու ճեթիկ.			
Անդադ Հանեսը.			
Ի՞նչ է ասում սենեակը, թարգմ. Զ. Տէր-Գրիգորեան			10 կ.
Եստի արկածները, թարգմ. Պ. Պոչեան			40 »
Պառաւ ծիսք, թարգմ. Կիկ. Նզիս. Սարգսեան			3 »
Խղճով դասասան, թարգմ. Սոս. Մալխասեան			5 »
Արդաւ ծերունի, թարգմ. Ա. Մխիթարեան			15 »
Մախիկա.	»	»	15 »
Իւրիանկա, թարգմ. Պ. Հովսեան			10 »

Գումարով աւանդներին գիշումն կը լինի:

Դիմել. — Тифлисъ, Книжный магаз. „Гуттенбергъ“, Лорисъ Меликовская, 11. Г. Галустану. 4—3

ՄԱՅՐԵՆԻ ԽՕՄԳ

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԵԱՆ ՁԵՌՆԱՐԿ

կրստի դաստառանների համար

համառօտ բառգրքով:

Կազմեցին

Կ. ԿՈՒՍԻԿԵԱՆ Եւ Լ. ՍԱՐԳՍԵԱՆ

ԳԻՆՆ Է 70 ԿՈՊԷԿ

Դիմել՝ Թիֆլիս, «Կենտրոնական» և «Գուստենբերգ» գրավաճառանոցները:

«Գուստենբերգ» և «Կենտրոնական» գրավաճառանոցներում ծախսում են «Մուրճ» ամսագրի հետեւեալ հրատարակութիւնները.

	Թ.	Կ.
1. Լ. Տօլստօյ, «Յարութիւն», վեպ, թարգմ. Տ. Յ.	1	50
2. Ալ. Դոպէ, «Ֆրամօն», վեպ, թարգմ. Տ. Յ.	1	—
3. Լէօ, «Հայկական Տպագրութիւն», 11 հատոր	1	50
4. Բժայ. Վ. Արծրունի, «Ամուսնութիւն»	—	75
5. Վ. Միրաքեան, «Լալուարի սրտը», պօէմա	—	40
6. Պոչկին, «Յաւերժահարալ», թարգմ. Կ. Կրասիլնիկեանի	—	15

յումը ֆրանսիայում.—Սուրբէրիի հրաժարականը և
անդլիական նոր պրեմիէր Բալֆուրը.—Բօէլը գեներալ-
ները Անդլիայում.—Հանգանակութիւն լոքսերների օգ-
տին.—Վիլհէլմ կայսրը Պօլնանում.—Մակեդոնական
համաժողով, Լ. Ս.

204

Պ օ լ ս ի թ ե ր թ ե ր ի ց. Ինչպէ՞ս կ'ընտրուի Վիէնայի
միութեանց արքահայրը.—Ժգովութիւնքը Մարդուանի
մէջ.—Ամուսնալուծում.—Վիլիկիայի կաթողիկոսական
ընտրութեան հարցը.

211

17. † ՌՈՒԴՈՒՖ ՎԻՐԽՕՎ 219

18. ՆԱՄԱԿ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻՅ, Գերմանիայի հասարակա-
կան-քաղաքական կեանքից, Quidam 220

19. ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ 229

20. ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ 334

21. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ 235

22. ՅԱԻԵԼՈՒԱԾ «ՕՐԱՄՈՒՏԻՆ», լէսլ Ի. Ս. Տուրգենեվի. 113—128

ՇԱՐՈՒՆԱԿԻՈՒՄ Է 1902 Թ. ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄՈՒՐՃ

ԴՐԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՒ ԳԱՂԱՔԱԿԱՆ

Ա. Մ. ՍԱ. ԳՐԻ

(Նոր շրջան, II-րդ տարի)

Խմբագրության անդամներն են՝ պ.պ. ԼԵՒՈՆ ՍԱՐԳՍԵԱՆ, ԼԷՕ
և Ա.Ի. ՍՀԱՐՈՆԵԱՆ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒՆԸ

Ռուսաստանում տարեկան 10 անգամ. Արևմտահայաստանում՝ 12 անգամ.

"	կէս տարին	6	"	"	7	"
"	1 ամսուան	1	"	"	1	" 20 Կ.

«Մուրճ» ամսագրին կարելի է գրուել Թիֆլիսում—խմբագրատանը
ձալճավաճեան փողոց, տ. № 16) և «Գոտտենբերգ» գրավաճառանոցում:
Բալախանի. պ. Մ. Տէր-Գանիէլեանի մօտ, «Անդրանիկ» ընկ. գործա-
րանում:

Խաչագրության այլ անդամից պէտք է դիմել՝ Тифлисъ, въ редакцію
журнала „Мурчъ“.

Արևմտահայաստանից՝ Tiflis, Rédaction de la revue „Mourtech“.

«Մուրճում» ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ՝ զետեղելու համար պէժք է վճարել.

Մի երես բոլոր լայտարարութեան համար . 10 ռ.

1/2 " " " " " 5 "

1/4 " " " " " 2 "

ԱՊԱՌԻԷԼԻ կամ ԶՐԻՆՆԻ ոչ ոքի «Մուրճ» չէ ուղարկուում:

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

1. Խմբագրութիւնը յատուկ խնդրում է յօդուածագիրներին՝ գրել
պարզ, մանաւանդ թուերը, յատուկ անուններն ու օտար բառերը, և թեր-
թի միայն մի. երեսի վրայ:

2. Զընդունուած մեծ յօդուածները պահուած են խմբագրատանը
6 ամիս, իսկ փոքր յօդուածներն ու բանաստեղծութիւնները չեն վերա-
գործնում: Զեռագիրը չեա ստանալու համար պէտք է ուղարկել ճանա-
պարհածախար:

3. Գրուածքների վարձատրութեան չափը որոշում է Խմբագրութիւնը:

4. Խմբագրութիւնը իրան է վերապահում ուղարկուած յօդուածները
փոփոխելու կամ կրճատելու իրաւունքը:

5. «Մուրճի» համարը չը ստացուելու դէպքում պէտք է Խմբագրու-
թեան տեղեկութիւն տալ մինչև յաջորդ համարի լոյս տեսնելը: Այդ տեղե-
կութեան անհրաժեշտ է կցել տեղական պօստային գրասենեակի հաւաստա-
գիրը (удостоверение), որ ամսագրի համարը չի լանձնուած դանդաղատարին:







